91(47.925)
C-22

[illegible]

2337
91(47.925)
Շ-22
կր
1953-ԱՀ
630

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

կաթուղիկէ Էջմիածնի

և հինգ

գաւառացն Արարատայ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
I

Աշխատասիրութեամբ Յովհաննու
եպիսկոպոսի Շահխաթունեանց շահրի-
արցւոյ միաբանի սրբոյ Էջմիածնի

բաժանեալ յերկուս հատորս

## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

տպագրեալ

Հրամանաւ վեհափառ կաթուղիկոսի ամ՟ Հայոց
Տ՟ Յովհաննու կարբեցւոյ և զանազան նշանակրի
Տէրութեանն Ռուսաց

Ի Ս․ Կաթուղիկէ Էջմիածին

1842 = ռմղա։

տորագրութիւն հին հայաստանի՝ զարդիւնաւոր վաստակն Հայր Ղուկասու Ինճիճեան · և զկնի ինչ ինչ առարկութեանց պարունակելոց յայն մատենան՝ տեսի 'ի վախճանի այնր յաւելորդ թերթի անդ 'ի միերես բովանդակեալ զայս բան գրուածոյ 'ի Նորուն գերազնուութենէ ։

„ Բազում են յոյժ սխալմունք 'ի ստորագրութեան յայսմիկ հին հայաստանի · գոլով և ներկայ և տեսեալ զբազում տեղիս այժմեան հայաստան նահանգին Ռուսաց, որ շրջափակէ յինքեան զգաւառսն՝ Այրարատ, Շիրակ, Սիւնիք, Տայք, Արցախ, Գուգարք, Փայտակարան, Ուտի և այլն, յոլով զանազանութիւնս գտի յայսմ մատենի · բայց գովեմ զաշխատանս Մխիթարեցւոց · քանզի՝ սոքա 'ի պատմագրաց և 'ի հին մատենից մերոց հանեալ են զայս ամենայն և ոչ թէ ներկայ գոլով տեսեալ · ուրեմն մատուցանելով սոցա զխոյին շնորհակալութիւս, հրաւիրեմ զմիաբանս Սրբոյ Էջմիածնի, մանաւանդ զծանօթն իմ ըզՅովհաննէս վարդապետն շահխաթունեանց զայրն գիտնական, փոյթ տանել և ջանադիր լինել՝ ուղղել զայն ամենայն, և զջանս Մխիթարեցւոց պսակել և 'ի կատար հասուցանել ։ Ո՜հ թէ քանի երջանկութի լինէր աշխարհին հայաստանեաց՝ եթէ յիշեալ միաբանութիւն Մխիթարեան թողեալ զօտար և զայլասեռ երկիր և զանուտ մտերմութիւս իւրեանց առ նոսա, գայի՛ն 'ի հայրենիս իւրեանց և աստէն գնէին զջանս և զաշխատանս իւրեանց 'ի ծոց հայրենեաց և սեպհական մայր եկեղեցւոյ

օգոստոսի · ըստ Բարձրագոյն Կամաց՝ հրամանաւ կառավարչին Ամենազօրին հզօր Տէրութեանն Ռուսաց կարգեցաւ 'ի Պրօկուրօր Լուսաւորչեան Հայոց Սինհոդոսի Սրբոյ Էջմիածնի · յորում պաշտօնին և ընծայեալ է աստիճան Կոլլէժսկոյ Սովետնիկի և զանազան նշանս Ռուսաստանեան Տէրութեան ։

հայաստանեայց՝ ընդ հզօր հովանաւորութեամբ մեծի Կայսեր Ռուսաց և Արքային Հայոց ՆԻԿՈՂԱՅՈՍԻ առաջնոյ,,։

,, Ընդամ նահանգական կառավարութեանն հայաստանի Նադվորնիյ Սովետնիկ և Ասպետ Խի. Գ. 'ի 5. յունիսի 1832։

'Ի ծաղկոցաձոր առ քայքայեալ՝ բայց երբեմն հռչակաւոր վանս կեչառուաց,,։

Ապաքէն 'ի գրուածոց աստի և 'ի կենդանաբարբառ յորդորանաց Նորին գերազնութեան, և մանաւանդ՝ ես ինքնս գոլով հարազատ ծնունդ լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց և նոյն իսկ եկեղեցին ինձ հայրենիք, պարտաւոր էի ըստ իմիք լինել պիտանի. վասն որոյ ըստ իմովսանն 'ի հանդիպմունս ինձ յառաջ եկեալ միջոցաց պարապեցայ յօգուտ համազգեաց՝ այն է, Ընդամոց հայրենի եկեղեցւոյ՝ որքան կարելին էր հաւաքել 'ի մի զհին և զնոր ծանօթութիւնս ստորագրութեանց մեծի տաճարիս Շողակաթ ածածին Կաթուղիկէ մայր եկեղեցւոյ հայաստանեայց՝ հայրապետական Աթոռոյ սրբոյ Էջմիածնի. բաժանելով զայն յեօթն հատուածս որք բովանդակին յառաջին հատոր այսր մատենի։

Յառաջնումն հատուածի՝ շինութիւնք, քանդմունք և նորոգութիւնք մեծի տաճարին սրբոյ 'ի լուսաւորչէ անտի ցայսր։

Յերկրորդումն՝ ինչ ինչ նշանաւոր գործք ճարտար արհեստաւորաց՝ որք արդէն գտանին յայսմիկ մեծի Տաճարիս Աստուծոյ։

Յերրորդումն՝ պաշտելի հնութիւնք՝ այն է, նշանք սրբութեանց և մասունք նշխարաց սրբոց՝ որք գտանին այժմ աստ 'ի գանձարանի սրբոյ Կաթուղիկէ եկեղեցւոյս։

'Ի չորրորդումն՝ շինուածք տան կաթուղիկոսարանի և մենաստանի ցարդ եղեալ փոփոխու-

թեամբքն հանդերձ՝ յորում և գրական լուսա-
ւորութիւնն և ուսումնարանն իսկ։

՚Ի հինգերորդումն՝ կառուցածք տան կա-
թուղիկոսարանի և մենաստանին։

՚Ի վեցերորդումն՝ հիմնադիրք քրիստոնէա-
կան հաւատոյ հայաստանի և պահպանողք զայն
ցսուրբն Գրիգոր պարթև. և անտի յաջորդ կա-
թուղիկոսունք մինչև ցՏէր Յովհաննէս կարբեցի։

Եւ յեօթներորդումն՝ միւս չորք եկեղե-
ցիք Վաղարշապատու՝ այն է, սրբուհեացն Գա-
յիանեայ, Հռիփսիմեայ, Շողակաթի և մեր Գրի-
գորի։

Իսկ յերկրորդումն հատորի ՚ի մասնաւորի
հաւաքեալ ծանօթութիւնք ստորագրութեանց
շինուց և դաստակերտաց և ՚ի նոյին ականաւոր
մենաստանաց և եկեղեցեաց գաւառացն՝ Արագա-
ծոտան, Կոտայից, Նիգայ, Վարաժնունեաց և Գե-
ղաքունւոյ. յորս միջոց առ միջոց շրջեցայ՝ թէ՛
ըստ դիպաց և թէ՛ ըստ տասնևութն ամնեայ ժա-
մանակի պարտաւորութեանն ինձ յանձն եղելոյ ՚ի
ծայրագոյն հոգևոր իշխանութենէ յամփոփեալ
վիճակին Երևանայ հոգևոր այցելութեամբ ըստ
առաջին դրութեանն յամին 1834. 1835։ Իսկ և ՚ի
վերջոյ իբր յաւելուած եդաք և զստորագրու-
թիւն ինչ ինչ ականաւոր մենաստանաց՝ որք գտա-
նին ՚ի նահանգի աստ Երևանայ արտաքոյ վերոյ-
գրեալ գաւառացն. Եւս և զշարակարգութիւնս
կաթուղիկոսացն Աղուանից՝ հանեալ ՚ի պատմա-
գրաց և ՚ի հատուածական թղթոց գտելոց առ ո-
մանս և յարձանագրութեանց. որովհետև կաթու-
ղիկոսունքն այնոքիկ ըստ վաղեմնի սահմանադրու-
թեանց կային ընդ իշխանութեամբ կաթուղիկո-
սացն Հայոց սրբոյ Էջմիածնի. և ցարդ իսկ ոչ
գտանէր ուրեք ՚ի պատմագիրս ամբողջութեամբ.
և թէպէտ տպագրեցաւ այն յամրոցն Շուշի յա-

մի 1838, յաւարտ Ժամագրք մատենին, այլ առանց ժամանակագրական տեղեկութեան . և ոմանք պակասք 'ի կարգի անդ և ոմանք ևս կրկնութեամբք եղեալ՝ զորս յայտ առնեն եթէ՛ նախադաս ծանօթութիւնն և եթէ՛ 'ի շարակարգի անդ յառաջ բերեալ տեղեկութիւնքն ապացուցութեամբք հանդերձ . ևս և զի՛նչ ինչ արձանագրութիւնս եկեղեցեացն Աղուանից :

Այս դուզնաքեայ երկասիրութի մեր յերկուս հայի նպատակս . նախ՝ 'ի ծանօթութիւն ընդհանուր Անդամոց հայրենի եկեղեցւոյ զայնր գերայարգ տեղւոյ՝ որ ընդունարան է առաջին ընդհանուր լուսաւորութեան քրիստոնէական հաւատոց հայաստանի և ընդհանուր գրական լուսաւորութեան հայրենի եկեղեցւոյ . եւ երկրորդ՝ 'ի հրատարակումն գովանի ջերմեռանդութեց հայրենասէր որդւոց հայաստանի ըստ արդիւնաշատ նուիրատուութեանցն յայսոսիկ շինարարութիս, որոց ստուգութեանցն անխարդախ վկայք են արձանագիր յիշատակագրութիւնքն յեկեղեցիս և 'ի մենաստանս և յայլս՝ զորս և ունիք ընթեռնուլ յայսմ մատենի :

'Ի վախճանի՝ մաղթեմ 'ի բարեմիտ վերծանողացն անբասիր առնել զմերս չափաւորութիւն յաղագս թերութեան գործոյս այսորիկ . քանզի դիտաւորութիւն մեր ի՛սկ էր գլխաւորել զայս վաստակ լրութեամբք հին և նոր ծանօթութեանց թագաւորաբնակ քաղաքաց , գիւղաքաղաքաց , դաստակերտաց և բովանդակ գիւղորէից , մեծակառոյց եկեղեցեաց, մենաստանաց, մատրանց, պանդոկաց , կամրջաց այլովքն հանդերձ՝ գէ՛թ եղելոցն յայս ամփոփեալ Արարատ աշխարհ . որ 'ի տիրապետութե օգոստափառ ամենողորմած Կայսեր ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Ա , անուանեցաւ Նահանգ հայոց . իսկ ըստ կարգադրութեանն եղելոյ յանցել

1840, ամի՝ Կուռ, յերկուս բաժանելով զայն՝ յԵրևան և ՚ի Նախիջևան ինքեանց յատկացեալ սահմանօքն՝ որք պարունակեն յինքեանս. Երևան՝ զմասն Երասխաձոր գաւառի, զՇ՚ակարք, զՄա-սեացոտն, զԱրագածոտն, զՆիգ, զԿոտայս, զՎա-րաժնունիս, զԳեղաքունի շուրջ զծովակաւն, զՇարուր, զՎեդի, զդաշտն Կոռնայ և զառան-ձինն Արարատ, ուր գտանի Վաղարշապատ քաղաք. յորում և կաթուղիկէ մայր Եկեղեցին Հայաս-տանեայց: Նախիջևան՝ զԵղեգնաձոր ի վայոց ձոր, զԵրնջակ, զԳողթն և զՋահուկ:

Բայց ինչ ինչ բանաւոր պատճառք արգելք եղեն առ այժմ այնպիսի դիտաւորութեան մե-րում. իսկ թէ՝ դէ՛պք ինչ լինիցին մեզ բարե-յարմար միջոցաց, ոչ դանդաղեսցուք առաջի առ-նել հետաքննին հնասիրաց և զայնց մնացեալ գա-ւառացն Արարատայ զստորագրութիւնս, և զմաս-նաւոր շինուց ստորագրեալ այսց գաւառաց՝ որք ՚ի կարգէ ստորագրութեանցն մնացին ՚ի բացեայ:

Ուրա՛խ լեր սիովն մա՛յր եկեղեցի․ քանզի 'ի քեզ շող ա՟ծեղէն 'ի Հօրէ լուսոյ ծագեաց։

Ի՛ջ միածինն 'ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա․ ձայնք հնչեցին սանդարա-մետք անդնդոց։

'Ի շարակնոցն։

Հաստուած

ա̃

# Շողակաթ Աստուածածին Կաթու-ղիկէ մայր եկեղեցի Հայաստանեայց՝ այն է, Տաճար Սբյ Էջմիածնի 'ի Վաղարշապատ։

1, Սուրբն Գրիգոր մեծն պարթև լուսաւորիչ Հայաստանեայց զկնի երկոտասան թուով անտանելի չարչարանացն, և լինելոյն 'ի համար վերջին պատժի 'ի խոր վիրապին Արտաշատ քաղաքի՝ 'ի տեղւոջն մահապարտաց զամս հնգետասան հանդերձ ժամանակօք չարչարանացն, ելեալ 'ի խորոց անտի վիրապին երկնազդեցիկ հրաշիւք տեսլեանց քեռ թագաւորին՝ բժշկէր աղօթիւք զհարուածեալսն 'ի դիւէ. և վարդապետէր բազմութեան ազգի հայոց և մեծին Տրդատայ արքայի նոցա զուսումն քրիստոնէական հաւատոց յերկամսեայ աւուրս։ Իսկ ապա 'ի հասարակիլ գիշերոյ միոյ մինչ կայր սուրբն Գրիգոր յարթնութեան, և սուզեալ էր 'ի խորս խորոց խորհրդոցն իւր՝ աքանչելի տնտեսութեանց նորա 'ի փրկութիւն որդւոց մարդկան, և մտախորհ լինէր յայնմ, տեսանէ զայն հրաշալին տեսիլ. յորում և ձև մեծի տաճարին այլովքն հանդերձ այս օրինակ կերպանայր 'ի լուսոյ անտի ճառագայթելոյ յերկնից. ուստի զկնի բացման վերինն հաստատութեանն երկնից, և լու-

այն հասելոյ վերուստ 'ի վայր մինչև յերկիր, և անչափ զօրաց լուսեղինաց իջելոց ընդ լուսոյն՝ գրէ Ագաթանգեղոս. ,,Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ՝ որ զառաջին ունէր և զէջան 'ի վերուստ մինչ 'ի խոնարհ՝ առաջապահ յա_ռաջեալ և 'ի ձեռին իւրում ուռն մի մեծ ոսկի... և ինքն սլացեալ գայր ըստ արագաթև նմանու_թեան արծուոյ. և եկն, էջ, եհաս մօտ 'ի յատակ երկրիս 'ի շինամէջ քաղաքիս (Վաղարշապատու). և բախեաց զթանձրութիւն լայնատարած գետ_նոյս, և մեծ և անչափ թնդիւնք հնչեցին 'ի սան_դարամետս անդնդոց. և ամենայն երկիր յերևե_լիս ական տեսանելեաց բաւականի՝ հարթ, հաւա_սար, դաշտաձև յատակեցաւ ,,:

,,Եւ տեսանեմ 'ի մէջ քաղաքիս մօտ յա_պարանս արքունի՝ խարսխաձև, ձախարակաձև խարիսխ ոսկի՝ մեծութեամբ իբրև զմեծ մի բլ_լուր, և բարձր մինչև յօդ. և 'ի վերայ նորա սիւն մի հրեղէն. և 'ի վերայ նորա թակաղաղ մի ամ_պեայ, և խաչ լուսոյ 'ի վերայ նորա: . . . . և 'ի չո_րեցունց սեանցն (Էջէ* պատկերն են 'ի տեղւոջ նա_հատակութեան կուսանացն) 'ի վերայ խոյակցն կա_մարք զարմանատեսք 'ի միմեանս կապեցան. և 'ի վերայ այնորիկ տեսիլ գմբէթաձև խորանարդ ամպեղէն՝ շինուած աստուածակերպ զարմանա_լիս: ... և 'ի կատար շինուածոյն տեսանէի աթոռ զարմանալի աստուածակերպ սքանչելի հրեղէն, և զխաչն տէրունական 'ի վերայ նորա, զորով փա_րեալ լոյսն համատարած՝ և խառնեցաւ ընդ ճա_ռագայթս խաչին. և մածեալ 'ի նոյն միացեալ, և սիւն զարդարեալ լոյսն շաղաղեալ, և ծագեալ 'ի մէջ նորաչքին սեանցն խարսխաց, և բղխեալ աղբիւր յորդառատ, և հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտն ամենայն, և եղեւ ծով հասարակ որչափ ակն բա_ւեաց և այլն ,,:

2, Նա 'ի բացատրութեան հրեշտակին առ ատուրքն Գրիգոր՝ գրէ նոյն հեղինակ։ ,,. Իսկ այրս ահաւոր և շքեղաւոր՝ որ զառաջին ունի զլուսոյն, և զուռն ոսկի 'ի ձեռին իւրում. և բաղխեաց զսանդարամետս. Նա տեսչութիւն աստուծոյ է։ . . . . Ոսկի խարիսխն՝ վէմն հաստատութեան անշարժութիւն է. և սիւնն հրեղէն՝ Կաթուղիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս 'ի միաբանութիւն հաւատոյ 'ի ներքոյ թեւոց իւրոց. . . . Իսկ խաչն լուսաւոր 'ի նմա՝ ինքն մեծ Քահանայապետութիւն է 'ի մէջ ժողովրդոց՝ օրինակ Քրիստոսի պատկերին մարմնացելոյ Քահանայապետութեան օծութեան Աստուածորդւոյն։ Նա տեղին այն լիցի Տաճար աստուծոյ, և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և Աթոռ Քահանայապետութեան։ . . . , Իսկ՝ զի բարձր է Սիւնն առաջին, զի մեծ և բարձր է պատիւ Կաթուղիկէ Եկեղեցւոյ։ . . . . . . Նա 'ի վերայ կատարոյ շինուածոյն զոր տեսանես, նոյն ինքն աթոռ ամենազօր բնութեան Աստուածութեանն բարձրութեան ինքնութեանն. զի նա ինքն է գլուխ եկեղեցւոյ սրբոյ, և կատարիչ ամենայն բարութեանց, և 'ի նմա ամենայն շինուած պատշաճի և աճէ զաճումն Աստուծոյ, յորում ամենայն յօդիւք և խաղալեօք հաստատել և կազմել է. . . . և զի՝ ծագեաց լոյս 'ի մէջ սեանցն չորեցունց և բղխեցոյց զաղբիւրն յորդառատ. զի 'ի Կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ շնորհք հոգւոյն 'ի մէջ վկայելոցն և 'ի մէջ Քահանայապետութեանն, բղխեսցէ աղբիւրն մկրտութեան լուանալ զաղտ ոգւոց մարմնովքն հանդերձ։ Նա այն զի յորդեաց, ելից բազում վայրս. զի լինելոց է փրկութիւն բազում ժողովրդոց մկրտութեամբն։ . . . . . . . Արդ՝ զգոյշ լեր աւանդիդ որ քեզ հաւատացաւ 'ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. շինես-

ջե՛ր զՏաճար անուանն Աստուծոյ 'ի տեղւոջն ուր քեզ ցուցաւ։ . . . Եւ զայս ասացեալ (հրեշտակն) շարժումն եղեալ, և ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն,,։

Ապա սրբն Գրիգոր զկնի շինութե երից վկայարանացն սրբուհեաց՝ ասէ. ,,Եւ չորրորդ սիւնն կենդանութեան՝ որ զձեզ առ ած վերացուցանէ. Եկա՛յք զնկատեալ տեղին տէրունական տանն՝ և մեզ հրամայեալ՝ 'ի մէջ առեալ 'ի պատիւ փակեսցուք ։ Թագաւորաւն և ամենայն ժողովրդովքն համդերձ երթեալ հասանէր 'ի ցուցեալ տեղին հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին. և անդէն բարձր քաղաքորմով փակեալ զտեղին 'ի պատիւ, և դրամբք և դռնափակօք ամրացուցեալ. և կանգնեալ և անդ զնշան տէրունական խաչին. զի առ հասարակ հասեալ ամենայն ոք յայն տեղի՝ ամենազօր արարչին Աստուծոյ երկրպագեսցեն ծունր կրկնեսցեն,,։

3, Եւ զկնի այնր սրբն Գրիգոր ըստ ածատուր շնորհացն եղելոյ յինքեան քարոզէր, ուսուցանէր և խելամուտ առնէր զամենեսին ածպաշտութեան խորհրդոցն, և ճանապարհին փրկութեան հոգւոց նոցա. և այնու եռանդեամբ Թագաւորին և բազմութեանն զկուռսն խորտակէր, զմեհեանսն դից աւերէր. և այնպէս զամենեսին մերձ առ ինքն եղեալսն վարժեաց աւետարանական ուսմամբքն, և յարդարեաց պատրաստ տեղի ընդունելութեան շնորհաց սրբոյ աւազանին. և ապա հարկեալ 'ի Թագաւորէն և 'ի ժողովոյ Նախարարացն, և տեսլեամբ իսկ 'ի հրեշտակէ աստուծոյ՝ գնացեալ 'ի Կեսարիա կապադովկացւոց՝ յառաջին հայք առ Ղևոնդիոս Արքեպիսկոպոս քաղաքին՝ որ էր 'ի ձեռնադրութենէ առաքելոյն Թադէոսի, ձեռնադրեցաւ 'ի Նը-

մանէ յեպիսկոպոսութիւն, և վերադարձաւ առ արքայն մեծ Տրդատէս, զոր հանդերձ արքայազնովքն և ամենայն բազմութեամբ բանակին մկրտեալ յԵփրատ գետ, և հաղորդեցուցեալ մարմնոյ և արեան Տեառն՝ դան այնպիսի լուսազգեստ շնորհօք դէպ 'ի Թագաւորանիստն Վաղարշապատ ըստ նորուն Ագաթանգեղոսի.,, Հասանէր յառաջին դաստակերտն իւր յըռոստակն Արարատեան գաւառին 'ի Վաղարշապատ քաղաքի. ուստի նախ զառաջին՝ աստուածասաստ հրամանացն լինէր սկիզբն. ուր նախ նշմարեցն իսկ և նշանակեաց, կանգնեաց զնշան սրբոյ խաչին. . . . և զնկարեալ տեղի տանն Աստուծոյ շինեաց՝ ըզցուցեալն նմա 'ի տեսլեանն զ յառաջագոյն դըրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զԵկեղեցին Աստուծոյ,,:

Եւ այս ամենայն լինէր 'ի հնգետասաներրորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ ցտասն և եօթներրորդ ամն՝ այն է, յամէ տեառն 301, ցամն 303՝ յորում ամ հիմնարկութեամբ՝ պայծառ շինուածովք կառուցեալ կանգնեցաւ սոյն Կաթուղիկէ Եկեղեցի:

4, Այս փառացի Տաճար որպէս և նկատի ըստ պատմութեանց և ըստ աւանդութեանց կայ յայնմ դրութեան ըստ մեծութեան շինուածոյն՝ 'ի բարձրութիւնս, յերկայնութիւնս և 'ի լայնութիւնս, որպէս և յառաջն անդ 'ի մեծէն Գրիգորէ. Եւ թէպէտ չունին նշանակել պատմիչք ազգի հայոց զառաջին դրութենէ մեծութե Տաճարիս, այլ որպէս ասացաւն՝ անփոփոխ հասեալ ցմեզ կայ 'ի նոյնութեան առանց ինչ ընդարձակութեան և փոքրկութեան. և որպէս նշմարի՝ երկիցս այս Տաճար անկեալ է 'ի ներքոյ մեծի աւերանաց, և անդրէն նորոգեալ, յամին 380, և 483. այլ նորոգութիւնք կամ կառուցմունքն այնք

եղեալ են դարձեալ ՚ի վերայ նոյն առաջին հեմանն ըստ ամենայն ձեւակերպութեանցն։

Առաքել պատմիչ Դաւրիժեցի՝ ՚ի նորոգութեն անդ սուրբ Տաճարիս և մենաստանի նր ՚ի Մովսէսէ Սիւնեցւոյ, գրեաց լիովին զամենայն զհանգամանսն. գրեալ է և զչափոյ մեծութեն, 50 հալապի յերկայնութեն, 48 ՚ի լայնութեն, և 35 ՚ի բարձրութեանն. իսկ այժմ չափեալ մեր չափով պարսկային գազի երեւանայ՝ եղև երկայնութիւն նորա թևէ ՚ի թև, ՚ի ներքին երեսաց որմոցն 32 և կէս, լայնութիւնն նոյնպէս թևէ ՚ի թև 30 և կէս. իսկ բարձրութիւնն ՚ի յատակէ եկեղեցւոյն մինչև ցառաստաղ մեծի կաթուղիկէին 21։

5, Ունէր յայնժամ այս Տաճար սրբութեն զմի միայն սեղան սրբազան խորհրդոյն յարեւելեան թեւի իւրում ՚ի կիսաշրջանակ մեծի կամարի անդ, և է մինչև ցայժմ. և օծաւ այն օրհնութեն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յանուն օրհնաբանեալ կուսին Մարիամայ Մօր Տեառն, և անուանեցաւ | Շողակաթ Աստուածածին |՝ յոր անուն և եկեղեցին իսկ։

Վաղջայայտ իսկ է ամենեցուն լինելն Սեղանոյ սրբոյ Տաճարիս Մեծի յանուն Սրբուհւոյ Աստուածածնի. զի եկեղեցական մատեանք ազգիս Հայոց բացատրեն ըստ այնմ. հին տօնացոյցն ըստ սահմանելոյ սրբոյն Գրիգորի ունի զտօն մեծի Եկեղեցւոյս ՚ի շաբաթ աւուր վերափոխման սուրբ Աստուածածնի յամսեանն օգոստոսի, և ասէ. „ Շաբաթ Շողակաթին տեսլեան սրբոյն Գրիգորի„։ Ստեփաննոս տարօնեցի. վր Մշըլհաճայ ամիրայի այլազգւոյ ասէ թէ՝ „ Ի ժմ յետոյ եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց՝ և զփրկական նշանն որ ՚ի վերայ Շողակաթի գմբեթին կանգնեալ էր՝ ճօպանօք ՚ի վայր բերէր ՚ի նշ

(982) Թուականին ,, · ըստ այսմ և այլք ։

6, Ենուաներ և Կաթուղիկէ Եկեղեցի՝ և այն, ըստ բացայայտութեան հրեշտակին առ սբն Գրիգոր՝ որպէս ՚ի համարն 2 ։ և զի՝ անուանեցաւ Մայր եկեղեցեց հայաստանեայց, ըստ Յովհաննու Կաթուղիկոսի · ,,իսկ··· ապա մեծ Հայրապետն հայոց Բաբկէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ՚ի Նոր-քաղաքի (Վաղարշապատ) ՚ի սուրբ Կաթուղիկէի ՚ի Մայր Եկեղեցեաց Հայոց ,, ։ Եւ թէպէտ նախքան զսա կառուցան Եկեղեցիք ՚ի Հայոց՝ որպէս յԵդեսիա, յաւանն Եգուլիս և յայլ տեղիս · այլ այնք ՚ի թագնութեան, և յառանձին հաւատացելոց · և կառուցան ես յընդհանուր լուսաւորութեն՝ որպէս յԱշտիշատ, յԻննակնեան տեղին, և յաւանն Բագուան ՚ի բագրևանդ գաւառ, բայց նշանագրութիւն այսր տեղւոյ յընդհանուր լուսաւորութեանն նախ քան զայնս, և ՚ի թագաւորաբնակն իսկ քաղաքի · և յատկապէս ՚ի տեղւոջն՝ ուր նշանք և արուեստք զօրութեանց խնամակալ արարչին առաւելապէս զեղան, յորդեցան ՚ի փրկութիւն · վասն այնորիկ՝ Կաթուղիկէ Եկեղեցի, և Մայր եկեղեցեաց հայաստանեայց ։

7, Ենուանի և Էջմիածին ՚ի յետագայից · քանզի զըան տեսլեան սրբոյն Գրիգորի · ,,Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ ,, ։ զոր հրեշտակն բացատրեաց յաղագս տեսչութեն Աստուծոյ · ՚ի համարսն 1, 2,, · առին յետագայ վարդապետք փոխանակ Որդւոյն միածնի՝ բանին մարմնացելոյ ։ Ստեփաննոս Օրբէլ · յողբն որ ՚ի վերայ մեծի Տաճարիս · յերես 8 ·

,,Ո՞ւր ե՞ս Ո՞ւր ե՞ս Էջք Միածնին,
Իմ Կուսածին Խաչագաւորին ,, ։

և Ճարակնոցն ՚ի մանկունքն տօնի Ճողակաթին · ,,Էջ Միածինն ՚ի հօրէ և լոյս փառաց ընդ

1004
18438

նմա եւայլն , , :

8, Այս Տաճար յայնմ լուսաւորութեան ազգի Հայոց եղեւ Մայր ամենայն Եկեղեցեաց Հայաստան աշխարհի, եւ յատկացեալ տեղի Աթոռոյ կաթուղիկոսական իշխանութեանն ըստ բացատրութեան հրեշտակին առ սուրբն Գրիգոր. Եւ 'ի լրութեան անդ Եկեղեցւոյն եւ օծմանն կարգեաց տօն եկեղեցւոյ սուրբն Գրիգոր, եւ կանոնեաց կատարել զայն ամ ըստ ամէ՝ զոր անուանեն տօն Շողակաթի եւ կատարեն 'ի նաւակատիսըն վերափոխման սուրբ Աստուածածնի:

9, Այս 'ի տկարանալ իշխանութեան Հայոց եւ 'ի մեկնելն մեծին Ներսեսի սրբոյ հայրապետի 'ի յունաստան, հրամանաւ Շապհոյ ե̅, արքային պարսից ուրացեալքն 'ի հաւատոց Մեհրուժան եւ Վահան զօրօք նոցին պարսից մտեալ 'ի Հայաստան յամի 380՝ աւերեցին եւ գերեցին զբազում գաւառս. ընդ որս եւ զՎաղարշապատ քաղաք տապալեցին 'ի հիմանց՝ զորմէ Բուզանդ պատմիչ 'ի Դ դպրութեան, 'ի գլուխ ԾԵ: Ուր որպէս երեւի աւերեալ էր եւ մեծապէս եւ մեծ Եկեղեցին Կաթուղիկէ՝ զոր թերեւս զկնի թագաւորելոյն Պապայ նորոգեալ էին նախնիք մեծին Վահանայ Մամիկոնէի՝ որպէս ստուգի 'ի բանից փարպեցւոյն, (10): Եւ գուցէ 'ի ժամանակէ անտի նորոգութեանն Եկեղեցւոյս 'ի նախնեաց Վահանայ Մամիկոնէի՝ յորում ժամանակի տակաւին չէր տառ հայացի, մնացեալ իցէ յունական արձանագրութիւնն խաչաձեւ՝ որ եդեալ կայ 'ի հիւսիսային որմն Եկեղեցւոյս արտաքուստ զթիկամբ սրբոյ աւազանին. եւ Վահան Մամիկոնեան 'ի նորոգելն զայս Տաճար թողեալ իցէ զայն յիւրում տեղւոջ 'ի նշան եւ 'ի յարգանս իւրոց նախնեաց: Իսկ այն վէմ յունական արձանագրութեան ունի զայս ձեւ ըստ ամենայն

կազմութեան եւ տառիցն ։




Իսկ ՚ի յարեւմտակողմն այսր յունական արձանի ՚ի նոյն բարձրութեան՝ մերձ ՚ի կիսաբոլորակ բուրգն սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նախավկայի դնի միւս այլ վէմ հին աւուրց՝ յորում կոփեալ են՝ յարեւմտից պատկեր Պօղոսի առաքելոյն նստեալ յաթոռ ծալովի, եւ յարեւելից պատկեր Թեկղեայ կուսի կանգուն ՚ի յո-

տին · երկոցունցն անուանք եւս յունական տա-
ռիւք ըստ այսմ ձեւոյ ։




10, Ընցեալ 'ի վերայ երկրորդ նորոգու-
թեանն սրբոյ Տաճարիս ամք 103՝ այն է, յամի
տեառն 483, յիշատակեալն Վահան Մամիկո-
նեան զօրավար հայոց որդի Հմայեկայ եղբօր մե-
ծին Վարդանայ՝ որում սովորութիւն իսկ էր
զկնի քաջադէպ յաղթութեանցն ընդդէմ թըշ-
նամեաց՝ դառնալ անդրէն և զյաղթութեանն
գոհութիւն յայսմիկ Եկեղեցւոջ մատուցանել
առ Աստուած, և այն ինչ միջնորդութեամբ Ըն-
դեկանայ պարսիկ մարզպանի խաղաղացաւ Հայ-
աստան 'ի պատերազմաց, հրովարտակաւ Արքային
պարսից ընկալաւ գլխակատար իշխանութ Մարզ-
պանութեան 'ի վերայ հայրենի աշխարհին, և եկն
յայս քաղաք Վաղարշապատ և զյաջողուածոցն

զգօհութիւն մատուցեալ Ամենաբարձրելոյն 'ի ամէն յայամիկ Կաթուղիկէ եկեղեցւոջ, նորոգեց ապա և զայն 'ի հիմանց բոլորովին ըստ առաջնոյն որբատաշ քարամբք, ըստ Պապարայ փարպեցւոյն Թղթ" 273. ,,Իւր եկեալ այնուհետև հասանէր 'ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախոր-հուրդ և աննենգ ուխտապահ նախարարօքն Հա-յոց, կատարէր զսովորական ուխտս 'ի սուրբ Ե-կեղեցւոջն կաթուղիկէի` զոր հիմն արկել նորո-գեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց քաջ զօրավարն Հայոց մամիկոնեանն Վահան,, : զորմէ և պատմիչն Սե-բէոս եպիսկոպոս. ,,Այս Վահան (Մամիկոնեան) ժողովեաց և զհարկս աշխարհիս Հայոց (զորս տա-ցին յարքունիս պարսից) և շինեաց զեկեղեցիս մեծա-մեծս` զոր աւերել էր պարսից 'ի Վաղարշապատ քաղաք, և 'ի Դուին, և 'ի մզրայս, և 'ի բազում տեղիս աշխարհիս Հայոց. և շինեալ զերկիրս նո-րոգեաց վերստին,, :

II, Երանելին Կոմիտաս 'ի յաջորդելն իւ-րում յԱթոռ հայրապետութեան Հայոց ձեռն 'ի գործ արար 'ի շինութիւն եկեղեցեաց Վաղար-շապատու. ուր տեսեալ և զանվայելչութի փայ-տեայ շինուածոց մեծի գմբեթին Կաթուղիկէ եկեղեցւոյս` որ երևի մնացել թերևս 'ի շինու-թեանց անտի Վահանայ մամիկոնէի` տևողու-թեամբ միջոցի 135 ամաց` այն է, յամի 618. քակէ զայն և չքնաղ ձևակերպութեամբ կանգնէ 'ի կոփածոյ քարանց, առնէ և ինչ ինչ նորոգութիս յորմունս նորա` յամի տեառն 618 : զորմէ այլովք ծանօթութեամբք հանդերձ Սեբէոս եպիսկո-պոս պատմիչ. ,,Վերացոյց (Կոմիտաս) և զփայտայար-կըս սրբոյ Կաթուղիկէին, նորոգեց և զխախուտ որմոյն, շինեաց զքարայարկն. այս եղև յամս Յովհաննկան վանաց երիցու սրբոյ Կաթուղիկէ-

14. Իսկ յաւուրս Մ՝ելքիսեթ և Գրիգոր կաթուղիկոսաց նախորդացն Սահակայ Է, Շահապաս Ա, արքայ պարսից՝ որ աւերեաց զհայաստան և զբազմութիւն հայազգի ժողովրդեան ա-

Այս ընդ այսոցիկ գրուածոց ահա՛ երևի շարունակութիւն յաջորդութեան վանահարց և որ եպիսկոպոսաց՝ որղոց տեղւոյ կաթողիկոսական իշխանութիւնն էր ՚ի Դուին և էր յԱնին Շիրակայ, և անդր եւս. էր և Սիսն կաթողիկոս երևանցի ՚ի Մեծի մայրենին ըմբռ անուանեալ՝ դնետևողութիւն մաքանութեան հոգևորականաց յայս Կաթողիկէ Էջմիածնի, և խնամակալութեան կաթողիկոսացն ցկանխհայրապետական իշխանութեանն և յՍիսոյ, գրոյն Է, Թըւթա" 14. „ Արդ յայնժամ միջոցում յորս կաթողիկոսանն ՚ի Դուին և յԱնի նստան, երբեմն ՚ի յԱթոռոջս Էջմիածնի գտանէին վանականք և կրօնաւորք՝ էր և կարի սակաւք և գծուծք. իսկ ՚ի միջոցին ՚ի յամս ՅԻԴ (324)՝ յորս նստան ՚ի Սիս, իսպառ մնաց ՚ի յամայութեան մինչև ՚ի ՊՂ թւին մեր (1441) յորում վերստին գնացաւ Տէր ՚ի յերանելեր Աթոռըն և նորոգեաց. յորում սկզբանն նստաւ Կիրակոս ճգնաւգեաց հայրապետն „:

Եւ յերկրորդ յայսմ նշանակեալ միջոցի ընդ այլոց և մնայր յամայութեան Կաթողիկէ Էջմիածին Ս. Լուսաւորչաւոր, այլ ո՛չ իսպառ և շարունակաբար. քանզի էր ոչ միայր անբնակ ՚ի պատճառս հալածանաց և գերութեանց, և էր ոչ բնակէին անդէն եպիսկոպոսունք Արարատեան դաշտի յանուՄեծի Կաթողիկէի յանդրէն խաղաղանալ երկրին և հանդարտել բնակչացն. որպիսիք էին և լինին ցարդ և այլ ևս Աթոռանիստ վանորայք և մենաստանք: Սրան զի ահա՛ ՚ի սկզբան անդ նորոգութեան Աթոռոյ հայրապետութեանն անդրէն ՚ի Ս. Լուսաւորչաւոր՝ ՚ի ժողովի անդ ընտրութեանն Կիրակոսի Վիրապեցւոյ նշանակի ընդ այլոց եպիսկոպոսաց ժողովոյն և անուն եպիսկոպոսին Էջմիածնի՝ „ տէր Գրիգորէսն (եպիսկոպոս) Էջմիածնին և այլք. առ Թովմայի Մեծոփեցւոյ ժամանակակից պատմագրի:

ծեալ ՚ի բազում գաւառաց վարեաց ՚ի պարս-
կաստան, խորհուրդ հաստատուն եդ ՚ի միտ քա-
կել զբովանդակ շինուած մեծի Տաճարիս՝ որոյ
և զքար և զհող տալ տանել ՚ի պարսկաստան, և
նորօք կառուցանել անդէն յանուն Էջմիածնի
զտաճար նորոգ . որոյ և զտեղին ևս նշանագրեալ
էր անդր ՚ի նոր Ջուղայ պարսից, մերձ յայգին ար-
քունի՝ առ ՚ի հանդուցանել զմիտս ժողովրդեանն
հայոց մնալ անդէն անդարձ ՚ի սէր այնր տաճա-
րի . այլ զկնի թէպէտ կասեցաւ ՚ի խորհրդոց ան-
տի, բայց յետոյ՝ այն է, յամի տեառն 1614, այն
ինչ ինքն Շահապաս Ա, էր զօրօք իւրովք յաշ-
խարհին վրաց աւերութեամբ և գերութեամբ,
ետ քակել ՚ի շինուածոց Կաթուղիկէ եկեղե-
ցւոյս զհնգետասան նշանաւոր քարինս՝ որք էին,
Մէջ սեղանոյ սրբազան խորհրդոյն, և Սիւն նո-
րա . Մէջ իջման տեղւոյն, Աւազանն մկրտութեան,
Աստիճանովքն մի հիւսիսակողման, և Աստիճա-
նովքն մի հարաւակողման մեծի բեմին, չորք քա-
րինք չորից անկեանց եկեղեցւոյն յարտաքին կու-
սէ, երկու մեծամեծ մոմակալքն քարեայ, և ե-
րեք քարինք ՚ի սալայատակէ բեմին մեծի . զորս և
Խահմազղուլի բէկ որդին Ամիրգունայ խանին
երևանայ ըստ հրամանի Շահին հանել և ամրա-
ցուցեալ կաշեօք՝ ետ տանել յԱսպահան քաղաք
պարսից դարձեալ վերակացութեամբ նորին Յով-
հաննէս քահանային՝ ընդ որոյ ձեռն յառաջագոյն
ուղարկեալ էր անդր յԱսպահան զԱջ Լուսա-
ւորչին, զԱւետարանն ոսկետուփ, և զԽաչն ար-
ծաթի :

Այսքին վէմք յերկար ժամանակս կային
անդ ՚ի Ջուղայ եդեալ ՚ի նշանաւոր ինչ տեղւոջ .
այլ զկնի անցման ժամանակաց, վերստին՝ վէմ
սեղանոյ եդաւ ՚ի տեղի վէմ քարի սեղանոյ Ամե-
նափրկիչ վանացն . երկոքին մոմակալքն եդան ՚ի

վերայ բեմին նոյն եկեղեցւոյ. երեք ևս այլ քա-
րինք եդան առ բեմբիւ սեղանոյ այնր վանաց, ուր է ծածկոյթ ինչ կամարայարկ. իսկ միւս վէմ-քըն կան եդեալ ՚ի սենեակ ինչ՝ որ ՚ի մէջ պարըս-պի եկեղեցւոյն խօձենց անուանելոյ յանուն սըր-բոյն Գէորգայ ։

15, Մովսէս վարդապետ սիւնեցի՝ որ զկըր-նի եղև կաթուղիկոս, յամի տեառն 1627, ՚ի կա-ռուցանել զմենաստանն՝ նորոգեաց ըստ մասին և զայս Կաթուղիկէ եկեղեցի ՚ի գմբէթն, ՚ի տանի-սըն, յառաստաղն, յորմունսն, ՚ի հիմունսն, և ՚ի սալայատակսն ՚ի ներքս և յարտաքս եկեղեցւոյն. քանզի տաճարն թէև ոչ ըստ մենաստանին, այլ ըստ բաւականաչափ մասին խարխալեալ էր. զոր-մէ Առաքել պատմիչ Դաւրիժեցի յերես 298. „Նաև սալայարկ յատակ եկեղեցւոյն քանդ-քանդեալ եղեալ որջ զեռնոց և թռչնոց, և մեծամեծ լու-սամուտքն՝ զորս ունի (էկեղեցին)՝ ամէնն ՚ի բաց կայր առանց վանդակի . . . . ։ Իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին և տանիքն ամենայն. և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն թա-փեալք, և որմոյ յատակաց վէմքն փշրեալք և ծա-կոտեալք„ ։

16, Նոյա յաջորդ սոյն Մովսեսի Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի յամի տեառն 1633, նո-րոգէ նորապէս ըստ բոլորին զտանիս սրբոյ եկե-ղեցւոյս բաց ՚ի մեծ գմբէթէն ։ Նաև սա ինքն դարձեալ զկնի պէսպէս ազգօգուտ գործառնու-թեանց յազգս հայոց ՚ի Կոստանդինուպօլիս և յԵ-րուսաղէմ, սկիզբն առնէ ապա յամի տեառն 1654, շինութեան մեծի զանգակատանն՝ որ կայ ՚ի վերայ մեծի դրանն արևմտեան կից ՚ի հին շինուածն՝ այն-պէ՛ս, զի երկոքին սիւնք զանգակատանն միացեալ են ընդ առաջին շինուած եկեղեցւոյն, և միւս երկուքն արևմտակողման կան որոշ սիւնաձև՝ ը-

միջոցս որոց մնանեն յեկեղեցին և եղանեն . և հասեալ շինուածոյն ցհիմունսն միջնայարկին՝ վախճանի երանելին Փիլիպպոս . որում յաջորդեալ Յակոբ Դ, Ջուղայեցի՝ գլխաւորէ զայն շինուած հրաշակերտ՝ յամի տեառն 1658: Այս զանգակատան տպս ներքին, նմանապէս միջին յարկքն հաստատեալ կան 'ի վերայ չորեցունց սեանց . իսկ եւսայարկն սորին 'ի վերայ միատանի սեանց ութնից, և կաթուղիկէ ծածկութին վայելչաձև սրրածայր ութանկիւնի . որոյ և արձանագրութիւն շինութեանն գտանի 'ի ներքուստ կողմանէ այսր կաթուղիկէի շուրջանակի միաշար՝ ուր ութեքին սեանց գլուխք միանան, այս ձև :

,,Ի Թագաւորութե պարսից Շահապասի, (Բ,) նա և 'ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, Թուին (հայոց) ՌՃԴ . հիմնարկեցաւ, տն Յակոբայ Ջուղայեցւոյ ՌՃԶ, աւարտեցաւ *, զանգակատունս ծախիւք Անտօն պարոն չէլէպիին 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ,, :

Երկրորդ արձանագրութիւն գտանի 'ի վերայ ընդարձակ վիմեայ բարաւորի մեծի դրանն արևմտեան արտաքուստ՝ յորոյ վերայ է կառուցեալ այն զանգակատուն, յերկկարգս՝ յայս օրինակ :

,,Շնորհիւ Աստուծոյ և օժանդակութբ սրբբազան կաթուղիկոսացն Փիլիպպոսի և Յա-

* Այսպէս յարձանագրութեան անդ նշանակէ կառուցումն զանգակատանն 'ի ՌՃԶ Թուին հայոց, բայց ժամանակակիցն Առաքել պատմիչ դնէ զայն ամս առելի . ,, Եւ կառուցումն զանգակատանն եղև հազար հարիւր և եօթն Թուին, և 'ի տօնի խաչվերացին օրհնեցին խաչն որ 'ի գլուխ զանգակատանն, և կանգնեցին շինուածէն . Արդ՝ ստոյգ պատմութիւն զանգակատանն այս է . Թէպէտ 'ի վերայ նորին գրեալ Թուականն այլապէս էն ,, :

կոբայ հրաշակերտեցաւ զանգակատունս ։
և ծաղկեցաւ 'ի թվ՛ (հայոց) ՌՃԺԳ ,, 2.
(1664)։

Սքանչելի են գրուակքն յայս շինուածոյ եռայարկ, և քաջահմուտ քարակոփի արդարև գործ. զի 'ի վերուստ մինչ 'ի վայր՝ 'ի սիւնսն, 'ի կամարսն ներքոյ և արտաքոյ գրեթէ՛ հաւասար քանդակք բազմակերպ և մանուածոյք։ Իսկ 'ի հիմունսն անդ երրորդ յարկի գմբեթին 'ի կամարագլուխսն միջնայարկին՝ յերիս կողմունս արտաքուստ են երեքին պատկերք քանդակեալք 'ի վէմ. յարևմտեան ճակատանն է կենարարին մերոյ և փրկչին Յիսուսի՝ բարձրացեալ ունելով զԱ՛Ջ իւր հովանի մենաստանին. 'ի հիւսիսայինն՝ մեծին Տրդատայ արքայակերպ տեսլեամբ. իսկ 'ի հարաւայինն՝ սրբոյն Գրիգորի լուսաւորչի հայրապետական զգեստուք։

17, Զաքարիա վարդապետ վաղարշապատցի որդի Յովհաննու քահանայի, ձեռնադրեալ եպիսկոպոս 'ի Փիլիպպոս Կաթողիկոսէ՝ առաջի յառաջնորդութիւն վանաց սրբոյն Յովհաննու կարապետի՝ որ մերձ 'ի գիւղաքաղաքն կարբի. գնացեալ ապա յԵրուսաղէմ՝ դարձ առնէ անդրէն 'ի վանս իւր. և ըստ հարկելոյ և խնդրանաց միաբանիցն Էջմիածնի յաղագս գործունէութե իւրոյ յամենայն իրս՝ գայ յԱ՛թոռ այսր. և ապա իւրով վերահասութեամբ և ծախուք տայ շինել զսալայատակն շուրջ զկաթուղիկէ եկեղեցւոյս, և զմիւս սալայատակն ընդարձակ զաւաջեան մեծի դրանն արևմտեան՝ ուր լինի ժամեր-

2, Խնդրահանն երկրորդ արձանագրութեանս է ծաղկելոյն և ո՛չ շինութեանն. և ծաղկումն այն՝ է միայն 'ի ներնայարկի անդ 'ի ներքուստ կողմանէ ցամաքադռն և 'ի կամարսն գաւթագահն երանգօք։

գութիւն յամառնային տօթաւոր եղանակին. և 'ի միջին տեղւոջ այսր քարայատակի տայ յարդարել զտապան մարմնոյ իւրոյ. և 'ի լրանալ գործոյն իսկ հասանէ նմա վախճան կենաց, և դնի անդէն մարմին նորա յամի տեառն 1659. 30րդ աւուր յունիսի՝ որոյ ամբողջ տապանաքարն արդեւս կայ 'ի շիրմի անդ նորա. զայսմանէ Առաքել պատմիչ՝ յերես 342. 343: և պատմիչն Զաքարիա սարկաւագ այնր վանաց:

18, Զկնի վախճանին Յակոբայ կաթուղիկոսի գայ այսր յԱթոռ Հայրապետական Եղիազար կաթուղիկոս յամի տեառն 1682. և շինէ զերեսին միանման փոքրիկ զանգակատունս յերեսին թևսն շինուածոց սրբոյ Տաճարիս՝ այն է, յարևելս, 'ի հարաւ և 'ի հիւսիս. յարևելս՝ 'ի վերայ կամարայարկին սեղանոյ սուրբ Աստուածածնի Շողակաթ անուանելոյ. 'ի հարաւ՝ 'ի վերայ նոյնօրինակ կամարայարկին սեղանոյ սրբոյն Յովհաննու կարապետի. և 'ի հիւսիս՝ նմանապէս 'ի վ̅ր կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նախավկային. յայս երկոքին թևք ս̅բ̅յ տաճարիս չէին կանխաւ սեղանք սրբազան խորհրդոյն, և ոչ բեմք. զի յատակք նոցա հաւասար էին յատակաց ս̅բ̅յ Տաճարիս. իսկ սոյն այս Եղիազար կաթուղիկոս ետ բարձրացուցանել զհարաւային երեք աստիճանօք. ուր կանգնեաց և կաթուղիկէ փոքրիկ 'ի վերայ չորից սեանց և 'ի նորմա սեղան պատարագի՝ ուղղեալ դէպ յարևելս. և ունի արձանագրութիւն 'ի հիւսիսային ճակատ իւր կաթուղիկէն փոքրիկ՝ ըստ այսմ:

,,Յիշատակ է Յովհաննէս խորանս Եղիազար կաթուղիկոսին 'ի թուին (հայոց) ռ̅ճ̅լ̅գ,,. (1684):

'Ի վերայ բեմի այսր սեղանոյ և զառաջեաւորն պատուանդանին վկայք՝ եպիսկոպոսունք և այլ

գլերք, և նորընծայ եպիսկոպոսացուն յաւուր ձեռնադրութեան Եպիսկոպոսի:

Իսկ զՀիւսիսակողմանն՝ եօթն աստիճանօք. ըստ վերնոյն և սա ունի կաթուղիկէ և սեղան համանման առաջնոյն ամենևին, որոյ և արձանագրութիւն ի հարաւային ճակատ կաթուղիկէին գտանի՝ այսօրինակ:

„Յիշատակ է սուրբ Ստեփաննոսի սեղանս տէր Եղիազար կաթուղիկոսին Թուին (հայոց) ռճլգ„:

Ի վերայ այսր եօթնաստիճանաւոր բեմի պատրաստի Աթոռն Հայրապետական յաւուր ձեռնադրութեան Եպիսկոպոսի. ուր եկեալ նա ինքըն Հայրապետն փառացի զգեստուք բազմի յաթոռ, և կոչէ զվիճակն ըստ իւրաքանչիւրումն կարգի. և ապա զնորընծայ եպիսկոպոսացուն՝ ցոր հարցեալ զդաւանութենէն այլովքն հանդերձ, տայ զկարգն եմիփորոնի. և ապա զօծումն յաւագ սեղան անդր սուրբ Աստուածածնի:

19, Կանգնեաց սա և զփոքրիկ կաթուղիկէ ի վերայ չորից սեանց նոյնպէս ի հասարակ քարանց ի միջին տեղւոջ յատակի սրբոյ Տաճարիս՝ որ անկանի ուղղակի ի ներքոյ մեծի կաթուղիկէին. յորում տեղւոջ այրն ահաւոր եհար զոսկեռուն ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի լուսաւորչին (1): Այս տեղի նշանաւոր ըստ տեսլեանն, և ըստ առման յետագայից յանուն իջման Միածնի Բանին, ուր բաղխեցաւ ուռն ոսկի, և անչափ Թնդիւնք հնչեցին ի սանդարամետս անդնդոց՝ Թէպէտ չունէր յառաջագոյն ըստ այժմեան դրութեանն արժանաւոր ինչ շինուածս զմբեթի և սեղանոյ, այլ չէ՛ր և այնպէս հասարակ տեղի՝ որպէս միւս յատակք եկեղեցւոյն. քանզի որպէս տեսանի ի գրուածսն Առաքելի դավրիժեցւոյ, էր յատկացեալ տեղի նշանաւոր վիմօք՝ ըստ գրեցելումն, յանուն իջման տեղւոյն՝ որ ուղղա-

կի անկանի 'ի կեդրոն յատակի եկեղեցւոյն՝ 'ի միջին տեղւոջ ընդարձակութեան չորից սեանցն . վասն որոյ և յատկացեալ ուխտական տեղի ։ Ընթերցի՛ր զբանս Նորին Առաքելի դավրիժեցւոյ . ուր յերես 210 , ասէ . ,, Եւ զնշանաւոր քարինսն Էջմիածնի քակեալ հանին 'ի տեղւոյն՝ որք են այսոքիկ . սուրբ սեղանն , յորոյ վերայ պատարագըն մշ̅ մատչիւր . և այս սեղանոյ սիւնն . Քրիստոսի իջման տեղեաց քարն են ,, ։ յերես 245 . ,, Իսկ 'ի նեղութենէ ցաւոյն յաւուր միում ասաց Սահակ կաթուղիկոսն բառնալ զինքն և տանիլ 'ի Տաճար սրբոյ Էջմիածնին . և անկեալ 'ի վերայ իջման տեղեացն Քրիստոսի , յորում տեղի Քս̅ իջեալ է . և բազմօք հառաչանօք և այլն ,, ։ յերես 298 . ,, Զի ամենևին ունայնացեալ էր 'ի ստացուածոց և կողոպտեալ 'ի զարդուց . . . մինչ զի Քրիստոսի իջման տեղին , և սուրբ սեղանն ևս ոչ ունէին զծածկոցս , ոչ կանթեղք են ,, ։ Ահա յայսմ տեղւոջ կանգնեաց զկաթուղիկէն , և ուղղեաց 'ի նմա զսեղան սրբազան խորհրդոյն ։ Եւ զերիս միջոցս երկուց սեանցն արևմտեան ետ կանգնել վանդակ քարեայ առ 'ի լինել տեղի կալոյ աղօթից միաբանութեան հանդէպ սեղանոյ այսր իջման տեղւոյ ։ վասն այսոցիկ գործոց Եղիազար կաթուղիկոսի , գրէ սարկաւագն յովհաննէսից Զաքարիա , հատոր Բ , Գլուխ ԾԲ . ,, Նաև կանգնեաց (Եղիազար) քարեայ կաթուղիկէ 'ի վերայ իջման տեղին և հաստատեաց սեղան՝ առնել պատարագ . և երկու կողմն եկեղեցւոյն բարձրացոյց յերկրէ և արար ամպիոն , և կանգնեաց սեղան պատարագի , և շինեաց որմ 'ի մէջ եկեղեցւոյն 'ի հարաւոյ դրանէն մինչև 'ի դուռն հիւսիսոյ , զի անդ կացցեն յաղօթս ... և 'ի տանիս եկեղեցւոյն երիս տեղիս կանգնեաց կաթուղիկէ ,, ։

20, Այս յիշատակելոյդ կաթուղիկէ 'ի մէջ իջման տեղւոյն հանդերձ սեամբքն և ինչ ինչ քարամբք յատակին՝ Աստուածատուր կաթուղիկոս համատանցի նոր 'ի նորոյ ետ կառուցանել 'ի սպիտակ մարմարիոնեայ քարանց կարի վայելչաձև · յարդարեաց և զճակատ մեծի բեմին աւագ սեղանոյ սուրբ Աստուածածնի 'ի նոյն օրինակ մարմարիոնեայ քարանց: Նորոգել ետ և զսալայատակ եկեղեցւոյն և զչորեսին մեծամեծ սիւնսն · և զմէջ տաճարին՝ զորմունսն և զառաստաղն ետ սպիտակացուցանել բռօք, և ծաղկել ըստ բոլորին · որոյ շինութեանց արձանագրութիւն կայ 'ի շրջապատ մեծի կաթուղիկէին 'ի ներքուստ կողմանէ՝ ուր չորից մեծամեծ սեանց գլուխք միանան, սևորակ դեղով միակարգ՝ յայս ձև օրինակի:

,, 'Ի թուականութեան հայկական ռՃկԹ · (1720) ես տէր Աստուածատուր համատանցի կաթուղիկոս ամենից հայոց ետու նորոգել զչորեսին խախտեալ սիւնքն սբյ եկեղեցւոյս, և զբոլոր եկեղեցին նորոգեալ և ծաղկեալ հանդերձ մարմարիոնեայ շինուածովք՝ որ 'ի մէջ սրբոյ եկեղեցւոյս, են յիշատակ հոգւոյ իմոյ, 'ի վայելումն տառապեալ ազգի հայոց, և աստ 'ի սուրբ Աթոռըս զետեղեալ միաբանից · և որք ընթեռնուք զարձանս զայս, յիշեցէ՛ք զիս 'ի մաքրափայլ յաղօթս ձեր · և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն,,:

Տեղին իջման Միածնի որդւոյն Աստուծոյ՝ ուր կանգնեցաւ փոքրիկ կաթուղիկէն և սեղան, շուրջանակի փակեալ է քառակուսի պղնձեայ վանդակաւ՝ որ ունի և երկփեղկեան դրունս երկուս · մին 'ի հարաւ և միւսն յարևմուտս · յերկոսին կողմանս սոյն արևմտեան դրան 'ի վանդակի անդ գոն արձանագրութիւք 'ի վր պղնձեայ տախտակաց ամրացելոց ը վանդակին՝ այս օրինակ:

,, Ի Թուին (հայոց) ՌՃՁԱ , (1732) ՚ի հայրապետութեան Աբրահամ կաթուղիկոսի , և հոգաբարձութեամբ նորին ։ Ս շինեցաւ շրջապատ ճաղերս իջման տեղւոյն Միածնի գեղեցիկ շինմամբ . յիշեցէ՛ք ՚ի Տէր ,, ։

Կայ արձանագիր մի ևս ՚ի հարաւակողման այսր վանդակի յանուն Էրզրումցի վարպետ Միքայէլին՝ շինողին զայս վանդակ պղնձեայ ։

21 , Սա ինքն Աբրահամ Գ , կաթուղիկոս շինէ նորոգ զերկուսին սեղանս՝ մի յաջմէ աւագ սեղանոյն սուրբ Աստուածածնի յանուն սրբոց Յակոբեանց առաքելոց , և միւսն յահեկէ նորին յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին՝ բարձրացուցեալ զբեմսն այնց ՚ի յատակէ եկեղեցւոյն աւելի քան զկանգուն մի՝ որոց միջոց ընդ բեմ աւագ սեղանոյն են դրունքն երկուց աւանդատանց . և դրուագեալ փայտիւք արար կամարակապ զծածկոյթս երկոցունց ևս մի օրինակ՝ ուղեալ ՚ի վեր ընդ որմունս նոյն աւանդատանցն ։ և ունի արձանագրութիւն միայն սեղանն սրբոց Յակոբեանց ՚ի վերայ փայտի ընդ հարաւակողմն ՚ի խոնարհ , սևորակ դեղով յայս օրինակ ։

,, Հրաշակերտեալ տաճար փառաց
վասն զենման Գառին կենաց ,
՚ի փրկութիւն մարդկան մեղաց՝
յանուն երկուցըն Յակոբեանց .
եղբօր տեառն և որոտմանց՝
Աբրահամու վեհին արդեանց .
՚ի վայելումն հայոց ազանց՝
՚ի ներ թուոջ մերում ազանց .
ՌՃ , ութսուն և երկուց՝
Թուին ՁԲ , ՌՃ ,, ։

22 , Նոյն Աբրահամ Երևանցի բազմարդիւն կաթուղիկոս տայ նորոգել զտանիս սրբոյ Տաճարին բոլորանդակ , և ՚ի բաց առեալ զկղմինդրն զա-

նիս երկուց աւանդատանցն նորոգապէս տայ շինել՝ որոց արձանագրութեանն վէմ եդեալ կայ 'ի ներքոյ արևելեան զանգակատան՝ 'ի վե՛ր լուսանցոյց պատուհանին եղելոյ 'ի գագաթ կամարին աւագ սեղանոյ յարտաքին կուսէ. և ունի օրինակ գրչութեանն ըստ այսմ:

„Աստուծով վերանորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ Տաճարիս և երկուց խորանացն իսկ՝ (աւանդատանց) 'ի ներքուստ և արտաքուստ հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին երևանցւոյ, և աշխատասիրութեամբ լուսարար Գրիգոր վարդապետի եղվարդեցւոյ, 'ի ՌՄԻ, թուին մերոյ (հայոց) (1771): վարպետ Գասպար„:

23, Յաւուրս սորին Սիմէոնի կաթուղիկոսի երևանցւոյ նորոգեցան երկոքին հարաւային սիւնք սրբոյ Տաճարիս՝ որոց յիշատակագրութեցն արձանք յանուն նուիրողացն զարդիւնս ծախուց նշանակին 'ի սիւնսն անդ սևորակ դեղով:

Յարևելեան սիւնն՝ 'ի ճակատն արևմտեն:

„Նորոգեցաւ սիւնս մինչև 'ի վերին կամարն հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին ամ̃ հայոց, արդեամբ երևանու բլրցի 'ի Ք̃ս հանգուցեալ եաղուբի որդի մելիք Սիմոնին, 'ի յիշատակ իւրենց և իւրայնոցն, 'ի ՌՄԻԴ, թուոջս„:

Յարևմտեան սիւնն՝ 'ի ճակատն արևելեան:

„Նորոգեցաւ սիւնս մինչև 'ի վերին կամարն հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց, արդեամբ ջուղայեցի և 'ի վան բնակեալ 'ի Քրիստոս հանգուցել տէր յովհաննէսի որդի տիրացու Ստեփաննոսին 'ի

յիշատակ ինքեանց · ՚ի ՌՄԻԳ ,, ։

24 , Յաջորդ Սիմէոնի Ղուկաս կաթուղիկոս կարնեցի՝ նորոգել տայ զչորեսին կարգ քարինս որմոցն եկեղեցւոյս շուրջանակի, յարտաքին կուսէ մերձ յաստիճանն յատակի գետնոյն՝ որոյ և արձանագրութիւնն դնի յարևելեան ճակատ մեծի Տաճարիս ՚ի թիկանց կողմանէ աւագ սեղանոյ՝ յայս ձև ։

,, Օգնականութեամբն Աստուծոյ նորոգեցան ներքնաշարքն չորս կարգ քարինքս բոլոր որմոց լուսանկար սրբոյ Տաճարիս՝ հոգաբարձութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց , արդեամբ ակնայ ապուչեխցի և ՚ի Կոստանդինուպօլիս բնակեալ ՚ի Պռինտոս հանգուցել մահտեսի Աստուածատուր աղայի որդի բարեպաշտ մահտեսի Յարութիւն ամիրային, ՚ի յիշատակ ինքեան և ծնողացն, և որդւոյն իւրոյ մահտեսի Յովհաննէսին, և այլ ամենայն իւրայնոցն , թուին (հայոց) ՌՄԼԳ · (1784) ,, ։

՚Ի վեր քան զայս արձանագիր յորմն անդր դնի փոքրիկ վէմ մարմարոնեայ , և ՚ի նմա քանդակեալ նշանն քառաթև՝ յորոյ ներքոյ ՚ի նոյն վէմ գրի այս ինչ ։

,, ՌՄԼԳ ·

,, Սուրբ խաչս աստէն արձան դնի ,
միջնորդ առ տէրն համայնի ·
վասն Ղուկասու հայրապետի ,
սուրբ Տաճարիս բազմաշխատի ·
զոր ՚ի ներքուստ և արտաքուստ ,
շքեղաշուք նորոգողի ,, ։

՚Ի նորոգելն զայս չորս կարգ քարինս՝ յարևելից կուսէ մեծի Տաճարիս ՚ի թիկանց աւագ սեղանոյն, յորմոյ անտի՝ ուր զետեղեալ է մեծ

մէջն արձանագրութեան, գտանեն զերկս բոլո-րակ հատուածս մոմոյ, և զմի գաւազան սեւա-փայտեայ՝ գլուխն խաչաձև հանրակ գործուած։

25, Նոյն նորոգել սա ինքն Ղուկաս կա-թուղիկոս և զսալայատակսն շուրջանակի Կաթու-ղիկէ եկեղեցւոյս՝ արդեամբք Նուիրանաց Յով-հանջան աղային Գերագեանց՝ որոյ յիշատակագ-րութեանն արձան դնի 'ի հիւսիսակողմն արև-մտեան մեծի դրանն 'ի ներքնայարկի անդ մեծի զանգակատան՝ յայս օրինակ։

„Կամաւն Աստուծոյ նորոգեցան սէյ Տա-ճարիս շուրջանակի սալայատակքն հոգա-ծութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, ծախիւք և 'ի Սուրաթ բը-նակեալ Գերագեանց բարեպաշտ Յօհան-ջան աղային վասն հոգւոյ իւրոյ և իւրոյ-ոցն՝ հօրն Յակոբին, և մօրն Մէհրաբանին, և նոցին ծնողացն՝ Պետրոս աղային և Թա-գուհւոյն, Շամալին և Սալխտային. և եղ-բարցն՝ Աւետիքին, Պետրոսին և Աբրահա-մին. և քերցն՝ Աղիզին, Խագուհւոյն և Խաթունին. և կնոջն Կիւլխատանին, և դըս-տերացն՝ Սալխտային և Թիրվանտային, և այլ կենդանեաց և ննջեցելոցն, որոց յի-շատակն օրհնութեամբ եղիցի. ամէն, թո-ւին (ՌՄԼԴ) (1785)„։

26, Նորոգել ետ ՟ե բոլորն և զմէջ սըր-բոյ Տաճարիս՝ զորմունս և զառաստաղն բազմա-տեսակ գեղեցիկ նկարուք և խորհրդաւոր պատ-կերօք՝ 'ի ձեռն հանճարաւոր արհեստագէտ Նը-կարչին Յովնաթանու. որոյ յիշատակարան արձա-նագրութեանն դնի 'ի շրջապատ հիման մեծի կա-թուղիկէին 'ի ներքոյ արձանագրութեանն (20) համառանցի Աստուածատուր կաթուղիկոսի՝ յայս օրինակ։

,,՚Ի Թուին (հայոց) ՌՄԼԵ (1786), շնորհիւն Աստուծոյ տր Ղուկաս կաթուղիկոսս վերստին նորոգել ետու զխախտեալ զերկուս սիւնս սրբոյ Տաճարիս. ապա և զբոլոր մէջս սորին՝ որ անշքացեալ էր, նորապէս բռեալ ծաղկեցուցի հանդերձ խորհրդաւոր պատկերօք՝ իմս գոյիւք ստացելովք ՚ի յօրհնեալ ժողովրդոց մերոց ՚ի յիշատակ ինձ և իմոցն ՚ի վայելս ազգի Հայոց, և միաբանից սրբոյ Աթոռոյս. Արդ՝ խնդրեմ ՚ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց յաղօթս ձեր առ Աստուած՝ յորմէ և դուք յիշեալ լինիք, ամէն,, :

Նորոգութիւնն երկուց խախտեալ սեանց յիշատակելոց յայդմ արձանագրութեան ունի որոշ յիշատակագրութիւնս ՚ի վերայ սեանցն յանուն նուիրողացն զարդիւնս. Առաջին սիւնն արեւելեան հիւսիսոյ ունի զայս՝ սեւորակ դեղով:

,,Նորոգեցաւ սիւնս մինչ ՚ի վերին կամարըն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց, արդեամբ ագուլեցի պապայեան մահտեսի Կարապետին, ՚ի յիշատակ իւր, և կենակցին մահտեսի Եղիսաբեթին, և որդւոյն մահտեսի Հայրապետին, և համայն կենդանեաց և ննջեցելոցն. ՚ի ռմլե թուին (հայոց),, :

Իսկ երկրորդ սիւնն արեւմտեան հիւսիսոյ զայս՝ քարձեալ սեւորակ դեղով:

,,Նորոգեցաւ սիւնս մինչ ՚ի վերին կամարըն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին. արդեամբ կեսարացի մահտեսի Խորոբին, ՚ի յիշատակ իւրեան և ծնողացն՝ Աբրահամին և Աննային, և եղբօրն մահտեսի Պետրոսին, և որ֊

դւոցն՝ Պօղոսին, Սերօբէին, Յակոբին և Աբրահամին, և այլ կենդանեաց և ննջեցելոցն. 'ի ումէ թուին (հայոց),,:

27, Նորոգութիւնն տանեաց սրբոյ տաճարիս 'ի Սիմէոն կաթուղիկոսէ երևանցւոյ փութով խանգարեցաւ. քանզի 'ի գալ զօրացն Ռուսաց յԱրարատ 'ի 1804. ամի, և յայլ ժամանակս, զօրք պարսից ելեալ 'ի տանիս սրբոյ Տաճարիս՝ արարեալ էին 'ի բազում տեղիս կրակետղ՝ յորմէ այրեալ և փշրեալ քարանցն, վտանգ մեծ լինէր կամարաց և առաստաղի եկեղեցւոյն 'ի ժամանակի յորդութեան ջուրց անձրևաց. զայս տեսեալ կաթուղիկոսին Եփրեմայ ա՞, ետ նորոգել զբովանդակ տանիսն 'ի նորակոփ քարանց ագուցելոց ընդ իրեարս 'ի 1816. ամի՝ արդեամբք երկուց պատուելի հայազգի արանց՝ որոց միոյն յիշատակագրութեանն արձան դնի յարևելեան հարաւ 'ի հիման մեծի կաթուղիկէին արտաքուստ, յայս օրինակ:

,, Այս ներքին դասուն տանեաց նորոգութին է արդեամբ 'ի Կզլար բնակեալ ազնիւ աղայ Յակոբայ գալստեան 'ի յիշատակ կենդանեացն և ննջեցելոց 'ի (Ռէ- հայոց) ումկե ,ին,,:

Իսկ միւսոյն՝ յարևելեան հիւսիս նոյնպէս 'ի հիման մեծի կաթուղիկէին՝ յայս ձև:

,, Այս վերին դասուն տանեաց նորոգութիւնն է արդեամբ ազնիւ աղայ Մարկոսին Թառումեան 'ի յիշատակ կենդանեց և ննջեցելոցն, 'ի ումկե, (Ռուէն հայոց),,:

28, Այս փառացի Տաճար սրբութեան՝ որ ունէր յառաջագոյն զմի միայն տեղի պատարագելոյ՝ այնէ, առաջ սեղանն սուրբ Աստուածածնի, այլ այժմ հանդերձ նովաւ ունի զեօթն սեղանս սրբազան խորհրդոյն, զերկուսն յաջմէ և յահե-

կէ աւագ սեղանոյն, զմին 'ի տեղւոջ իջման Բանին Աստուծոյ, զերկուս ևս յաջմէ և յահեկէ սորին 'ի հիւսիսային և 'ի հարաւային թևսն սրբոյ եկեղեցւոյս. իսկ զեօթներորդն 'ի միջնայարկի անդ մեծի զանգակատանն՝ օծեալ յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի՝ ուր երկիցս 'ի տարին մատչի պատարագ. 'ի տօնի համբարձման Տեառն, և 'ի տօնի նոցին հրեշտակապետացն:

29, Բաց յերից դրանց մեծի Տաճարիս՝ որոց աւագ դուռն է ուղղակի յարևմուտս ընդ մեծ զանգակատամբն. իսկ երկուքն ընդ հիւսիս և ընդ հարաւ յարևմտեան բաժնի եկեղեցւոյն՝ յանուն Լուսաւորչի և Յովհաննու Մկրտչի, որոց պատկերք ևս կան նկարեալք յայնս. է և տեղի դրան միոյ 'ի հարաւոյ կողմանէ 'ի ներքին դասուն յարևելեան բաժնի մերձ 'ի սեղանն Լուսաւորչի՝ որ ստուգի ըստ հին աւանդութեանն թէ է դուռն արքունի, ընդ որ և մտանէր և ելանէր առանձին 'ի ժամ աղօթից նա ինքն Արքայն հայոց. բայց այժմ այս դուռն՝ որ արտաքուստ ևս ունի յայտնապէս զնշան կիսակամարի դրան նոյն առաջին հնացեալ քարամբքն, հիւսեալ է նորատաշ վիմօք, և 'ի ներքուստ պատուհանաձև տեղի դատարկ՝ ուր յառաջին կախէին բուրվառք խնկոց սարկաւագացն, և այժմ պահպանին շուրջառք հասարակաբար 'ի գործ ածելիք յեկեղեցւոջ և արտաքոյ:

30, Ունի այս սուրբ Տաճար և զմեծամեծ լուսամուտս քառասուն՝ բաց 'ի չորից փոքունց լուսամտացն երկուց աւանդատանց (որոց երկուսն հեռացեալ են վիմօք, և միւս երկուսն լուսատուեն զերկուսին այցելեալ աւանդատունս) · զերկոտասան լուսամուտս 'ի շրջապատի անդ մեծի կաթուղիկէին՝ որ 'ի միջավայր տանեացն, զմին յարևելից կուսէ 'ի գագաթ

կամարին աւագ սեղանոյ, զինն հատս յարեւմտից՝ որոց չորքն հիւսեալ են քարամբք վասն մերձ լինելոյ այնց յատակի գետնոյն՝ թերեւս յերկիւղէ գողոց և աւազակաց զնի բարձման իշխանութեանն հայոց, և երբե՛մն երբե՛մն մնալոյ Հայաստանի ՚ի ձեռս ինքնագլուխ բռնաւորաց. զտասն ՚ի հարաւոյ՝ որոց հինգքն նոյնպէս հիւսեալ են վէմօք, զութն ՚ի հիւսիսոյ՝ որոց երեքն հիւսեալ են. չորք էին թէպէտ յառաջագոյն հիւսեալքն, այլ զմին՝ որ գտանի ՚ի հիւսիսային թեւ եկեղեցւոյն, բացին յանցեալ ամ 1834:

31, ՚Ի հարաւային կողմն մեծի դրան Տաճարիս ընդ զանգակատամբն գտանի արձանագիր յանուն Մինաւքաց և Պուքանդարաց քաղաքին Տփխիսոյ՝ բառ այսմ:

,,Կամաւն Աստուծոյ մեք Խիֆլիզուաննայն Մինաւք և Պուքանդար խոստացաք տարէնն ամէն դուքան մէկ մէկ չարէք մոմ տալ սուրբ Էջմիածնայ. և միաբանք սուրբ Աթոռոյս խոստացան Է ՚Նաւակատեացն զմեզ պաշտամամբ և պատարագօք յիշատակել: ՚Ի թուին ՌՃԼԱ: (1682) ՚ի հայրապետութեան տեառն Եղիազարու,,:

Այս նուէր ջերմեռանդութեան հայազգի բնակչաց քաղաքին Տփխիսոյ տանայ մինչ ցարդ սուրբ Տաճարս այս յիւրաքանչիւր ամի ՚ի լուսաւորութիւն ինքեան. յորում և կատարի և ցարդ յիշատակութիւնն խոստացեալ ՚ի միաբանից Աթոռոյս:

Է

# Ինչ ինչ գործք և նկարք ճարտար ար-հեստաւորաց նուիրեալք յոմանց յա-նուն սրբութեան Կաճառին՝ յորում և գտանին։

32, Սաչկալն աւագ սեղանոյ սուրբ Աստո-ւածածնի՝ որ լնու զընդարձակ միջոց մեծի կա-մարայարկին, է քանդակ վայելուչ հմուտ ատաղ-ձագործ հիւսան՝ քանդակեալ անդ 'ի քաղաքն Զմիւռնիա. 'ի միջին տեղւոյ բարձրութեանն դրոշմեալ է իջումն Բանին Միածնի ը̄ տես-լեան սրբոյն Գրիգորի. ոսկեզօծ է բոլորովին և է նուիրեալ 'ի մեծաց և 'ի փոքունց անդր 'ի Զմիւռնիա բնակելոց հայազարմ ժողովրդոց՝ հոգաբարձութեամբ առաջնորդի նոցա Սիմէոն վարդապետի երևանցւոյ, որոյ և յիշատակագը-րութեանն արձան գտանի 'ի գագաթ միջին կա-մարի նորա՝ յստորև քան զքանդակն իջման Մի-ածնի, փորագրեալ յերկիս կարգս 'ի փայտ անդր յայս օրինակ:

„Յիշատակ է իջման == Իզմիրցի Աբրահամ<br>
տեղւոյս ամիրայեն„:

---

„Շնորհօք ամենազօրին Աստուծոյ, որ 'ի հայրապետութեան տեառն Աստուածատուր կա-թուղիկոսի ամենայն հայոց կազմեցաւ և ծաղկե-

ցաւ խաչկալս 'ի մայրաքաղաքն Իզմիր արդեամբք քահանայից և ժողովրդոց յարևելականաց և արուեստականաց, մեծ և փոքր վաճառականաց. և եդաւ յիշատակ 'ի մեծ սեղանն սուրբ Էջմիածնի՝ հոգաբարձութեամբ Իզմիրու առաջնորդ Սիմէոն վարդապետին Երևանցւոյ.։

Գտանին և ինչ ինչ մասնաւոր գրուածք 'ի տեղիս տեղիս յայս խաչկալ յանուն նուիրողայն զարդիւնս շինութեան։

Ունի այս խաչկալ զերկուս դրունս յերկուսին կողմանս սեղանոյ սրբազան խորհրդոյն՝ յորոց վերայ նկարեալ են պատկերք երկուց սրբազան առաքելոցն Հայաստանի՝ Բարդուղիմեայն յաջմէ՝ ունելով 'ի գիրկն զպատկեր օրհնաբանեալ կուսին Մարիամու 'ի յիշատակ բերելոյ նորա զառաջինն 'ի Հայս, և Թադէոսին յահեկէ՝ ունելով 'ի ձեռին զնկար Գեղարդին (39.) մխելոյն 'ի կող փրկչին մերոյ և տեառն՝ որ յառաքելոյ անտի բերաւ 'ի Հայաստան։

33, Երկու կաթուղիկոսարանք են 'ի սմին յայսմիկ պատրիարքական Տաճարի՝ այն է, տեղիք կալոյ կաթուղիկոսի Հայրապետին 'ի ժամու աղօթից. որոց ճարտարարուեստ քանդակեալն 'ի փայտ ընկուզենի՝ կայ զետեղեալ անշարժ առ մեծի սեանն արևմտեան հիւսիսոյ 'ի դասագլխի անդվերին դասու միջնաբաժնին բարձրութեամբ իբրև գիրկ երկու։

Միջոց չորից սեանց սորա յերեսին կողմանս յաջմէ, յահեկէ և 'ի թիկանց՝ 'ի ստորին բաժնի՝ բոլորակն վարդանման շուշանաձև քանդուած ընտիր. իսկ վերին բաժինքն՝ որք միացուցանեն զգլուխս սեանցն, կամարաձև այլատեսակ դրուագեալ. տանիք սորա կազմեալ փորուածոզարդարեալ հնգեքին սրածայր փոքրիկ կաթուղիկէիւք հանգունատիպ կաթուղիկէից տանեաց

մեծի Հաճարիս ։

Օսմանէ Թէպէտ ոչ գոյ գրաւոր ծանօթութիւն ինչ՝ թէ ե՛րբ և ուստի՛, բայց ըստ աւանդութեանն թուի լինել այն՝ զորմէ գրէ Հայր Միքայել Չամչեան ՚ի պատմութեան Հատոր Գ՛րդ յերես 725 ։ „Նա՛ զայս թուղթ յղեաց (Իննովկէնտիոս Հռոմայեցի) ձեռամբ խաչատուր վարդապետի կարնեցւոյ Առաքելեան . . . յղեաց ընդ նմա և զնիւ ընծայս ինչ առ կաթուղիկոսն (հայոց Նահապետ) և աթոռ մի փառաւոր, յամի տեառն 1697 կամ 1699„ ։

Յայսմիկ կաթուղիկոսարանի գնի շարժական աթոռ՝ ուր երբեմն հանգչի նա ինքն կաթուղիկոսն յերկարաձիգ ժամերգութիւնս հանդիսաւոր աւուրց՝ ե՛րբ է պաշտօնակատարութիւնն ՚ի միջին դաս անդր ։

34, Իսկ միւս կաթուղիկոսարանն նոյնպէս զետեղեալ անշարժ առ սեանն արևելեան հիւսիսոյ դասագլուխ առաջին դասու արևելեն բաժնի. վերին շինուածքն՝ որ է տանիքն, է բոլորովին փայտեայ փայլուն իմն դրուագեալ հրաշակերտ. ունի ՚ի միջին տեղւոջ գմբէթ կիսաբոլորակ. և ՚ի չորեսին անկիւնսն զչորս փոքրիկ կաթուղիկէս, և ՚ի շրջանակսն չորից կողմանց փոքր պատկերք փորածոյք. այս վերին շէնք է բոլորովին ոսկեզօծ ։

Յատորև քան զշրջանակսն յիշատակնել վերին բաժնի՝ ՚ի չորից կողմանց յինն բաժինս, է յիշատակագրութի նուիրողացն արդեամբք իւրեանց զայս կաթուղիկոսարան՝ ըստ այսմ. „Շինեցաւ պատրիարգարանս | ՚ի յիշատակ ակնցի մահտեսի Մինասի որդի | Մեղքոսին և կամրկապցի Նազարի որդւոց | մահտեսի Առաքելին, Մարտիրոսին և Յարութիւնին | և ամենայն զարմից նոցին, թուին ՌՃՀ. | ՚ի հայրապետութեան տեա-

ուրն Աստուածատրոյ | սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց | և Հոգաբարձութեամբ տէր Յովհաննէս և տէր Պետրոս վարդապետաց ,, ։

Իսկ սիւնքն և ներքին շինուածքն յարմար վայելչութեամբք պատեալ ՚ի մանրահատ ծաղկաձև և անկիւնաւոր սատափէ և ՚ի խղտոյ (պուլոյ) ։

՚Ի վերին եզերս այսր ներքին շինուածոյ՝ ՚ի վեցեքին բաժինսն է նոյն յիշատակագրութիւն , և տառքն գեղեցկապէս և յարմար ձևացութբ ՚ի սատափէ յանուն նոյն վերոյիշեալ արանցն՝ ըստ այսմ ։

,, ՚Ի Հայրապետութեան տէր Աստուածատուր սրբազանի | սուրբ Էջմիածնի Իւ Հոգաբարձութեամբք բաղէշեցի | Յովհաննէս և սատապատցի Պետրոս վարդապետացն | (Այս չորեքեակց կուռէ · խոկ ՚է հարաւոյ՚) յիշատակ է ակնցի մահտեսի Մինասի որդի մահ | տեսի Սեղբեստրոսին · եւ կամրկապցի ազարի որ / դւոցն՝ մահտեսի Աւաքելին , Մարտիրոսին , յարութիւն | ին , եւ ծնողաց , եւ ամենայն ազգաց եւ զաւակացն · ռՃՀ թվին ,, ։

Այս կաթուղիկոսարան փոքր ինչ լայնանիստ է քան զմիւսն , իսկ բարձրութեամբն գրեթէ թէ հաւասարաչափ ։

35 · Յայսոսիկ նիւթոց ներքին շինուածոց կաթուղիկոսարանի և ըստ արհեստի ձևակերպութեանցն՝ կազմեալ են և երկոքին դրունքն երկուց աւանդատանց՝ որք ըստ այնց ունին զյիշատակագրութիւնս · դուռն սրբութեան մասանց՝ որ ՚ի հարաւակողման՝ ըստ այսմ ։

,, ՚Ի Հայրապետութեան տեառն Աստուծատուր սրբազանի · յիշատակ է՛ ապուչեղցի Աղառենց սառափ Յակոբին , և Հոգաբարձութեամբ սատապատցի Պետրոս վարդապետին · ռՃՀ թվին ,, (1721) ։

Դուռն որ 'ի հիւսիսակողման՝ ըստ այսմ.

,, 'Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր սրբազանի. յիշատակ է ապուչեղցի Սգատենց սառաֆ Յակոբին, և հոգաբարձութ̄բ Բաղէշեցի Յովհաննէս վարդապետին. ռճհ թվին ,,:

36. Գտանին յայսմ փառացի Տաճարիս քաջարուեստ պատկերք տէրունականք, և ականաւոր սրբոց. որպիսի են քաջահմուտ նկարք՝ պատկերքն աւետման շրջանակաւ ամրացեալ 'ի բարձրութեան անդ արևմտակողման երկուց սեանցն արևելեան. հրեշտակին՝ 'ի սեան հիւսիսային. կուսին սրբոյ՝ 'ի հարաւայինն: Եւ պատկերքն երկոտասան Առաքելոց՝ յորում է շօշափումն Թովմայի, դասաւորեալք 'ի կիսաշրջանակի անդ կամարայարկին արևմտեան մեծի դրանն 'ի ներքին կողմանէ. և պատկերքն երկուքին՝ աղօթելոյն Տեառն 'ի պարտիզին՝ որ կայ եդեալ 'ի ներքուստ 'ի հարաւային կողմանէ սեղանոյ սրբուհւոյ օրհնաբանեալ Կուսին. և յարութեանն Լազարու՝ որ եդեալ է յորմն հիւսիսային մերձ 'ի սեղան որդւոցն որոտման: Եւ այլ պատկերք տէրունականք առ պատշգամբաւ մեծի կաթուղիկէին. և զանազան սրբոց հայրապետաց և վարդապետաց 'ի սիւնս և յորմունս Տաճարիս այսորիկ: 'Ի կիսաշրջանակի կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նկարեալ կան հայրապետական զգեստուք 'ի կանգուն պատկերք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, որդւոց և թոռանց նորա: Նոյնպէս 'ի կամարայարկին սեղանոյ Յովհաննու կարապետի՝ պատկերքն սրբոց առաքելոց Պետրոսի և Պօղոսի, և այլ սրբոց հայրապետաց. 'ի սոսա քաջարուեստ են պատկերք երկուց Առաքելոցն:

Յամենեսին 'ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփաննոսի Լեհացւոյ, և քաջ նկարչին հօր Յովնաթանու:

37. Գտանէին և երկու միանման փոքրադիր պատկերք սուրբ Աստուածածնի՝ ունելով զՅիսուս 'ի գիրկ, բերեալ յԵփրեմայ կաթուղիկոսէ 'ի վերադարձի նորա յաշխարհէն Հնդկաց. Նկարքն 'ի վերայ ապակւոյ գեղապանծ շքեղութեամբ: Ոմն յերկուց աստի էառ ընդ իւր արքայորդին պարսից Աբբասմիրզայ 'ի գալստեան իւրում յաթոռ այսր յամի տեառն 1810. իսկ միւսն կայ աստէն՝ եդեալ յաւագ սեղան անդ Նորին սրբոյ կուսի:

38. Սար-րօբերթ Փօրթեր աստիճանաւ-պօլկովնիկ այր Անգղիացի, շրջագայելով 'ի զանազան տեղիս Ասիոյ, գայ և 'ի սուրբ տեղիս այս՝ 'ի պատրիարգական Աթոռս Հայաստանեայց յաւուրս Եփրեմայ կաթուղիկոսի յամի 1817. յորմէ և պատուասիրել յարգանօք՝ զկնի վերադարձին իւր 'ի հայրենիս, առաքէ անտի զիւր ձեռաց նկար՝ զմի մեծադիր պատկեր Յիսուսի նուէր յանուն Եփրեմ կաթուղիկոսի. կայ Յիսուս 'ի կանգուն՝ 'ի յաջմէ գգուեալ աստուածազգեաց մանուկն Իգնատիոս, և 'ի ձախմէ մանկունք երկու լանջափարեալ զմիմեամբք՝ օրհնին յամենազօր Աջդն. այս ըստ խորհրդաւոր բանիցն՝ որ յաւետարանին. ,,Նա առեալ մանուկ մի կացոյց 'ի մէջի նոցա և այլն. և թէ ,, Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս. և այլն ,,: Արդարև նուէր յիշատակաց արժանի, և արժանաւոր գործ հմուտ ձեռին. այս պատկեր կախեալ կայ այժմ 'ի մէջ Տաճարիս յորմըն հարաւային մերձ 'ի սեղան սրբոյն Գրիգորի լուսաւորչին:

Հատուած ։

Գ․

## Յաղագս սուրբ Մասանց, և նշխարաց Սրբոց եղելոց ասուէն 'ի գանձարանի սրբոյ խորանի մեծի Կաթուղիկէ Եկեղեցւոյս ։

## Գեղարդ Լունկիանոսի Հարիւրապետին ։

Այլ մի ոմն 'ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս Նորա և վաղվաղակի ել արիւն և ջուր ․ յաւետա”
Յովհ․ գլուխ ԺԹ, համար 34 ։

39, Զայս տէգ՝ որ և ասի Գեղարդ, ագուցեալն 'ի ծայր նիզակին Լունկիանոսի հարիւրապետի՝ որով խոցեաց կող կենագործողին զմեր Յիսուսի, զկնի համբառնալոյ Տեառն առ Հայր 'ի յերկինս՝ Թադէոս առաքեալ ունելով ընդ իւր՝ գայ յԵդեսիա առ Աբգար արքայ Հայոց ըստ խոստման փրկչին ․ և յետ քարոզութեան և նահատակութեան Առաքելոյն 'ի Հայաստան, մնայ այն շնորհ առ հաւատացելոյն յազգէ Հայոց՝ որոց առանձինն փոքրիկ եկեղեցի եկաց, մնաց մինչև ցբովանդակ լուսաւորութիւն ողջոյն ազգին՝ նահատակութեամբ և քարոզութեամբ մե-

ծին Գրիգորի պարթևի առ Տրդատաւ. և այսպէս մնաց այս անգին պարգև Գեղարդս սուրբ առ հայազնեայս. որ և այժմ կայ աստ ՚ի սուրբ կաթուղիկէ Եկեղեցւոջ Էջմիածնի. որոյ ստուգութեանն լինելոյ ՚ի հայս, վկայ եղիցին քեզ յետագայ գրուածքդ։

՚Ի Թուղթն դաշանց առ Ագաթանգեղոսի ՚ի նորոգ սրբագիր տպագրեալն ՚ի Կոստանդնուպօլիս յամին 1824. յերես 347. ուր յետ յիշատակութեան փրկչական պատկերին և սուրբ Աստուածածնի և փայտին կենաց պարգևելոյն միջնորդութեամբ սրբուհւոյն Հռիփսիմեայ, գրի և վասն Գեղարդայ թէ՝ ,,Անդ (՚ի Հռ[illegible]) կայ և Գեղարդն Ղունկիանոսի հարիւրապետին՝ որով խոցեաց կող՝ փրկչին՝ և բղխեաց ջուր և արիւն, նշանակ մկրտութեանն և հաղորդութեանն,,։
Գրի և ՚ի յայսմաւուրս ՚ի Ժէ դեկտեմբերի ՚ի ճառի անդ Թադէոսի առաքելոյ թէ՝ ,,Յորժամ եկն առ նա (առ Աբգարոս) սուրբ առաքեալն Թադէոս ունելով ընդ իւքեան զԳեղարդն Աստուածամուխ՝ որով առնէր նշանս մեծամեծս և փարատէր զամենայն չար ախտ հիւանդութեանց. վասն որոյ և բազումք հաւատացին ՚ի Քրիստոս, նա և դուստր Թագաւորին Սանդուխտ,,։

40, Գտաւ ՚ի գրանոցի հայրապետական Աթոռոյ Էջմիածնի ՚ի մէջ ձեռագիր շարակնոցաց շարակնոց մի կարի հարուստ և ճոխ. յորում ընդ այլ անծանօթ շարական երգոց, գրեալ կայր և շարական մի ՚ի վերայ սուրբ Գեղարդայ՝ յօրինեալ ՚ի մեծէն Սարդանայ բարձրբերդցւոյ՝ զոր արժան է ընթեռնուլ։

մկ/գձ ,,Իսկ դու պարծանքդ պարծանաց, Գեղարդդ սուրբ և գերազանց, որ ձեռամբ Թադէոսի սուրբ և ընտրեալ առաքելոյն, առաքեցար մեզ ապաւէն հիմն բարեաց հաստատութե.

քեզ զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց ե-կեղեցւոյ:

Խեւաւոր սուր երկսայրի և բանալի անճառ շնորհաց, զի դու բացեր զկողն Կենաց՝ ջուր և արիւն արտաբերեալ՝ որով մկրտիմք և հաղոր-դիմք 'ի բնակութիւն Երրորդութեան. քեզ ընդ Քրիստոս բարեբանեմք, հիմն բա":

Գեղեցիկ գոյն գովելի ներկեալ արեամբն Յիսուսի, 'ի փառս ազգիս Հայաստանեայց ար-ձանացար յերկրի մերում. աշտարակ բարձր և ա-մուր պարիսպ հրեղէն շուրջանակի. քեզ զՔրիս-տոս բարեբանեմք, հիմն բա":

Աստուածամուխ սուսերդ սուրբ աստուա-ծախառն զօրութեամբ՝ որով կտրին արմատք ախտից և ցաւք մեղաց և յանցանաց, քեւ փրկ-կեսցուք 'ի փորձութեանց և յամենայն որո-գայթից. քեզ զՔրիստոս բարեբանեմք, հիմն բ"

Գեղապանծոյծ Գեղարդն սուրբ և Թարգմա-նիչ անմահ որդւոյն, որով ցուցաւ Աստուած և մարդ՝ ըստ որոյ մեռեալ և կենդանի՝ յոր հաւա-տաց Հարիւրապետն և վկայեաց աստուածութեն. քեզ զՔրիստոս բարեբա":

Աստուածաներկ սուր փայլածու նիզակ 'ի ձե-ռըն Յիսուսի, որով փախչին փաղանգ դիւաց և բնակին գունդք հրեշտակաց. քեւ կնքեսցուք ըն-դայարանս և դրոշմեսցուք զմիտս և զհոգիս տա-լով պատիւ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, կենդանութեան և յետ մահու և յանըսպառ յաւիտենից,, :

41, Գտանին ոչ սակաւ գրուածք զսուրբ Գեղարդայ յինչ ինչ ձեռագիր մատենանս ազգի հայոց. գիրք իմն 'ի վերայ բազմազան նիւթոց. բառից աստուածաշունչ գրոց են, գրեալ յՍպա-հան՝ 'ի Նորն Ջուղայ գիւղաքաղաքի հայոց. գրչութեամբ Ազարիայի ուրումն 'ի թուին Հայ-

ոց ռձխա՝ որ ունէր յինքեան զվէպս ինչ ինչ արևելի մասանց եղելոց 'ի Հայաստան. ընդ որս և զսուրբ Գեղարդայ՝ յայս օրինակ։

,,Նաև արդ՝ սուրբ Գեղարդն Քրիստոսի երկնային գանձն լուսոյ կայ... յաշխարհին հայոց. և որք տեսանեն զնա, մի՛ տեսցեն զմահ յաւիտենից։ Եւ նմանութիւն Աստուածակիր Գեղարդին այսպէս է. գմբէթաձև 'ի վեր քարշեալ գգլուխն որպէս նիզակին սուր թառփաւոր, և ձևեալ որպէս զխաչ. և փորեալ հատուածին երկու կողմանց երեսաց սուրբ խաչին բևեռեալ. և վայր կողմն նիզակին, չորս մատնիչափով, բայց ոչինչ քանդակեալ՝ այլ անարատ և հաւասար. այս է նշան սուրբ գեղարդին,,։ Նաև զի՛ գրի 'ի վեր անդրը թէ՝ ,,Նաև ձևեալ որպէս զխաչ. և փորեալ հատուածին երկու կողմանց երեսաց սուրբ խաչին բևեռեալ,,։

'Ի միջակէտ բաժնի անդ ծայրին արարեալ է նշան քառաթև խաչի. և զբաժին այնց քառաթևեցն իսպառ հատուածեալ 'ի Գեղարդէն՝ և անդրէն զնոյն երկաթ ձևացուցեալ խաչ բևեռեալ են 'ի վերայ նորա. և զերկուս ևս փոքր հատուածս յերկոսին կողմանս նորա իբրև կապ բևեռեալ են 'ի վերայ՝ առ 'ի պահպանել զնա 'ի խորտակմանէ. և աւանդութիւն է յազգի հայոց՝ թէ այն ձևացութիւն նշանի խաչին, և այն բևեռակապ պնդութիւնք հատուածոց երկաթիցն, են գործք ձեռաց նորին Թադէոսի առաքելոյ՝ որ եբերն զայն 'ի Հայաստան աշխարհ։

42. Նաև զի 'ի յոլով ժամանակս պահիւր այս սուրբ Գեղարդ յԱյրիվանան անդ Գառնւոյ՝ յորմէ և անուն մենաստանին այնորիկ փոփոխակի առեալ՝ կոչի և Գեղարդայ վանք՝ թէ 'ի գրուածս, և թէ 'ի խօսս հայազգի մատենագրաց և ժողովրդոց. մանաւանդ՝ բովանդակ բնակչաց կող-

մանցս. մինչ զի գրեթէ մոռացեալ զառաջինն, զերկրորդն մէջէն՝ || Գեղարդայ վանք || ուր յաճախեն տակաւին և ուխտաւորք երկիցս՝ ՚ի տարին՝ ՚ի միջոցս Համբարձման և յաշնանամտին: Այս սուրբ Գեղարդ ՚ի վանաց անտի ունի տուփ արծաթի ծանրակշիռ երկայնաձև, գլուխն ուղիղ հաւաքեալ սրածայր ըստ օրինակին նոյն Գեղարդայ, որ և ունի զերկփեղկեան դուռն նմանապէս արծաթի. որոյ ՚ի թիկանց կողմանէ գտանի յիշատակագրութիւն անուան ընծայողի այնմ՝ Պռօշ իշխանի, և նորոգողին Դաւիթ վարդապետի առաջնորդի այնր վանաց՝ յամի ձև.

„՚Ի թուին չժէ.

„Այս արփիափայլ նշան ահաւոր և աստուածային զէն անպարտելի ներկեալ արեամբ որդւոյն ([illegible]) Աստուածամօրս սուսերս սուրբ մեծ և հզօր սպանիչս վիշապին՝ որ զցօղ անապական սուրբ արեանն էհեղ ՚ի փրկութիւն աշխարհի: Այս Գեղարդ Աստուածաշունչ և հիազօր արձան լուսատու կանգնեալ ՚ի փառս հայաստան աշխարհի. հրափայլ և ծաղկանկար արեամբն Քրիստոսի վառեալ և վայելչացեալ պսակ պարծանաց Կաթուղիկէ Եկեղեցւոյ, և թագ արքունական ՚ի գլուխ քրիստոնէից. ուստի ՚ի կամս բարձրելոյն օրհնեալ, ես Պռօշ իշխան որդի Վասակա արժանաւորեալ աստուածեղէն սուրբ նիզակիս՝ զարդարեցի զսա պատուական պահարանաւ, բարեխօս ինձ յահաւոր ատենին Քրիստոսի, և մեծաւ յուսով ընծայեցի քեզ գանձագին գերեզմանատունս ՚ի սուրբ ուխտս Այրիվանից յիշատակ յաւիտենական ինձ և զաւակաց իմոց՝ Պապաքին Միրհասանին, և Վասակա, և կենակցի իմոյ Խութլու խաթունին՝ որ կիսօրեայ ելին յաշխարհէ. յորոց վերայ ամենեցուն սոցա՝ կենդանեաց և մեռելոց ծագէ շնորհ ողորմութեանն Քրիս_

տոսի միշտ և հանապազ || ։ և փոխանակ այսմ Նի-
զակի շնորհեաց Քրիստոս բարեպաշտ իշխանին
Պռօշայ խորան արեգակնափայլ, և անճառելի և
լուսափայլ պսակ կազմեալ ՚ի ձեռն Աստուծոյ ,, ։

,, Իսկ ՚ի թվին ռձլ և է ին՝ ես Դաւիթ
վարդապետս առաջնորդ սուրբ ուխտիս Սարկա-
նից յազգէն Խաղբակա, և Պռօշա որդի Խնան-
կին՝ եւտու նորոգել զպահարան սուրբ Գեղարդա
ռաւել պայծառ քան զառաջինն՝ սակս յուսոյն
զոր առ Քրիստոս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց.
և հօրեղբարց իմոց՝ Դաւիթ եպիսկոպոսին և
Ստեփաննոս վարդապետին հանգուցելոց ՚ի Քրի-
ստոս, և եղբարցն իմոց՝ Ջէկումին, Կիրակոսին,
և քեռն իմոյ Մարիամու. յորոց առհասարակ
կենդանեաց և մեռելոց ամենեցուն ողորմեսցի.
և զկազմողն սորին Գրիգորի և Սարգսի ,, ։
Միխայէլ պատրիարգ ասորւոց ՚ի վախճանի պատ-
մութեան իւրում, գրէ վասն իսկական Գեղար-
դայ լինել ՚ի Հայաստան՝ ըստ այսմ ։ ,, Եւ Գե-
ղարդն աստուածամուխ պսակաւն փչեայ ՚ի Խա-
դէոսէ բերեալ, և կայ անդէն ՚ի հայս ՚ի պարծա-
նըս ազգին և ՚ի փառս Աստուծոյ ,, ։

Վարդան վարդապետ յաշխարհագրութե
իւրում ասէ զկնի ճառելոյն զԳուսին. ,, Իսկ ՚ի
կողմն Գառնոյ... Եւ Այրիվանքն՝ ուր կայ սուրբ
Գեղարդն Աստուածամուխ ներկեալ արեամբ
կենարարին ,, ։ Եւ Թովմա պատմագիր վարդա-
պետ Մեծոբայ վանաց վասն նորոգութե Աթո-
ռոյ Էջմիածնի և ընտրութեան կաթուղիկոսի
ընդհանուր ազգային ժողովով՝ յամի 1441, գայ
ընդ այլոց այսր ՚ի Վաղարշապատ ՚ի վանաց անտի
Մեծոբայ. և զճանապարհորդութենէ իւրմէ
պատմելով վկայէ այսմ այսպէս. ,, Եւ ապա ու-
րախութեամբ մեծաւ և աներկբայ յուսադրու-
թեամբ ելեալ գնացաք յամենալից և օրհնեալ

գաւառն 'ի Պնարօն (Բօյաչըր) , և յառն Մասեաց 'ի յՄակուի . և անտի մտաք 'ի կենդանաթաղ գե_ րեզմանն Լուսաւորչին 'ի Խոր վիրապն , և անտի յերկրպագութիւն սուրբ Գեղարդեանն (որ էր յԱյրիվանն անդ) և սկզբնատիպ Պատկերի մարդե_ ղութեանն Քրիստոսի . և պատահեալ դիպեցաք մեծ վարժապետին մերոյ՝ և առեալ եկաք 'ի գիւ_ ղաքաղաքն Երևան ,, : 'Ի գանձարանի եկեղե_ ցւոյ հայաստանեայց 'ի յօրինեալ երգն 'ի Գրիգոր վարդապետէ գրի ըստ այսմ . ,, 'Ի գալ Խադէին , հրամանաւ Բոյին (Ֆէհէին) . յաշխարհս վերին . զե_ նու գեղարդին , նախ առ Աբգարին . յՈւրհայ քաղաքին ,, :

43 , Արդ զի՝ երբե՞մն երբե՞մն պահէին կա_ թուղիկոսունք Աթոռոյ Էջմիածնի զայս սուրբ Գեղարդ 'ի Տաճարիս այսմիկ մեծի Կաթուղիկէի առ ինքեանս . և թէ առ ինչ պատճառ , չունիմք թէպէտ զտեղեկութի ինչ , բայց որպէս ինձ թուի՝ պատճառ այնմ գլխաւորապէս եղեալ են խառնա_ կութիւնք և վրդովմունք սահմանացս այսոցիկ յասպատակութեանց և 'ի հեծելաշարժութեանց յառնելոց 'ի վերայ միմեանց՝ Թագաւորաց աշխար_ հաց և իշխանաւորաց գաւառաց : Բանզի յինչ ինչ կոնդակս Կաթուղիկոսաց յիշատակի ընդ այլ սըր_ բութեանց եղելոց յԱթոռ այսր և Գեղարդն որ_ ներկեալն արեամբ Յիսուսի : Յառաջին կոնդակի գրեալ 'ի թուին հայոց ջա , 'ի ա դեկտեմբերի 'ի Գրիգոր Ժ , կաթուղիկոսէ : յԵրկրորդումն գր_ րեալ 'ի թուին հայոց ջծգ . 'ի իդ նաւասարդի յԵղիշայէ ը , կաթուղիկոսէ : յԵրրորդումն գրեալ 'ի թուին հայոց ջղ , 'ի Գրիգորէ ժա . կաթուղի_ կոսէ : Իսկ 'ի չորրորդումն գրեալ 'ի թուին հայոց ռժբ 'ի Միքայէլ կաթուղիկոսէ սեբաստացւոյ : Իսկական օրինակք այսոցիկ կոնդակաց գտանին ընդ այլ հնութեանց 'ի վանս Ստեփաննոսի Նախա_

վկայի՝ որ 'ի ձորն հին Ջուղայու առ Սնազարթայ լերամբ ։

44, Միերեւս վերձեսցեն ընդ այս լատինք՝ հաստատելով զառ ձեռքեանս եղեալն հատուածտիգքին՝ որով հրէայք ընդ կատակս խոցեցին ըզպատկեր ինձ փրկչական 'ի Բիւրիտոն քաղաք Հրէաստանի. և 'ի լինել հրաշից 'ի պատկերէ անտի, պատուեցաւ առաւելապէս 'ի քրիստոնէից որպէս պատկերն այն՝ նմանապէս և այն տէգ. և զերկոսեան ինկ ևս զինի ժամանակաց տարան 'ի Կոստանդինուպօլիս. զպատկերն՝ կայսրն Յունաց Զըմշկիկ որ և Յովհաննէս, այն ինչ յաղթահարէր զկողմանս Երուսաղէմացւոց. զտէգն՝ Օնջիլ անուն կոմսն տարեալ յԱնտիոք. քաղաքէ՝ ետ պարգեւ Աղէքսի կայսեր Յունաց յամի 1099 ։ առ որ եղիցին քեզ սիրողիդ հնութեանց ճշմարիտ վկայ յետադայ գրուածքդ ։

'Ի գիրքն հայելի վարուց կոչեցեալ՝ որ տըպագրեալ է յամին 1702. անդ 'ի թղթահամարն 334. գրի վասն պատկերին այնորիկ՝ բառ այսմ ։

,,Պատմեաց մեզ սուրբ Աթանաս Աղեքսանդրու հայրապետ, թէ 'ի Բիւրիտոն քաղաք մերձ յԵրուսաղէմ 'ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի բազում հրէայք բնակեալ էին խառն ընդ քրիստոնեայս. և մի ոմն 'ի հրէիցն խնդրէր տուն 'ի վարձու, և առեալ ընդ իւր այլ սիրելի հըրէայս, և գնացին գտին տուն մի դատարկ՝ յորմէ քրիստոնեայք ելեալք էին, և մոռացեալ էին յորմէն յարևելից կուսէ կախեալ զտէրունական պատկերն. և յորժամ մտին 'ի տունն հրէայքն, տեսին զպատկերն, և ասէին ցմիմեանս. թէ այս պատկերս գալիլեացւոյն է. և որպէս արարին հարքրն մեր ընդ նմա, արասցուք և մեք ընդ պատկերս. և առեալ եղէգն հարկանէին զգլուխն եղէգամբ և ծեծէին զծնօտսն և թքանէին յերե-

տըն, և ծակեցին սրով զձեռսն և զոտսն. և յորժամ խոցեցին զկողն պատկերին, առժամայն ել արիւն և ջուր. և զայն տեսեալ զահիհարան և ընթացեալ պատմեցին քահանայապետիցն իւրենց և այլ հրէիցն. և նոքա փութանակի գնացին 'ի տունն և տեսին զպատկերն՝ որ խոցուածոյն բըղխէր ջուր և արիւն: Եւ ասեն քահանայապետքն՝ փորձեսցուք եթէ ճշմարիտ է զոր ասեն քրիստոնեայքն. և հրամայեաց բերել աման և ժողովեաց զարիւնախառն ջուրն. և երթեալ օծեցին զհիւանդս իւրեանց, զկոյրս, զխեղս, զկաղս և զանդամալոյծս, և առժամայն բժշկէին. և միահամուռ ժողովեցան և գնացին առ Եպիսկոպոս քաղաքին և պատմեցին զամենայն եղեալ զսքանչելիս. և յարուցեալ գնացին զհետ նոցա 'ի տունըն, և տեսին զպատկերի երեսն որպէս զարեգակն պայծառացեալ, և դադարեալ բղխումն 'ի կողից. և առժամայն ամենայն հրեայքն հաւատացին 'ի Քրիստոս և մկրտեցան. և ուրախութիւն մեծ եղև քաղաքին յայնմիկ. և նուիրեցին զտունն զայն ժողովրդեան՝ զոր և շինեցին եկեղեցի՝ յորում կայր պատկերն սքանչելի, և եդին զանունն Ամենափրկիչ:... Եւ յետ ժամանակաց թագաւորն Զմշկիկ գնաց 'ի Համս և էառ զՔրիստոսի պատկերն և հողաթափն պատուական. և եկեալ 'ի Բիւրիտոն էառ զպատուական պատկերն զայն, և տարեալ 'ի Կոստանդինուպօլիս, և եդին ընդ սրբութիւնսն 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն,,:

Համաձայն այսմ գրէ և վասն սոյն պատկերիս Մատթէոս Ուռհայեցի պատմիչ զհնի ասպատակութեանցն նորին Զմշկիկ կայսեր 'ի կողմանս Պաղեստինոյ ընդդէմ հագարացի տաճկաց՝ յառաջ բերելով զթուղթն նորա որ առ Շահանշահն Աշոտ թագաւոր հայոց յԱնին Շիրակայ

յասելն ։

,,Ո՜վ ի այսպիսի յաղթութիւնս ետ Աստո-ւած քրիստոնէից՝ որ ոչ եղև երբէք. և գտաք յայնմ քաղաքին 'ի գաբաւոն զաւուրբ հողաթափըն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որով և շրջեցաւ իսկ 'ի վերայ աշխարհի. նոյնպէս և զպատկերն փրկչին. զոր հրէայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղվաղակի ել արիւն և ջուր, և զխոց տիգին ոչ գտաք,, ։

Դարձեալ նոյն ուրհայեցի պատմիչ 'ի Թիւըն հայոց շխէ. (յամի 1098.) գրէ. ,,Նա ահա երևեցաւ սուրբ առաքեալն Պետրոս (յանուրջս) Փրռանկի միոջ բարեպաշտի (յԱնտիոք) և ասէր՝ եթէ 'ի ձախակողմն եկեղեցւոյդ կայ ի պահեստի գէնըն՝ որով Քրիստոս 'ի հրէիցն էառ զխոցումն 'ի յանարատ կողմն իւր ('ի պատիւր անդր ըստ վերոյիշելոյն) . . . ահա կայ յառաջի խորանին. հանէք զնա, և նովաւ ելէք 'ի պատերազմ, և նովաւ յաղթեցէք թշնամեաց ձերոց,, ։ Նոյս 'ի Թիւն հայոց շխը. (յամի 1099.) նոյն ուրհայեցի գրէ. ,,յայսմ ամի դարձաւ Օշին կոմսն և գնաց 'ի Փռանկ, և տարաւ զԳէնն Քրիստոսի՝ զոր գտին յԱնտիոք, և ետ Ալէքսին (կայսեր) հոռոմոց թագաւորին, և նիքըն գնաց 'ի Փռանկ,, ։ Եւս և 'ի Թիւն հայոց շծ ։

Ըստ այսոցիկ խառն գրուածոց գրէ և Կիրակոս պատմիչ Գանձակեցի. ,,Նայց յաւուրս հաւուն սորա (հօր Մանուէլ կայսեր) Ալէքսի (կայսեր յունաց) կոմս ոմն եկն յԱրուսաղէմ յԱնտիոք, և իբրև եմուտ 'ի տաճար սրբոյն Պետրոսի առաքելոյ, և հաղորդ եղև պաշտաման , երևեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս և ասէ, 'ի պատուհան եկեղեցւոյդ թաղեալ կայ Գեղարդն որով խոցեցին փրկիչն մեր՝ ('ի պատիւրէ անդ) առեալ տարցես յաշխարհն քո. և նորա առեալ խնդութեամբ եկն 'ի Կոստանդնուպօլիս, և շու-

եալ Աղեքսի կայսեր, մեծարանս արար նմա յոյժ, և ետ նմա գանձս բազումս, և խնդրեաց 'ի նը-մանէ զգեղարդն, և եթող առ նմա կոմսն. և գը-նաց զճանապարհս իւր,,:

45, Հայր Միքայէլ Չամչեան Մխիթա-րեանց 'ի վարս սրբոց հատոր է. յերես 358. 'ի ծա-նօթութեան վարուց Ղունկիանոսի հարիւրապե-տի՝ չգիտեմ առ ինչ վախճան, զանց արարեալ զստուգութենէ Հայաստանեայցս իրաւանց՝ զլա-տինացի Բոլլանդեանցն բերէ անդէն զերկարա-ձիգ բանս՝ զոր արժան համարեցաք դնել աստ 'ի զբօսանս ընթերցանելեացն:

,, Իսկ յաղագս աստուածամուխ Գեղար-դեանն, զորմէ աւանդութիւն է ազգիս 'ի Հա-յաստան լինել՝ բերեալ 1, 'ի Բարդուղիմեայ ա-ռաքելոյն, բերեն Բոլլանդեանք զաւանդութիւ արևմտեայց՝ որպէս թէ առ նոսա իցէ, գրելով այսպէս. X յաղագս Գեղարդեան՝ որով խոցե-ցաւ կող փրկչին, որ ոք կամի քաջ խելամուտ լի-նել ամենայնի, ընթերցցի զՅակոբ Բոսիոս. գիրք ա. յԺԳ. յաղթական խաչի. գլ. 17. ուր ճոխագոյն բացատրէ, թէ զիարդ ընդ սուրբ խաչափայտի և ընդ այլ գործեաց չարչարանաց Տեառն յերկիր թաղեցաւ այն 'ի հրէից, և ընդ նոսին գտաւ 'ի Հեղինեայ դշխոյէ 'ի մօրէն մեծին Կոստանդիա-նոսի: Եւ թէ սովոր էր պահել այն յայնմհետէ 'ի գաւթի տաճարի սուրբ գերեզմանին, ուսու-

1, Ոչ 'ի Բարդուղիմեայ առաքելոյ, այլ 'ի Թա-դէոսէ՝ որ էջ առ Աբգար արքայ Հայոց յԵդեսիայ՝ ըստ վերոյգրելոյդ. Բայց հնագոյն և նոր պատմիչք ազգայինք եր-ջոյունց ոչ Առաքելոյս թէ նշխարին՝ Բարդուղիմեայն հան-դերձ պատկերաւ Տիրամօր խօսին՝ զոր նա ընծայ եբեր 'ի Հա-յաստան, և Թադէոսին հանդերձ նշխարս սրբոց Գեղար-դեանն:

ցանէ հեղինակ գրոցն՝ որ յաղագս սուրբ տեղ-եաց, համառօտեալ՝ որպէս կարծի, 'ի պատուականն Բեթայէ։ Ընդանօր առ նմին Իոսիփոս մարթ է վերծանել, թէ որպէս նոյն սբ Գեղարդն յամի 1118. կամ 1098, սքանչելեօք գտեալ յԱնտիոք՝ սքանչելապէս ազատեաց զայն քաղաք 'ի սաստիկ պաշարմանէ։ Եւ թէ որպէս նոյնն անկաւ 'ի ձեռըս կայսերն Կոստանդնուպօլսոյ՝ որոյ զսայր նորա խարտոցեալ՝ զառաջինն եւ 'ի պարգեւի մասին Վենետիկեցւոց, եւ ապա յղեաց ընծայ առ սբն Յուդովկիոս արքայ Գաղղիացւոց 1. իսկ մնացեալ երկաթն՝ որ մնաց 'ի թագաւորական քաղաքին, յառման անդ նորա անկաւ ը ձեռամբ կայսերն Թուրքաց Մահմէտի երկրորդի, յամի տռն 1453։ Եւ անդ էր մինչեւ որդի նորա Պայազիտ կամեցեալ ուղերձ ինչ մատուցանել մեծի զօրավարի գնդին Երուսաղէմացւոց, եւ զգուշացեալ զի մի թողացուսցէ նա, կամ յանձին կալցէ դարձուցանել յետս զեղբայր իւր զվանեալն յիւրմէ պատերազմաւ, զայն սբ երկաթն յղեաց առ պապն Իննովկենտիոս ը. յամի 1492. զոր մեծաշուք փառօք ընկալեալ՝ պատուով մեծաւ բերին 'ի տաճարն Վատիկանու՝ ուր եւ ցարդ պահի։ Զայս ամենայն՝ ասեմ, զորոց ճոխ եւ անվրէպ ճառէ Իոսիփոս, մարթ է ընթեռնուլ առ նմա,,։ Ի յայսպիսի աւանդութիւս իւրաքանչիւր ազգ զիւր միտըս հաճի,,։

## 46, 'Ի տեղեկութեանց այսոցիկ գրուածոց

1, Եւ այս հատուած այնր ոչէ՝ որ առաջեցաւոյն Լուդովկիոս արքայ Գաղղիացւոց, ընդ որս էջէ ա՛յն Գեղարդ՝ ըստ ԳԵ յաշխարհագրութեան Նորոգեայ հատոր Գ, յերես 17. որ եդեալ 'ի Բէջ աշխեղօծ արծաթի տապանակէ՝ պահեալ կայ ըստ աստուածային Եկեղեցւոյն եղելոյ յանուն Տեառն մերոյ 'ի քաղաքի անդ Վօրեմզերկայ:

բացայայտ նշմարի ստուգութիւն իրաւանց Հայաստանեայցն քան Լուսաւորչաց. քանզի հայք զապացուցութիւնս իւրեանց շարունակեն սկսեալ ՚ի Թադէոսէ առաքելոյ իւրեանց և այսր՝ յորում չէք ինչ ժամանակ ընդհատեալ. իսկ Լուսաւորչեք առ ՚ի հաստատել զիւրեանցն՝ ունին զկարի հետաւոր ժամանակն՝ սկսեալ յամէն 1098. յորում միջոցի գտաւ յԱնտիոք քաղաքի առ յինքեանս եղեալն այն տէգ. ուստի տարաւ ՚ի Կոստանդնուպօլիս, և անտի ըստ գրուածոց իւրեանց յամի 1492. տարաւ ՚ի Հռոմ։ Եւ այս ամենայն պատշաճ իսկ է համարել զ՚ի Հռոմ եղեալն տէգ՝ այն, որով հրեայք ընդ կատակս խոցեցին զպատկերն զայն փրկչական ի Բիւրիտոն քաղաքի, զոր և հաստատէ մեծն Վարդան վարդապետ Բարձրբերդցի երգող վերոյգրեալ շարականին՝ ՚ի պատմութեան իւրում այսպէս։

„Յամ ՇԽԷ թուին (յամի տեառն 1098.) Պաղտոյն կոմսն էառ զՄիլպաշար և զՈւրհա, և ՚ի միւս ամին սպասալարն Բէկկիարուխին եկեալ յԱնտիոք ՚ի վերայ ֆռանկին՝ հարաւ ՚ի նոցունց իբրև Ռ. (հազար) բիւր. քանզի գտին ՚ի ձախակողմն (եկեղեցւոյ) սրբոյն Պետրոսի զԳեղարդն՝ որով հրեայքըն խոցեցին ըստ կատականս զպատկերն փրկչական, ուստի ել արիւն և ջուր՝ որպէս ՚ի Տէրունի կողէն. և պատուեցաւ զէնն՝ որպէս զաստուածամուխն այն՝ զոր Հայք ունին, որով զօրացեալ փռանկքն հարին զթշնամիս իւրեանց և ապա առաքեցին զնա Աղեքսին (կայսեր յունաց)„։

Եւ ահա ՚ի բանից աստի մեծին Վարդանայ քաջայայտ երևի թէ՝ այն Գեղարդ՝ որով հրեայք կատականօք խոցեցին զպատկերն զայն ՚ի Բիւրիտոն քաղաքի՝ պատուեալ բերաւ յԱնտիոք, և պահեալ անդէն յեկեղեցւոջն՝ որ յանուն սրբոյն Պետրոսի առաքելոյ. ապա ՚ի նմին յայնմիկ ժամա-

նակի յայտնեալ և ցուցեալ զյաջողուածս պա-
տերազմին ընդ դէմ թշնամեացն՝ պատուեցաւ և
և՛ս զօր և ընկալեալ կոմսն Օնջիլ անուն տարաւ
ընդ իւր ՚ի կոստանդնուպօլիս, և ընծայեաց
Ալէքսի կայսեր. և նա խարտոցաւ հատեալ զեր-
կուսին զայն մասն, առաքեաց զմին պարգև վե-
նետիկեցւոյ, և զմիւսն առ արքայն Լուդովիկոս.
իսկ մասն մեծագոյն մնացեալ անդ ՚ի Կոստանդի-
նուպօլիս՝ զկնի ժամանակաց առաքեցաւ ՚ի Սուլ-
թանէն տաճկաց ՚ի Հռովմ, ըստ յառաջ բերելոյն
հայր Միրաշի Աւգերեան։

47, Այսոքիկ ծանօթութիւնք հանդերձ վը-
կայութեամբք հնութեանցն Հայաստանեայց հաս-
տատեն թէ, իսկական Գեղարդն՝ որով խոցեցաւ
կող կենարարին մերոյ Յիսուսի, է եղեալն ՚ի Հա-
յաստան՝ որ այժմ գտանի ՚ի սուրբ Կաթուղիկէ
եկեղեցւոջ Հայրապետական Աթոռոյ Էջմիածնի։

Իրաւունք Հայաստանի գեր ՚ի վերոյ պան-
ծայր առաւել քան զայս՝ եթէ չէ՛ր անյայտ եղեալ
յատուկ մատեանն պատմութեան սուրբ Գեղար-
դայ՝ որ նշանակի ՚ի կարգի անդ հին ցուցակի մա-
տենից գրանոցի մեծի Աթոռոյս Կաթուղիկէ Էջ-
միածնի. քանզի քանիցս անգամ ՚ի ժամանակս
պատերազմաց ՚ի դաշտի աստ Արարատայ, ՚ի կո-
րուստ գնացին ի՛նչ ի՛նչ հարկաւոր մատեանք՝ թէ՛
՚ի գրանոցէ աստի, և թէ՛ յառանձին զգուշաւոր
պահպանութեանցն այնց ՚ի զանազան յապահով
կարծեցեալ տեղիս. ընդ որս և պատմութիւնն
սուրբ Գեղարդայ։

48, Ամենափրկիչ անուանեալ պատկեր Յի-
սուսի իջմանն ՚ի խաչէն՝ ՚ի վերայ երկար քառան-
կիւնի անփուտ փայտեայ տախտակի. երկարութի̃
նորա գ̃ թիզ՝ դ̃ մատն, լայնութիւն ա̃ թիզ՝ է մա-
տըն. իսկ թանձրութիւնն երկմատնաչափ. ՚ի գա-
գաթ խաչին նշան հայրական աջոյն, յորոց քան

զայն աղաւնակերպ հոգին Յիսուսի · ըստ աւետարանական բանին՝ „Հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ„ · Ղուկ · գլ 23 · համ 46 ։ Յերկոսին կողմանս խաչին երկու արք՝ որոց աջակողմեանն զերծուցեալ զբազուկ Յիսուսի ՚ի խաչէն՝ արկեալ է զուսովն, և ունի ձեռօք զմարմին Նորա · իսկ ահեկանն՝ ագցան ՚ի ձեռին քարշէ զբեւեռն ՚ի ձեռաց և ՚ի խաչէ անտի ։

Յիսուս և այսոքիկ նշանակեալքս հանդերձ խաչիւն, և չորեքկուսի եզերօք տախտակին են դրուագեալ փորածոյք · իսկ միւս մակերևոյթ տախտակին՝ ամենևին հարթ հաւասար ։

Այս Ամենափրկիչ անուանեալ պատկեր՝ ձեռագործ Յովհաննու աւետարանչի ըստ Գրիգորի Մագիստրոսի, յարձանագրութեան անդ եկեղեցւոյն Հաւուց Թառայ՝ բերեալ ՚ի Յունաստանէ ՚ի Հայս յորդւոյ Աշոտոյ իշխանի բագրատունւոյ տեառն Կարունից ՚ի սկզբան անդ եօթներորդ դարու՝ զոր յընկալնուլ իշխանին ՚ի ձեռաց որդւոյ իւրոյ զայսպիսի գանձ սրբութե̄, անդէն անդ տայ հիմն արկանել եկեղեցւոյ սրբոյ ՚ի կոփածոյ քարանց յանուն փրկչական պատկերին՝ ՚ի ստորոտս անդ քաղաքին Կարունից (Պօյաղէտ) · ուր էին շիրիմք յոլով իշխանաց նախնեացն իւրոց՝ զորմէ Ղևոնդ վարդապետ պատմիչ՝ ՚ի չորրորդ հատուածն ։ „Իսկ ապա յետ մահուանն Գրիգորի (Համինիոսյ) յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ (Բիւրատեան ։) Պատրիկ այր երևելի և նախամեծար ՚ի մէջ նախարարացն Հայոց ՚ի տոհմէ բագրատունեաց ․ ․ ․ փոյթ յուսումնասիրութեան, և զարդարէր զեկեղեցիս Աստուծոյ վարդապետական արուեստիւք և պաշտօնէից խմբաւորութեամբ, պատուէր և երևելի սպասիւք յիւրոց գանձուց, և շինէր զեկեղեցին Կարունից յիւրում ոստանին, և զկենդանագրեալ ըզ-

պատկերն մարդեղութեանն Քրիստոսի ածեալ՝ 'ի մտիցն արեւու՝ մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր 'ի նմա. և նորա անուամբ զեկեղեցին անուանեաց„:

Տեղի այսր եկեղեցւոյ կայ տակաւին անդ 'ի ստորոտս քաղաքին Պայազիտոյ, այլ՝ շինուածք տաճարին քայքայեալ և խանգարեալ՝ շուրջ զորով այժմ է գերեզմաննոց հայազգի բնակչաց քաղաքին, և նոյն իսկ բնակիչք մինչև ցայժմ յիշատակեն զանուն եկեղեցւոյն այնորիկ | Ամենափրկիչ | :

Արձանագրութիւն եկեղեցւոյն՝ 'ի քայքայեալ որմոց անտի, այսքան և եթ նշմարեալ, բացայայտեցաւ ճշմարիտ վկայ բանից պատմութեանն: „Ի հիւսիսային որմն եկեղեցւոյն..„ Ի պատրկութեան... իշխան Հայոց ազգի... ինքնական կենակցութեան... և 'ի հանդերձեալ քո գալստեան„: Յորմն հարաւային: „Ի ծագաց մտիցն արեւու ածեալ պարգեւել մեզ հաճեցար՝ որ յամենայնի...„:

Զայսմանէ և Բարձրբերդցին մեծն Ս. Սարգսան վարդապետ պատմիչ. „Զկնի Աշոտոյ՝ որ շինեաց զԳառնից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա յարեւմտից մատամբ, և 'ի նաւակատիսն գրեաց զորս ըստ պատկերին„: այնէ՝ շարականն կարգեալ առ ողորմեա փոխն 'ի հինգերորդ աւուր նաւակատեաց սուրբ Խաչին:

Տողէ և փոքն տարսոնեան Ներսես լամբրոնացի առայս՝ յերկոսին նամական իւր. առ Յուսկան արգելական ճգնաւորն յոյն. „Զոր լուծանեն մեկնիչք ընդարձակ բանիւ 'ի վերայ Թագաւորական քաղաքին (Կոստանդնուպօլսի) ուր եդաւ հիմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ ըստ ամենի 'ի մեր վարդապետաց„՝ որ այն ինքն է եր֊

գող շարականիս ։ Ի Թուղթն առ Լևոն արքայ հայոց Կիլիկիոյ . „Որպէս ասի յերգ մի՝ որ առ մեզ եղանակի, կեցո՛ զորդի ծառայի քո՝ զոր ՚ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր՝ ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ„ ևն ։

49, Ապա զկնի անցանելոյ միջոցաց իբրև երից հարիւր ամաց ՚ի ձեռս բերէ զայս պատկեր փրկչական Գրիգոր մագիստրոսն Պահլաւունի որդի Վասակայ (Հասանայ՝ ըստ արձանին եղելոյ ձեռնէ ցեն Սեբաստոյ ինոյն մագիստրոսէն Գրիգորէ) . և յանուն այսր պատկերի վերստին նորոգ եկեղեցի տայ կառուցանել յորձաքար վիմաց ՚ի Հաւուց Թառ կոչեցեալ սահմանին՝ որ մերձ ՚ի Գառնի, կից յարևմտեան ճակատ փոքրիկ և անշուք եկեղեցւոյն կառուցելոյ յառաջագոյն ՚ի Գէորգ իշխանէն Որեղոյ ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ, և հանգուցանէ ՚ի նմա զայս պատկեր՝ յորոյ անուն կոչի ՚ի պատմագիրս և յարձանագիրս և այս եկեղեցի՝ որոշ յեկեղեցւոյն Գառնւոյ՝ որ ՚ի Կողովիտ գաւառի առ հարաւային ստորոտով մեծի լերինն Մասեաց . իսկ սա ՚ի հիւսիսակողմն Երասխ գետոյ հանդէպ Գառնւոյ յարևմտեան լանջս լերին՝ որոյ զառաջեաւ ՚ի խորաձոր միջոցս հոսի գետակն Գառնւոյ, Ազատ գետ կոչեցեալ ՚ի գիրս ։

զ Այս պատկերէ որ յարձանագրութեան անդ Գրիգորի մագիստրոսի և զեկեղեցւոյ՝ տե՛ս ՚ի Հաւուց Թառ ։

50, Այս հրաշալի պատկեր փրկչական իւրով հնութ̃բ, մանաւանդ լինելով ձեռագործ Յովհաննու աւետարանչի՝ պահպանիւր ՚ի մենաստանի անդ Հաւուց Թառայ որչափ կայր այն ՚ի շինութեան . այլ զկնի վերջին ապատակութեանց յայս նահանգ Հայաստանի ՚ի Կովկասեան ելուզակաց, և խափան անշքանալոյ մենաստանացն՝ յո-

րոց կարգի և մենաստանին Հաւուց Թառայ, բերաւ այս սբ. պատկեր ՚ի սբ. աթոռ այսր Կաթուղիկէ Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. և կայ այժմ ընդ այլ սրբութեանց ՚ի գանձարանի անդ ։

Իսկ Միքայէլ Չամչեան չունելով զծանօթութիւն ինչ ՚ի մասին այսր պատկերի, գրէ ՚ի պատմութեանն Հատոր Գ., Հմր 312. ,,Նաի՝ թէ շինեաց սա (վերոյիշեալն Ս. Բարթողիմէոսն) յայնժամ զեկեղեցին Կարունից, և եբեր անդ զպատկեր փրկչին. այլ թէ որ իցէ՝ ոչ է յայտ։

51, Մասունք խաչափայտին Քրիստոսի. Ա մասն զետեղեալ կայ ՚ի Թանկագին ոսկեայ ականակուռ եպիսկոպոսական փոքրիկ խաչի. և է յանուն Փիլիպպոս կաթուղիկոսի Աղբակեցւոյ՝ որոյ ՚ի Թիկանց կողմանէ գտանի յիշատակագրութիւն՝ ըստ այսմ. ,,Այս է պսակ սուրբ սիօնի, փայտ և բևեռն Քրիստոսի, առիթ յիշման Փիլիպպոսի Հանուրց Հայոց Հայրապետի, որ բարեխօս է Մարտիրոսին, և իւր որդւոյ Սիմէոնին ,,։

Բրդ՝ Նոյնպէս զետեղեալ յոսկեայ ականակապ եպիսկոպոսական խաչի. ՚ի միջակէտն անդրը երկուց երկերեսաց ևս գոն գրչութիւնք յիշատակացյանուն Յակոբ կաթուղիկոսի Ջուղայեցւոյ. ,,Յիշատակ է սուրբ նշանս Յակոբ կաթուղիկոս սրբազանին, Աստուծոյ իջման տեղի, ռՃի Թվին (հայոց). կենաց փայտէն կենսատուին, և մասն անկար պատմուճանին, ամփոփեալ կայ ՚ի սբ. խաչս այմին,, ։

Գրդ՝ Ի քառակուսի նոյնօրինակ խաչ արծաթի Թելկատ՝ (ՆԻՓԱՆԻ) որոյ ՚ի Թիկանց կուսէ ՚ի ներքոյ ապակւոյ ունի գիր՝ ըստ այսմ. ,,Սուրբ նշանս է ՚ի կենաց փայտէն՝ կարմիրն և սպիտակն է ՚ի Նոյեան տապանէն ,, ։

Դրդ՝ Նոյնպէս յոսկեայ ականակուռ եպիսկոպոսական խաչի՝ յորոյ ընդոյն (ԲԱՆԵԱՂ) վե-

րայ դ՚ոյ գիր ըստ այսմ. ,,Յիշատակ է սուրբ խաչըս կենաց փայտին՝ Սրբոյն Վարդապետին՝ սուրբ Էջմիածին՝ ռճխթ թվին ,, (1700) :

52, Տապանակ երկար քառանկիւնի արծաթի շինուած երկդրամբք և անուանի սուրբ նշանն մենաստանին Խորանակերաց. ունի 'ի թիկանց ընդարձակ արձանագիր ըստ այսմ. ,, Կամաւ կարողին Աստուծոյ Եւ Էաչի որդի Հասանա որդւո Պուշա որդո մեծին Սասակա յազգէ Հախպակաց տիրեցի հայրենի երկրիս իմո Տապունաց և այլ յոլով գաւառաց՝ զօրավիգն և օգնական ունելով զԱրխատուն և զսուրբ նշանս Խորանակերաց՝ որով և նախնիքն իմ զօրացան. ետու կազմել պահարան սմին անջինջ յիշատակ. որք հանդիպիք սմա, զիս և զծնօղսն իմ զամիր Հասան, և զԱլաձին, և զհօրեղբայրն իմ զՊապաք յաղօթս յիշեցէք. այլ և զամենայն նախնիսն մեր և զազգատոհմ ,, :

'Ի շինուածի սորա յառաջին երեսի 'ի բարձրութեան անդ է պատկեր Փրկչին , և յերկոսին կողմանս երկուց հրեշտակաց , Աստուածածնի և Յովհաննու . 'ի վերայ երկուց դրանցն Լուսաւորչի և Յովհաննու մկրտչի . յերկոսին սորին անկիւնսն Պետրոսի և Պօղոսի առաքելոց : և 'ի միջին տեղւոջ այսց երկուց պատկերաց է այլ պատկեր բազկատարած՝ յորոյ երկուս կողմանս գրուած այսպիսի՝ ,, Սուրբ նշան տէրունական , Տու Էաչու լեր օգնական , թվ. չխթ ,, :

Միջն տապանակաձև շինուածոյս այսորիկ է հարթ շէնք արծաթի ծաղկեայ ոսկեզօծ , յոր ագուցեալ կայ փոքրիկ խաչ արծաթի ոսկեզօծ հասարակ քարամբք և մարգարտօք . իսկ 'ի ներքին երես երկուց դրանցն են պատկերք Գաբրիէլի և Միքայէլի հրեշտակապետացն :

53, Տապանակ ծանրակշիռ շէնք արծաթի՝ յորում ամփոփեալ կայ հատուած նախնակի տա-

պանին Նոյի նահապետի, և է թզաւ երկայն, քլա-լայն, և թանձր երկմատնաչափ. մակերևոյթ նորա կարի փայլուն հարեալ ՚ի գոյն դեղնաշորթ և կարի կարծր. որոյ մի անկիւնն բեկեալ և վերառեալ ընկղաչափ: Ի միջակէտ տախտակին ամրացեալ կայ փոքրիկ խաչ արծաթի ոսկեզօծ և ունի հասարակ քարինս: Շէնքն արծաթի պարունակիչ տախտակին ունի երկփեղկեան դրունս՝ յորոց վերայ են պատկերք՝ սրբոյն Յակոբայ հայրապետին տարածեալ ունելով զբազուկսն, և հրեշտակին՝ որ մատուցանէ զտախտակն:

Ի թիկանց կուսէ շինուածոյն գոյ յիշատակագրութիւն այսպիսի. ,, Կամաւն Աստուծոյ ես մեղսամած և գծուն Դաւիթ անարժան հաբեղէս ազգաւ պռօշեցի տեղապահ վանիցս սուրբ Գեղարդայ շինել ետու. և գոյն զգոյն օրինվածօք զարդարեցի զպահարանս Նոյեան տապանիս փրկագործ սուրբ տախտակիս՝ որ այժմ կոչի սբ Յակոբ. յիշատակ ինձ և իմ ծնողացն և ամենայն արեանառու մերձաւորաց. և որ շատ և որ սակաւ արդիւնք ունիցին այսմ պահարանիս տէրն Քրիստոս հատուսցէ ՚ի միւսանգամ գալստեան ամէն: Նաև որ ոք կամեսցի հանել վանիցս սուրբ Գեղարդայ, կամ ծախել, կամ գրաւ դնել ազգայնոցս և այլոց յանէծս կայենայ և դադանայ և խաչահանվացն առցէ, և սեւերես առ յիս գացէ, ամէն: Շինեցաւ ձեռամբ քանաքեռցի մեղապարտ ոսկերիչ Աւետին թվ. ռՃխէ ,, (1698):

54, Տապանակ փոքրիկ հասարակ արծաթի. ունի զերկփեղկեան դրունս. ՚ի մէջն գոյ պատկեր և ՚ի սրտի նորա ագուցեալ է մեծ ակն դեղնագոյն՝ յորոյ ներքոյ նշմարի մասն:

55, Տապանակ սոսկ փայտեայ փորածու. մէջն սիւնաձև քանդակ. և ՚ի վերայ խաչ. և ՚ի չորս թևսն խաչին մանր երկաթք մխեալք. անուա-

նի եւս՝ մասն 'ի փշեայ պսակէ Փրկչին մերոյ։

56, Տապանակ համարակ արծաթի ստորին շինուած երկդրամբք՝ որ պարունակէ յինքեան զփորածու խաչ փայտեայ՝ յորոյ վերայ և խաչ փոքրիկ արծաթի. որ ունի 'ի միջակէտին կարմիր ակն բեկեալ: 'Ի թիկանց կուսէ ունի յիշատակագիր ըստ այսմ: „Ես Գաբրիէլ վարդապետս առաջնորդ սուրբ Սաղմոսավանից շինել տուի զպահարան սուրբ Արագածու սուրբ Նշանին ըստացուածովք Աստուածատէր երևանցի Գուլումին վասն յիշատակի ամենից իւրոց ննջեցելոցն խօջայ Ալումբէկին և խօճայ Սիմէօնին. և զաւակաց Աղամջան, Ահարոն և այլն„:

57, Տապանակ փոքրագիր արծաթի հարթ շինուածով. սա անուանի Աստուածընկալ սուրբ Նշան՝ որ գուցէ, իցէ Աստուածընկալ վանացն՝ որ 'ի Նիգ գաւառի:

58, Տապանակ միջակ դրուագեամբ բոլորովին մաքուր արծաթի կարի ընտիր գործուածքաջ արհեստաւորի. գլխովին ոսկեզօծ՝ անուանեալ բազմամասն. և է յանուն Յովսէփ Արքեպիսկոպոսի Արղութեանց. ունի զերկփեղկեան դրունս՝ որոց 'ի ներքին կողմն պատկերք է՝ Լուսաւորչի և Յակոբայ Մծբնայ հայրապետի, իսկ յարտաքին երեսն, 'ի վեր անդր ննջումն Աստուածամօր, իջումն Տեառն 'ի խաչէն՝ և այլ պատկերք՝ Տեառնեղբօր, Հռիփսիմէի, Թադէոսի, Յովհաննու մկրտչի, Անդրէասի, Ստեփաննոսի նախավկայի, և Անանիայի:

'Ի միջին տեղւոջ ագուցեալ կայ խաչ արծաթի ոսկեզօծ անդամանդ, յակինթ և զմրուխտ ակամբք՝ յորում մասն փայտին կենաց. 'ի վերայ բնոյն խաչի գրեալ՝ 'ի վայելումն Յովսէփ վարդապետին Սանահնեցւոյ: 'Ի շրջապատ այսր խաչի 'ի մակերևութի անդ տապանակին են որոշ որոշ

տեղիք մասանց նշխարաց յիշատակեալ սրբոցն և այլոց:

Ունի 'ի թիկանց յիշատակագրութիւն՝ ըստ այսմ. „յիշատակ է պահարանս այս Հաշտարխանու քաղաքի Քրիստոսասէր և բարեպաշտուհի օրհնեալ կանանցն ամենից՝ յորդորմամբ և աշխատութեամբ Մխիթարեցի Մ. Երշելէնց փարսադանի կողակից մայր Աննայեն և Մարիամին, 'ի վայելումն տեառն Սիմէօն սրբազան կաթուղիկոսի աշակերտ սրբոյ աթոռոյն Էջմիածնի նուիրակ և Հաշտարխանու առաջնորդ Մանասնեցի Յովսէփ Արք. եպիսկոպոսին Արղութեանց, զկնի մահուանն 'ի դուռն սրբոյ աթոռոյն Էջմիածնի. թուին փրկչին 1775. իսկ Հայոց ռմիդ„:

59, Գաւազան գլխոյ սրբուհւոյն Հռիփսիմեայ կուսի 'ի մէջ ութանկիւնի արծաթաշէն անօթոյ կազմեալ 'ի ժամանակէ Սիմէոն կաթուղիկոսի Երևանցւոյ՝ որոյ և կաթուղիկոսական կնիքըն փոքրիկ տեսանի կնքանիւթով 'ի վերայ, և կպեղը ամրացեալ զմբէթն և անօթն գագաթանունի և յիշատակագրութիւն յերկոսին անկիւնս յերկ կողմանս յիշեալ կպեղն:

„Ձեռամբ Սիմէօն կաթուղիկոսին„ սուրբ Հռիփսիմէի գագաթն է. ռմժդ (Հայ Թուական) (1765)„:

60, Աջ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի պարունակեալ յարծաթաշէն կազմուածի յարմնկանէ ցծայր մատանցն. 'ի ծայր արմնկանն յարծաթի անդ է պատկեր սուրբ Հօրն Հայրապետական զգեստուք. և բովանդակ բազուկն ընդ երկայնութիւն յերկուս բաժանեալ է քանդակուածովք ոսկերչին. 'ի մի բաժնին քանդակեալ են երկոտասան չարչարանք սրբոյն, իսկ 'ի միւս բաժնին դրուագք ծաղկաքանդակք՝ յերկոսին միջոցս այսց քանդակաց է յիշատակագրու-

թուին՝ ըստ այսմ. „Յաւուրս մեծի հայրապետի, Ջուղայեցի տեառն Յակոբի, թուին Հայոց ըստ տումարի, ռճզ ամի, 'ի յիշատակ Ստեփաննոս Իլովացի վարդապետի, Նոր պահարան Աջս ձեռին, սուրբ Գրիգորին Լուսաւորչի, կազմեալ եղև Էջմիածնի, առ 'ի պարծանս Հայկայ զարմի„: 'Ի ծայր բազկին՝ ուր միանայ թաթն, գոյ ընդ առաջին շինուածն ամրացեալ ապարանջան (պէլէզիկ) սելեան ակամբք և մինայ. գոյ և երկրորդ ապարանջան 'ի մաքուր ոսկւոյ, յորոյ վերայ երեք վարդաձև շէնք յակինթ ակամբք, և ունի գիր յիշատակի յանուն տուողին՝ ըստ այսմ. „Յիշատակ է ապարանջան Թիփլիզեցի Մարիամ մայր Ռաշինի 'ի յաջ սուրբ Լուսաւորչին՝ որ 'ի սբ Էջմիածին, 'ի 1770„:

61. Աջ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի պարունակեալ յարծաթի շինուածի յարմնկանէ ցծայր մատանցն՝ բովանդակն ծաղկաքանդակ. ընդ երկայնութիւն բազկին ունի զերկկարգ գրչութիւն, և 'ի ծայր անդ արմնկանն ըստ այսմ. „Արդ ես Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի յաջորդեալ յաթոռ սրբոյն Լուսաւորչի 'ի սուրբ Էջմիածին, տեսեալ զաջ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին յիշատակ 'ի դուռն Սաղմոսավանաց, բայց էր կարի խրթին, և 'ի խորտակել պահարան մ զոր առեալ մ նորոգեցի վայելուչ յօրինուածով և եդի յիշատակ ևս 'ի նոյնում վանս Սաղմոսաց աներծանելի արձան, 'ի թվիս Հայոց ռճէ ամի„:

'Ի մատանց աջոյ սրբոյ Հայրապետիս շղթայիւք կախեալ կայ փոքրիկ փայտ քանդակեալ տէրունական և այլ պատկերօք, և ասի լինել մասն 'ի փայտէ տախտակի Նոյեան տապանին:

62. Աջ Թադէոսի առաքելոյն արծաթաշէն ոսկեզօծ, ունի երեք կարգ գրուած յիշատակի

ընդ երկայնութիւն բազկէն՝ ըստ այսմ. ,,Սա Թադէոսի առաքելոյն կազմեալ կայր 'ի թվէն չԺԴ, վերստին նորոգեցի 'ի թվին ռՃԻ, ծախիւք ջուղայեցի Մատթէոս վարդապետին, և տուաւ 'ի դուռն Ամենափրկչին յիշատակ իւր և ծնողաց իւրոց հօր Գրիգորին և մայր Ան,, :

63, Աջ Մատթէոս աւետարանչի յամբողջ շէնք արծաթի ոսկեզօծ. քանդակն հնագոյն ձևացութեամբ յարմնկանէ ցծայր մատանցն. ընդ երկայնութիւն բազկէն չորք կարգ հարթ արծրնեալ՝ յորս է յիշատակագրու՝ ըստ այսմ. ,, Աջ Մատթէոս աւետարանչի այս յիշատակ Յովհաննէս վարդապետին և հոգևոր և մարմնաւոր ծնողացն՝ որ 'ի դուռն Յօհաննու վանից ս̃բ Կարապետին. թվին ռՃԻԸ ,, : 'Ի ծայր արմնկանն յարծաթ անդր է պատկեր Աւետարանչին, և գիր անուանն | սուրբ Մատթէոս | :

64, Աջ առաքելոյն Թովմայի՝ 'ի հարթ շէնք արծաթի ոսկեզօծ. ունի յիշատակագրութիւն՝ ըստ այսմ. ,,Օի օծեալ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի կողն մխեալ ս̃բ այս Թովմայի առաքելոյ՝ ապաւէն և աւգնական պարոն Անայսարին և կողակցին Խանումին՝ որ փափականաւք ետ պատվել որդւոցն՝ Ղուկասին, Ղուպատրին. Աստուած ողորմի իւրեանց կենդանեաց և ննջեցելոց հոգոցն, ամէն. արուեստաւոր սուրբ աջիս Գալուստ նուաստ աբեղաս ուստայ Յակոբն. Քրիստոս ,, :

65, Աջ Արիստակեայ հայրապետի որդւոյ Լուսաւորչի, 'ի շէնք արծաթի ոսկեզօծ. քանդակն հանգոյն քանդակի աջոյ հօրն իւրոյ՝ յարմնկանէ ցծայր մատանցն. ընդ երկայնութ̄ի բազկին ունի գիր՝ ըս̃ այսմ. ,, Սա է որդւոյն Լուսաւորչի, Արիստակէս հայրապետի, որ պատուեցաւ զարմանալի, ոսկենկար ըստ քանդակի, ծա֊

խուք մեծի դիտապետի, Փիլիպպոսի սրբազանի, ՚ի Թիւ Հայոց տումարի, ՌՂ ութերորդի ,, : ՚ի ծայր արմնկանն յարծաթի անդ՝ է պատկեր սըրբոյս հայրապետական զգեստուք, և գիր անուանըն՝ | սուրբ Արիստակէս | :(78):

66, Աջանն արծաթի շէնք ոսկեզօծ՝ յորում են չորք կարի փոքրիկ արծաթի տուփք մասանց. յերկոսին՝ մասունք ՚ի փայտէն կենաց, ՚ի միումն՝ Յակոբայ տեառն եղբօր, և ՚ի միւսումն Անդրէաս առաքելոյ : ՚Ի վերայ այսր աջանն շինուածոյս՝ որ ձևանայ յարմնկանէ ցծայր մատանցըն, գոյ նօտրագիր գրուած այսպիսի. ,, Յիշատակ է աջս Ոհան վարդապետին առ դուռն սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսայ. և որ ոք կողասցէ կամ ծախեսցէ կամ գրաւեսցէ՝ կայենի, յուդայի պատիժն առցէ, ամէն. Թվին ռժզ. շինողն և այլն ,, :

67, Աջ արծաթի շէնք քանդակեալ՝ Թաթն և եթ ոսկեզօծ. ընդ երկայնութիւնն ունի չորս կարգ գրուած՝ ըստ այսմ. ,, Ամենազօր սբ. աջս է յիշատակ Խարվիզեցի Ղազար վարդապետին ուրըն հօրն, մօրն ՚ի դուռն սուրբ Աստուածածին ամենայն մերձաւորացն. յորում ամփոփեալ կան նշխարք սրց առաքելոցն Յակոբայ ալֆեայ, Բարդուղիմէոսի, և Եղիշէի մասունքն, և սրբոյն Հռիփսիմէի, սրբոյն Գէորգայ մասունքն ՚ի բարեխօսութիւն և ՚ի փրկութիւն հաւատացելոց, զոր տէր Աստուած իւր մեղացն Թողութիւն շընորհեսցէ, ամէն. Թվ. ռձծ ,, :

68, Ոսկր փոքրիկ՝ որ ըստ աւանդութեն է ձկոյթ մատին Պետրոսի առաքելոյ, եդեալ կայ ՚ի մէջ երկուց կորնթարդ ապակեաց, և այն դարձեալ ՚ի մէջ վեց անկեամբ արծաթի շինուածոց հանդերձ ապակեօք և վերին ծայրն գմբէթաձև՝ ընդ որս համարձակ երևի նոյն մասն ոսկեր:

69, Տապանակ արծաթի հասարակ շէնք. առաջին երեսն ոսկեզօծ. 'ի վերին բաժնի՝ փրկիչ յաղթող բազմեալ. իսկ 'ի ստորին բաժնի՝ կանգուն կան պատկերք նոյնպէս յարծաթի անդ Անդրէի առաքելոյ և Մատթէոսի աւետարանչի. և 'ի միջոցի երկուց պատկերացս ագուցել են երկու մեծ ակունք՝ յորոց ներքոյ երևին մասունք նշխարաց այսց սրբոց : 'ի թիկանց կուսէ ունի գիր շինութեանն :

'Ի վերին բաժնի.

,, Շինեցաւ 'ի մայրաքաղաքն Նախիջ. թվ. ռՃՀԴ, տէր ողորմեա ,, :

'Ի ստորին բաժնի.

,, 'Ի պահարանի աստ ամփոփի աջն սուրբ առաքելոյն Անդրէի, եղբայր մեծի Պետրոսի վէմի՝ որ է շնորհօքն Քրիստոսի. ես գաւառեցի Միքայէլ վարդապետս նորոգել տուի զայս սուրբ աջս արծաթով ակնով և ոսկեջրով յիշատակ հոգւոյն իմոյ և ծնողացն իմոց. թէ ոք ծախէ կամ գրաւ դնէ, պատիժն յուդայի առցէ և խաչահանողացն. շինեցաւ ձեռամբն ուստա Պօղոսին և Նարաղամին ,, :

Յաջակողմն.

,, Նուագ 'ի դուռն Կարենավանից ,,

70, Փոքրիկ խաչ քառաթև, և 'ի չորս թևսն չորս հասարակ ակունք. 'ի միջակէտ այսր խաչի ամփոփեալ կայ վերին մասն միոյ սեղանատամին : Նոյն խաչ այսու մասամբ եդեալ է 'ի մէջ քառակուսի արծաթի տփոյ՝ որ ունի գիր 'ի թիկանց՝ ըստ այսմ.,, Յիշատակ է սուրբ նշանս՝ որէ ատամն սր. առաքելոյն Պետրոսի. և է պատճառ սորին Սարիամ ապաշխարողն, 'ի վայելումն սուրբ Նորասաղէմայ՝ յիշեցէք գծագրող տէր Գրիգորին : Թվին ռՃՂԸ ,, :

71, Տապանակ փոքր հարթ շէնք արծաթի՝

յորում է մասն ոսկեր յանուն Մ՝արկոսի աւետա-րանչի, որպէս յայտնէ 'ի նմին եղեալ թուղթն հա-յացի և ռուս գրչութեամբ:

72, Խաչ հաւասար քառաթև երկբաժին հանդերձ թևօքն և ագուցեալք միմեանս· երեսի բաժինն թելկաթ (չի-բի-չի) ոսկեզօծ· իսկ միւսն հարթ շէնք` յորում է յիշատակագրութիւնն` ըստ այսմ·,, Սուրբ խաչս է յիշատակի 'ի դուռն սուրբ Թադէոս նախկին մերոյ լուսաւորչի, շինեալ որ-դեամբ առաջնորդի, տէր Իսահակ վարդապետի, նշխարք սրբոց բազմադիմի, լցեալք գոն աստ սր-նշանի· հոգւոյն ասեմք տէրն ողորմի, որ շինեցոյց մասանց տեղի· սա էր գիւղէն փառակեցի, որդի Յակոբայ և Թամամի· տուք զողորմին անանց բարի, հոգիքն մեր լուսաւորի, մեծ և փոքրն հայոց ազգի, ննջեցելոցն որք յուսով կան լի· ամէն, ին· սուրբ խաչ օգնէ ինձ գրողիս տէր Յարութիւն քահա-նայիս,,: ունի և վկայագիր մասանցն 'ի նոյն առաջ-նորդէ:

73, Է Տառապք և Է քերանք երկաթիք 'ի գործեաց չարչարանաց սրբոյն Գրիգորի լուսա-ւորչի Հայաստանեայց· երկոքին ծայրք քերանացն ագուցեալ են յարծաթ 'ի յետնոց:

74, Մ՝անեկաձև շէնք բոլորակ արծաթի ոսկեզօծ· յերկոսին կողմանս կարմիր, կանաչ և կապոյտ ակունք յեռեալք· 'ի մի երես` երևին 'ի ներքոյ փոքրիկ ապակեաց ի հինգ բաժնի մասունք հնգեքին սրբոց· և 'ի միւսում երես` նոյնպէս 'ի ներքոյ ապակեաց գրեալ են 'ի վերայ թղթոց ա-նուանք նոցին` այնէ, Յակոբայ Մծբնայ հայրա-պետի, Թադէոսի առաքելոյ, Ստեփաննոսի նա-խավկայի, Սուքիասեանց և Մ՝ինասայ և Նորմո-գինեայ:

75, Տապանակ փոքրիկ քառակուսի արծա-թապատ` 'ի մի երեսն խաչելութիւն Տեառն, և

երկու կանացի պատկերք աստի և անտի ոսկեզօծք. և յատորև պատկերացն երկու երկար բոլորակ ապակիք ամրացեալք յարծաթի անդ՝ յորոց ներքոյ գրեալ են՝ ՚ի միումն հայացի գիր. "Մասն սուրբ կուսին Կատարինեայ". և ՚ի միւսումն՝ լատին գիր։ Իսկ ՚ի միւս երես տապանակին՝ յիշատակ շինեցուցանողի այսր տապանակի ըստ այսմ. "Ուխտն որդի կարապետին ՚ի նահանգէն Թավրիզու ՚ի քաղաքս մարաղացի տէր ղևանդի որդի տէր Օվաննէսս ռճծ. գնեցի սուրբ Երուսաղեմայ օրհնեալ մասունքս՝ որ է Կատարինա կուսին, իմ հալալ ընչից. նորոգեցի սուրբ նշանս ՚ի քաղաքն Թիֆլիս. վայելս". ։

Ունի ՚ի վերայ շղթայիւք կախեալ փոքրիկ խաչ մասամբ։

76, Խաչ արծաթի բոլորակ քառաթև. յերեսի անդ հինգ դեղնագոյն հասարակ ակունք. ՚ի մէջ երկրորդ բաժնի քառաթև խաչիցն՝ են հինգ որոշ տեղիք. ՚ի միջին տեղւոջ՝ մասն կենաց փայտի. յերկրորդումն՝ ատամն սրբուհւոյն Գայիանեայ, յերրորդումն՝ մասն ոսկեր մեծի Անտոնի անապատականի, ՚ի չորրորդումն՝ Նիկողայոսի սքանչելագործի, և ՚ի հինգերորդումն՝ Պօղիկարպոսի վկայի. զորս գրութեամբ և կնքով հաստատէ Զաքարիա արք եպիսկոպոս Թիֆլիզեցի ։

77, Խաչ միջակ հաւասար քառաթև ոսկեզօծ. ՚ի միջին տեղւոջ յերկուս երեսսն ևս փոքրիկ ապակիք ագուցեալք յարծաթ անդր, և ՚ի ներքոյ գիր. ՚ի միումն՝ "Մասն ՚ի կենաց փայտէն Քրիստոսի". և ՚ի միւսումն եղեալ գիր՝ անվերծանելի. բայց ՚ի նոյն երես ՚ի չորեսին ծայրսն խաչին յարծաթի անդ գիր՝ ըստ այսմ. "Ի սա փայտէն զոր տէր կապեալ | և կենաց փայտն ՚ի մէջն եղեալ | պատմուճանէն մասն փայլեալ | տուիթ յիշման Բարսեղիս լեալ |". ։

78, Կէս բաժին ոսկր աջոյ բազկին Արիստակեայ հայրապետի՝ այն է, մասն արմնկան կիսով և եթ արծաթապատ, և ունի գիր ՚ի վերայ ըստ այսմ. „Այս է աջն սրբոյն Գրիգորի լուսաւորչին որդւոյն Արիստակէս հայրապետին„:

79, Թաթ արծաթի հինգ մատամբքն հանդերձ ուղղաձիգ՝ ոսկեզօծ. ՚ի բազկակողման ծայրի անդ ՚ի վերայ կափարչին գրի. „Անդրէաս առաքելոյ մասն, Գէորգայ զօրավարին, Մարութայ ճգնաւորին, Հռիփսիմէ կուսին, և այլ բազում մասունք ՚ի տեղս ամփոփեալ կայ„: Իսկ յերեսի անդ ձեռացն գրի. „Յիշատակ է սուրբ աջս Յակոբջանին, հօրն Նոզիին, մօրն Սարաղին, ՚ի վայելումն Կարապետ քահանային. թվին ռճթ ամին. կողակցուն Մարիամին„:

80, Խաչ բոլորակ քառաթև ոսկեզօծ. յերեսի անդ հինգ ակունք. իսկ ՚ի թիկանց կուսէ ՚ի թևսն խաչին գրի. „Յիշատակ է սուրբ խաչս ղարանցի մահտեսի Մարուքին ՚ի դուռն լուսաւորչի անապատին թվին ռճա„: Յաջ թևի անդ. „Սուրբ մասն Թովմա առաքելի գագաթն է„: ՚Ի միւս թևի. „Սուրբ մասն Յովհաննէս մկրտչին է„. ունի և փոքրիկ խաչ շղթայիւք:

81, Բոլորակաձև կորնթարթ տափարակ շէնք արծաթի. ՚ի միջին տեղւոջ ՚ի ներքոյ ապակւոյն տեսանի մասն ոսկեր՝ զոր անուանեն գագաթ Թադէոսի առաքելոյ. թերևս իցէ յիշատակեալն ՚ի վարս սրբոց հատոր Դ՛րդ, յերես 62. ՚ի ծանօթութեան վարուց սրբոյ առաքելոյս:

82, Խաչ փոքրիկ քառաթև. ՚ի թևսն խաչին՝ երկոքին երեսքն ևս վարդաձև խաս ակամբք զարդարեալ. ՚ի միջակիտին ՚ի ներքոյ ապակւոյն տեսանի մասն ոսկեր, և թուղթ ՚ի վերայ՝ յոր գրի. „Մասն սուրբ Պանդալէոնի„: Իսկ ՚ի միւս երեսի՝ եղեալ է յիշատակագրութիւն, բայց եղ_

ծեալ է երկաթի գրչաւ, և գրեալ փոխանակ. ,,Պետրոս վարդապետ Մոստապատցի,,,

Հատուած
Գ.

## Շինուածք շուրջ զԿաթողիկէ Ե- կեղեցեաւս սրբոյ Էջմիածնի՝ այն է, Մենաստանին:

83, Անտարակոյս եմք՝ թէ սուրբն Գրիգոր լուսաւորիչ մեծն պարթև՝ որ լուսաւորեաց զհա֊մօրէն հայաստանեայց ազգ, և ձեռնտուութեամբ մեծին Տրդատայ կանգնեաց զմեծ Կաթուղիկէ Տաճարն սրբութեան, և նստաւ անդէն Պատրի֊արգ ընդհանուր ազգին, չիցէ առեալ ՚ի մեծէն Տրդատայ ՚ի պարգևի մասին, կամ ինքնին կա֊ռուցեալ զարժանաւոր յարկ բնակութեան հո֊գևոր բարձր իշխանութեանն առ Եկեղեցեաւն զոր տուն 1 կաթուղիկոսարանի անուանեն պատ֊միչք ազգիս Հայոց. այլ թէ զիա՞րդ և յո՞ր կողմն

1, Այս բառ յունական || Կաթողիկոս || ՝ որ ՚ի հայ լեզու թարգմանի || ընդհանրական || , ՚ի գործ էած ՚ի հա֊յաստան ՚ի սկզբանն հինգերորդ դարուն՝ շնորհ առաքելին իս֊րայելեան ... ՚ի պատմութեան հայոց. հատոր Գ, երես 64. ,, Կոչեցեալ և ... Սահակ և ... կաթողիկոս֊

Տաճարին, և կամ յումմէ՛ ձեռնարկեալ՝ չկայ ինչ նշմարանք յայտնութեան։

Այս շէնք և նիստ կաթուղիկոսարանի թերևս քակեցաւ, տապալեցաւ ընդ այլ շինուածս քաղաքին յամի անդ 380, 'ի յարձակմանց պարսկական զօրացն առաջնորդութեամբ ուրացելոյն Մերուժանայ. և զկնի որոյ մինչև ցփոխադրութի Աթոռոյ կաթուղիկոսութեանն 'ի Դուին յամի 452, թէ յոր վիճակի կայր շէնք կաթուղիկոսարանի, չունիմք դարձեալ ծանօթութիւն ինչ։

84. Հայամիկ տան կաթուղիկոսարանի 'ի Վաղարշապատ նստան երկոտասան կաթուղիկոսունք սկսեալ 'ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մինչև ցՄելիտէ՝ յորոյ աւուրս 'ի փոխադրել

[illegible],, ։ Նա [illegible] վարդապետ 'ի պատմութեան [illegible] ։ ,, Նա պատմեալ ([illegible]) [illegible] Հայոց՝ [illegible] ,, ։ որոց զկնի [illegible] եղև Հայրապետաց Հայոց այս [illegible] ։

2. Այս ժողով յԱրարատեան դաշտի 'ի հիւսիսոյ գետոյն Երասխայ՝ [illegible] 'ի նմանէ [illegible] ծանոց՝ յարևելեան եզեր Քասաղ անուանեալ գետոյն՝ [illegible] ելեալ. յարևելից ունի [illegible] հեռաւորութեամբ երից ժամուց, և յարևմտից [illegible] Մեծամօր գետոյն՝ երկուց ժամուց. շինեալ առ յառաջագոյն [illegible] ա՛, [illegible] Հայոց՝ և կոչէր յանուն || Արմաւիր || [illegible] 'ի նմա [illegible] ([illegible]) · այլ [illegible] ինչ շինէ [illegible] Վաղարշ[illegible] [illegible]՝ որ ունէր [illegible] ա՛. և [illegible] նորոգողին || [illegible] Վաղարշ[illegible] || ։

Տիգրան Երուանդեան [illegible] գերդաստանաց [illegible]՝ [illegible] 'ի նմանէ [illegible], բնակեցոյց 'ի սմին [illegible]՝ որ [illegible] և [illegible] [illegible] և [illegible]՝ եղև [illegible] անուանի ։

Այս [illegible] Վաղարշապատ [illegible] -

հայրապետական Աթոռոյն ՚ի Պոլիս, կարգեցաւ
աստ միաբանութիւն հոգևորական ուխտի կրօ-
նաւորական դասուց ՚ի պաշտօն փառաբանութեն
Աստուծոյ. և նոքին իսկ Կաթուղիկոսունքն՝ որք
նստան ՚ի Պոլիս ՚ի միջոցս 472, ամաց, ունէին
զկատարեալ հոգացողութիւն վասն հաստատու-
թեան մեծի Եկեղեցւոյս, և պահպանութե հո-

նոյն Տիգրանայ շինէ զայս Աւան Վարդգէսի ընդարձա-
կագոյն ևս. և ածէ շուրջանակի պարիսպ՝ յարդարեալ հզօր
պատուարաւ և բրգամբք, և կոչէ զեր անուն || Վաղարշա-
պատ || այլև || Նոր քաղաք ||, ուրանօր և փոխադրէ զոր
ժողովեան. և այնուհետև լինի այն յառաջնաբերդ Աթոռոյ ար-
քայութեան Արշակունի թագաւորացն Հայոց և ձմերանոց իւր
առ որ Խորենացին. Հատոր Բ. Գլուխ 62. „Սա (Վաղարշ)
պատեաց պարսպաւ և զհզօր Աւանն Վարդգէսի՝ որ ՚ի վե-
րայ Քասաղ գետոյ. յորմէ յառաջագոյն ասէին. Համառօտ գե-
րոյեալ Վարդգէսն մանուկ ՚ի Տուհայ (կամ Տուհեայ)
գաւառէն, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրմաւիր քաղա-
քաւ, զՔասաղ գետոյն՝ կոծել զդուռն Երուանդայ
արքայի . . . զորոյ զարքայի քեն աւեալ Վարդգէսի՝ զինեաց
զԱւանն զայս. յորում և փոքր Տիգրան յորդորեաց նորոյ
զհաստատուն առաջնոյ գերութեան հրէից՝ որ եղև քաղաքագեօղ
վաճառօք։ Զոյն այս վաղարշ պատեաց պարսպաւ, հզօր պա-
տուարաւ, և անուանեաց | Վաղարշապատ | . որ և | Նոր
քաղաք,, | ։

Պաշարեցաւ այս քաղաք յամի 351, յաւուրս Տիրանայ
Խոսրովեան արքայի ՚ի Նիւշապեան զօրաց իբրև երից բիւրուց՝
թելադրութեամբ Շապհոյ արքային պարսից. այլ յայնմ ժ-
ջոյն արիացեալ և արիացեալ զօրապետք Հայոց հանդերձ զօ-
րօք իւրեանց՝ ա՛յնպէս հարին ՚ի վերայ, և քաջութեամբ պա-
տերազմեալ ընդդէմ դարձուցին հալածական. զի ամենեքին ա-
սանց վճռաւ զերծաւ քաղաքն։

Պաշարեցաւ դարձեալ, և քանդեցաւ նոյն քաղաք
յամին 380. քանզի հրամանաւ Շապհոյ Բ, արքային պարսից

գաւորական դասուն եղելոցն 'ի սմին. առ որ Ստե-փաննոս Օրբելեան յողբն Էջմիածնի 'ի դիմաց մե-ծի Տաճարին ասէ. Թղթա" 15. ,, Բայց անտի ('ի Հռոմայ) սաս ('ի Սաղուդապատ) զիս խնամէին (Կա-թողիկոսունք), որպէս օրէ՛ն է ծնողին,, :

85, Իսկ 'ի կաթուղիկոսաց զնոյն հոգացողութիւն

ուրացեալն Մերուժան զօրօք նորա եկաս պատերազմաւ և ա-ւերեալ քանդեաց զԲեծ նման, և զբազմաւ բնակչացն վարեց 'ի գերութիւն 'ի պարսկաստան. զորս Բիւզանդ պատմէ. դպր-րութիւն դ, գլուխ ծե. ,, Նաւուէին և զՎաղարշապատ քաղաք քանդէին, բերէին զքաղաքն և 'ի հիմանց տապալէին. և խաղացուցին յայնմ ևս քաղաքէ Թ ծռ երդս ,, . այսինքն տանտերին հազար գերդաստանս բնակիչք քաղաքին՝ յաւելէ հը-րէից հաստատեալ 'ի Սիրիաստ:

Այս քաղաք այս օրինակ՝ և աւերեալ ևս չէնք բազմաւ Արշակունի թագաւորութեան հայոց, և չէնք փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն 'ի Դուին առ Մելիտէ կաթո-ղիկոսի, և հետ չհետէ յառնելոյ պարսից և հագարացւոց թըշնա-մեաց 'ի վերայ, խաղաղ խանգարեցաւ. և անշէն գաւառ դաշ-տային, պարիսպն և բուրգ շինուածոց հողային, ամենևին ան-հետացաւ՝ և ո՛չ մնաց նշմարանք ինչ առաջին շինութեանցն. որով և շրջապատ տարածութիւն պարսպի բերդին՝ թէ ո՛րչափ անյայտ. բայց փոքր ինչ նշմարին հետոք պարսպի նորա յարևե-լեան կողմն Կաթողիկէ Տաճարին որքոց հեռի յայծմեան ար-տաքին պարսպէ իբրև ըմբռնելի թ հրացանից՝ որոց և երկայ-նութիւնն 'ի հիւսիսոյ 'ի հարաւ գտանի իբրև եօթն հարիւր ոտ-ման քայլ. և 'ի միջին տեղւոջ երկայնութեանն ունի և զնշան տեղւոյ դրանն արևելեան՝ զոր || Նոր Գիւղն || անուանէին. և հարաւային ծայր հիմանս այսորիկ հասանէ ուղղակի ընդ միջ-ծի Կաթողիկէին և մենաստանին Գայիանեայ կուսի՝ որով պարիսպն անցանէ 'ի միջ իւր շաւղին գործարանի Թղթաշինու-թեան. իսկ հիւսիսային ծայրն յառաջացեալ յարևմուտս ունի շհայեցուած իւր 'ի գիւղամէջ անդր. ուստի այս չև հիմանց պարսպին նայացուածըն՝ ցուցանէ շբերդն շինեալն 'ի Սա-

ունէին և հայազգի մեծամեծ իշխանք․ քանզի սպարապետք կամ իշխանք Հայաստանի զպատերազմական յաղթութեանն իւրեանց զգոհութիւն որ առ բարձրեալն, եկեալ յայս քաղաք Վաղարշապատ ՚ի սմին յայսմիկ Տաճարի սրբութեան մատուցանէին առ Աստուած նուիրական պատարագօք հանդերձ։

Չորրորդ [illegible] յարևելից յարևմուտս․ զի [illegible] Կաթողիկէ սրբոյ Տաճարին [illegible] ՚ի [illegible] ըստ Ագաթանգեղոսի ,, [illegible] (այլն [illegible]) էջ, [illegible] ՚ի [illegible] ՚ի [illegible] ,, և այլն։ Այսու ամենայնիւ [illegible] պարսպապատ բերդին [illegible]։

Տեղին ապարանից Արշակունի Թագաւորաց Հայոց ՚ի սոյն յայս Վաղարշապատ, ապացուցանի լինել յարևմտեան հարաւոյ մեծի Տաճարին և մերձ նմին, ըստ յայտնի [illegible] Ագաթանգեղոսի․ ,, [illegible] ,,․ որ է այժմ պարտէզ փոքր և ջրաղաց ՚ի նմա․ յայս տեղի Մեծին [illegible] շինէ զգործարանն թղթաշինութեան․ ուրանօր ՚ի պեղելն զերկիր գտանին մարմարինեայ [illegible]․ և ՚ի սոյն [illegible] ՚ի 1825 ամ՝ ՚ի [illegible] որ ՚ի [illegible] Տաճարին մեծի, մերձ ՚ի [illegible] [illegible] ․ և [illegible] ՚ի [illegible], և ՚ի [illegible] յարևելից և ՚ի [illegible]․ [illegible] ՚ի [illegible]։

Այսու ամենայնիւ՝ և [illegible] [illegible] լինելն յայս տեղի պարտէզս [illegible]

Վաչան Մամիկոնեան զօրավար Հայոց՝ ըղկնի յաղթահարելոյն զզօրս պարսից, գայր իջանէր բազմութեամբ նախարարաց առ ՚ի Վաղարշապատ, և մատուցանէր զյաղթութեանն գոհութիւն առ Աստուած յայսմիկ Կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ որոյ ՚ի հիմանց շինութեան և նորոգութեանն զկնի, շինէ և զմենաստանն որ առ Եկեղեցեաւս վասն կրօնաւորացն՝ յորոց վերայ վերակացու և

առաջնորդեսցի՝ մինչև ցդուռն անուանեալ Տրդատայ արքունեան ներքին [illegible] պարսպին որ է Ս.Բ[illegible]՝ առ վերջինս և հիւսիսոյին ծայր շինուածոյ կաթողիկոսարանին. քանզի անուանադրութիւն այդր դրան յանուն Տրդատայ, չէ՛ նորա որպէս այլոց դրանցն՝ որք անուամբ [illegible] կոչին, այլ ՚ի հնոց անտի աւանդեալ ցեղ. որովհետև [illegible]՝ ՚ի տեղի հիւսիսային դրան ապարանից մեծին Տրդատայ. և այսու՝ ապարանն [illegible] ՚ի Դ.Ջ [illegible] որպէս [illegible] տեղւոյ [illegible] թագաւորութեան, նմանապէս և [illegible] Վաղարշապատու և Կաթողիկոսարանի իսկ։

Յայտնի ծանօթութեան ՚ի վեր անդր յիշատակեցաւ [illegible] Եղիշէ. զոր յիշատակէ և Խորենացին. այլ այնպիսի [illegible] ՚ի [illegible] Վաղարշապատու. [illegible] այն [illegible] | որ յանէից [illegible] | . [illegible] ՚ի [illegible] տեղ ՚ի հիւսիսոյ [illegible] և [illegible] Մեծութեամբ [illegible] Սուրբն [illegible]. և [illegible] անուանադրութեամբ է. [illegible] ՚ի [illegible] անդր ՚ի [illegible]՝ [illegible] ՚ի վերադարձի ՚ի [illegible] [illegible] [illegible] և [illegible] ՚ի ներքոյ [illegible] և [illegible] ՚ի [illegible] անդր.

[illegible] [illegible] || որ յանէից || . [illegible] և [illegible] | որ յանէից [illegible] | ։

հոգաբարձու կարգէ զՂազար փարպեցի. զորմէ Ստեփաննոս ասողիկ պատմիչ. հատոր Բ, գլուխ 2. „Իսկ Վահան (Մամիկոնեան) զեկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր՝ զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով. նոյն և 'ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծն Կաթուղիկէ եկեղեցին՝ որ 'ի Հայս, վերստին մեծապէս նորոգեաց՝ զդասս կրօնաւորաց բազմացուցանելով՝ որ * Մուրենայ անապատն ասի, վերակացու նոցա կարգեալ զՂազար փարպեցի ճարտասան և պատմագիր„: Իսկ զի սա իցէն Ղազար փարպեցի՝ որ հոգաբարձուն էր մենաստանին հը-

* , յԱյս յիշատակութեան անծանօթ՝ Ս. Մուրենայ անապատ Ս. Տարաջնուի ստորագրութեանն հին հայաստանի, և յի-րաւի. չէ չէ՞ յայլ ծանօթ գիրս այսպիսի ինչ, այլ միայն առ ջինն Ստեփաննոս ասողիկ շայժան և էթ համառօտակի յի-շատակէ :

Մերձ այսմ անուանակոչութեան գտանի ծանօթութիւն ինչ 'ի գրուածս Զաքարիա սարկաւագի յարձանագրութիւնս Յօհանավանից՝ „Որպէս և բազում անգամ հարցեալ էի յԱ-ռաքել վարդապետէ (Դաւրիժեցի) և ուսեալ 'ի նմանէ՝ հարցաք և շայս, թէ մարտիրոսաց ճառընտիրն և այլք 'ի Սեւե վանս առեն, և կամ 'ի Սովլի վանս ամա. իսկ կնքաչին Տաթեւոս և Կիրակոս և Խուսամա և Մայրավանքն և այլք, Յօհաննավանս առեն. պատասխանի ետ վարդապետն և ասէ. Յորժամ սուրբ լուսաւորիչն շինեաց, Սեղրանն վերակացու կարգեաց. և անուամբ նորա կոչեցաւ սեւղի վանք. իսկ յաւուրս թագ-մաւորացն Ղազար փարպեցի էր առաջնորդ և գրէր պատմութիւնս: Յօհան ոմն կարգեցին փեսայ. ուստի կոչեցաւ Յօ-հաննու վանս„: Ի բանից աստի և 'ի գրուածոյն Սողնոյ երեւի թէ վերակացութիւն Ղազարայ փարպեցւոյ էր ման-գամայն 'ի վերայ դպրանոցին Կաթողիկէ Էջմիածնայ, և այսր յիշատակեալ վանաց. և թերեւս յանձամ կոչէր անուամբ, այլ չէին փոփոխեալ կոչեցան || Մուրենայ Նշապատ || :

բազմնաւ Մամիկոնեանն Սահակայ, 'ի բաց լինելո֊
յայնմ պաշտամանէ դիպուածով իւիք՝ գրէ
Թուղթ երկարաձիգ բանիւք առ նա ինքն Սա֊
հակ Մամիկոնեան․ յորում և ասէ․ ,,Իւ կամա֊
ւս խորհիցիս զմիշելդ զառեալ պատգամն երանե֊
լոյն Յօհաննու, Գիտասա կաթուղիկոսի՝ եղբօ֊
րորդւոյն քեզ տեառն 'ի Սեւկոյ դրախտին, յո֊
մանց արանց՝ իբք խոստանալով քեզ տեառն կա֊
րասի, խնդրէին զտեղիդ (շինուածն)․ և քո տեա֊
ռըն կոչեցեալ զտէր Սարդ զքո եղբայր և ըղ֊
Հայդիկ, և զիմ անարժանութիւնս՝ հրամայեցեր
միւսանգամ երկրորդել Յովհաննու զպատգամ֊
սըն․․․ և ընդ տեառն Յովհաննայ զայրացար՝ Թէ
ընաւ իբրև քեզ առն ոչ լսել․․․ և ես վասն զի
տկարամիտ և անզգուշացող այր եմ յերկրաւոր
միտս՝ ոչ զգացի առ ժամոյն դաւոյն․ այլ պարտ
էր փութով և երագ երագ անկանել 'ի յոտսդ
արտասուօք, և աղաչելով 'ի բաց փախչել 'ի հո֊
գաբարձութենէ տեղւոյդ․ և ահա՛ լինէի պըր֊
ծեալ 'ի չարաթոյն ժանեաց գազանացն․․․։
Դարձեալ ասէին՝ Թէ գամ մի պիղծ և չարա֊
գործ, Պազարայ վանք անդէն և սիրէ (Սահակ
Մամիկոնեան) զնոսա․ և զայսպիսի բանից ասացողաց
զգործս ես այժմ լսեմ․ զի ոչինչ է ինձ հարկ ա֊
սել․․․ Դարձեալ այլ շողմոք բանիւք զայրա֊
ցուցանել զքեզ՝ տէ՛ր, ընդ իս փութային՝ Թէ մա֊
նուկ մի հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել․․․
Ասէին (Բենեդիկ Պազարու) ով անմիտ մարդիկ ըն֊
դէ՛ր վստահիք յանօգուտս, հի՞մ լայք 'ի զուր
'ի խորշակահար տեղւոջդ, և խօլութեամբ անձ֊
նամահ լինիք․ զի են 'ի Մամիկոնէից տանէ աւագ֊
ծառայք ոմանք և այլ քահանայն աւագ՝ որ է 'ի
տանն, որոց ընդ մեզ բանք են երդմամբ՝ Թէ
ե՛րբ և է, Պազարայ իսկ չտամք հանգչել այդր
և այլն․․ Եթէ սակաւ մի երևէի նուազեալ

քան զայնոսիկ՝ որք յերկերրիւր ամէ շինեալ վանորայքն, չհամարէի զանձն արժանի կալլ · զի թէպէտ միանգամ և երկիցս ջարդեցաւ բոլոր կաշն յանհաստատութենէ շինուածոյն են,,,

86, Այս մենաստան այսու առաջին դրութեամբ հանգամանաց իւրոց աճեաց յընդերկար միջոցս բարեզարդութեամբ, բազմութեամբ հոգևորականաց, և յաջորդութեամբ վանահարց կամ ընդ պաշտպանութեամբ քորեպիսկոպոսաց յանուն վիճակին Արարատոյ · այլ թէ առ յապայն յո՞րպիսի փոփոխութեանց ներքոյ անկեալ իցէ, և յո՛ր վիճակ վշտաց և տառապանաց՝ չունի ինչ թէպէտ գրաւոր ծանօթութիւն որոշակի, և թէ եղեալ ևս իցէ, չէ՛ 'ի յայտ եկեալ տակաւին և հասեալ 'ի ծանօթութիւն հասարակութեան ազգին, բայց սակայն՝ ակն յայտնի տեսանի և իւրաքանչիւր ոք յընթերցանելեաց կարո՛ղ է քաջ կշռադատ լինել զվիճակէ հանգամանաց նորա յընդհանուր պատմութեանց հայոց՝ 'ի մասին աւերմանց, գերութեանց, ասպատակութեանց և այլ բազմադէմ յարձակմանց այլազգի բազմազան թշնամեաց յԱրարատ և 'ի շրջակայս նորա մինչև ցդարն հնգետասաներորդ։

87, Նոյն այն ինչ Միրակոս վիրապեցի՝ ընտրութեամբ ազգային ժողովոյ յամի 1441, կացուցաւ յԱթոռ հայրապետութեան սուրբ Կաթուղիկէ Եկեղեցւոյ, ձեռն 'ի գործ էարկ և եւ նորոգել անդրէն զաւերեալ զշէնսն առ եկեղեցեաւս, և հոգացաւ զայլոց ևս կարևորաց՝ որչափ և ձեռնհաս եղև 'ի միջոցի անդ երկուց ամաց կաթուղիկոսութեան իւրոյ։

'ի Միրակոս կաթուղիկոսէ սատի մինչև ցըսահակ Է, քսան և երկու կաթուղիկոսունք յաջորդեցին մի զկնի միոյ յԱթոռ հայրապետութեան 'ի միջոցս 183, ամաց, այլ ամենեքեան նոքա չե-

ղէն ձեռնհաս ըստ արժանի անուան պատրիար_ գական Աթոռոյն բարեկարգել, կարգաւորել զայն· մանաւանդ 'ի շինուածս՝ 'ի պատճառս պէսպէս հալածանաց, վշտաց և գերութեանց Արարատայ և շրջակայ գաւառաց նորա առաւելապէս 'ի պարսից՝ մինչև ցամ տեառն 1627:

88, Ապա յայսմ միջոցի Մովսէս վարդա_ պետ սիւնեցի 'ի գաւառէն Բաղաց 'ի Խոտանուն գեղջէ՝ որ եռայր հոգւով վասն պայծառութեան ազգին, և կատարեալ վերանորոգութե̃ շինուա_ ծոյ Կաթուղիկէ եկեղեցւոյս և կաթուղիկոսա_ րանի նորա, աներևոյթ իմն ձեռնտուութեամբ խնամոց վերին այցելութեանն՝ սիրելի եղև յաչս պատուաւոր իշխանաց համազգեացն իւրոց և մե_ ծամեծ իշխանաւորացն պարսից՝ վարդապետական արդեամբք և մարդասէր բարուք. մինչև և յաչս Շահապասայ ա̃. արքային պարսից՝ յորմէ և 'ի պարգևի մասին ընկալաւ գլխակատար իշխանու_ թիւն աւագ լուսարարութեան (ֆանֆանըռ-բեան) պատրիարգական Կաթուղիկէ Եկեղեցւոյս որ 'ի Վաղարշապատ՝ կնքեալ արքունի հրովարտակաւ յամի 1627՝ որոյ ահա՛ հայացի օրինակ թարգմա_ նութեանն:

,, Առաջի արարին ինձ՝ թէ 'ի խաչագաւան հոգևորականաց ընտրեալ է լուսարար Էջմիած_ նայ, և կառավարիչ հոգևորական գործոց նորա ըստ քրիստոնէական արարողութեանց՝ որ մաղթէ այժմ յինէն շնորհել յայն պաշտօն զայն հրո_ վարտակ. վասն որոյ այսու հրամանագրեմ ընդ_ հանրաբար համայն Պետաց և այլոց անձանց, իւ_ րաքանչիւր ումեք 'ի նոցանէ՝ թողլով նմա ազա_ տաբար վարել զնորընկալ պաշտօն իւր. չարգելուլ իւիք նմա, այլ յարգելով և օգնելով պահպանել զկողմն նորա: Եւ զի որովհետև հաստատեցի զայս հրովարտակ դրոշմամբ կնքոյ իմոյ՝ այնր աղագաւ

հաւատալ սմա ։ Տուաւ 'ի Ջամադիալ ամսոյ , յամի 1036 ,, ։ որ համապատասխանէ փրկչական Թուականին 1627 ։ յետկոյս հրովարտակին եդեալ զկնիք չորեքին անձինք խորհրդականք՝ վկայեալ են ստուգութեան այնր ։

89 , Նպա այսու հրամանաւ փութացեալ 'ի նոյն ամի գայ յԷջմիածին ․ և 'ի 24 , ամսեանն յունիսի այնր ամի նա ինքն Մովսէս վարդապետ ըսկիզբն առնէ նորոգութեան շինուածոց մենաստանին եղելոյ առ ընթեր մեծի Տաճարին ․ քանզի արտաքին շինուածք մենաստանին և տան կաթուղիկոսարանի գրեթէ բոլորովին քայքայեալ և խանգարեալ էին՝ զորմէ Առաքել պատմաբան Դաւրիժեցի ․ գլուխ ԻԴ , թղթա" 299 ․ ,, Եւ 'ի վաղեմեաց ժամանակաց որ շուրջ զեկեղեցեաւն շինութիւն եղեալ էր , և դարձեալ աւերեալ , և 'ի վերայ միմեանց փլուզեալ էր ․ այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն՝ որ յամենից կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն ․ և հողն եկեալ և ծածկեալ էր ըզհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն՝ որք կան յարտաքուստ կողմանէ ,, ։ Այնքան՝ մինչ զի անհնարին լինել հիմնարկութեան շինուածոյն ․ վասն որոյ զառուս ջուրց անդաստանացն խոտորեցուցեալ 'ի շրջապատս Տաճարին՝ ջրողող ետ մաքրել զտեղին մինչև հարթ , հաւասար գետնոյն ․ և ապա կառոյց շուրջ զեկեղեցեաւն ընդարձակ քառակուսի պարիսպ 'ի հողոյ հանդերձ ութն բրգամբք ․ այնպէս , զի Տաճարն անկանէր ուղղակի 'ի միջին տեղւոջ պարսպին ․ և 'ի ներքս 'ի չորից կողմանց առ պարսպօքն ձևացոյց զբովանդակ շէնս բնակութեցն ։

90 , Յարևմտեան կողմն ետ կառուցանել զմեծամեծ դարպասս և սենեակս կամարայարկ 'ի քարանց , 'ի կղմնդրաց և 'ի կրոյ՝ որիշ վասն կաթուղիկոսական տան , և որիշ վասն հիւրոց ․ զո-

թըս անջրպետէ յերերաց կամարայարկ դուռն յանուն Տրդատայ եղեալ ՚ի միջին տեղւոջ այնր բաժնի՝ որ հայի հանդէպ արեւմտեան դրան Տաճարին ։

91, Յերկոսին կողմանս հիւսիսոյ եւ արեւելեան ըստ առաւելագոյն մասին են կանգնել նմանապէս ՚ի քարանց եւ ՚ի թրծեալ աղիւսոյ սենեակս միաբանութեան հոգեւորականացն առ հասարակ․ իսկ ՚ի միացորդ տեղւոջն արեւելակողման մերձ յանկիւնն արեւելեան հարաւոյ են կառուցանել զփուռն հաց եփելոյ եւ զայլ սենեակս պատկանեալս նմին ։

92, Իսկ ՚ի հարաւային կողմն շինեցան զանազան սենեակք ընդ մեծ եւ ընդ փոքր՝ այսինքն է, խահանոց, սեղանատուն կրկին՝ ամռան եւ ձմռան, համբարանոցք ցորենոյ, որիզոյ եւ այլ հարկաւոր նիւթոց․ այս ամենայն շէնք բաց յամռան սեղանատանէն, էին քարամբք եւ կղմնտրօք կառուցեալ ։

Յայս ամենայն նորոգութիւնս մենաստանին, որպէս եւ Տաճարին իսկ՝ ձեռնտու էին նմին Մովսէս վարդապետի՝ երեւելի Իշխանք ազգին Հայոց յօժարական տրօք իւրեանց՝ միջնորդութեամբ պատուաւոր հոգեւորականաց՝ եպիսկոպոսաց եւ վարդապետաց՝ յորոց բազումք իսկ էին ՚ի կարգէ աշակերտաց նորա ։

93, Այս ամենայն շինուածք՝ զկնի փոքր միջոցի ՚ի հեծելաշարժութենէ բազմութեան զօրաց օսմանեանց եւ պարսից ՚ի վերայ Երեւանայ, եւ մերձակայ սահմանաց նորա՝ յամին 1635, 1636․ գրեա թէ՝ ըստ մեծի մասին խանգարեցան․ զորս յաջորդ Մովսեսի Փիլիպպոս կաթուղիկոս բազում ծախուք վերստին նորոգեաց կոփածու քարամբք եւ թրծեալ աղիւսովք ։ Զարեւելակողման զսենեակսն միաբանից ծայրէ ՚ի ծայր՝ ՚ի հիմանց ետ կառուցանել հաստատուն շինուածովք, յա_

րոց վերայ և զտուն կաթուղիկոսական՝ վայելչաձև յօրինուածովք արժանի պատրիարգական իշխանութեն · որոյ և աւերակքն կային մինչև ցժամանակս մեր · իսկ ներքնայարկ սենեակքն առկաւքն նոյն են ։ Նա սալայատակ առնել և զառաջոյսն սենեկաց ՚ի չորից կողմանց ՚ի կոփեալ քարանց՝ լայնութեամբ չորից կանգնոց ։

94, Նաև զի՝ տեսեալ թէ խոնաւութիւն գետնոյն ՚ի մէջ պարսպին՝ վնաս մեծ գործէ շինուածոցն և Տաճարին իսկ, ետ փորել ջրհոր մի ՚ի հարաւակողմն Տաճարին մերձ ՚ի մեծ դուռնն ներքին պարսպի հարաւային կողման · յորմէ ընդ երկրաւ ճանապարհ բացեալ, և անցուցեալ զայն ջուր հորոյն՝ զառաջեաւ մենաստանին սրբուհւոյն Գայիանեայ հարուստ մի հեռագոյն հանէ յերես երկրի · և է ջուր բաւականաչափ ժողովեալն ՚ի ջրհոր անդր յերակաց երկրին և յատակէ տաճարին իսկ ։ Նորոգեաց և զայլ մասնաւոր շինուածս ՚ի տեղիս տեղիս յայս կաթուղիկոսական Մենաստան · որպէս և զայն մեծ կամարայարկն յանուն Տրդատայ յիշատակեալ դրանն՝ որ յարևմտեան միջնապարսպին ՚ի միջին տեղւոջ՝ ընդ որ անցանեն ՚ի փոքրիկ վաճառանոցն · և զայն՝ կրկնայարկ երկերեսանի ։ Ընդ յարևելեան յարկն դրան ՚ի միջակէտ առաստաղին դնի փոքրիկ վէմ մարմարոնեայ՝ յորոյ վերայ գրեալ կայ արձան անուան որմնադրի այնր շինութեն համդերձ թուականաւ հայոց՝ յայս օրինակ · ,, Ուստայ Գրիգոր ծառայ Աստուծոյ · Թ՛՛ ռձը · (յամ 1639) ,, ։

95, Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի տեսանելով զկարի հարկաւորութիւն մաքուր ջրոյ՝ մանաւանդ յամառնային եղանակի, և ՚ի սաստիկ ցրտութեն ձմռան՝ թէ վասն հոգևորական ժառանգաւորացն մենաստանի, և թէ վասն երթևեկացն յանուն սրբոյ Տաճարին, աշխատեցոյց զքաղցուն

մշակս գրամոլք և ետ փորել գլոլով ջրհորս յարևմտեան հիւսիսակողմն Աթոռոյն՝ մերձ ՚ի գետն Քասաղ և անդր ես. և ճանապարհ բացեալ ընդ երկրաւ առ միմեանս՝ ժողովեաց զջուրսն ամենայնի ՚ի մի. և այնպէս միով ընդերկրեայ ճանապարհաւ՝ կրաշաղաղ և քարակերտ առուով եբեր եմոյծ ՚ի մէջ պարսպի մենաստանիս՝ որ ելանէ ՚ի պարտէզ տան կաթուղիկոսարանին. և անտի ելեալ ընդ Ղազարապատ հիւրանոցն՝ ոռոգանէ զպարտէզս արտաքոյ պարսպին հարաւոյ և զարտաքոյսն: Առաջին փոքր բաժին ՚ի ջրոյ աստի ՚ի հարաւային եզեր գեղջն հանդէպ մեծի դրան շուկային (վաճառանոցին)՝ ելանէ ՚ի վիմակերտ աւազան վասն բնակչաց գեղջն և շուկային: Երկրորդ բաժինն ճանապարհաւ խողովակի գայ մտանէ ՚ի մոմատուն կոչեցեալ շէնքն՝ որ շինեցաւ ՚ի Սիմէոն կաթուղիկոսէ երևանցւոյ յաղագս սպիտակացուցանելոյ զմոմս. և անդ մնեալ ՚ի հոր երթայ խառնի ՚ի քանքանն՝ (94) որ ՚ի Փիլիպպոս կաթուղիկոսէ հաղբակեցւոյ: Իսկ երրորդ բաժինն նմանապէս ճանապարհաւ խողովակի ՚ի շուկայէն մտանէ ՚ի ներքին պարիսպն, և թափի երկու պղնձեայ բերանօք յաւազան քարեայ. և անտի անցեալ զառաջեաւ սենեկաց միաբանութեանն քարակոփ ճանապարհաւ՝ գնայ, անկանի զառաջոյ մեծի դրան հարաւոյ ներքին պարսպի անդրէն ՚ի գետնափոր ճանապարհն վերյիշեալ:

Այս երրորդ բաժին ջրոյ ճանապարհն և աւազանն՝ գոլով փորածու վիմօք և ամրացեալ կրովք, քայքայեալ էր. և էր շինեալ ՚ի ժամանակէ անտի Ղուկաս կաթուղիկոսի՝ որ ունէր արձանագրութիւն՝ ըստ այսմ:

«Նորոգեցաւ քանքանս բոլոր շրջանակօքն ՚ի հայրապետութեան տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին՝ արդեամբ ազու

լեցի մահտեսի Կարապետին, և կնոջն մահ-
տեսի Եղիսաբեթին, և որդւոյն մահտեսի
Հայրապետին. 'ի Թւ" Հայոց ռմլգ (1784)։

Իսկ յանցեալ ամ 1835, եւ վերանորոգել տէր Յովհաննէս Ը., կաթուղիկոսն՝ արդեամբ աղայ Յակոբայ մահտեսի Յովհաննէսեան մատակեանց ղարսեցւոյ՝ վերաբնակելոյն 'ի յԱղէքսանդրապօլ (Գիւմրին շիրակոյ). որոյ յիշատակագրութին 'ի վերայ երկբերան աղբերն՝ ըստ այսմ օրինակի։

„Այժմ եւ վերստին նորոգեցաւ քանքանս 'ի Հայրապետութեան տեառն Յովհաննու սրբազան կաթուղիկոսին կարբեցւոյ, արդեամբ ղարսեցի մատակեանց մահտեսի Ովէսի որդի մահտեսի Յակոբ աղային յամի տեառն 1835„։

Իսկ և չորրորդ բաժին մանաւոր ջուրն բաժանեալ նոյնպէս խողովակաւ 'ի պարտէզ տան կաթուղիկոսարանին գնայ 'ի պէտս բաղանեացն՝ որ յանկեան պարսպի արևմտեան հարաւոյ (105)։

96, Աղէքսանդր Ա., կաթուղիկոս ջուղայեցի եւ նորոգել զսեղանատունն ձմռան՝ 'ի խարտեալ քարանց կամարակապ կարի հաստատուն շինուածովք՝ որ ցարդ եւս կայ 'ի նոյն հաստատութեան. որոյ արձանագրութեանն յիշատակարան դնի 'ի ներքուստ 'ի հիւսիսակողման 'ի միջակէտ երկայնութեան որմոյն՝ 'ի վէմ սպիտակ մարմարոնեայ, յայս օրինակ։

„'Ի Թուին (հայոց) ռճկբ. (1713.) ես ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոս ամենայն Հայոց շինեցի սեղանատունս 'ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ձմռան„։

97, Աբրահամ Է., կաթուղիկոս եւ նորոգշինութեամբ կառուցանել զփռնատունն հացեփելոյ՝ 'ի նոյն առաջին տեղւոջն (91) կոփածուքարամբք կամարակապ՝ յայլ և այլ սենեակս յա-

մին 1731 ։ Նոյն շինել նոր ՚ի նորոյ և զերկուսին բազմահատուած յարկսն արտաքնոցաց յերկուսին ծայրսն հիւսիսային ներքին պարսպի ՚ի խարտեալ քարանց ։

98. Ղազար կաթուղիկոս ջանկեցի ՚ի յաջորդել իւր յԱթոռ հայրապետութեան՝ հոգ տարեալ եւ կառուցանել զբազմայարկ հիւրանոցն ՚ի հարաւային կողմն մենաստանին՝ կից ՚ի պարիսպն այնր կողման, ընդարձակ քառակուսի կրկնայարկօք. հիւսիսակողման վերնայարկքն շինեցան ՚ի վերայ սեղանատանն ձմեռան՝ կառուցելոյն յԱղէքսանդր Ա, կաթուղիկոսէ (96) իսկ հարաւակողմանն՝ եռայարկ շինուածովք. ծածկք սոցա բոլորովին են փայտ և հող, և որմունքն յանեփ աղիւսոյ՝ բաց ՚ի մանաւորաց՝ որք հիւսեալ են կրովք և կղմնորովք. և արտաքին պարիսպ սորա ՚ի հիւսիսակողմն՝ որ ձգի մինչև ցմեծ դուռնն Սուրբ կոչեցեալ, կառուցեալ է ՚ի թրծեալ աղիւսոյ և ՚ի կոփածու քարանց՝ յարդարեալ ամրագոյն բրգամբք. և անուն բովանդակ շինուածոյս կոչի || Ղազարապատ || յանուն կանգնողի սորա Ղազար կաթուղիկոսի. և ունի կրկին դըրունս՝ առաջին դուռն մեծ ընդ հարաւ՝ յորոյ վերայ դնի արձանագրութիւն այս ձև ։

,,՚Ի ռճղթ թուին (հայոց. 1750)
,,Աստուածային շնորհիւ լցեալ,
տէր Ղազարոս հովիւն ընտրեալ.
և պատրիարգն մեր գովեալ,
կրկին զաթոռս լուսաւորեալ.
չքնաղ ձևով ազնիւ կազմեալ,
զոր տեսանողքն եղեն ափշեալ.
քաղցր անուամբ զսա պսակեալ,
Ղազարապատ վերաձայնեալ ,, ։

99. Որմհեան տուն կաթուղիկոսարանին շինեալն ՚ի Փիլիպպոս կաթուղիկոսէ հնացեալ էր

բազմօք, սա ինքն Ղազար կաթուղիկոս փոխադրեաց զայն յարեւմտակողմն Տաճարին՝ կառուցանելով զնորոգ գեղաշէն շինուածս․ որ բովանդակի ՚ի տասն յարկս սենեկաց ընդ մեծ և ընդ փոքր՝ ՚ի վերայ ներքնայարկացն կառուցելոց ՚ի Մովսեսէ սիւնեցւոյ, մեծամեծ ճաղերկաթ լուսամուտօք․ հիւսիսային ծայր այսր շինուածոյ սկսանի ՚ի դրանէն եղելոյ յանուն Տրդատայ և աւարտի յանկիւնն արեւմտեան հարաւոյ ներքին պարսպին՝ ուր է մեծ կամարայարկ քառանկիւնի բաց բոլորովին կողմն հիւսիսային․ իսկ յերեսին կողմունս երեք դրունք․ արեւելեանն՝ է դուռն սեղանատան, հարաւայինն՝ երկրորդ դուռն Ղազարապատի՝ յորոյ վերայ դնի արձան այսպիսի։

,,Հաստիչն համուրց ՚ի ներկայումս զմեզ սիրեաց,
,,զոհէր Ղազարոս զեւր սիրելին մեզ պարգեւեաց․
որ զսուրբ Աթոռս սովիմբ ձեռամբ նորոգեաց,
և հիահրաշ կերտեցելովք յոյժ զարդարեաց․
և ՚ի պատիւ վայելչութեան Մօրս փառաց,
և ՚ի պարծանս մերոց ազգաց Հայոց մեծաց,,։

Իսկ արեւմտեանն՝ յատկացեալ վասն կաթուղիկոսաց՝ ընդ որ ելանէին յառաջն Կաթուղիկոսունք ՚ի ճաշել ընդ հասարակութեանն ՚ի հանդիսաւոր աւուրս անդ ՚ի սեղանատան․ ՚ի վերայ կամարի այսր դրան՝ ուր վերջացեալ է հարաւային ծայր կաթուղիկոսարանին, եդեալ կայ վէմ մարմարոնեայ․ որ ունի արձանագիր շինութեանս այսորիկ՝ ըստ այսմ։

,,Շնորհօք Արարչին չքնաղ յօրինմամբ,
կառուցեալ կանգնեցաւ բազմածախ արդեամբ․
Պատրիարգարանս այս գեղեցիկ տեսլեամբ,
Մեծին Ղազարու սրբազան վեհին ձեռամբ․
1190․ (հայոց ՌՃՂ)․ (1741։),,։

100, Արար սա և զայլ շինուածս յարկաց յարեւմտեան կողմն՝ կից ՚ի հիւսիսային ծայր կա-

թուղիկոսարանին՝ երկայնեալ զայն է արեւմուտըս վասն բնակութեան կաթուղիկոսաց 'ի ձմեռնային եղանակի. որ ունի զհայեցուած իւր ընդ հարաւ:

101, Սիմէոն կաթուղիկոս երեւանցի բազում գովութեանց արժանաւոր յաղագս սխրութեան մեծագործութեամբ իւրով. Սա 'ի յաջորդել իւրում յԱթոռ հայրապետութեան յամի 1763, հոգ յանձին կալեալ ձեռն 'ի գործ էարկ պայծառացուցանել զԱթոռն կաթուղիկոսական վայելչական բարեզարդութեամբն: Նա նախ սկիզբըն արարեալ հեռացոյց զընակութիւնս տանց գեղջն Վաղարշապատու՝ որ կայր մերձ էր 'ի մենաստան Աթոռոյս՝ եւ գրեա թէ շրջապատեալ ըզնովաւ, դէպ 'ի կողմն հիւսիսային. եւ հարթ հաւասար արար զշրջապատս մենաստանին՝ թողլով ընդարձակ միջոց ընդ գիւղն եւ ընդ մենաստանն. եւ ապա ետ ածել շուրջ զմենաստանաւն հաստատուն պարիսպ բազում բրգամբք եւ բաւականաչափ բարձրութեամբ՝ 'ի մէջ առեալ զամենայն զշէնս պատկանեալս մենաստանին. զհիմունս ընդարձակ պարսպին այսորիկ ետ հիւսել 'ի կռանակոփ քարանց, եւ բարձրացոյց զայն յերկրէ գրկաչափ մի, եւ զմիւս բարձրութիւնն յանեփ աղիւսոյ:

Այս արտաքին պարիսպ ունի չորս դրունս՝ յորոց մին փոքր գտանի 'ի հարաւային արեւմուտս մերձ 'ի բուրգն այնր անկեան՝ ընդ որ մտանեն եւ ելանեն բնակիչք գեղջն եւ այլ օտարականք 'ի պատճառս բաղանեացն՝ որ կայ անդէն 'ի նմին անկեան. Իսկ միւս երեքն մեծամեծք եւ կամարայարկք՝ որոց առաջինն է 'ի հիւսիսակողմն հանդէպ գեղջն՝ որ անուանի դուռն շուկայի. զի ընդ այն մտանեն 'ի փոքր վաճառանոցն բնակիչք մերձակայ գիւղօրէիցն եւ կատարեն զառեւտուր իւրեանց. յորում

գտանին իբրև ութսուն կրպակք զանազան ար-
հեստաւորաց՝ որք ամենեքեան են 'ի բնակչաց Սա-
ղարշապատ գեղջ. և երկրորդն՝ 'ի հարաւակողմն
մերձ 'ի բուրգն արևելեան՝ և կոչի կալի դուռն,
ընդ որ ընկալնուն 'ի ներքս զամենայն արդիւնս
անդաստանաց և կալուածոց մենաստանին. իսկ
երրորդն՝ 'ի կրկնակի անդ հարաւային պարսպին՝
որ հայի դէպ յարևմուտս. և այս անուանի դուռն
Սրբի յանուն ուրումն դռնապանի նորա: Նաև յի-
շեալս կրկնակ՝ եղեալ է 'ի պատճառս շինուածոց
Վաղարապատ անուանեալ հիւրանոցին:

Արձանագիր շինութեան այսր պարսպի ե-
դեալ կայ 'ի վերայ կամարի մեծի դրանն՝ որ մերձ
'ի բուրգն արևելեան հարաւոյ՝ յայս օրինակ.

,, Շինեցաւ բոլոր շրջապատ պարիսպս
սրբոյ Աթոռոյս 'ի հրամանէ 'ի փառս Աս-
տուծոյ և 'ի պարծանս ազգիս Հայոց հրա-
մանաւ տեառն Սիմէոն կաթուղիկոսին 'ի
ՌՄԺԵ թուոջ մերում ( յամի 1766 ) ,,:

Գտանին ինչ ինչ արձանագրութիւնք յայսմ
պարսպի յանուն ոմանց նուիրատուաց յօգնութի
շինութեան սորին:

Արձանագիր՝ որ գտանի 'ի վէմ անդր ե-
դեալն 'ի ներքին կողմանէ պարսպին՝ 'ի վերայ դը-
րան բրգանն որ երկրորդ է 'ի բրգանէ անկեան
արևելեան հիւսիսոյ.

,, Յիշատակ է բուրգս ղափանեցի մահտե-
սի Խաչատուրի որդի Թօղաթեցի մահտեսի Գրի-
գորին և որդւոցն Յարութիւնին և Նողեային.
Թվ ՌՄԺԴ ,,:

Արձանագիր՝ որ գտանի 'ի պարսպի անդ ար-
տաքուստ 'ի բաժնի արևելեան հարաւոյ 'ի միջո-
ցի երկուց բրգանցն 'ի վէմն եդեալ 'ի վերայ լու-
սամուտին յարդանոցի:

,, Յիշատակ է եօթնագաղաչափ տեղ 'ի պա-

ըրպէն ագուլեցի ոսկանի որդի Յովսէփին և իւր կենակցին, և որդւոյն Դանիէլին և այլոց, Թվ. ռմժե:

Արձանագիր՝ ընդ մէջ մեծի դրան կալի կոչեցելոյ և բրգանն արևելեան հարաւոյ՝ այս ձև:

,, Շինեցաւ մեծ բուրջս արդեամբք ՚ի յԱտրանայ (Ադրիանապօլիս) սառաւք մահտեսի Զաքարային և հանգուցեալ եղբօրն իւրոյ մահտեսի Գրիգորին ՚ի յիշատակ ամենից կենդանեացն և ննջեցելոցն իւրեանց: Թվին (հայոց) ռմժե, ին ,,:

Գտանի և արձանագիր մի ՚ի միջին բուրգն արևմտեան պարսպին ՚ի հիւսիսակողմանն նորա՝ յանուն Կարապետ պատրիարգին Երուսաղեմի՝ որ ունի օրինակ զայս:

,, Շինեցաւ բուրգս այս արդեամբ սրբոյ Սաղիմայ պատրիարգ տեառն Կարապետի աստուածաբան վարդապետին՝ ՚ի յիշատակ իւրեան, և հոգևոր և մարմնաւոր ծնողաց իւրոց ՚ի ռմժզ (Թուին հայոց. 1767) ,,:

102, Կառուցանել ետ զհամբարանոց մի միջակ մեծութեամբ հաստատուն շինուածովք ՚ի բուն խիկ ծայրի անդ յանկեան արևելեան հարաւոյ. ՚ի հիւսիսոյ կից է փռնատունն հացի, դէպ ՚ի հարաւ աւարտեալ երկայնութիւնն յարտաքին որմն նոյն խիկ ներքին պարսպի. յարևելակողմն կից է բուրգն նոյն անկեան՝ որ ՚ի շինուածոց Մովսէս կաթուղիկոսի. յարևմտից մեծակառոյց համբարանոցն՝ որ ՚ի Ղուկաս կաթուղիկոսէ. Այս շէնք այժմ անուանի Օշականայ ամբար. որովհետև արդիւնք արմտեաց կալուածոց այնր գեղջ՝ սովորաբար ժողովին յայս համբարանոց. և ունի ներքնայարկ ևս, ընդ որով մտանեն ՚ի ներքնայարկ յիշեալ բրգան:

103, Նա նորոգել և զսեղանատունն ամ-

ուան կամարայարկ կառուցմամբ ’ի կոփեալ քարանց ։ Լինել եւ ’ի հիւսիսակողմն Տաճարին ընդմէջ ներքին և արտաքին պարսպացն զմոմատուն անուանեալ տեղին սրահօք և յարկօք․ ուր է և միջակ դրութեամբ քարեայ աւազան ջրոյ ’ի պէտս սպիտակացուցանելոյ զմոմս ․ Աստ նստի աւագլուսարարն (փոչաչալ) մեծի տաճարին՝ որոյ և դուռըն հայի հանդէպ հիւսիսային դրան Տաճարին սրբոյ՝ որ անուանի է̄ կոչմամբ՝ դուռն լուսարարի ։

104 , Ընդարձակեաց և զձմռան կացարանն կաթուղիկոսական՝ զոր շինեալ էր Ղազարու Ջահկեցւոյ (100)․ քանզի քակեալ զորմն նորա՝ որ բաժանէր զայն կացարան և զշուկայն , հեռացոյց աւելի քան զտասն կանգուն՝ զոր ’ի բաժնէ շուկային ’ի ներքս էառ․ և նորագոյն հաստատ և բարձր որմով ամրափակեաց , և զ’ի ներքս առեալ զմիջոցն՝ որ սկսանի ’ի դրանէն Տրդատայ ցբուրգն արտաքին պարսպի դէպ յարևմուտս , ետ կառուցանել հաստուածեալ մեծ և փոքր սենեակս վասն հարկաւորութեան տան կաթուղիկոսարանի ’ի ձմեռնային եղանակի՝ որ կայ և ցարդ ։

105 , Աստ կառուցանել և բաղանիս յանկեան արևմտեան հարաւոյ արտաքին պարսպի ’ի պէտս մաքրութեան բնակչաց մենաստանին , գեղջն և երթևեկացն ’ի հեռաստանէ ։ Աստ կառուցանել և ’ի հարաւակողմն պարտիզի տան կաթուղիկոսարանի երկյարկ շինուած բազմասենեակ առ ’ի արգելուլ զտեսութիւն այլազգեացն հիւրելոց ’ի Ղազարապատ անդր դէպ ’ի տունն հայրապետանոցի , որ ինքնին խախտեալ կործանեցաւ յամի 1826 ։

106 , Աստ փորել զբաղում ջրհորս զառաջեաւ սենեկացն , և շուրջ զտաճարաւն հեռագոյն վասն առաւել պահպանութեան շինուածոցն՝ որք ’ի գիճութենէ վնասէին , և վասն առողջութեան

հոգևորականաց կացելոցն յայնոսիկ չէնս, և ետ բանալ ճանապարհ ընդ երկրաւ առ միմեանս. և այնպէս տարեալ ետ միացուցանել ընդ ջուր ջըրհորոյն միացելոյ 'ի շինութենցն Փիլիպպոս կաթուղիկոսի (94)։ Այս ժողովեալ ջուր 'ի ջրհորոց ատի, և ջուրն որ 'ի ներքոյ տաճարին՝ անկանին 'ի նոյն աւազին ճանապարհն, և անցեալ՝ որպէս ասացաւն զառաջեաւ վանաց Գայիանեայ և ընթացեալ հարուստ մի ապա ելանէ յերես երկրին և օգտաւէտ բերէ անդաստանացն հարաւակողման։

107, Նոր 'ի նորոյ կանգնեաց և զգործարան տպագրութեան ամենայն պարագայիւքն՝ նուիրական արդեամբք բարեյիշատակ առն աղայ Գրիգորի խօջաջանեան վերաբնակելոյն 'ի Հնդիկս. որոյ յիշատակագրութեանն արձան եդեալ կայ 'ի վերայ դրան տպարանին, եղելոյ կից յարեւմտեան ծայր ձմեռնային կացարանի կաթուղիկոսաց՝ (100) (104) այս օրինակ։

,,Աստուածով հաստատեցաւ տպագրատունս նոր 'ի նորոյ 'ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն՝ հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին երևանցւոյ՝ արդեամբ ջուղայեցի 'ի Հնդս բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային խօջաջանեան՝ որ մականուամբ հաբիկենց, 'ի յիշատակ իւրեան, և իւր 'ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Մէքայէլին և Մամխաթունին, իւր կենակից Մաղինային, և վաղաժամ Մէքայէլ որդւոյն. և քերցն՝ Նանամարիային և Ծիպիրոյային. հօրեղբարցն՝ Նազարին, Սաֆարին և Աղէքսանդրին. պապուն Գրիգորին և կենակից Մագուհւոյն և հօրաքեռն Ծիժապատային, և մեծ պապ Յակոբջանին, և հօրեղբօր դստերացն՝ Պէկ-

զատային և Գիւընաբաթին, և այլ ամենայն հին և նոր ննջեցելոցն նորին: Այսու պայմանաւ՝ զի ՚ի տարին Բ անգամ ՚ի տօնի Լուսաւորչին և Հրեշտակապետացն ՚ի սբ. Աթոռոջս պատարագ մատուցի հանդիսաւորութեամբ՝ յիշելով զնոսա. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն. Թ. (հայոց) ռմի. (յամի 1771.) ,,: Յորում և ետ տպագրել զինչ ինչ գրեանս:

108, Սոյն երանելի հայրապետ իբրև ետես թէ յաջողի այս գործ շահաստանութեան Ս.Աթոռոյ և ազգի Հայոց, և թէ առաւել ձեռնտու իսկ է այնմ տպագրատան և գործարան թղթաշինութե, ետ բերել յԵւրոպիոյ զքաջահմուտ անձինս յայնըմ. և ձեռն ՚ի գործ եդեալ ոչ խնայելով՝ ոչ յաշխատանս և ոչ ի ծախսն, կանգնեաց և զայն գործարան ՚ի հարաւակողման Վաճարին՝ արտաքոյ մեծ պարսպին հանդէպ հարաւային դրան Պարապատին. յորմէ ելեալ թղթովքն ետ տպագրել զգիրս. և այն նորակազմ թուղթ ունէր նշան յինքեան՝ յառաջին թերթն զփակատառ անուանդ՝ և ՚ի ներքոյ նր զերկոսին հայկական տառ՝



որք են՝ Էջմիածին, և Սիմէոն կաթուղիկոս. իսկ 'ի յաջորդ թերթն զթուական Հայոց՝ որ է հազար երկու հարիւր, քսան և հինգ. և համապատասխանէ 1776 փրկչական թուականին. և 'ի ներքոյ նորա զայս երկու տառ՝

# Թ ՌՄԻԵ

# ԳՄ

որ թերևս նշանակեն զԳրիգոր Մնքայէլեան զայրն բարեյիշատակ՝ որ ընդ ծախուց տպագրատան, գուցէ վճարեալ իցէ և զծախս այսր գործարանի թղթաշինութե̄. քանզի չունիմք այլուստ զծանօթուի ինչ՝ թէ արդեօք ծախք սորին 'ի գանձարանէ Աթոռոյն եղեալ է, թէ 'ի նուիրանաց ուրումն ջերմեռանդի. և զի տակաւին վէմն արձանագրի՝ որ կայ 'ի վերայ դրան նոյն գործարանի, գտանի առանց ինչ գրուածոյ:

Այս երկու գործարանք՝ պարծանք Աթոռոյն և Ազգին, կային 'ի հաստատութեան և 'ի շարունակ գործադրութեան՝ 'ի ժամանակի անդ կաթուղիկոսութեան և փափագելի կենդանուե̄

նորին Սիմէոնի երեւանցւոյ. այլ զինի վախճանի նորա՝ ՚ի պատճառս յարուցման պատերազմաց ՚ի զանազան նահանգական իշխողաց ՚ի վերայ մեծանց ՚ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեցան մեծմասամբ՝ և գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան. զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ՚ի զօրաց ասպատակողացն՝ ցան և ցիր եղեն ՚ի հեռաւոր տեղիս. մինչ զի և զձուլեալ տառսն տպարանին ՚ի հեռաւոր քաղաքաց գնեալ ՚ի գերչացն հայազգի անձինք՝ վերադարձուցանէին յԱթոռայսր զինի այնպիսի պատերազմաց. իսկ տպագրատունն թէպէտ և անկաւ յառաջին վայելչութեցն իւրոց, այլ այնու ամենայնիւ խնամօք պահպանեալ՝ տակաւին ևս ՚ի լոյս ընծայէ զկարի կարեւոր մատեանս եկեղեցական՝ և զայլս։

Նոյն գործարան տպագրութեան՝ որ յառաջին ունէր տեղի անդ ՚ի ներքս տան կաթուղիկոսարանին յարեւմտեան ծայրի նորին՝ (107), այժմ փոխադրեալ կայ յընդարձակ կամարայարկն խանոցի (110) որ կից յարեւմտից կուսէ հարաւային մեծի դրանն ներքին պարսպի։

109, Ղուկաս կաթուղիկոս կարնեցի ևս արար զբազում շինուածս յայս մենաստան։ Նա հարաւային ներքին պարսպաւ ետ կառուցանել համբարանոցս ցորենոյ և որիզոյ ՚ի միջոցի անդանկեան արեւելեան հարաւոյ և մեծի դրանն Վ.ր շուկի անուանելոյ յանուն ուրումն դռնապանի այնր, ներքնայարկօք և վերնայարկօք կամար առ կամար ձգեալ ՚ի կոփածու քարանց կարի հաստատուն՝ ըստ կիսոյն արդեամբք նուիրական արրոց Ջուղայեցի Էմինազեան Խոջէին ադայի՝ որոյ և յիշատակագրութեանն արձան դնի յարեւելակողման որմն մեծի կամարայարկի դրանն վերոյիշեալ՝ այս

օրինակ ։

„Շնորհիւն Աստուծոյ շինեցան կամարակապ դուռնս և արևելակողմն ներքնայարկքըս՝ որք են վեց խուցք և մի համբարանոց բրնձոյ համդերձ կցորդ շինուածովքն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, արդեամբք Ջուղայեցի էմինազեան խաչիկ աղային 'ի բարի յիշատակ իւր և կենակցին իւրոյ Մարիամ խանումին, և որդւոյն իւրեանց Մովսէս աղային, և այլ ամենայն կենդանեաց և ննջեցելոց իւրեանց. 'ի ամին թուին (ՌՄԼԴ). (1785)„ ։

110. 'Ի մեծ դրանէ աստի ուղղակի յարևմուտս ցհարաւային ծայր շինուածոց կաթուղիկոսարանին գրեա՛ թէ բոլորովին հիմնարկեալ՝ ետ նորոգել և կառուցանել բարձրաբերձ շինուածովք կրկնայարկաց՝ բաց 'ի ձմռան սեղանատանէն՝ որ յԱղէքսանդր կաթուղիկոսէ (96). մերձ 'ի յիշեալ մեծ դուռն ետ յարդարել զխոհանոցըն ընդարձակ և բարձր կամարաւ՝ որոյ հիւսիսային որմն կիսովչափ տակաւին է յառաջագոյն շինեալն 'ի ժամանակէ անտի համատանցի Աստուածատուր կաթուղիկոսին՝ որ և ունի արտաքուստ յորմն հիւսիսային արձանագիր շինութեանըն՝ ըստ այսմ։

„Ի ՃԿԷ, թուին (ՌՃԿԷ). (1718.) Ես համատանցի տէր Աստուածատուր կաթուղիկոս ետու շինել տնտեսատունս 'ի վայելումն սուրբ Էջմիածնիս միաբանից„ ։

111. Իսկ աստի մինչև ցծայր շինուածոց կաթուղիկոսարանին յարդարեաց սեղանատուն մեծ և ընդարձակ վասն ամառան, և բովանդակ շինուածք սորա են 'ի կոփածու քարանց և 'ի թրծեալ աղիւսոյ. նմանապէս և նստարանքն և սե-

ղանն հացի՝ երկու կարգ ծայրէ 'ի ծայր են 'ի խորտեալ մեծահատոր վիմաց. որոց յարեւմտեան ծայրի անդ 'ի միջին տեղւոջ է քարակերտ կաթուղիկէ փոքրիկ 'ի վերայ չորից սեանց՝ յորում պատրաստի սեղան և տեղի բազմելոյ հայրապետին 'ի ճաշելն ընդ հասարակութեան. այլ այս կաթուղիկէ այժմ փոխադրեցաւ յարեւելեան ծայր սեղանատանն նովին դրութեամբ՝ 'ի պատճառս փոխարկութեան խոհանոցին յայլ տեղի. զի յառաջին խոհանոցն՝ որպէս գրեցաք, փոխադրեցին զգործարանն տպագրութեան: 'Ի սեղանատանէ աստի մտանեն 'ի սեղանատունն ձմեռան ընդ երկուս դրունս. իսկ 'ի միջոցս այսոցիկ երկուց շինուածոց՝ տպագրատան և սեղանատան, է սրահ կամարայարկ և ունի դուռն մեծ հանդէպ հարաւային դրան տաճարին, ընդ որ անցանեն 'ի տընտեսատունն, 'ի մառանն, 'ի սառցատունն, 'ի գինետունն և 'ի խոհանոցն նորոգ. 'ի վերայ այսր սրահի և սեղանատանն մեծի է շինեալ մեծ համբարանոցի նմանապէս 'ի քարանց և 'ի կղմինդրաց. և է կառուցեալ արդեամբք բարեյիշատակ առն աղայ Մարգարի խալդարեանց Ջուղայեցւոյ գաղթելոյն 'ի Պաղտատ՝ որոյ և արձան յիշատակագրութեան ջերմեռանդ նուիրանացն և անուան նորա և ազգայնոցն դնի արտաքուստ 'ի կամարի մեծի դրանն՝ որ ընդ մէջ տպարանին և սեղանատան՝ այս օրինակ:

> ,,Յաջողմամբ ամենակարողին Աստուծոյ և հոգածութեամբ տեառն Ղուկասու սըրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց նորոգեցաւ 'ի հիմանէ սեղանատունս և փոքըր սրահս հանդերձ ամենայն վերնայարկօքըն ծախիւք Ջուղայեցի խալդարեանց 'ի Բաղտատ բնակեալ Մարգար աղային 'ի յիշատակ ինքեան և հոգելոյս ծնողացն իւ֊

րոց Պետրին, և Ովսաննային, և քեռոն իւ-
րոյ Աննային, և կանանցն իւրոց հանգու-
ցելոց և կենդանեաց, և այլ ամենայն իւ-
րայնոցն ։ 'ի ռմլէ Թուականիս (հայոց) ։
(1788 ։)„ ։

112, Ընդարձակեաց այս սրբազան կաթուղի-
կոս և զձմուան սեղանատունն յերկայնութեան
նորա ընդ յարևելս նորոգ հնգեակ կամարօք՝ ո-
րոյ և արձանագիր շինութեանն կայ յորմն անդ-
հիւսիսային 'ի սպառուածի նորա 'ի ներքուստ 'ի
փոքրագիր վէմ մարմարոնեայ՝ այս օրինակ ։

„'Ի Թուին (հայոց) ռմլթ, (1790 ։) հրամա-
նաւ տեառն Ղուկասու սրբազան կաթու-
ղիկոսին շինեցաւ հինգ կամար կցորդս սե-
ղանատան՝ ծախիւք կեսարացի բարեպաշտ
մահտեսի Յովհաննէս ամիրային 'ի յիշա-
տակ իւր և հօրն պաշպաղրկեան մահտեսի
Յարութիւնին, մօրն մահտեսի Նուային, և
զաւակացն՝ Կարապետին և Սարգսին, Տա-
լիթային, և Մարիամին ։ և այլ համայն կեն-
դանեաց և ննջեցելոց իւրոց„ ։

113, Զվերնայարկ համբարանոցն՝ որ 'ի վե-
րայ այսր սեղանատան, ևս ետ կառուցանել Ղու-
կաս կաթուղիկոս արդեամբք մահտեսի Նիկողա-
յոսին Թօխաթցւոյ՝ որոյ յիշատակագրութեան ար-
ձան եղեալ կայ 'ի մէջ լուսամուտին արևելեան 'ի
կողմն հիւսիսոյ՝ ըստ այսմ ։

„Շինեցաւ ամբարանոցս հրամանաւ տեա-
ռըն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին
արդեամբք Թօխաթցի մահտեսի Նիկողա-
յոսին 'ի յիշատակ նորին և հօրն իւր պօյա-
ճիզատէ հանգուցեալ մահտեսի Սարգսին,
և համայն կենդանեաց և ննջեցելոց իւ-
րոց ։ Թուին (հայոց) ռմխ ։ (1791 ։)„ ։

114, Շինուած այնր համբարանոցի՝ որ 'ի վե-

րայ ամառնային սեղանատան, մնացեալ էր թերի ՚ի ժամանակէ անտի Ղուկաս կաթուղիկոսի՝ և էր յարևմտակողմն երեք բաժին տեղի՝ այսինքն, երեք գմբէթաւոր կամարաքն հանդերձ՝ յորոց զերկուսն քարամբք և կղմինտրօք, և զմին փայտեայ ծածկօք լուսոյց Դաւիթ կաթուղիկոս էնէկէլեցի: Այս տեղի է այժմ գրանոց այսր հայրապետական մենաստանի. քանզի ըստ ծանօթութեանն հասելոյ առ մեզ՝ յառաջագոյն մատենադարան այսր մենաստանի եղեալ է անդ ՚ի կաթուղիկոսական տանն՝ զոր կառոյց Փիլիպպոս հաղբակեցի (93), անդ էր մինչև ՚ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսի երևանցւոյ՝ զոր սա ինքն փոխադրեաց անդրէն յայս ներկայ տուն կաթուղիկոսարանի մերձ ՚ի շէնսն տպագրատան և ձմռնային կացարանի կաթուղիկոսաց. որոյ տեղին գոլով ներքնայարկ և խոնաւուտ, տեսեալ Եփրեմայ կաթուղիկոսի՝ թէ վնասին անդ մատեանքն, փոխադրեաց յայս նորակառոյց շէնս ՚ի Դաւթայ կաթուղիկոսէ. և յարդարել ետ զտեղի մատենիցն առ երեսօք որմոցն մինչև ցառաստաղ շինուածոյն փայտեայ հիւսնաշէն դարանօք. այլ գոլով տեղին տակաւին փոքր՝ գրեա՛ թէ ՚ի վերայ միմեանց կուտակեալ կային մատեանքն. վասն որոյ յանգեալ 1837 ամի զերկու գմբէթարաժին տեղի ևս ՚ի համբարանոցէն՝ որ կից յարեելից նորա, բաժանեալ միացուցին ընդ այս գրանոց՝ և եղև երկու յարկ գրանոցն և ընդարձակեցաւ տեղի մատենիցն. ուստի և մատեանքն նոր ՚ի նորոյ կարգադրեցան ըստ նիւթոյն ՚ի մետասան բաժինս. յառաջին յարկի անդ՝ ա̅, Սուրբ գիրք և մեկնութիւնք նոցին. բ̅, Աստուածաբանութեան վերաբերեալ մատեանք. գ̅, Ազօթից մատեանք. դ̅, Եկեղեցական ընթերցուածոց մատեանք և մեկնութիւնք նոցին. ե̅, Հոգևոր կա-

նոնք ժողովոց և վարդապետաց ։ յերկրորդ յարկի՝ Զ, Պատմութիւնք, Ճառընտիրք, և աշխարհագրութիւնք ․ Է, Չափաբերութիւնք՝ այն է, ոտանաւոր մատեանք ․ Ը, Վարդապետական մատեանք ․ Թ, Արհեստական մատեանք ․ Ժ, Աճաբանականք ․ ԺԱ, Այլազգական մատեանք՝ Լատինաց, Յունաց, Ռուսաց և Տաճկաց, ևս և այլոց ։

115․ Յամի 1839, յամսեանն մայիսի եկն յԱթոռ այսր բարեպաշտ հայազգի իշխան աղա Ստեփաննոսն սահակեան խէլֆայեանց բնակիչ այժմ Եգիպտոս քաղաքի՝ որ զկնի ջերմեռանդուխտակատարութեցն և առատ նուիրանացն յանուն հայրենի Աթոռոյ գերադահ Տաճարի Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի, և ուխտի հոգևորականաց նորին, յաւել և զյատուկ արդիւնս ՚ի ծախս շինութեան երից սենեկաց վերնայարկացն արևմտակողման Պաղարամտի ․ քանզի յայնմ միջոցի սոյն կողմն արևմտեան վերնայարկօք և ներքնայարկօք ՚ի պատճառս կարի խախուտ գոլոյն, բովանդակապէս քակեալ ՚ի հիմանց նոր ՚ի նորոյ կառուցաւ ․ և այն նուէր արդեանց յանուն իշխանապետի հայոց պերճաշուք Պօղոս բէկին Յովսէփեան և գերապատիւ աղա Պետրոսի նորին հարազատի և իւր ինքեան ․ որոց յիշատակագրութեանցն արձանագիր ՚ի վերմ՝ եդան յարևելեան ճակատ նոյն երից սենեկացն՝ ըստ այսց ։

,, Յամի 1839, յաւուրս 8, րդ Յովհաննու կաթուղիկոսի ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք և ծախուք բարեպաշտ իշխանապետին հայոց պերճապատիւ Պօղոս բէկին Յովսէփեան Զմիւռնացւոյ՝ բնակելոյ այժմ յԱլէքսանդրիա Եգիպտոսի ,, ։

,, Յամի 1839, յաւուրս 8, րդ Յովհաննու կաթուղիկոսի ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք և ծախուք բարեպաշտ իշխանին

հայոց գերապատիւ աղայ Պետրոսի Յովսեփեան Զմիւռնացւոյ՝ բնակելոյ այժմ ՚ի Տրիեստ,,։

,, Յամի 1839, յաւուրս 8, րդ Յովհաննու կաթուղիկոսի ամենայն Հայոց շինեցաւ այս սենեակ արդեամբք և ծախուք բարեպաշտ իշխանին հայոց մեծաշուք աղայ Ստեփանի Խելֆայեանց Սահակեան բնակելոյ այժմ յԵգիպտոս,,։

116, Զմիջոցն այսր վերոյնիշանակեալ շինուածոց և բազմանեաց (105)՝ ուր էր յառաջագոյն փոքր ղազարապատ կոչեցեալ հիւրանոցն, քակել բոլորովին և նորոգ հիմնարկութեամբ յամի 1830, կառուցին ընդ մեծ և ընդ փոքր սենեակս ութն՝ մեծամեծ ճաղերկաթ լուսամուտք և սիւնազարդ գաւթօք. ուրանոր է այժմ ատեանն լուսաւորչեան հայոց սիւնհոդոսի և գրադրանոց նորա։

Գործոյն լուսաւորութեան աշխի Հայոց և
[illegible] կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ
Էջմիածնի։

117, Թողլով առ այժմ զմիջոց ժամանակի հեթանոս թագաւորացն Հայոց՝ զքրիստոնէութեանն զդարու յառաջ բերցուք՝ այն է, ՚ի սկզբան անդ հինգերորդ դարու ՚ի ժամանակս սրբոցն Սահակայ պարթևի հայրապետի, և մեծ վարդապետին Մեսրովպայ՝ գրական լուսաւորութիւն հայաստանեայց եկեղեցւոյ թէ յոր աստիճան բարձրացաւ, քաջայայտ իսկ է ամենեցուն մերազանց և այլոց օտարազգեաց՝ որք զհետ պնդեալ իցեն հրնութեանց հայաստանի. և փայլեցոյց զայն բոցափայլ լուսաւորութիւն ուսումնարանն Կաթուղիկէ մայր եկեղեցւոյ հայաստան աշխարհի՝ որ ոչ

միայն զազգ և զեկեղեցի իւր լուսաւորեաց գիտութեամբ գրաւոր իմաստից եկեղեցական և արտաքին մատենից, այլ և զմերձաւոր ազգս՝ ըզՎիրս և զԱղուանս, հոգեւանդ երկասիրութ՟ ծննդոց՝ որդւոց հայաստանի, վարժելոցն առ ոտջամբ վարդապետութեան սրբոյն Սահակայ և Մեսրովպայ. և բազմացան այնու առաջին լուսաւորութեամբ երևելի ականաւոր անձինք հարիւրիւ չափ աւելի հարազատ որդիք հայաստանի՝ որք ամենեքեան նոքա եղեն մի մի առանձին նշանաւոր հեղինակք դրոց գիտութեանց, թարգմանութեանց, և մեկնութեանց. և այնքան բազմացուցին զարդիւնս գրաւոր իմաստից, մինչ զի յայնպիսի վերջին շունչ անկեալ ժամանակի մարմնաւոր իշխանութեան, զկնի պահպանելոյ զազգըն ողջոյն 'ի հզօրագոյն բռնութենէ հրապաշտութեանն արևելից, չթողին և 'ի մերձաւոր լուսաւոր ազգս զիմաստս գիտութեանց՝ զորս ոչ հեղին, ածին 'ի հայրենի լեզու Հայոց, մանաւանդ զՅունացն՝ յորում ժամանակի փայլէր առաւելութիւն գիտութեանց և արհեստից՝ որ և անուանէր մայր իմաստութեան. և համարձակիմ յայնմ դարու զմերումն գերագոյն դասել քան զհելլենացւոցն զիմաստասէրս՝ որում բացայայտ վկայէ երկրորդն Թեսաւրոս մագիստրոսն Գրիգոր վասակեան պահլաւունի յերկրորդ թուղթ իւր առ Կիրակոս յոյն դպիր՝ յասելն. „Նաև մերոցն արիական արանց և առաքինասէր իմաստնոցն թուի ինձ եթէ յոյժ յաղթօղ եղեալք ամենայն արհեստից և մակացութեանց՝ որ վեհ ինձ նոցա հաւանիմ ելոյ քան յոգունցն շփոթաբանութեան ձերոց ելլենական կարծեցելոցն. նա և այժմ ցուցանէ 'ի նոցունց (զեբրայեցւոց, և 'ի քաղդէացւոց, և զեգիպտացւոց, և զեթիովպացւոց) դպրութենէ մերս փանաքութիւն առ ձերն վեհագոյն՝ յոր այժմ են կարգե-

ցեալք,,: Եւ յերրորդ Թղթին առ Սարգիս վարդապետ Հայոց. ,, Նա դու այժմ փութացիս յայսոսիկ քոյով իմաստասիրական մակացութէքդ հրատարակել. վասն զի ոչ եմք երբէք դադարեալ 'ի Թարգմանութենէ, եւ բազում մատեանս զորըս ոչ եմք գտեալ 'ի մեր լեզուս. զերկուս մատեանսն Պղատոնի. զՏիմէոսի տրամաբանութիւնն եւ զփեդոնին՝ յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, եւ զայլս բազումս յիմաստասիրացն. իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարեւոր տաւնականս, բայց եւ գտեալ մեր իսկ 'ի հայ լեզու գրեալ Թարգմանչացն՝ զգիրս Ոլոմպիոդորոսի՝ զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի եւ հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ եւ զԿալլիմաքոսի, եւ զԱնդռաւնիկեայն 'ի հայ լեզու, բայց եւ զերկրաչափականն զԵւկլիտոսին սկսայ Թարգմանել. եւ եթէ տակաւին կամեսցի տէր երկարանալ մեզ 'ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ՝ զմնացեալսն բոլոր Յունաց եւ Ասորոց Թարգմանել ոչ դանդաղեցայց:

118, Նա ինքն Գրիգոր մագիստրոս 'ի վախճան ընդարձակ չափաբերութեանն իւրոյ՝ որ զարարչութենէն ցմերջին կատարած:

,,Որդւոցն (Գրիգորի լուսաւորչի) սքանչելի՝
որ իւր զէնի կարգ լոյս կարգին.
զգիւտն իմաստութեան՝
եւ զարուեստի նոր հանճարին.
զգիր մերոյ ազգիս՝
ըզՍրացւոց եւ զՄղուանին.
առեալ նշանեցին՝
զարմանալի Թարգմանեցին.
առաւել նորոգեցին՝
եւ լուսաւոր յօրինեցին,,:

Ներսէս շնորհալի յոտանաւոր պատմութիւնս նախնեաց :

,,Յայսմ վայրի եղև յայտնեալ,
այն որ Մեսրովպն կոչեցեալ.
որ տեսական ուսմամբ վարժեալ,
գործնականաւ գերազանցեալ.
բարեաց պատճառ հայոց եղեալ,
զիմաստութեան գանձն խնդրեալ.
զոր աղօթից մասամբ գտեալ,
հոգւոյն մատամբ տպաւորեալ.
ըստ Մովսիսի արժանացեալ,
զաստուածագիծ տառս ընկալեալ.
երիւք տասամբք վեցիւք յանգեալ,
արեգական ելիւք չափեալ.
այսմ շնորհի սովաւ տուեալ,
սուրբն Սահակ օժանդակեալ. . .
Նոր երկոքին սոքա ընտրեալ,
եկեղեցւոյ ամոլք լծեալ.
զբանին ակոսն պատառեալ,
զիմաստութիւնն սերմանեալ.
մանկունս ուշեղս ժողովեալ,
նոր դպրութեամբ այնու վարժեալ.
որք թարգմանիչք հոգւոյն եղեալ,
ըստ պտղոմեայ 'ի նոյն շարժեալ.
յաթենացւոց քաղաքն երթեալ,
զիմաստութեան ծաղիկս առեալ.
որպէս մեղու թևօք բարձեալ,
յեկեղեցիս Հայոց բերեալ.
այս է՝ Մովսէս՝ Դաւիթ եղեալ,
և Մամբրէիւ այլք հետևեալ.
այնքան շնորհօք վերին լցեալ,
մինչ զի յունաց գերազանցեալ.
բայց Մեսրովպայ շրջագայեալ,
զամենեսեան լուսաւորեալ.
Վրաց, Աղուանից, գիր ստեղծեալ.

հոգւոյն շնորհօք առատացեալ. ,, :

119, Աքանչելին Կորիւն վարդապետ աշա-
կերտ սրբոցն Սահակայ և Մեսրովպայ՝ որ առա-
ջին գրիչ եղև զայնպիսի բարեդիպութեց ազգին,
գոլով ականատես վկայ և աշակերտ այնպիսի
դպրոցի՝ գեղեցիկս խօսի զգրական լուսաւորութէն
և ուսումնարանէ տան կաթուղիկոսարանի որոյ
կաթուղիկէ Եկեղեցւոյ Էջմիածնի :

,,Որոց և ինքեանք 'ի կողմանց և 'ի գաւա-
ռաց հայաստան աշխարհին յորդեալք և դրդեալք
հասանէին 'ի բացեալ աղբիւրն գիտութեն Աս-
տուծոյ. քանզի՝ յԱյրարատեան գաւառին 'ի կայս
թագաւորացն և քահանայապետիցն՝ բղխեցին Հա-
յոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ ,, . . . Որ
և սկսան իսկ սուրբք եկեղեցւոյ միջամուխ ձե-
ռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գոր-
ծել, գումարել 'ի կողմանս 'ի գաւառս՝ 'ի տե-
ղիս տեղիս հայաստան ազգին, դասս դասս վաշա-
կերտեալն ճշմարտութեանն ; զհաւատացելոցն 'ի
կատարումն գիտութե բաւականս, և առ 'ի զայլսն
զեկուցանելոյ. . . . և պատուիրեալ կալ 'ի նմին
կանոնի, և իւրեանց անդրէն զառընթերակաց
արքունեան, հանդերձ ամենայն աղատագունդ բա-
նակիւն աստուածեղէն իմաստութէն վարդապե-
տեալ, առաւել երանելոյն Սահակայ զմամիկոնեն
որեարն 'ի վարժս վարդապետութեան պարապե-
ցուցեալ՝ որոց առաջնոյն Վարդ անուն էր՝ որ և
Վարդան կոչէր. նոյնպէս և զամենայն ոգի ջա-
նայր յերիւրել, հաստուցանել 'ի գիտութիւն ճշ-
մարտութեան ,, :

'Ի սոյն ուսումնարանէ շառաւիղեցան այլ
ևս բազում ուսումնարանք 'ի զանազան նահան-
գըս հայաստանի յերկուսին բաժինսն ևս 'ի պա-
րսկայինն և 'ի յունայինն, և յօտար ազգս՝ 'ի Վիրս
և յԱղուանս. առ որս քեզ ականատես պատմիչ

վերջիշատակեալն Կորիւն սքանչելին․ յորոյ բանից գրուածոցն փոքր ինչ ընդարձակօրէն դիցուք առաջի ընթերցողնելեաց։

120,,Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց (Պէծն Պօլօվլը)․․․ հրաժարեալ ՚ի նոցանէն (՚ի Բագարատէն և ՚ի Հայրապետէն) հանդերձ այլովք ևս օգնականօքն՝ որոց առաջնումն Տիրայր անուն ՚ի Խորձենական գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ՚ի Նահանգէ Տարօնոյ՝ որք էին սուրբք և զուարթագոյնք, հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել․․․ երթեալ իջանէր առ ոտս տանն Գողթան յառաջին դաստակերտն իւր․ և անդ ընդելական սովորութեամբն ՚ի կիր արկեալ զվարդապետութիւնն հաւատարութեամբն բարեպաշտին Շաբաթայ (Իշխանին Գողթան) լի՛ առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի, և կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց (ուսուցիչս ճէկէղեցականաց),,։

121,,Նոյն յետ այնորիկ ՚ի սահմանակիցս ՚ի Սիւնական աշխարհն ելանէր․․․ մինչև հասանել նմա բովանդակ ՚ի վերայ սահմանաց Սիւնեաց, և ժողովեալ մանկունս առ ՚ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ, զվայրենագոյն, զճիւաղաբարոյ կողմանցն․ և այնչափ փոյթ ՚ի վերայ ունելով, և դայեկաբար սնուցանել և խրատել, մինչև ՚ի նոցունց իսկ ՚ի վայրենեաց եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել որոյ անունն կոչէր Անանիաս՝ այր սուրբ և երևելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ,,։

122,,Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ՚ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի (Պէծն Պօլօվլը) և վասն բարբարոսական կողմանն, և առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին

ըստ շնորհեցելոյն նմա 'ի տեառնէ գրէր, կարգէր և օրինօք յարդարէր, և առնոյր ընդ իւր զոմանս լուսադոյնս յաշակերտաց իւրոց՝ յարուցեալ գը-նայր իջանել 'ի կողմանս Վրաց. և երթեալ յան-դիման լինէր թագաւորին՝ որում անուն էր Բա-կուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս, . . . և գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին՝ որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետև ար-քայն Վրաց 'ի կողմանց կողմանց 'ի խառնաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել ման-կունս, տալ 'ի ձեռն վարդապետին՝ զոր առեալ արկանէր 'ի բովս վարդապետութեանն: . . . . Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն,, այնուհետև հրաժարեալ 'ի նոցանէ դառնայր յերկիրն Հա-յոց. և պատահեալ Վահակայ կաթողիկոսի Հա-յոց՝ պատմէր նմա,,: . . .

123,, Ապա դարձեալ ելանէր, շրջէր զտեղեօք կարգելեօք և զգաւառօքն աշակերտելովք աշ-խարհին Հայոց զուարթացուցանել, նորոգել, հաստատել. և յորժամ այնպէս ընդ ամենայն տե-ղիս լի՛ առնէր, . . . խորհուրդ առնոյր այնուհե-տև վասն կէս ազգին Հայոց՝ որ էր ընդ իշխա-նութեամբ թագաւորին Հոռոմոց,, և փութա-ցեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք ան-ցանել 'ի կողմանս Յունաց, և վասն առաւելա-գոյն բարեգործ համբաւուց յառաջագոյն զնը-մանէ անդ 'ի հիւսիսական կողմանց հռչակելոյ, առաւել մեծամեծութեամբ ընտանեբար յեպիսկո-պոսաց աշխարհին և յիշխանաց և 'ի գաւառակա-նացն պատուեալ լինէր, մանաւանդ 'ի սպարա-պետէն աշխարհին՝ որ անուանեալ կոչէր Անատ-ոլի՝ 'ի մեծա ճանապարհին, որ զիրս առաջի ե-դեալ գրով ցուցանէր Կայսերն՝ որում անուն

Թէոդոս կոչէին որդի Արկադու կայսեր. Աւս_
տի և հրաման եղանէր վայելուչ մեծարանօք ըզ_
սուրբըն Ակումիտ անուն կոչելոյ : Իսկ նորա զբազ_
մութիւն աշակերտացն տարեալ 'ի քաղաքն Մե_
լիտինացւոյ յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի
քաղաքին՝ որ Ակակիոսն կոչէին , և գլխաւոր ա_
շակերտացն թողոյր զայն՝ որում Ղևոնդէոսն կո_
չէին , այր հաւատարիմ և ճշմարտապաշտ ,, :

,, Նա առեալ երանելւոյն զպատուական
եպիսկոպոսն Դերջանոյ՝ որոյ անուն կոչէր Գինթ.
և սակաւս յաշակերտաց նորա , և ելեալ յանա_
բւոյն դիմոսական , և բազում պատիւ գտեալ հա_
սանէին 'ի թագաւորական քաղաքն կոստանդինա_
կան՝ զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն , և մը_
տեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման
լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրա_
պետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դը_
րանն՝ որում Ատտիկոս կոչէին , յորոց և գտեալ
շնորհս՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն
'ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք
կարգելովք յեկեղեցւոյն և յարքունեաց և 'ի
պատուական իշխանաց քաղաքին ,, :

,, Նա ապա յետ պասեքին կատարելոյ՝ ցու_
ցեալ կայսերն զպիտոյից հանգամանս , և առեալ
զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայ_
սերագիր նշանակելովք վասն մանկւոյն յաշա_
կերտութիւնն առ 'ի կէս ազգէն Հայոց ժողովե_
լոյ , և վասն ժանտագործ ազգին բարբարոսաց . և
եկեղեցեաց հաստատութեան . և մեծամեծ պար_
գևօք պատուեալ . վասն որոյ հաւանեցուցեալ
ճշմարտասէրին զարքունիսն անակնկալ թողոյր
և երկրպագեալ ծիրանափառ օգոստականացն , և
սրբոյ կաթուղիկոսին , և ընկալեալ ողջոյն յեկե_
ղեցւոյն և յերևելի իշխանացն քաղաքին , և ամե_
նայն իւ փոյթովքն յաջողեալք՝ երանէին 'ի գեսպակս

և ՚ի կառս արքունատուրս ։ Նա մեծաւ շքով և բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արքունականս ,.... և գային հասանէին ՚ի ժամադիր կողմանս, և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին . և նորա առեալ սակերս կայսերական նշանօք փութայր վաղվաղակի զհրամանն կատարել . և հրեշտակս արձակեալ այնուհետև ՚ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեան կայսեր բազմութիւն մանկտւոյ ժողովել , և նոցին ռոճիկս կարգել ՚ի պատեհագոյն տեղիս՝ յոր և երանելւոյն զվարդապետութիւնն իւր ՚ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր ,, ։ ..., Իսկ երանելւոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ՝ սակեալ և վճարեալ , և զբազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ ծովացուցանէր զվարդապետութեան զխորութի , և լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք ,, ։

124 . ,, Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա (Գծյն Մեսրովպայ) այր մի էրէց աղուան ազգով Բենիամին անուն , և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին , առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգև կորովի սովորութե իւրում, և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ կշռէր ։ Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց և յիշխանաց աշխարհին և յամենայն եկեղեցեաց , առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն՝ որոյ առաջնոյն Յոնովք անուն էր , և երկրորդին Դանան , արք կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական ապաստաւորութեանն՝ զորս յանձն արարեալ շնորհացն աստուծոյ անդէն զետեղէր , և ինքն բազում աշակերտօք գայր անցանէր ՚ի կողմանս Հայոց մեծաց , և հասեալ ՚ի նոր քաղաքն (՚ի Ս[illegible]

ըղդա•)՝ յանդիման լինէր արքայ եպիսկոպոսին Սահակայ, և Թագաւորին Հայոց՝ որում անուն Արտաշէս կոչէին, և ամենայն բանակին, և պատուեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ յաջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ. մխիթարէր վասն հոգևոր անձուկն ափսելոյ,,։

,,Իսկ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ 'ի կողմանս Աղուանից, և երթեալ իջանէր յաշխարհն, և հասեալ 'ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից՝ որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին Թագաւոր՝ որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ՝ որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի ,,։

,,Ապա հարցեալ 'ի նոցանէ՝ առաջին եղեալ վասն որոյ եկեալն էր. և նոցա երկոցունց զուգեցելոց եպիսկոպոսին և Թագաւորին՝ յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ, տային և հրաման 'ի գաւառաց և 'ի տեղեաց իշխանութեն իւրեանց, բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեան ածել և գումարել ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց դասս դասս դպրոցաց և ռոճիկս կարգել 'ի դարմանս,,։

,,Իսկ իբրև հրամանն այն արդեամբք և գործովք յանկ ելանէր, ապա այնուհետև երանելոյն Երեմիայի եպիսկոպոսին 'ի ձեռն առեալ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս 'ի գործ արկանէր,,։ . . . Դարձեալ առաւել ևս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից միամիտ փութով հրաման տայր սատանայականքն և դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել, զերծանել յունայնավար հնացելոցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի. և յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ, և լցեալ զպիտոյն

իւրեանց, և զկամացն յօժարութիւն, ձեռնտու եւս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ՚ի Աղուանական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին. հրաժարէր ապա և ՚ի Թագաւորէն և յեպիսկոպոսացն և ամենայն եկեղեցւոյն Աղուանից. և զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն՝ որում անուն Յովնաթան կոչէին՝ որոյ բազում յօժարութիւնս ՚ի վարդապետութենէ էր գտեալ, և յանձն առնելով զնոսա և զանձն ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ խաղացեալ գայր ՚ի կողմանցն Աղուանից, ևն,,:

Նաև առ այս ահա քեզ վկայ պատմիչն Աղուանից Մովսէս կաղանկատուացի՝ զորմէ տողէ յիւրումն պատմագրութեան, գիրք Ա, գլուխ ԻԷ. ,,Նա և եղև յետ վկայութեանն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի, բարբարոսական ազգ կողմանցն արևելից վերստին ՚ի դիւցամոլար կռամոլութիւնս կործանեցան, և բազում ուխտարուշանաց կատարելով յարուցին հալածանս ՚ի վերայ քրիստոնէից. մի ոմն (Երանելին Մեսրոպ) ՚ի նախ եղելոց վարդապետաց՝ որ ՚ի հոգւոյն սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգացն առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց,,:

Նոյն և գիրք ԻԴ, գլուխ Գ. ,,Յորում ժամանակի Կլոդոս (Կլէոդոս) Յունաց էր կայսր և Վռամշապուհ Հայոց Թագաւոր և Յազկերտ Պարսից արքայ, Եսուաղէն Աղուանից Թագաւոր՝ եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս, մեծավաստակ ընտիր անաւթ հոգւոյն սրբոյ առ հայրապետն մեր Երեմիա և Թագաւորն Եսուաղէն որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւնն նորա ըստ շնորհելոյ նմա յաստուածուստ պարգևին՝ որ Հայոց և Վրաց եւ նշանագիր ՚ի ձե-

ուրն Նորա Հոգին սուրբ · հաճեցան և ետուն մահ_ կուանս ընտրիւ յուսումն · և զբենիամին Թարգման կոչեալ ՚ի Սինեանց՝ զոր Ս. Սաակ ՚ի ձեռն Նա_ նէի եպիսկոպոսին արձակեաց, և Նոքա եկեալ առ Մեսրոբ, և Նոքաւք ստեղծ գնշանագիրս կո_ կորդախաւս, աղխազուր, խժական խեցբեկագու_ նի լեզուին Գարգարացւոց ։ Եւ ողոր ասա վերա_ կացու զաշակերտն Յովնաթան, և ՚ի տան Թա_ գաւորին կարգեալ քահանայս՝ դառնայ ՚ի Հայս ։։

125. Մեծն Սարգան վարդապետ բարձր_ բերդցի ասէ ՚ի ճառին անդ վարուց Յովհաննու Օձնեցւոյ իմաստասէր հայրապետի . ,,Տր (Յովհան Օձնեցի) որպէս գիրք պատմագրաց ցուցանեն՝ աշ_ խարհաւ երկրորդ ՚ի Գուգարաց, գա_ ւառաւ չորրորդ ՚ի Տաշրայ, բնակութեամբ ՚ի նը_ շանաւոր գիւղաքաղաքն Յուձնայ ՚ի յարենէ ծը_ նընդեան յազատ տանէ՝ քաջաբոյս գոլով մանուկ, և ուշիմ ՚ի վարժս կրթութեան հռետորական ուսմոն և փիլիսոփայական արուեստից պարա_ պեալ . զտիս տղայութեան անցուցանէր առ հան_ ճարեղս . բանզի գոյր յայնժամ այսպիսի ուսմանց դպրոցք յաշխարհիս Հայոց, Յունաց և Ասորոց ճարտարաց ։ Յաղագս որոյ զիմաստասիրական ա_ նուանն կոչմամբ և արդեամբ զարդարել ամենայն առաքինութեամբ երթայր այնուհետև եռանդ_ նոտ բնութեամբն և ՚ի շարժմանէ հոգւոյն առ մեծ ճգնաւորն և անուանի վարդապետն Գըր_ թենաւորն կոչեցեալ ,, ։

Սյս քրթենաւորն կոչեցեալ Թէոդորոս անուն վարդապետ գտանէր յայնժամ կարգեալ վանահայր մեծանձանցն վանաց սրբուհւոյ Աստու_ ածածնի՝ որ յոտին Արագած լերինն ըստ Մէ_ քայէլի չամչեան Բ հատոր, համար 361 ։ Սյս մե_ նաստան իցէ թերևս վանքն Հառիճոյ անուանեալ յանուն սուրբ Աստուածածնի ՚ի հիւսիսոյ կող_

մանէ յիշատակեալ լերին, զորմէ յէ հտ։

126, Եւ ահա այսօրինակ վաստակ սրբոց Թարգմանչացն մերոց պայծառացոյց զգրական լուսաւորութիւն յուսումնարանի աստ Կաթուղիկէ մայր եկեղեցւոյ Հայաստանեայց և յայլ նահանգս և գաւառս, 'ի Սիս և յԱղուանս՝ յորս ծաղկեալ զմանկունս և կարգեալ ուսուցիչս զարգարեցին զմարդիկ լուսաւորութեամբք աստուածային պատգամացն և գիտութեամբք վարդապետական և արտաքին մատենից. և այնպէս զարգացեալ աճեցաւ իմաստ բանին առ ամենեսեան առաւելապէս 'ի պահպանութիւն քրիստոնէական հաւատոյ։

Եւ թէպէտ զկնի փոխադրութեան հայրապետական Աթոռոյն 'ի Դուին և յԱնին Շիրակայ հանդերձ աշխարհական իշխանութեամբն դադարեալ վարժումն գրական լուսաւորութեան 'ի սոյն յայսմիկ տեղւոջ 'ի ժամանակս շինութեան նորա բազմութեամբ միաբանելոցն 'ի նմին, այլ նսեմ ըստ զօրութեանն. քանզի ընդ իշխանութեանցն փոխադրեցան և մեծամեծ անձինք գիտնականք յայլ և այլ սահմանս աշխարհիս Հայոց՝ 'ի Շիրակ, 'ի Բագրեւանդ և 'ի Տարօն և յայլս. և մնաց այնպէս ուսումնարանն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Հայաստանեայց 'ի տարաբախտ վիճակի մինչև ցանդրէն նորոգութիւն այսմիկ հայրապետական Աթոռոյ աստ 'ի Վաղարշապատ քաղաք առ Կիրակոս կաթուղիկոսիւ յամի 1441. այլ զկնի այնր վերստին սկսաւ ուսումնարանն վարդապետութեան աստ 'ի սուրբ Էջմիածին. և առաւել ևս 'ի ժամանակի անդ Մովսէս կաթուղիկոսի սիւնեցւոյ՝ որ յետ բարեկարգելոյ զամենայն շէնս և զբարեկարգութիւնս մենաստանին վայելչապէս, հոգ տարեալ կառոյց և ուսումնարան 'ի սուրբ ուխտն Յովհաննավանք, ուր ժողո-

մեալ զմանկունս՝ կացոյց և վարժապետ նոցա ըզ-
Մելքիսեդեթ վարդապետ՝ որ յայնմ ժամանակի ե-
կեալ էր 'ի Լիմ անապատէ յԱթոռ այսր, առ որ
յարեցան և ոմանք յերկրասարդ վարդապետաց
Աթոռոյն, և որ ըստ օրէ զարգացեալ յուսումն
գիտութեան ծաղկեցան և եղեն ականաւոր ան-
ձինք՝ զորմէ ականատեսն Առաքել վարդապետ
Դաւրիժեցի. 'ի Իդ գլուխ, համար թղթոց 301. „
Այլ և հոգելից սուրբ վարդապետս տէր Մովսէս
կարգեաց զդպրատուն 'ի մեծափառ սուրբ ուխտն
Յովհաննավանք՝ ուր ժողովեաց զմանկունս յոլովս,
և զամենեցուն զծախսն ինքն հոգայր, և ման-
կունքն անզբաղ և անխափան ուսանէին զեկեղե-
ցական ուսումն, և զգիրս Աստուածաշունչս և
զիմաստասիրականս՝ որք եղեն ամենեքեան արք պի-
տանիք և օգտակարք աշխարհի, վարդապետք, ե-
պիսկոպոսք և աբեղայք և երիցունք և այլն: Եւս
անդ 'ի գլուխ ԻԹ, համար թղթոց 390. „ Այսու-
աղագաւ և Մելքիսեդեթ վարդապետս ելեալ 'ի
Լիմայ անապատէն եկն 'ի բարձրագահ Աթոռն 'ի
սուրբ Էջմիածին ... և հանդիպեցաւ տեսութեան
Մովսէսի կաթուղիկոսին, և նորին աշակերտացն՝
յորոց գալստեանն ուրախութիւն անպատում եղև
ամենեցուն „: Այս Մելքիսեդեթ վարժապետ վար-
դապետ 'ի Վժան գեղջէ երկրին Երևանայ էր
աշակերտ Ներսեսի մոկացւոյ, առաւել աղօթիւք
և ջանիւք քան թէ դասատուութեամբ ուսաւ մա-
կացութիւնն և ուսոյց բազում աշակերտաց
զսահմանաց գիրսն, զՊորփիւրին, զստորոգու-
թեանցն, զՊերիարմենիասն և զայլսն ըստ կարգի
յուսումնարանի անդ Յովհաննավանաց և սրբոյ
Աթոռոյ Էջմիածնի:

Զկնի վախճանի յիշեալ Մելքիսեդեթ վար-
ժապետ վարդապետի 'ի վանսն անդ Անանիա առա-
քելոյ՝ որ յերևան, յամի 1631, եկաց դասատու յա-

ուշադրեմ աշակերտն նորա Սիմէոն վարդապետ
Ջուղայեցի, յետոյ որոյ Յովհաննէս եպիսկոպոս
Թմօքեանց կամ սահակեանց կարբեցի՝ զոր վերա-
կոչեաց յանապատէն Մայր Աջմիածին Փիլիպպոս
կաթուղիկոս հաղբակեցի, ըստ պատմելոյ Զաքա-
րիա սարկաւագի Յօհանավանից. և այլք յոլովք
զկնի միմեանց։

127, Այս ուսումնարան ի Յօհանավանք ոչ
տևեաց կարի ընդերկար. քանզի որպէս կարծի՝
ի պատճառս երբեմն երբեմն հալածանաց և գե-
րութեանց և ապստամբութեանց փոխադրեցաւ
անդրէն յայս պատրիարքական մենաստան. և յօրէ
անտի շարունակեցաւ աստ ուսումն վարդապե-
տութեան ի ժառանգաւորս Աթոռոյս. բայց չէ-
նուած ուսումնարանին՝ թէ յոր կողմ մենաստա-
նիս և որպիսի՛ շինուածովք՝ չէ՛ յայտ. այլ որպէս
երևի՝ լինէր այնպիսի վարժումն, ուսումն ի մի-
ում ի մեծամեծ սենեկացն այսր մենաստանի մին-
չև ցժամանակս Սիմէոն կաթուղիկոսի երևան-
ցւոյ՝ որ հոգ տարեալ և այնմ՝ ետ կառուցանել
ի հիւսիսակողմն Հաճարին ի միջոցս երկուց պա-
րսպացն յարևելս անդ մոմատան՝ բաժանեալ ի
նմանէ հաստատուն որմով, և ժողովեալ անդր ըզ-
մանկունս ժառանգաւորս Հաճարին՝ կարգեաց նո-
ցա ուսուցիչս. ուրանօր շարունակեցաւ ուսումն
եկեղեցական ընթերցուածոց և երաժշտութեց,
և ինչ ինչ արտաքին դասատւութեց՝ քերականու-
թեան, ճարտասանութեան և տրամաբանութեան։
Լինէր յայնժամ և ուսումն բարձրագոյն վար-
դապետական գիտութեանց՝ այն է, դրական Ա-
տուածաբանութեան, և մեկնութեան սուրբ գը-
րոց։ Յայսմիկ ուսման վարդապետաց և սարկա-
ւագաց վարժապետ յատկացեալ էր ականաւոր
մեծանուն եպիսկոպոսն Պետրոս բերթումեանց
կամ Աղամալեանց. Սահակ եպիսկոպոսն գեղա-

մացի՝ որ և քաղցրանուագ երաժիշտ։ Իսկ ՚ի միջումն ուսումնարանի յիշին կին վարժապետք. Յօհան եպիսկոպոս, Ստեփաննոս եպիսկոպոս, Ղազար վարդապետ Աստապատցի՝ որ յարձանագրութիւնս չիրմաց մենաստանին սրբուհւոյն Հռիփսիմեայ, Թադէոս եպիսկոպոս ատենադպիր Ղուկաս կաթուղիկոսի կարնեցւոյ, Նիկողայոս և Մարդար եպիսկոպոսունք և այլք ոմանք յեպիսկոպոսաց և ՚ի վարդապետաց՝ որք նշանակին յօրագրութեան մեծի Աթոռոյս։

128, Այս վերոյիշեալ տեղի ուսումնարանին տևեաց մինչև ՚ի ժամանակս կաթուղիկոսութեան Դաւթի Էնէկեթեցւոյ. այլ զկնի այնր լքեալ զայն տեղի վասն գիճութեան և խախուտ գոլոյ շինուածոցն՝ պատրաստեցին տեղի ուսման մանկանցն զվերնայարկն սրահի դրանն Տրդատայ՝ որ յարևմտակողմն մեծի Տաճարին. Այս զկնի քանի ինչ ամաց՝ այն է, յամի 1813 ՚ի կաթուղիկոսութե Եփրեմայ նոր ՚ի նորոյ կառուցին ուսումնարան բազմասենեակ յարևելս Տաճարին սրբոյ ՚ի վերայ սենեկացն՝ որք առ ներքին պարսպաւ ՚ի տեղւոջ կաթուղիկոսարանին Փիլիպպոսի հաղբակեցւոյ, ուր շարունակեաց ուսումն ըստ առաջին կարգին մինչև ցամ տեառն 1837, ցնորոգ կարգադրութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ հաստատութեամբ խնկական ստորագրութեան Ն, Ա, Մ, ՚ի 11, էն մարտի 1836, ամի։ Իսկ այժմ ըստ ներկայ դրութեան միջոցաց մեծի Աթոռոյս ուսանին ՚ի նոյն ուսումնարանի աշակերտք ժառանգաւորք եկեղեցւոյ ՚ի Հայ և ՚ի Ռուս լեզուս՝ ըստ յատկացեալ ժամուցն պատշաճ աւուրց և ըստ բաժանմանց ուսանելի առարկայիցն։

Հատուած

Ե.

# Կալուածք տան կաթուղիկոսարանի՝ յորոց ելանէր և ելանէ հարկաւոր պիտոյք ծախուց նորա և հոգևորական միաբանելոցն 'ի նմին։

129, 'Ի սկզբան անդ լուսաւորութեան բովանդակ ազգի հայոց առ ժամանակօք մեծին Տրդատայ խոսրովեան, և յետ կառուցանելոյ զմեծ Տաճար Կաթուղիկէ Էջմիածին, և առ նմին ըղտուն կաթուղիկոսարանի, անտարակոյս եմք թէ պարգևեցան 'ի պէտս ծախուց կառավարութեան եկեղեցւոյն և տան կաթուղիկոսարանին բաւական կալուածք գիւղից և գերդաստանաց 'ի մեծէն Տրդատայ արքայէ և 'ի նախարարացն իսկ. և թէպէտ չգտանի ուրուք ժողովեալ ծանօթութիւն ինչ առ այս նպատակ 'ի նախնեաց, բայց մասնաւորապէս գտեալքն 'ի պատմաբանս և 'ի դիւանական թուղթս աշխարհական իշխանաց և դատաւորաց, բաւականասցին մեզ առ այժմ ըստ կէտագայ տեղեկութեանցս։

'Ի կենդանութեան իսկ սրբոյն Գրիգորի լուսաւորչին պարգևեցաւ նմա յԱրքայէն Տրդատայ 'ի սեպհական կալուած Արամօնս գիւղ 'ի Կոտայս գաւառի՝ որոյ և յետկար վճռանն յԱրքայէ պահիւր 'ի տան անդ կաթուղիկոսական մինչև ցժամանակս Տ̃ր Յովհաննու կաթուղիկոսի, զորմէ նա ինքն պատմէ յայս ձև օրինակի։

„Իսկ զկնի սորա (Յովհաննու Օձնեցւոյ) կացուցանեն յԱթոռ հայրապետութեան զԴաւիթ ի գեղջէն Արամոնից՝ որ ի Կոտայից գաւառի։ Այս գիւղ սեպհական էր տան կաթուղիկոսարանի՝ նախ քան զշարժարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ, նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընծեռեալ, որոյ և յետկար վճռան պահի մինչև ցայսօր ժամանակի„։

Պարգևեալ էր թերևս յարքայէն Տրդատայ և Թիլն աւան՝ որ ի գաւառին Եկեղեաց, ի կալուած սրբոյն Գրիգորի, կամ Արիստակեսայ որդւոյ նորին՝ զորմէ Բուզանդ. դպրութիւն գ, գլուխ բ։ „Եւ եդին զնա (զԱրիստակէս) յԵկեղեաց գաւառի ի Թիլն աւանի ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ„ Եւ որ և Խորենացին. հատոր բ, գլուխ 88։ „Իսկ զմարմին սրբոյն (Արիստակէսայ) բարձեալ աշակերտաց նորին, բերին ի գաւառն Եկեղեաց հանգուցանել ի Թիլ իւրում աւանի„։

Նաև այսոցիկ և բազում կալուածք էին տան կաթուղիկոսարանին՝ զորոց միով բանիւ բացայայտ առնէ Խորենացին. քանզի վասն արքայ պարսից ըստ անիրաւ բողոքանաց նախարարացն զԱրտաշիր՝ յետ ունելոյ անդէն ի աքսորս զնա ինքն զԱրտաշիր արքայ հայոց, և զամենայն զտուն նորա գրաւելոյ յարքունիս, հրամայէ նոյնպէս և վասն սրբոյն Սահակայ պարթևի։ „Նոյնպէս և զմեծն Սահակ և զտունն կաթուղիկոսական ունել յարքունիս. հատոր գ, գլուխ, 64„։ Եւս ի նոյն հատոր ի յաջորդ գլուխն, յասելն. „Եւ զմեծն Սահակ արձակեալ՝ թողու ի նա գեօղս սակաւս ի նորին տանէ, զի նստցի միայն յինքեան. և այլն„։

130, Ի վախճան ութերորդ դարու ոստիկանն Խուզիմա ընչաքաղցութեամբ կամէր յին-

քըն կործել զեկեղեցածս տան կաթուղիկոսարա-
նին, այլ հայրապետին Յովսեփայ ոչինչ տուեալ
տեղի ագահութեան նորա ըմբռնի 'ի նմանէ և
դնի 'ի բանտի. և հուսկ ապա տարապարտ զըկա-
նօք յինքն կորզէ ոստիկանն զԱրտաշատ և Եղ·
զորմէ Զ̃րդ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ.
,,Նա տեսեալ (Յուսուֆ) զգեղեցկութիւն մեծա-
մեծ դաստակերտացն տան կաթուղիկոսարանին
զԱրտաշատն և զԿաւակերտն, և զՀոռոմոց մարգ
հանդերձ նոցունց ագարակօք, և դաւաճանեալ
'ի չար ցանկութենէն և 'ի դիւամոլ ագահու-
թենէն ուժգին իմն դժուարութեամբ յինքն 'ի
հայրապետէն Յովսեփայ խնդրէր տալ նմա զմեծ
դաստակերտս իբր 'ի պատճառս գնոց արծաթոյ։
Իսկ մեծի առնն Աստուծոյ զմահ ընդ ինքեանս
խառնեալ՝ ամենևին ոչ տայր տեղի չար և ապիրատ
բանից նորա։ Իսկ ոստիկանն առ մղձկեալ սրտին
դնէ 'ի բանտի զայրն Աստուծոյ և Ն․ . . . . Նա այս-
պէս տարապարտ զըկեալ գտանէր (Յովսէփ կաթո-
ղիկոս) յԱրտաշատէն յայնմանէ և առ յապա,,։

Պատմաբան կաթուղիկոսն Յովհաննէս Զ̃րդ
'ի ժամանակի հայրապետութեան իւրոյ գնէ ըզ-
Նիւրական գիւղ յստորոտի անդ Արագածու և
կառուցանէ 'ի նմա շինուածս և զեկեղեցի իսկ՝
զորմէ գրէ ինքն յիւրում պատմութեան. ,,Նա
դարձեալ չու յուղի անկեալ չոգայք մինչև 'ի ձե-
ռակերտ ամրոցին իմ Նիւրական՝ զոր ստացեալն
էր իմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ
իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամ-
բըք։ . . . . . . ,,էին ոմանք և հեթանոսք (Տաճկաստանեայք)
'ի բնակչաց տեղւոյն (Նիւրականոյ) հողագործ մշա-
կութեան պարապեալ, և հարկս մեզ հարկանէին.
և իբրև այս եղև՝ և այլն,,։

131. Մյուսքիւք կալուածովք և այլ կամա-
ւոր նուիրանօք հաւատացելոցն կառավարէր տան

կաթուղիկոսարանին (որ և յայլ և այլ տեղիս ծանուցեցաւ) և հոգևորական նման պատկանեալ միաբանութիւնն առ յԱթոռ Էջմիածնի 'ի Վաղարշապատ քաղաքի · քանզի զկնի փոխադրութե կաթուղիկոսական Աթոռոյն 'ի Դուին յամի 452 ․ պէտք ծախուց կառավարութեան միաբանական ուխտի հոգևորականացն հաստատելոց առաւել անպակաս լինէր 'ի մերձակայ գաւառացն հոգևոր և կամաւոր նուիրանօք ժողովրդոցն, և մանաւանդ 'ի կալուածոց սեպհական գաւառաց և գեօղից իսկ նախարարացն Հայոց՝ ջերմեռանդօրէն պաշտպան կացելոցն այսմ ուխտի · զորմէ ընդարձակ գրէ Ղազար Փարպեցի 'ի բողոքական թուղթս իւր առ Վահան Մամիկոնեան՝ այս օրինակ ։ ,, Բայց սիրէին երեքեան եղբարք զվանսն սրբոյ Կաթուղիկէի պտղովքն և ամենայն պիտոյիւք, որոց իւրաքանչիւր ուրուք տուրն յայտնի էր, և գրով մնաց 'ի տեղւոջն՝ որք արդարև քո տեառն կամացդ դոքա երևեցան կամակատարք · վասն զի յորէ յորմէ հետէ դու տէ՛ր ըստ քո անարգամեծար խնամոցդ յանձնեցեր զիս քո ընտանեաց, դոքա երևեցան յիս հրամանակատարք բանի քում՝ ուրոյն ըստ կամի զպտղատրութիւն տեղւոյն հատուցանելով · զի տրտում եմ անմխիթար մինչև 'ի մահ՝ որ նման գայլոց յարձակեցան յարարս իմ, և գիշատեցին յանխնայ, տեսեալ զիս թէ մերժեցայ յաչաց քոց ։ Նա արդ՝ իմով ընչիւք շրջին պղծնեալք ծաղր առնելով զիս · այլ որ ինչ 'ի տեղւոջդ մնաց իմ, ուրախ եմ և ցնծամ՝ զի 'ի սուրբ և 'ի հոգևոր տեղւոջ մնաց ․․․ ։ Սակայն ես նման մեղուի բերելով յամենայն կողմանց (շտեմարս ծաղկեցտոյ) բաւական լինէի և ծախողացն 'ի մթերից տեղւոյն (այսր Ընծայարանի), բայց դու տէ՛ր՝ այր երկարայուշ ես և անմոռաց · մանաւանդ թէ՝ ըստ 'ի քեզ հոգասիրութեանդ · քանզի յոլով նորա ար_

բանեկեալ էր զպէտս տեղւոյդ. հարցցի՝ թէ կայ
ուրեք, և ասասցի. այլ կարգեալքն ինձ ըստ տա_
րւոյ 'ի տեառն Ներսէսէ և Հրահատայ 'ի պէտս
դարմանոյ, և հանդերձոյ և ձիոյ՝ յայտնի է. նոյն_
պէս և 'ի քո տեառն յեղեօրորդեացդ, և այն իսկ
շատ լինէր ինձ և բաւական. այլ երբեք և յաւե_
լորդացն 'ի պէտս տեղւոյդ ծախիւր յիմոցն. բայց
բերեալքն իմ յԱղուանից և 'ի Վրաց և Սիւնեաց
և յԱրշարունեաց. և որ 'ի դոցունց իսկ 'ի քո
տեառն եղեօրորդեացդ, ամենայն իւրաքանչիւր
ուրուք տուրն որոշողութեամբ մնաց 'ի տեղւոջն
('ի Ընտառանի Կամուրջին Էնէղէցւոց) գրով, և զիս հա_
նին մերկ և թշնամանօք յամենայն արարելոց՝ զոր
'ի մանկութենէ արարեալ էի. քանզի յորէ յորմէ
հետէ տարար դու տէ'ր զիս 'ի տեղիդ, մինչև յօր
հալածման իմոյ 'ի մօրից տեղւոյդ և կամ յերա_
խայրեաց մինչև ցդրամ մի յանձն իմ ոչ էր յա_
րեալ. և յիւրս իմոց պիտոյից ումեք ոչ էր տուեալ
և գիտեն զայս բնակեալքն ընդ իս, այլ առաւելա_
գոյն այր մի Սկիթ անուն՝ որ եկեալ ի տեղիդ 'ի
Դարդմանայ վանաց 'ի նմին աւուր՝ յորում հիմն
արկաւ տեղւոյդ, և մինչև ցգնալն իմ 'ի տեղւոջդ
էր, և այլն,,:

132, Այլ առաւել քան զվերոյիշեալսդ ըն_
թեռնուլ արժան է զբան ուռհայեցւոյն Մատ_
թէոսի զկալուածոց տան կաթուղիկոսարանին
Շիրակայ. ,, Նա այսպիսի օրինակաւ տուգ ու_
նէր տէր Խաչիկ (կաթողիկոս) 'ի սրտի իւրում, և
յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տա_
նըն հայոց, նա և զխափանել Աթոռոյ թագաւո_
րութեանն յազգէն Բագրատունեաց, և գալ ծա_
ռայել... և աղքատութեամբ տիրապէս ելոյ յա_
թոռոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին. վասն զի
յորժամ էր տէր Պետրոս յԱթոռ հայրապետու_
թեանն և 'ի հայաստան աշխարհին՝ ունէր կաղ_

մութիւն Հայրենեաց՝ տուեալ 'ի թագաւորացն Հայոց Ճ. (հէնդ հարէ-ր) գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր. նոյնպէս և եպիսկոպոսըս ԵՃ (հէնդ հարէ-ր) փառաւորք, և գաւառապետըս 'ի վերայ ՏՃ. (էօրէն հարէ-ր) թէմի Ժը. եպիսկոպոսս և Ջ վարդապետս. 'ի տանն Հայրապետին անպակաս լինէր և Կ (60) երէց 'ի կրօնաւորաց, և յաշխարհականաց ԵՃ: Նա չէր նուաստ Աթոռ Հայրապետութեանն քան զթագաւորութեան Հայոց. և նաև զարդարանք եկեղեցեացն և տանն Հայրապետութեան բազում և անհամար, և հըրաշալի մեծութեամբ լցեալ՝ զորս յառաջին թագաւորաց տուեալ հաստատութեամբ՝ առաջին Հայրապետացն՝ որ գայր հասանէր մինչև 'ի տէր Պետրոս (...) և առ նովաւ խափանել լուծաւ, ևն ,, : Նա այս յարէ Արիստակէս Լաստիվերտցի 'ի Ժդ. գլուխ. ,, Ապա 'ի զերծ եկեալ (յանոց) արձակեցին զնա (...) առանց հարկի՝ տուեալ նմա գրով և ոսկի մատանեաւ զոր 'ի հայս՝ իւրեանց տեղիք էին, և երկու վանս 'ի Տարօնոյ ,, :

Ապաքէն այսու դրութեամբ կառավարէր Մենաստանն կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի, և կաթուղիկոսարանն իսկ՝ թէ 'ի Վաղարշապատ, թէ 'ի Դուին և յԱնին Ը իրակայ. իսկ Մենաստանն Ը առանձին խնամարկութեամբ քորեպիսկոպոսացն որ յանուն Արարատեան նահանգի յիշատակելոցն 'ի վերոյ 'ի ծանօթութե անդ-յերես 22, շատացաւ արդեամբք առաջնորդական հասութից 'ի ժողովրդոց վիճակին, որքան տևեաց եպիսկոպոսութիւնն Արարատեան թէմիյանուն Կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի:

133, Հուսկ ապա անդրէն 'ի նորոգիլ ըստ առաջին վայելչութեանն Մենաստանիս այսորիկ՝ փոխադրելով 'ի նմա պատրիարգական աթոռոյն,

համաձայն հաւանութեամբ ազգին առ Կիրակոս կաթուղիկոսի յամի 1441, աղբերացան վերստին պիտոյք ծախուց կառավարութեանն 'ի կամաւոր նուիրանաց ժողովրդոց ազգին՝ հեռաւորաց և մերձաւորաց, յորոց ստանային կաթուղիկոսունք զայն նուէր արդեանց միջնորդութեամբ վարդապետաց իւրեանց՝ առաքելոց առ ժողովուրդսն հանդերձ սրբազնագործ մեռոնաւն 'ի վերաքննութիւն հոգևորական գործոց, եկեղեցեաց և նոցին ժողովրդոց՝ որպէս ցուցանեն պատմիչք և կոնդակք կաթուղիկոսաց:

134, 'Ի վերայ այսր արդեանց նուիրանաց ժողովրդեանն յաւելին կաթուղիկոսունք և զար դիւնս անշարժ կալուածոց գնելով զգեօղս, տնկելով զայգիս, ստանալով զջրաղացս, զքրըն-ձահանս և զայլս այսպիսիս՝ որովք առաւել դիւրացաւ կառավարութիւն այսր պատրիարգական մենաստանի, Տաճարին սրբոյ և ուխտի հոգևորականացն 'ի նմին:

Տասներորդ Գրիգոր կաթուղիկոս Ջալալբէկեանց մակուեցի գնէ × զվէց դանկ մուլքն այսր Ս. Աղարշապատ գեղջս 'ի սեպհականութիւն Աթոռոյ Էջմիածնի 'ի Մէյիդ բէկ կոչեցեալ այլազգւոյ՝ որ յայնժամ տիրէր գեղջս այսորիկ. և առնու հաստատուն գիր դատաւորական՝ ստորագրութեամբ և կնքով Զամանադին անուն ղազիյին Երևանայ 'ի թուին տաճկաց 832 :
Զէնի աղա 'ի նոյն թուականի ոմանք յազգականաց յիշեալ Մէյիդ բէկին երկիցս վէճ յարուցա

× Ըստ հաստատեալ կանոնի կողմանցս՝ իւրաքանչիւր գիւղօրէից առհման վեց բաժին որոշութեամբ յայտնանոց· ստորև ըստ այսմ բաժանման վաճառեն և գնեն զառհման գիւղօրէից, զոր այլազգիքն մուլքն՝ մի դանկ, կամ ամբողջ առհմն, այսինքն վեց դանկ անուանեն:

նեն ընդ կաթուղիկոսին վասն գեղջն՝ զորս և բաւականացուցանէ կաթուղիկոսն դրամովք, և ՚ի նոյունց եւս առնու զգիր հաստատութեան ձեռամբ նոյն դատաւորին Երևանայ: Այս թուղթ նշանակին սահմանք անդաստանաց այսր գեղջ. յարևելից՝ ղօուուղն (խոջաէշէն քէնտարչան՝ որ նոյնպէս կոչուած է Ա.նտոյս), ՚ի հիւսիսոյ՝ քարաքիթ և Սուլլաղուրսուն գիւղն՝ այն է, ցատորոան խոնարհ առապարին, որ այսր քան զառապարն Օշականայ՝ այնպէս, զի և փոքրիկ ծովակն որ մերձ առ Սուլլաղուրսուն գիւղ՝ յարևելից նր, անկանի ՚ի բաժին անդաստանաց Վաղարշապատու, յարևմտից՝ գետն Քասաղ. իսկ ՚ի հարաւոյ՝ փոքր բլրակն որ ՚ի ռամկաց Եքիլթափայ կոչի:

Օկնի այնր ՚ի թուականին տաճկաց 835, յառնէ ոմն այլազգի Ռուստամ անուն որդի Ամիրըշքեանի և թոռն ամիր Սմբատայ և տիրէ գեղջս Վաղարշապատու բնութեամբ. դարձեալ նոյն Գրիգոր կաթուղիկոս գնէ ՚ի նմանէ դրամովք զայս գիւղ և զմեց գիւղօրայս եւս ընդ նոմին՝ զԱշտարակ, զՆաթոփնճ, զԿորագուիթ, զԱղաւնաւան, զՓիրաշլու և զՍօղնի, և տայ հաստատել զսեփհականութիւնն այնց յանուն Աթոռոյ Էջմիածնի դատաւորական գրով ՚ի նոյն թուին տաճկաց 835:

Իսկ զկնի անցանելոյ ամաց բազմաց և անդրէն աւերութեանց երկրիս Արարատոյ պէսպէս փոփոխութեամբք իշխանութեանն Երևանայ, ՚ի ժամանակի անդ մեծին Շահապասայ արքայի պարսից՝ կարգի իշխող Երևանայ Ամիրգիւնէ խանն, և տիրէ գեղջս Վաղարշապատու. ուստի վարդապետք Աթոռոյ Էջմիածնի դիմեն առ նա և խնդրեն զայս գիւղ՝ ցուցանելով նմա և զթուղթսըն դատաւորական՝ զհոգացեալսն ՚ի Գրիգոր կաթուղիկոսէ մանկունեցւոյ առ այս նպատակ:

Խանն Ամիրկիւնէ ըստ քաղցր և հայասէր բարուցըն դարձուցանէ զգիւղն անդրէն իշխանութիւն Աթոռոյն տալով և զհաստատուն թուղթ յիւրմէ սաստիւք հանդերձ՝ չլինել ուրուք ձեռնամուխ յայն գիւղ ամենևին, ՚ի թուին տաճկաց 1022 ։ յամի 1612 ։

Իսկ յետ վախճանի Ամիրկիւնէ խանին որդի նորա՝ որ յաջորդեաց իշխանութեան հօրն, տիրեաց գեղջս. և ինքն ստանայր զարդիւնսն. և յետ նորա այլք ոմանք ՚ի սերնդոց առաջին տեարց գեղջս՝ մինչև ցժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսի հաղբակեցւոյ. որոյ հոգ յանձին կալեալ՝ խնդրամատոյց լինի առ Շահապաս Բ.րդ, արքայ պարսից, և իրաւաբան վկայութեամբ իշխողին Երևանայ Խոսրով անուանելոյ, անդրէն սեպհականէ ՚ի կալուած Աթոռոյն՝ հրովարտակաւ նորին Շահապասայ՝ որ ՚ի թուին տաճկաց 1060 ։ (1650) ։

՚Ի ժամանակէ անտի ցՅակոբ կաթուղիկոս ջուղայեցի առանց վիճոյ ուրուք տիրեաց գեղջս այսորիկ Աթոռն Էջմիածնի. և թէպէտ ոմանք այլազգիք ՚ի սերնդոց առաջնոցն և այլք յարուցին զվէճս ընդ Յակոբ կաթուղիկոս ջուղայեցի, և ընդ Սիմէոն կաթուղիկոս երևանցի, այլ ոչինչ զօրելոյն զկնի, եղեն և պատճառ առաւել հաստատուն սեպհականութեան այնր՝ յանուն Աթոռոյ Էջմիածնի ըստ ամենայն պարագայից. որոյ սեպհականութեանն վկայագիրք, վճռագիրք և հրովարտակք արքունի գտանին ՚ի դիւանատան մեծի Աթոռոյս ։

## Օշական գիւղ.

135, Այս գեղջ հինգ դանգ՝ այն է, զհինգերորդ մասն ՚ի վեցից գնէ դրամովք Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի յինն նուագս յայլևայլ տեարց գեղջն ՚ի 1050 (1640) թուականէն տաճ-

կաց ց 1055 թուին՝ ինն հատոր հաստատեալ գրու-
թեամբք · իսկ զմնացեալ վեցերորդ մասն գնէ Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի հանդերձ վեց դանկ մլքովն անդաստանի Սանկանոց կոչեցեալ աւեր եկեղեցւոյն՝ մերձ եղելոյն յՕշական յարեւմտից հիւսիսոյ, որոց վասն գոն հաստատուն գրուածք դատաստանական ՚ի թուին տաճկաց 1078 : (1667) :

Զկնի այսր այլազգիք ոմանք չորիցս անգամ վէճ յարուցանեն, այլ նոյն Յակոբ կաթուղիկոս վասն մասնաւոր բաժանորդութեան նոցա ՚ի մասին գեղջս, տուեալ դրամ՝ առնու ՚ի նոցունց եւս գիր ապահովութեան :

Սահմանեզերք անդաստանաց գեղջս այսորիկ նշանակին ՚ի մեծ հին կոնդակաձեւ վկայագրին եղելոյ ՚ի թուին տաճկաց 894 · ՚ի հարաւակողմն՝ աւերակն ղարաքիլիսէ կոչեցեալ՝ որ մօտ ՚ի Հաճիլար գիւղ, յարեւմտից՝ գետակն շաղվերթուայն է, փարպւոյ · ՚ի հիւսիսոյ՝ թաքեայ կոչեցեալ գիւղն եւ ճանապարհն կարբւոյ, եւ առապարն :

՚Ի թուականին հայոց ռճծա · յամի 1702 · բովանդակ բնակիչք գեղջս Օշականայ անիրաւապահանջողութեամբ իշողաց երկրիս անկեալ ՚ի ներքոյ պարտուց՝ խնդրեն աղերսանօք յԱստուածատուր կաթուղիկոսէ համատանցւոյ հարիւր յիսուն թուման դրամ ՚ի վճարել զպարտս իւրեանց · եւ խոստանան հատուցանել այնուհետեւ յամենայն եկամտից սերմանցն անդաստանաց իւրեանց ՚ի տասնէն՝ զերկուս · զի յառաջն վճարէին ՚ի տասնէն՝ զմի · առնուն զդրամն, եւ տան թուղթ այնու պայմանաւն՝ հաստատեալ ստորագրութբ դատաւորացն երեւանայ ՚ի թուին տաճկաց 1134, յամի 1721 : Նորոգիւք իրաւամբք զայս գիւղ եւս սեպհականէ ինքեան ՚ի կալուած Աթոռն Էջմիածնի, եւ ունի ցարդ շարունակաբար :

## Սատարա գիւղ.

136, Սատարայ անուանեալ գեղջս այսո-րիկ՝ որ յատորոտս Արագած լերին յարևմտից նո-րա, զերկու և կէս դանկն գնէ Խարխան անուն ոմն հայազգի ոսկանեան ՚ի բնակչաց գեղջս՝ ՚ի Մուհամմատ աղայէ որդւոյ մուղատտամ բատր-խանի ՚ի 1066 թուին տաճկաց, և ՚ի յաջորդ ամին՝ այն է, յամի 1656. ՚ի ժամանակի անդ Յակոբ կա-թուղիկոսի Ջուղայեցւոյ ընծայէ զայն բաժինն զգնեալն յիւրմէ յանուն Ս. Թոռոյ Էջմիածնի հոգեկան նուէր, և տայ հաստատել զայն ՚ի վերայ նոյն առաջին պայմանագրութեանն ստորագրու͞ե և կնքով շեխիսլամին ՚ի թուին տաճկաց 1067։

Զկնի ութն ամաց Ռուզաղուլի ոմն այլազգի որդի ալփաւուռ իբրահիմ խալիֆայի վէճ յա-րուցանէ ՚ի մասին այսր բաժնի՝ թէ իմ է և այլն. ընդ նմա գնացեալ ՚ի դատարան տաճկաց՝ տան նմա զսակաւ ինչ դրամս յՍ. Թոռոյն, և առնուն ՚ի նմա-նէ դատաւորական գիր ապահովութեան ՚ի թուին տաճկաց 1075։

Աղէքսանդր կաթուղիկոս Ջուղայեցի ՚ի 1121 թուին տաճկաց, յամի 1709՝ գնէ զերիր մասն միոյ դանկի գեղջս ՚ի Մհեր անուն հայազգւոյ ումեմ-նէ ոսկանեան երևանցւոյ հաստատ պայմանագրով։ ՚ի ռճկգ թուականին հայոց՝ յամի 1714, թոռունք յիշեալ Մհերի, և մուղաբարի որդիք Պէկլարն և Մկրտիչն ընկալնուն յՍ. Թոռոյ զդրամ, և ա-նուամբ գրաւի վաճառեն Ս. Թոռոյն զկէս դանկ մուլք գեղջս. և այնու մնայ այն՝ սեպհական կա-լուած Ս. Թոռոյն։

Սոյն յիշեալ երկուքին եղբարք Պէկլար և Մկրտիչ ՚ի ռճկը թուականին հայոց, և տաճկաց 1132. յամի 1719. վաճառեն զմի դանկ մուլք գեղջս Ս. Թոռոյն՝ գիտութեամբ խօջայ Յակոբջանին ՚ի ժամանակի անդ Աստուածատուր կաթուղիկոսի

համատանցուոյ · իսկ Նա ինքն Աստուածատուր կաթուղիկոս և զմնացեալ բաժինսն գնեալ դը-րամովք սեպհականէ յանուն Աթոռոյն ։ Այսու-օրինակաւ զբովանդակ եկամուտս արդեանց վեց դանկ մլքին գեղջս ստանայ Աթոռն Էջմիածնի , և ունի ցարդ հաստատուն վկայագրովք և պայ-մանագրովք առաջին տեարց այսր գեղջ · որոյ և անդաստանացն սահմանեզերք նշանակին յայն գը-րուածսն ըստ այսմ · 'ի մի կողմն ղարախաչ անուա-նեալ տեղին · 'ի միւս կողմն՝ փարախն ոչխարաց · և 'ի միւսն՝ ճանապարհն Ապարանու (Նգայ) · իսկ 'ի չորրորդ կողմն՝ ղըղըլօրան կոչեցեալն ։

## Նըղիվարդ գիւղ ·

137 , Այսր գեղջ զչորս և կէս դանկն պարոն Յակոբջանն սեթեան է այլոց արդիւնաբեր տե-ղեաց ընծայէ Աթոռոյ Էջմիածնի հոգենուէր յիշատակ 'ի թուին տաճկաց 1069 · յամի 1658 ։ զայս գիւղ 'ի բազում ժամանակս պարսիկ խանք իշխողք երևանայ բռնացեալ յափշտակեն , և առ ժամանակ մի եւս աւեր մնայ առ 'ի չգոյէ բնակ-չաց ։ Ապա 'ի ժամանակս Սիմէոն կաթուղիկոսին երևանցւոյ՝ այն ինչ իշխողն երևանայ Հիւսէյին ալի խան կամէր նորոգել զայն գիւղ բնակչօք , և իւրացուցանել , Նա ինքն Սիմէոն կաթուղիկոս հաստատուն պայմանագրովն՝ որ 'ի Յակոբջանէն սէթեան , և այլ հաստատուն թղթովք հաճեցու-ցեալ զՀիւսէյին ալի խանն՝ գրաւէ անդրէն ընդ իշխանութեամբ Աթոռոյն զչորս և կէս դանկն 'ի թուին հայոց ռմժէ · յամի 1768 · զոր և ունի ցարդ Աթոռն , և ստանայ զմուտս արդեանցն ։

## Մօղնի գիւղ ·

138 , Այսր գեղջ զվեց դանկն գնէ Գրիգոր կաթուղիկոսն մակուեցի յամիր Ռուստամ այլ-

ազգւոյ որդւոյ ամիրշքեանի ՚ի թուին տաճկաց 835. հաստատուն պայմանագրովք՝ կնքով և ստորագրութեամբ ղազիյից և շեխիսլամաց. և այնպէս սեպհականէ զայս գիւղ յանուն Ա.թոռոյն։

Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի տեսանելով զարիաջան աշխատութե Մարտիրոս վարդապետի՝ առաջնորդի վանաց սրբոյն Գէորգայ զինաւորի՝ որ յայս գիւղ, ՚ի կառուցումն փառացի տաճարի սրբոյն, շնորհէ զայս գիւղ ամենատեսակ եկամտովքն՝ նմին Մարտիրոս վարդապետի յանուն վանացն ՚ի պէտս շինութեան տաճարին և կառավարութեան ուխտի նորին։

Ա էձ յարուցանեն վասն գեղջս Ապողբաղի տաճիկ ոմն որդի ալիտօսսի երեւանցւոյ, և կինն իսկ ապողբաղեցի ՚ի թիւսն տաճկաց 1071։1086. յամսրն 1660, 1675. թէ մեր է այս գիւղ. մինչև բերեն և հրովարտակ յարքայէն պարսից յԷ Շահապասէ, այլ ՚ի քննութեան անդ յԵրևան ՚ի դատարանի ունայնանայ վէճ վերոյիշելոցն, և հաստատի իրաւունքն սեպհականելոյ զայս գիւղ յանուն Ա.թոռոյ դարձեալ՝ առ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսիւ հանդերձ հաստատութեան գրով դատաւորին երեւանայ ՚ի նոյն թիւ 1087։

Իսկ ՚ի թուականին հայոց ռմթ, յամի 1760. Աղէքսանդր վարդապետ վանահայր այսր մենաստանի սրբոյն Գէորգայ գաղտ ՚ի Է, Յակոբ կաթուղիկոսէ շամախեցւոյ տայ զբովանդակ մուլք՝ զեկամուտ գեղջս այսորիկ ցԻբրահիմ աղայն՝ որ էր նազիր ՚ի դրան Հիւսէյին ալի խանին երեւանայ, որպէս զի յամենայն ժամանակի ՚ի հարկաւոր դէպս օգնական և պաշտպան լինիցի նմա. այսու անիրաւ պարգևատուութեամբ յիշեալ վարդապետին ստանայ զարդիւնս այսր գեղջ Իբրահիմ աղայն յութնամեայ ժամանակս՝ մինչև ցը

ումն է թուականն Հայոց, ց1768. Ապա Սիմէոն կա-
թուղիկոս երևանցի իրազգած եղեալ այսմ ա-
նիրաւ յափշտակութեան՝ անդրէն ստանայ ՚ի սեպ-
հականութիւն Աթոռոյն. և յօրէ անտի ցայսր
մնայ այս գիւղ յանվէճ սեպհականութիւն պատ-
րիարգական Աթոռոյ Հայաստանեայց:

139, Յայսոսիկ վերոյնշանակեալ հնգեսին գիւղօրայսն գտանին գերդաստանք հարկատուք. և շունչք կրկին սեռի

| | | |
|---|---|---|
| ՚ի Վաղարշապատ | 381 | արական 933. |
| | | իգական 785. |
| յՕշական | 118 | արական 408. |
| | | իգական 302. |
| ՚ի Մօղնի | .15 | արական .44. |
| | | իգական .48. |
| յԵղիվարդ | .53 | արական 184. |
| | | իգական 156. |
| և ՚ի Մաստարա | .85 | արական 314. |
| | | իգական 277: |
| | 652 | 3451 |

Գոն սեպհական կալուածք Աթոռոյ Էջ-
միածնի և ստացուածք այսոքիկ ՚ի ներքոյ նշա-
նակեալքս:

140, ՚ի Վաղարշապատ այգիք հինգ՝
Մեծ այգի ղուի անուանեալ.
Մեծ այգի վերի.
այգի լուսարարի.
այգի ՚ի միասին՝ Կաթուղիկոսի և Եփրեմ եպիս-
կոպոսի.
այգի օղուղի.

141, Ջրաղացք չորք՝ անուանեալք
վերի, միջի, դնկի և վարդիկի.
մի ևս տեղի ջրաղացի ՚ի պարտիզի գործարանի

Թղթաշինութեանն ·

Ձիթիհանք երկու 'ի պարսպի Ս․Թոռոյս՝ մին քարայարկ, և միւսն փայտածածք կից իրերաց ։
մի դահինխանայ փայտածածք ևս 'ի պարսպի Ս․Թոռոյս ։
մի դինկ բրնձոյ ·
մի խաղախորդանոց ·
ութն տունք, յորս բնակին ծառայողքն 'ի դիւանատան լուսաւորչեան սինհոդոսի ։
վեց տեղիք ծառատնկովք հանդերձ · լիճն՝ որ մերձ 'ի Մօլլադուրսուն գիւղ՝ յորում է ձգեալ անտառ · պարտէզն միրզայի անուանեալ՝ յորում դոյ և որթն խաղողոյ · պարտէզքն տնտեսան, գերեզմանոցի, գրիգոր եպիսկոպոսի, և գործարանին Թղթաշինութեան ։

142, 'Ի պէտս անդաստանաց և այլ կալուածոց աթոռոյն թէպէտ հոգացեալ էին յառաջագոյն զբաժին ջուր ինչ 'ի Քասաղ գետոյ, այլ հետ զհետէ կագք և վէճք 'ի բնակչաց այլոց գիւղօրէիցն՝ որ առ Քասաղ գետաւն, ընդ բնակչաց Աշտարշապատու անհանգիստ արարին զԿաթուղիկոսունս Էջմիածնի · այսորիկ աղագաւ Փիլիպպոս կաթուղիկոս աշխատեցուցեալ զբազում մշակս 'ի հիւսիսակողմն Արագած լերին 'ի բարձր դիրս անդ սարոտի նորա և զբազմաջուր առուակ ինչ՝ որ գնայր 'ի սահման Շիրակայ, խոտորեցուցեալ յայս կողմն՝ ետ խառնել ընդ Քասաղ գետ · և այսր ծախուց և աշխատութեանց իրաւամբք ընկալաւ 'ի փոքր Շահապաս արքայէ պարսից ըդհրովարտակ 'ի մասին սեպհականելոյ յանուն Ս․Թոռոյն՝ գրեա՛ թէ զկէս բաժին ջուր յիշեալ գետոյն · ուստի 'ի ժամանակէ անտի և այսր վերջացեալ են այնպիսի վէճք ։

143, յՕշական գիւղ ·
մի ձիթիհանք փայտածածք,

մի մեծ այգի·

144, յԱշտարակ գիւղ·

երեք այգիք՝ մի յանուն գալուստ եպիսկոպոսի յերկուս բաժինս կից իրերաց, մի յանուն սաղմոսավանից և մի ձորահորին կոչեցեալ։

145, 'ի Փարաքար գիւղ·

մի մեծ այգի·

մի տեղի այգւոյ·

146, յԵրևան քաղաքի·

երկու այգի՝ մին մեծ 'ի սահմանի Նորագեղջ և միւսն մերձ յեկեղեցին Անանիա առաքելոյ·

| | |
|---|---|
| մի այգւոյ տեղի<br>և մի ծառաստունկ | 'ի Նորք· |

| | |
|---|---|
| մի ջրաղաց՝ երեք աղօրեօք·<br>մի խաղախորդանոց·<br>և մի աւեր տեղի տան· | 'ի Ձորագեղջ· |

147, Անդաստանն վանից գետարգելոյ և 'ի նմա եղեալ աւերակ գեղջն, զոր և այլազգիք կոչեն չայղայթարան՝ այն է, գետադարձ· զի երբեմն քայս մենաստան լինէր սուրբ նշանն գետարգել անուանեալ։

Տեղին անապատի՝ ուր է այժմ եպիսկոպոսարանն, հանդերձ բոլոր շինուածովքն· տե՛ս ձորագիւղ։

148, Տալմայ կոչեցեալ մեծ առուն՝ որ 'ի սպառուածի անդ այգեստանեայցն Երևանայ կոչեցելոցն յանուն Նորագեղջ 'ի հարաւակողմն քաղաքին 'ի ձորի անդ հրազդան գետոյ՝ սկզբնաւորի 'ի գետոյն և անցեալ ընդ աւերակն Սարվանլար գեղջ և ընդ քարատակաւն ձորոյն, ապա ընդ երկրաւ անցեալ հարուստ մի՝ ելանէ յերեսս երկրի 'ի փոքր ձորակն իւչ Թէփէ անուանեալ բլրոյ· և այնպէս յառաջացեալ խոտոր ընթացիւք զհիւսիսակողմամբ Փարաքար գեղջ առ ստորոտովք առապարացն գայ մտանէ 'ի սահմանս Ս-

ղարշապատու · և կայ ցարդ որոշ խորութեամբ տեղի առուին:

Զայս մեծածախ առու յառաջին ետ բանալ Բուրձալիբէկ անուն ոմն տաճիկ 'ի բնակչացն Երևանայ վասն անդաստանացն Կաւակերտ գեղջ և սահմանակից վայրացն · այլ 'ի մեռանիլ տաճկին այնորիկ մնայ առուն անկատար: Ժառանգք այլազգւոյն Խուդմաթ ղուլիբէկ, Մահմատ ղուլիբէկ, և Խամուր ղայաբէկ վաճառեն զայս առու, և գնէ Նահապետ կաթուղիկոս 'ի սեպհականութի Աթոռոյն 'ի թուին տաճկաց 1110, յամի 1698:

Նահապետ կաթուղիկոս բազում ծախուք աշխատեցուցեալ զմշակս 'ի քիշեալ փոքր ձորակէն սկսեալ՝ բերէ զառուն ը երեսս երկրի մինչև ցսահմանս Վաղարշապատու ցփոքր բլուրն՝ որք հանդէպ արևելից հիւսիսոյ վանացն Հռիփսիմէի, ապա անտի ևս ը երկրաւ ճանապարհ տայ յորդել. և այնպէս բերեալ զջուրն 'ի գործ դնեն վասն անդաստանաց և այգեաց Աթոռոյն · իսկ 'ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսի համատանցւոյ ոմանք յազգականաց քիշեալ վաճառողացն զայս առու, իբր ժառանգակցութեան իրաւամբք տանին 'ի ջրոյ աստի 'ի պէտս անդաստանաց իւրեանց: Ապա նա ինքն Աստուածատուր կաթուղիկոս գրէ առ խանն Երևանայ վասն այսըր, և խանն յղէ զայն ինչ 'ի դատարանն՝ ուր տեսեալ զհաստատուն վկայագիր 'ի վաճառողացն յանուն Աթոռոյն, անդրէն հաստատեն դատաւորք զայն վկայագիր վճռով և ստորագրութբ իւրեանց 'ի նոյն իսկ յառաջին թղթի 'ի թուին տաճկաց 1129: յամի 1716:

Այս առու բազմօգուտ և արդիւնաբեր թէ յո՛ր ժամանակէ ցայսր, և յի՞նչ պատճառէ այնպէս խափանեալ աւեր կայ՝ չե՛ք ինչ ծանօթութի · իսկ եթէ դէ՛պք ինչ լինիցին՝ նորոգեսցի այս ա-

ուր և բերցի ջուրն յառաջին սահման իւր, ոչ սակաւ շահաստանութիւնք լինիցին Աթոռոյ Էջ-միածնի. քանզի բազում տեղիք անդաստանաց և այգեաց և այլ արդիւնաբեր վայրք կան այնպէս անգործ սակս պակասութեան ջուրց:

149, յԵլիսաւետապօլ (Գանջայ):

մի մեծ այգի.
մի տուքան, (հրդան.)
տեղի միոյ տուքանի.
աւեր տեղի պանդոկի (քարվանսարայի)

150, յԱլեքսանդրապօլ (Գիւմրին Շիրակայ).

տասն և երկու դուքան.
մի փուռն հաց եփելոյ.

151, 'ի Տփխիս.

տասն և ինն կրպակք. տասն հասարակք, չորքն չոր-սուի անուանեալ, և հինգն դաշտի խէջի. վասն լի-նելոյ 'ի տեղւոջ աւեր եկեղեցւոյն սուրբ խաչի.
տասն տունք՝ երկուքն մեծք.
տեղիք երեք տան.

| | |
|---|---|
| ստրուկք 'ի վիճակին վրաստանի կրկին սեռի, | արականք 532. |
| | իգականք 402. |

152, 'ի Սղնախ.

մի տուքան.
մի տեղի պանդոկի (քարվանսարայի).

153, 'ի Շուլավէր 'ի սահմանին Բօրչալուայ;

տեղի միոյ այգւոյ.

154, 'ի Գզլար.

մի մեծ այգի.
մի փոքր այգի.
մի քայքայեալ տուն փայտեայ.

155, 'ի Տուխուրղան 'ի սահմանին Դաւրիժոյ;

մի մեծ այգի.

Հատուած

Զ:

## Հիմնադիրք քրիստոնէական հաւատոյ Հայաստանի և պահպանողք զայն ցսուրբն Գրիգոր պարթև և անտի յաջորդ կաթուղիկոսունք մինչև ցութներորդ Յովհաննէս կարբեցի։

156, Աբգար արքայ Հայոց որդի Արշամայ արշակունւոյ լուեալ զչփոթ տարաձայնութեան յարքայութեանն պարսից՝ իբրև ազգակից նոցին, գնայ անդր և խաղաղէ զայն ինչ ՚ի մէջի նոցա. և ապա դարձ առնէ յիւր թագաւորութիւն,

Այամիկ ճանապարհորդութեան Աբգարու տեղեկացեալ թշնամեաց նորա՝ չարախօս լինին առ Տիբեր կայսր Հռոմայ՝ իբր թէ առ միաբանութեան գնացք նորա առ նոսա և ապստամբութեա՛ ՚ի կայսերէ։ Զայսմանէ ստուգութեամբ հասուեղեալ Աբգարու՝ գրէ առ նա ինքն կայսր և առներելի գործակալս տէրութեան կայսեր զանմեղութենէ անձին և զստոյգ պատճառ գնալոյն անդր՝ առ որ միան նոքա դժուարահաւան։ Ապա ՚ի վերջոյ գրէ և առ Մուինոս ստորոգեայ հազարապետ հռովմայեցւոց՝ որ կայր ՚ի կողմանս Պաղեստինոյ, Ասորոց և Միջագետաց, և առաքէ զայն ընդ ձեռն երկուց գլխաւոր իշխանաց իւրոց՝ Մարիհաբ բդեշխին Աղձնեաց, և Շամշագրամ նահապետին Ապահունեաց, ընդ որոց եդ և զԱնանէ հաւատարիմն իւր։

Գնացեալ նոցա առ Սաբինոս և կատարեալ զգործ յանձնարարութեանցն Աբգարու և լուեալ անդ զսքանչելեացն Յիսուսի՝ ելանեն յԵրուսաղէմ և հաւատարմացուցանեն ներկայութեամբ և տեսութեամբ իւրեանց. և ապա եկեալ առ Աբգար արքայ՝ պատմեն ստուգութեամբ. առ որ սքանչացեալ արքայի՝ ասէ. Այն զօրութիւնք Աստուծոյ են և ոչ մարդոյ. զի չիք ոք ՚ի մարդկանէ՝ որ կարիցէ յարուցանել զմեռեալս, բայց միայն Աստուած. որոց վասն հաւատաց ՚ի Յիսուս իբրև արդարև յորդի Աստուծոյ իջեալ յերկնից. և զի յեօթն ամաց հետէ ունէր Աբգար արքայ ցաւ կեղոյ բորոտութեան ՚ի մարմնի իւրում անբուժելի՝ գտեալ զայն ՚ի ճանապարհորդութեանն ՚ի պարսս, որով և գրեթէ ապականեալ էր բովանդակ մարմինն. այր վասն հաւատալով ՚ի նա որպէս յԱստուած ճշմարիտ, գրեաց թուղթ աղաչանաց առ Յիսուս՝ գալ և բժշկել զնա. և առաքեաց զայն ՚ի ձեռն հրեշտակաց ընդ Անանէի հաւատարիմ սուրհանդակին իւրոյ՝ որ ունէր օրինակ զայս:

157. ,,Աբգար Արշամայ իշխան աշխարհի առ Յիսուս փրկիչ և բարերար՝ որ երևեցար յաշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն:

Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանց՝ որ լինի ՚ի ձեռն քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել, և կաղաց գնալ, զբորոտս սրբել և զայսս պիղծս հանել. և որք միանգամ չարչարեալ են ընդերկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի ՚ի մտի իմում մի յերկուց աստի. կամ դու Աստուած իցես յերկնից իջեալ գործես զայդ, կամ թէ որդի Աստուծոյ՝ և զայդ առնես: Արդ՝ վասն այնորիկ գրեցի ես առ

քեզ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկես-ցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս՝ զոր ունիմ ես։

Նաև լուայ՝ զի Հրեայք տրտնջեն զքէն, և կամին չարչարել զքեզ, բայց քաղաք մի փոքրիկ է իմ, և բաւական մեզ երկոցունցս„։

Աբգար պատուիրեալ ևս էր հրեշտակաց իւրոց, զի եթէ ոչ առնուցու յանձն գալ, առցեն զկենդանագրութիւն նորա և բերցեն առ նա ՚ի լրումն փափագանաց իւրոց գէ՛թ այնու։

Գնացին հրեշտակքն Աբգարու ՚ի Հրէաս-տան և հանդիպեցան յաւուր մտանելոյ Տեառն յԵրուսաղէմ· ասեն ցփիլիպպոս՝ կամիմք տեսա-նել զՅիսուս· Փիլիպպոս ասէ ցԱնդրէաս· և եր-կոքեան ասեն ցՅիսուս։ Յայնժամ ընկալեալ Յիսուսի զնոսա հանդերձ թղթովն Աբգարու, եցոյց ուրախութիւն յանձն իւր [1], և հրամա-յեաց Թովմայի գրել առ Աբգար զպատասխա-նին՝ բառ այսմ։

158 · „Երանի իցէ այնմ՝ որ հաւատայ յիս իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս· զի գրեալ է վասն իմ այսպէս· զի որք տեսանեն զիս ոչ հաւատասցեն յիս, և որք ոչ տեսանեն նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այնր՝ զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ· արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ՝ վասն որոյ առաքեցայ ես · և իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս· և յորժամ համբարձայց, առա-քեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ, և որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ„։

159, Զայս թուղթ Յիսուսի և զկենդանագր-

1, Աւետարանին Յովհաննու · գլուխ ԺԲ, համար 20

րուն դաստառակին ընկալեալ Անանէ սուրհան_
դակին և այլոց հրեշտակացն՝ բերեն փութանակի
յԵդեսիա քաղաք առ Աբգար արքայ և պատմեն
զամենայն անցսն ։

Լցեալ Աբգարու անպատմելի խնդութե_
ընդ այսպիսի պարգևս՝ անկանէր և երկրպագանէր
աստուածային պատկերին՝ որ ՚ի դաստառակի անդ.
և իսկ և իսկ հաստատեաց ՚ի միտս իւր զճշմարիտ
հաւատ, զսէր և զջերմեռանդութիւն իւր առ նա

1. Թուղթն Յիսուսի և կենդանագրութիւն նորա
՚ի դաստառակի ընկալեալ Աբգար արքայ Հայոց եւ [illegible]
[illegible] և կենդանագրութիւն պատկերին
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Աբգարու, [illegible] նորա
Անանէի, [illegible]
[illegible] 35, [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 539.
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ինքն Որդին Աստուծոյ մարդացեալ փրկիչն աշ_
խարհի՝ որով և զգաց յանձն իւր զփոփոխումն
ինչ դիւրութեան ի ցաւոց անտի մինչև եկեալ
էր աշակերտն խոստացեալ ։ Նա 'ի գալ աշակեր_
տին՝ որ էր Թադէոս եղբայր Թովմայի , բոլորովին
լուսաւորեալ Աբգարու 'ի հաւատս՝ բժշկեցաւ
գլխովին և յանողջանալի ապականութէ մարմնոյն ։
Զկնի այնր եղև նա կենդանի քարոզ քրիս_
տոնէական հաւատոյ 'ի քաղաքի անդ և 'ի սահ_

[illegible] կոչեցեալ բազում փափաքանօք խնդրէր փոխադրել զայն դա_
ստառակ և զթուղթն փրկչական 'ի Կոստանդնուպոլիս 'ի պար_
ծանս ինքնակալութեան Յունաց . և այսու [illegible] յամի
944 , [illegible] միջնորդօք հաճեցուցեալ զայլազգի ամիրայն
Եդեսիոյ ընդ դէմ կամաց քաղաքացւոցն , եւ տանել զայնս 'ի
Կոստանդնուպոլիս և մուծին 'ի քաղաքն թագաւորական 'ի 16.
[illegible] օգոստոսի և հանգուցին 'ի տաճարի Փարոսայ Աս_
տուածածնի . և մնացին անդ 'ի կայսերական քաղաքին 'ի բա_
զում ամս ։ Նա թուղթն փրկչական յետ ժամանակաց դարձու_
ցաւ յառաջին տեղին՝ Յեդեսիա . և վերստին տարաւ 'ի
Կոստանդնուպոլիս յամի 1030 , յաւուրս Ռոմանոսի Գ , կայ_
սեր . և զկնի 295 ամաց՝ այն է , յամի 1325 , գողացեալ [illegible]
[illegible] եղև , և կայ յանյայտութեան ցարդ ըստ գրելոյ բազ_
մաց 'ի պատմութեան հայոց որ 'ի [illegible] ։ Իսկ [illegible] դա_
ստառակն փրկչական պատկերի յետ ժամանակաց փոխադրեցաւ 'ի
Կոստանդնուպոլսոյ 'ի Հռոմ . և կայ անդէն ըստ [illegible]
հայր [illegible] [illegible] 'ի [illegible] սրբոյ՝ [illegible] Է , [illegible]
560 . [illegible] [illegible] [illegible] սրբոյն Յովհաննու [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] պատկերէ դա_
ստառակին . [illegible] [illegible] [illegible] 'ի Հռոմ 'ի վանս սրբոյն Սեղ_
բեստրոսի 'ի [illegible] [illegible] [illegible] որ և ասի Սեղբես_
տրոս [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] պատ_
կերն [illegible] [illegible] Աբգար [illegible] . [illegible] և [illegible] է_
[illegible] [illegible] 'ի [illegible] յամի 1810 . 'ի [illegible] . [illegible] ան_
[illegible] [illegible] [illegible] Հռոմ ,, ։

մանս իշխանութեան իւրոյ 'ի Հայաստան. ևս և 'ի
հեռաւորս ազդու և անաչառ գրութեամբ իւրով
զԱստուածութենէն Յիսուսի, առ Տիբեր կայսր
Հռովմայ՝ երկիցս, առ Ներսեհ որդի Արտաշեսի
արքային պարսից՝ որ նստէր 'ի Բաբելոն և էր թա-
գաւոր Ասորեստանի, և առ արքայ պարսից Արտա-
շէս. և այսպէս եղև սկզբնապատճառ քրիստոնէա-
կան հաւատոյ 'ի հայս երջանիկ արքայն Աբգար:

160, Թադէոս առաքեալ եղբայր Թովմա-
յի՝ մի յեօթանասուն և երկու աշակերտաց ան-
տի, արձակեալ յեղբօրէ իւրմէ ըստ խոստման փրկ-
չին գայ յԵդեսիա քաղաք առ Աբգար արքայ Հա-
յոց՝ ունելով ընդ իւր և զԳեղարդն Ղունկի-
անոսի զմխեալն 'ի կող Փրկչին (39), և մկրտէ զԱբ-
գար և զբազմութիւն քաղաքին. և յետ լուսա-
ւորելոյ զքաղաքն ողջոյն՝ ձեռնադրէ նոցա եպիս-
կոպոս զԱդդէ այր հրէայ մետաքսագործ զխոյրա-
րարն արքային. և յանձն արարեալ հովուութեան
նորա զհաւատացեալսն՝ գնայ անտի 'ի Շաւարշան
գաւառ Հայաստանի առ Սանատրուկ թղթով նո-
րուն Աբգարու, յորմէ կարգեալ էր նա ինքն
Սանատրուկ իշխան և հրամանատար աշխարհին և
զօրացն և էր քեռորդի արքային. և լուսաւորեալ
զայն գաւառ նա քարոզութեամբ աւետարանին
սրբոյ, և ձեռնադրեալ նոցա յիւրոց աշակերտաց
զոմն Զաքարիա անուն եպիսկոպոս՝ անցանէ յԱ-
ղուանս 'ի քարոզութիւն. և դարձ արարեալ ան-
տի գնայ յաշխարհ կապադովկացւոց 'ի Կեսարիա,
և անդ ևս հաստատեալ զեկեղեցի՝ ձեռնադրէ
նոցա եպիսկոպոս զԹէոփիլոս ոմն. և ապա յիջա-
նել նորա 'ի սահմանս միջագետաց, պատահին նմա
'ի ճանապարհին հռովմայեցի դեսպանք առաքեալք
'ի հայս առ Սանատրուկ արքայ հայոց. 'ի ճանա-
պարհի անդ քարոզէ նոցա զՅիսուս, և աշակեր-
տեալ մկրտէ զնոսա, և անցեալ գնայ 'ի Շա-

ւարշն գաւառ՝ այց առնել աշակերտելոցն. և անդ քարոզութեամբ և սքանչելեօք դարձուցանէր ըզբազումս և յաւելոյր ՚ի թիւս հաւատացելոցն. ուստի Սանատրուկ ըստ բողոքելոյ քրմացն կալեալ զԱռաքեալն՝ եդ ՚ի բանտի. և զկնի աւուրց ետ նահատակել ՚ի 13ըն քաղոց ամսեան 48, ամի. ընդ նմին և զդուստրն իւր զմատաղահասակ կուսանն Սանդուխտ վեց աւուրբ յառաջ քան զառաքեալն. որոց մաքուր նշխարք ամփոփեցան ՚ի հաւատացելոց ՚ի նմին Շաւարշան գաւառի (արտազ) ՚ի Սանատրուկն կոչեցեալ դաշտի ՚ի վերայ բլրոյ միոյ ը մեծ վիմովն յարևմտակողման գագաթան բլրոյն, յաջակողմն վիմին մեծի ըստ տեսլեան Ճգնաւորին Կիրակոսի՝ յորոյ ձեռն և յայտնեցան նշխարքս սըրբոցս յսկզբան հինգերորդ դարուն:

՚Ի նշխարաց սրբազան Առաքելոյն սփռեցան յայլևայլ տեղիս հայաստան աշխարհի. իսկ Աջ նորա՝ որ պահէր անդ ՚ի տաճարին կառուցելոյ յանուն նորա, յետ ժամանակաց բերաւ աստ ՚ի Տաճար Կաթուղիկէ Եկեղեցւոյս Հայաստանեայց (62). նոյնպէս և մասն գլխոյն (81):

161, Երկրորդ հայր լուսաւորութեան հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ առաքեալն Բարդուղիմէոս յերկոտասանից անտի՝ աջակցեալ ընդ Թովմայի ՚ի քարոզութիւն աւետարանին, մտանեն և ՚ի հայաստան և անցանեն դէպ յարևելս մինչև ցհնդկաց աշխարհ. և անտի վերադարձեալ միայնակ Բարդուղիմէայ քարոզութեամբ աւետարանութեանցն Յիսուսի գայ ժամանէ յԵրուսաղէմ՝ ուր ընկալեալ զպատկեր Տիրամօրն՝ դառնայ անդրէն առաջնորդութեամբ սուրբ Հոգւոյն ՚ի հայս ՚ի վիճակ Թադէոսի՝ հարկեալ ՚ի թղթոյ Թովմայի առաքելոյ. ուրանօր հաստատէ զաշակերտեալսն. և տեսեալ զխստասրտութիւն Սանատրկոյ՝ անցանէ ՚ի պարսս. և անդ ևս անլուր

գտեալ զբնակիչսն խորումն քարոզութեան, վերստին դառնայ 'ի Հայս՝ 'ի կողմանս Աղբակայ, 'Նախիջևանայ, և Գողթան հանդերձ ուխտն աշակերտօք՝ զորս դարձուցեալ էր 'ի մոգուց անտի պարսից՝ յորս 'ի գործ արկեալ արդ քարոզութեան բանին, գործէ զբնակիչսն արգաւանդ ընդունելութեան շնորհաց Հոգւոյն. և մկրտեալ զբազումս լուսաւորէ 'ի գիտութիւն ճշմարտութեան։

Ապա թողեալ առաքելոյս առ այսոսիկ հաւատացեալս յերիցանց անտի աշակերտաց՝ որ 'ի մոգուց, յորոց և միոյն անուն Սոմնի՝ 'ի Գողթն գաւառ յաւանն Ագուլիս, գնայ ինքն դէպ 'ի բլուրն Արտաշատու՝ ուր հանդիպեալ Ղեբէոս Թադէոսի յակոբեան, և յօթել նոցա 'ի միասին անդ 'ի նոյն գիշերի առ մեծի վիմին՝ յառաւօտուն դրոշմեն 'ի վէմ անդր զնշան խաչին՝ որ Օթեաց խաչ կոչեցաւ, և կայ ցարդ նշանն 'ի վիմի անդ (տե՛ս Խորվիրապ). և այնպէս բաժանեալ 'ի միմեանց չոգաւ Բարդուղիմէոս և եմուտ ի Հեր և 'ի Զարևանդ գաւառսն Հայոց. և անդ ևս լուսաւորեալ զբազմութիւն մարդկանն և յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ էանց 'ի կողմանս Անձաւացեաց. ուրանօր յետ բազում քարոզութեանց և սքանչելագործութեանց հիմն արկանէ փոքրիկ տաճարի յանուն Տիրամօր կուսի 'ի վերայ Տիգրիս գետոյն մերձ յամուր բերդն Կանդուար, և դնէ անդ զպատկերն զայն, և զտեղին առնէ մենաստան կուսանաց, և անուանէ զնոյն | Հոգեաց վանք |։

Դարձ արարեալ անտի՝ քարոզութեամբ մտանէ յՈւրբանոս քաղաք Հայոց. և առնէ զմեծամեծ սքանչելիս և լուսաւորէ զբազումս մկրտութեամբ, մինչև լուեալ Ոգուհւոյ քեռ թագաւորին Սանատրկոյ՝ գայ 'ի ծածուկ առ սուրբ Ա.

առաքելոյն և լուսաւորեալ հաւատոյ 'ի տէր Յի-
սուս իւրայովքն հանդերձ:

Տեղեկացեալ իրացս եղելոց Սանատրուկ արքայ Հայոց կոչէ բարկութեամբ առ ինքն 'ի ձեռն Տերտինոս հազարապետին զԱռաքեալն. այլ հազարապետին գնացեալ առ նա՝ հաւատայ 'ի ճշմարտութիւն աւետարանին ընդ իւր եղելովք:

'Ի լսելն զայս Արքային առաւել ևս զայրացեալ՝ առաքէ զնախարար ոմն հանդերձ զօրականօք, և տայ ածել առ ինքն զսուրբ Առաքեալն և զհաւատացեալսն նորա՝ զորս և պէսպէս չարչարանօք նահատակէ. առնուն հաւատացեալքն զմարմինս կատարելոցն 'ի տէր. և ամփոփեն 'ի տապանի. իսկ զմարմին Առաքելոյն 'ի նոյն տեղւոջ նահատակութեան՝ յորոյ վերայ յետ ժամանակաց շինեցաւ եկեղեցի 'ի հաւատացելոց, և տապան Առաքելոյն ծածկեցաւ ընդ բեմիւ սեղանոյն, և մնաց այնպէս մինչև ցժամանակս Յազկերտի փոքու պարսից արքայի անձեռնամուխ ամենևին. յորում ժամանակի Մարութայ եպիսկոպոս ասորի ազգաւ հաւաքող նշխարաց սրբոց 'ի Նփրկերտ եկն 'ի հայս յՈւրբանոս քաղաք. և մնացեալ անդ յերկոտասան աւուրս՝ ընկալաւ հրաշիւք 'ի նշխարաց սրբոյ Առաքելոյս, և տարաւ անդր 'ի Նփրկերտ քաղաք մարտիրոսաց, յորմէ փոխադրեցան յետ ժամանակաց և յայլ բազում տեղիս նշխարք առաքելոյս (67). իսկ մնացեալն 'ի հայաստան՝ կայ 'ի նոյն իսկ 'ի տեղւոջն, ուրանօր է վանք հռչակաւոր և ունի վիճակ զշրջակայ սահմանսն:

162, Յուդա Թադէոս եղբայր Տեառն և Յակոբայ արդարոյ՝ յերկոտասանից անտի, որդի Կղէովպայ եղբօր Յովսեփայ աստուածահօրն շարժեալ 'ի հոգւոյն՝ քարոզէ զաւետարանն յԻդումայեցիս, յԱրաբացիս, յԱսորիս, 'ի Մարս և 'ի Պարսս. և ապա եկն 'ի մեծն հայաստան և հաստա-

տէր զաշակերտութեանն բանին կենաց և դարձու֊
ցանէր 'ի հեթանոսաց անտի և յաւելուր զթիւ հա֊
ւատացելոցն · շինէր զեկեղեցիս , ձեռնադրէր
քահանայս · և պատահեալ 'ի բլրին Արտաշատու
առաքելոյն Բարդուղիմեայ՝ որպէս պատմեցաւ
(159) , անցանէ 'ի պարսկահայս , և քարոզէ զՔրիս֊
տոս գործակցութեամբ Սիմոնի կանանացւոյ , և
լուսաւորեալ զբազումս՝ հաստատէ 'ի ճշմար֊
տութեան · և կրեալ զպէսպէս վիշտս և զնեղութի
կատարի յՈւրմի քաղաքի գաւառին Զարևանդայ
յամի 69 , և մարմինն ամփոփի անդէն 'ի հաւատա֊
ցելոց · յորոյ վերայ շինեցաւ զկնի եկեղեցի վա֊
յելուչ՝ որ կայ մինչև ցայժմ , ուր է բնակութիւն
հայոց և եկեղեցին աղօթատեղի նոցա · և 'ի հիւ֊
սիսակողմն եկեղեցւոյն հեռի իբրև քառորդ ժա֊
մու է աղբիւրն բժշկութեան ։

163 , Սուրբն Եղիշա աշակերտ Թադէոսի
առաքելոյ նախկին լուսաւորչի Հայոց եկն ընդ֊
նմա 'ի հայաստան · և զկնի նահատակութեան վար֊
դապետին իւրոյ դարձ առնէ յԵրուսաղէմ , և
անդ ձեռնադրեալ եպիսկոպոս 'ի Յակոբայ Տեա֊
ռնեղբօրէ՝ 1 վիճակ առնու իւր զարևելս · և ճա֊
նապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ պարսս՝
մտանէ 'ի Մազքութս · և սկիզբն առնէ քարոզու֊
թեանն 'ի Ճողա · և 'ի յոլով տեղիս զբազումս ա֊

1 Սոյն ճանապարհորդութեանն Եղիշայ յԵրուսա֊
ղէմ , և ձեռնադրութեանն եպիսկոպոս 'ի Տեառնեղբօրէ ան֊
հաւան թուին ոմանց՝ աւելորդ թէ , նա ձեռնադրեցաւ եպիս֊
կոպոս 'ի վարդապետէն իւրմէ յառաջելոյն Թադէոսէ , և
այնպէս առաքեցաւ յԱղուանս · և համանման առաքելոյն Թա֊
դէոս և եղբայր Տեառն Յակոբ 'ի մի և 'ի նոյն ամ կատարե֊
ցան նահատակութեամբ՝ մին 'ի հայս , և միւսն յԵրուսաղէմ · որ֊
պէս և Յովհանէս քահանայ Ջուղայեցի ևս հաստատէ · և դնէ
զնահատակութիւն երկոցունց յամի 64 ։

շակերտեալ՝ հաստատէ 'ի գիտութիւնն վերին. և անտի գիմէ յԱւտի գաւառ 'ի Մոհսան քաղաք երիւք աշակերտեալ անձամբք՝ որոց հարազատք անօրէնք ոմանք զհետ սնդեալ հասանեն. յորոց՝ մին յերից անտի, ընկալեալ զմախճան նահատակութեամբ. իսկ երկուցն թողեալ զերանելին Եղիշա՝ գնան ընդ անօրէն խողխողիչ արանցն: Եւ սուրբն Եղիշա գայ 'ի Պիս և կանգնէ անդ զեկեղեցի. ուր և կատարէ զորբազան խորհուրդ պատարագին. աստի սկիզբն լուսաւորութեան Աղուանից. և սա մայր եկեղեցեաց աշխարհին այնորիկ:

Ընդ հաստատեալ զնորոգ հաւատացեալսն՝ անցանէ 'ի Պաշտակն զերգունի՝ ուր էր տեղի զոհարանացն դիցամոլ արանց աշխարհին, յորոց անդէն նահատակեալ երանելին Եղիշա ընդունի զպսակն մարտիրոսութեան, որոյ զմարմինն ընկենուն 'ի փոս մի և ծածկեն. և տեղին այն անուանէր | Զոմենք | ցբաղում ժամանակս:

Մնան այնպէս մաքուր նշխարք երանելոյն 'ի գբի անդ 'ի հարուստ ժամանակս, մինչև յայտնութեամբ տեսլեանց հասու եղեալ արանց ոմանց բարեպաշտից գնան միաբան բազմութբ 'ի գուբ անդր և տեսանեն զչեղջակուտեալ ոսկերս յոգունս՝ յորոց վերայ տարակուսին և զելս հնարից ոչ գտանեն յարուցումն նշխարաց սրբոյն. ուստի զամենայնն միանգամայն հանեալ 'ի գբոյ անտի՝ դիզեն արտաքոյ. և հոսեն զայն գիշեր յաղօթս և 'ի պաղատանս առ Աստուած. և յառաւօտանալ դիզերոյն՝ շարժումն մեծ լինի, մինչև ամենեցուն անդրր եղելոց անկանել յերկիր. և ահա սաստիկ հողմոյն յանապատէն ցիր և ցան սփռէ զանսրբոցն ոսկերս ընդ բովանդակ դաշտն. և մնան 'ի տեղւոջն առաքելականն մաքուր նշխարք. յորոց զգլուխն միայն մեծահաւատ ումն Ստեփաննոս քահանայ Սւռեկան գեղջ յափշտակէ՝ աճապարի յերիվար իւր

և 'ի բաց գնայ՝ որում զհետ մտեալ բազմութեն ունել զնա, մառախուղ խաւարային ընդ մէջ անցեալ զարհուրեցուցանէ զնոսա և յետս ընկրկէ· ապա դառնան 'ի տեղին և տեսլեամբ սրբոյն առեալ զմիւս նշխարսն՝ տանեն յՈւռեկան՝ ուր եդեալն էր պատուական գլուխն ընդ ձեռն յիշել քահանային, և անտի ապա փոխեցին 'ի Ներս Սեր-հայ սուրբ ուխտն՝ որ այժմ կոչի՝ Ջրվշտիկ:

Եւ զկնի ժամանակաց 'ի մէջ անդ Երդ դարուն Վաչագան արքայ Աղուանից կանգնեաց 'ի վերայ գբոյ նահատակութե սրբոյն Եղիշայ սիւն բարձր · և 'ի վերայ այնր սենեկապանն արքայի սիւնակեաց մենակեաց լեալ՝ կատարի բարի մահուամբ: զորմէ պատմիչն Աղուանից՝ հատոր ա, գլուխ զ, է:

164, Ադդէ սբ հայրապետ առաջին եպիսկոպոս Եդեսիոյ՝ որ էր մետաքսագործ և խոյրարար Աբգարու արքայի Հայոց, 'ի գալ առաքելոյն Թադէոսի յԵդեսիա առ Աբգար՝ աշակերտեցաւ նմա, և յառաջադէմ հանդիսացեալ 'ի հաւատս՝ մկրտեցաւ 'ի նմանէ և արժանացաւ ևս ձեռնադրիլ յեպիսկոպոսութիւն քաղաքին և լինել փոխանորդ առաքելոյն և տեսուչ 'ի հովուել զհաւատացեալսն անդ 'ի միջագետս: Եւ այնու իշխանութեամբ առաքելաբար հաստատէր զաշակերտեալսն և լինէր քարոզ ճշմարտութեան ոչ միայն յՈւռհայ քաղաքի, այլև 'ի բազում մերձակայ սահմանս Ասորւոց, Մարաց և Պարսից· և օր քան զօր ընդարձակէր զառաքելական քարոզութիւնն՝ մանաւանդ յարդիւնալից կենդանութեան Աբգարու արքայի· որոյ զկնի փոխման յաստեացս 'ի թագաւորութիւնն վերին, կրեաց երանելին Ադդէ զտառապանս հալածանաց հաւատացելովքն հանդերձ· քանզի Անանուն որդի Աբգարու յԵդեսիա, և Սանատրուկ քեռորդի

նորա յարևելս՝ յՄըստաց գաւառի, դարձան անդ
րէն 'ի կռապաշտութիւն:

Այն Մնանուն ուրացող որդի Մեգարու յղէ պատուէր առ երանելի հայրապետն Մզդէ պատճառանօք՝ առնել նմա խոյր բեհեզեայ անկուածոյ յոսկւոյ՝ զօրօրինակ առնէր յառաջագոյն հօր նորա Մեգարու. առ որ պատասխանի տայ սուրբ հայրապետն. ոչ արասցեն ձեռք իմ խոյր դագաղթան անարժանի՝ որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանւոյ: Վասն բարկացեալ թագաւորին ընդ այն, հրամայէ միում 'ի զինակրացն գնալ հատանել զոտս սրբոյն սրով (Բէյլեր ըո-էրը էր ցոյնի պաշա՝ Բէ նորէ-ը ցոլնա վարդապէտոլթեան սոստոյանէ շծոլըոլիօրտն, նամ գէ՛Բ՝ չէ ո՛չ գնոց տոնա). գնացեալ զինակրին տեսանէ զնա յաթոռ վարդապետութեան, և անդէն կատարէ զանօրէն զհրամանն. և յայնժամ աւանդէ երանելին զհոգին. որոյ զմարմինն բարձեալ հաւատացելոց՝ ամփոփեն 'ի շիրմի:

165, Եւստաթէոս, կամ Ստաթէ. մին յաշակերտաց սուրբ առաքելոյն Թադէոսի՝ որոյ 'ի գալն 'ի Հայաստան էր ընդ վարդապետին իւրոյ և ձեռնադրեցաւ 'ի նմանէ եպիսկոպոս. և մնացեալ 'ի Հայաստան՝ քարոզեաց 'ի Սիւնիս և անդ կատարեցաւ: Գրի յայսմաւուրս 'ի ճառի անդ Գրիգորիսի Մզդւանից կաթուղիկոսի 'ի 6. մարտի. ,,Նա եդին անդ ընդ սուրբ մարմնոյն (Կէլ-կորէօք) և շիշ մի լի արեամբ՝ յարենէ սրբոյն Ստաքարեայ հօրն Յովհաննու կարապետին, զոր բերեալ էր Եւստաթէոս առաքեալն՝ որ էր յաշակերտաց սրբոյն Թադէոսի առաքելոյ,,: Յիշատակի և 'ի քանի տեղիս 'ի 27, ապրիլի՝ յայսմաւուրս. որպէս և 'ի պատմութեան հայոց ԺԵ հատոր, 298 համար. ,,Նոյն 'ի հայս եւս և սուրբն Եւստաթէոս մին յեօթանասնից, և նահատակեալ թա

ղեցաւ 'ի տեղւոջն որ այժմ յանուն նորա կոչի Ստաթև. այն է՝ Տաթև,,։

166, Զաքարիա աշակերտ Թադէոսի առաքելոյ գայ ընդ նմա 'ի Հայաստան. և 'ի լինել առաքելոյն յԱրտազ գաւառի առ Սանատրուկ, ձեռնադրի 'ի նմանէ եպիսկոպոս գաւառին այնորիկ. և զկնի նահատակութեան առաքելոյն 'ի Սանատրկոյ՝ հովուէ զհաւատացեալսն իբր յամս երկոտասան. և ապա կատարի և ինքն նահատակութեամբ յԱրուանդայ Բ̃, արքայէ Հայոց՝ իբր յամի տեառն 76։

167, Թէոփիլոս էր անտիոքացի. հաւատացեալ կանխաւ՝ շրջէր աշակերտութեամբ ը̃ Թադէոսի առաքելոյ 'ի գալն նորա 'ի Հայաստան. և ապա այն ինչ եմուտ առաքեալն 'ի Կեսարիա կապադովկացւոց և քարոզութեամբ աշակերտեաց զբազումս 'ի բնակչաց քաղաքին, ձեռնադրեցաւ 'ի նմանէ եպիսկոպոս առ 'ի հովուել անդ զփոքրիկ հօտն հաւատացեալ։ Թուի թէ, առ սա գրեալ իցէ՝ ըստ Յովսեփայ քահանայի ջուղայեցւոյ, երանելին Ղուկաս զԱւետարանն և զԳործս առաքելոցն՝ քաջ կոչելով զնա զքաղաքացին իւր յսկզբան անդ մատենի Աւետարանին, և զանունն յերկոսին ևս. և գուցէ սակս անվեհեր քարոզութեանն առ հեթանոսս քաջ կոչէ. սա ինքն Թէոփիլոս բազմօք ձգնեցաւ 'ի վերայ հօտին և գտաւ գլխաւոր 'ի ժողովի անդ 'ի Պաղեստին ըստ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան. դպր, Ե. գլ. Ժգ. ,,բայց են և մինչև ցայսօր ժամանակի գիրք այնոցիկ՝ որ ժողովեցանն յայնմ ժամանակի 'ի Պաղեստին, զի գլուխ էր նոցա Թէոփիլոս եպիսկոպոս եկեղեցւոյն Կեսարացւոց,,. հանգեաւ խաղաղութեամբ յամի տեառն 60։

168, Զենոնոս. սա էր այր մարդասէր բարուք, խնամածու օտարաց, որբոց և այրեաց և էր

հաւատարիմ 'ի դրան Սանատրկոյ արքային՝ կար-
գեալ 'ի նմանէ 'ի վերայ ամենայն ճանապարհացն.
յաւուր կատարման Առաքելոյն Թադէոսի այն ինչ
եղբայր նորա դահճապետն հարկանել կամէր սրով
զգլուխ Առաքելոյն, եհատ վիրապակաւ և սպան
զնա զՕեմենտոս եղբայր իւր. իսկ Առաքելոյն
աղօթիւք ձեռն տուեալ յարոյց զնա ողջանդամ՝
որ հաւատաց 'ի տէր հանդերձ այլովք բազմօք:
Նա՝ ըստ Յովսեփայ քահանայի Ջուղայեցւոյ, զկնի
Զաքարիա եպիսկոպոսի եկաց երկրորդ եպիսկո-
պոս անդէն յԱրտազ գաւառի և հովուեաց ըզ-
հաւատացեալսն զամս ութն. և ապա կատարեցաւ
նահատակութեամբ յԱրուանդայ քրմապետէ՝ յեղ-
բօրէ Երուանդայ արքայի իբր յամի տեառն 79:

169, Կոմսի էր դենիւ մոգ պաշտօնատար
արեգական և ազգաւ պարսիկ 'ի խորասան քաղաքէ
նոցա. 'ի գնալ անդր Առաքելոյն Բարդուղիմեայ
աշակերտեցաւ նմա եօթն ընկերօք հանդերձ. որք
թողեալ զերկիր և զազգ՝ եկին ընդ առաքելոյն 'ի
հայս մինչ 'ի Գողթն գաւառ յաւանն Ագուլիս.
անդանօր աջակցեալ առաքելոյն քարոզէին բը-
նակչաց գաւառին, և հաստատէին զբազումս 'ի
հաւատս մկրտութեամբ աւազանին. և 'ի փոխիլ
անտի Առաքելոյն 'ի Տէր և 'ի Զարեւանդ գա-
ւառսն, ձեռնադրեցաւ 'ի նմանէ եպիսկոպոս
Կոմսի և մնաց անդ ամամբք ընկերօք 'ի վերատես-
չութիւն նորոգ հաւատացելոցն և որ ըստ օրէ քա-
րոզութբ և սքանչելեօք դարձուցանէին և զայլ-
բազում մարդիկ 'ի սնոտի պաշտամանցն: Եկաց
անդ Կոմսի զամս ոչ սակաւ՝ արդիւնաւոր վաս-
տակօք և հանգեաւ խաղաղութեամբ յամի տեա-
ռըն իբր 88, անդ յաւանն Ագուլիս. և կայ ցարդ
ևս տեղի գերեզմանի նորա մերձ յեկեղեցի եպիս-
կոպոսարանին 'ի հիւսիսոյ նր և պատուի ուխտա-
կան այցելութեամբ 'ի բնակչացն՝ յորոց վերայ է

և մատուռն փոքրիկ։

170, Տուբիաս. սա յազգէ Տուբիթայ և Տուբիայ որդւոյ նորա՝ որ թողեալ զՆինուէ եկն և բնակեցաւ յերկրորդն Եկբատան. յետոյ որդիք նր̄ եկին յԵդեսիա և անդ բնակեցան. ուր ՚ի գալ առաքելոյն Թադէոսի ընկալաւ զնա Տուբիաս ՚ի տուն իւր՝ ըստ Եւսեբիոսի յեկեղեցական պատմութեան. դպրութիւն ա̄, գլուխ ժգ̄։ Սա եկաց երորդ եպիսկոպոս Եդեսիոյ. և ՚ի հալածանս Դոմետիանոսի կայսեր յետ բազում տանջանաց կատարեցաւ յամի տեառն 94. ըստ Յովսեփայ քահանայի ջուղայեցւոյ հատոր է̄, գլ. ժզ̄։

171, Ռաբելաս եպիսկոպոս. յաջորդ Սոմսեայ՝ թերևս մին յընկերաց նորա ՚ի խուժիկ ազգէ զորս նուաճ (կոմսեաց) հանդերձ եթող այցելու նորահաւատ քրիստոնէից վիճակին առաքելոյն Բարդուղիմէոսի։ Որպէս հաւատացեալք, նոյնպէս և հովիւք նոցա յաջորդք Ռաբելասայ ոչ պակասեցան ՚ի Գողթն գաւառէ՝ թէ և հալածանօք հանդերձ, մինչև ցբովանդակ լուսաւորութիւն ազգին քարոզութեամբ մեծին Գրիգորի, որպէս յառաջ բերէ հին հայաստան ՚ի ստորագրութեն Գողթան գաւառի՝ առեալ ՚ի պատմութենէ Սիւնեաց. ..Զքրիստոնէութիւնն ընկալան բնակիչք գաւառիս քարոզութեամբ սուրբ առաքելոյն Բարդուղիմեայ. .. յորս մնաց նոյն կրօն մինչ ՚ի սուրբն Գրիգոր՝ թէպէտ և թագուն. .. սոքա (քրիստոնեայք) կային և մնային անտերունչք բնակեալ այսր անդր, և ոմանք ղօղեալք ՚ի լերինն Գարուայ միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին՝ զբազումս ուսուցանելով յոլով ժամանակօք մինչ ՚ի գալ մեծի լուսաւորչի ՚ի հայս։.. Եւ որպէս յետ քարոզութեան առաքելոյն ոչ անհետ եղև ՚ի նոսա քրիստոնէութիւնն, նոյնպէս և յետ քարոզութն լուսաւորչին՝ ոչ բարձաւ ՚ի նոցանէ խապառ աղան-

դըն հեթանոսութեան,,։ Այս միացորդ աղանդ եւս անհետ արար երանելին Մեսրովբ. և սա ինքն Նաբելաս իբր յամին 90, 120։

172, Նարսումա կամ պարսաւմա. հայկազն եպիսկոպոս Եդեսիա քաղաքի յամս Տրայիանոսի կայսեր՝ իբրեւ հովիւ քաջ առաջնորդէր հաւատացելոցն որ անդ. սա դարձոյց զերեւելի զքուրմ կռոցն զայր ծերունի Սարբիլոս անուն 'ի հաւատս և զքոյր նորա զԲաւէա. որոց պատճառաւ դարձան և բազումք 'ի հեթանոսաց. 'ի կատարիլ նահատակութեամբ Սարբիլոսի և քեռ նորա 'ի Լիւսիաս դատաւորէ, ըմբռնեցաւ 'ի նոյն տանջանս և երանելի եպիսկոպոսն Նարսումա և քերեցաւ մարմին նորա երկաթի քերչօք 'ի կախաղանի. այլ փութով հասեալ արքունի հրամանին յաղագս ազատութեան քրիստոնէից առ հասարակ՝ ազատեցաւ 'ի տանջանացն. և այնուհետև համարձակ և ս քարոզէր և դարձուցանէր զբազումս յանհաւատից։ Կացեալ ամենայն առաքինութբ հօգւոյ և հասեալ 'ի բարւոք ծերութիւն՝ փոխեցաւ 'ի կենաց աստի յամի տեառն 115։

Ամին բարսումա եպիսկոպոսի Եդեսիոյ յաջորդեցին և այլք ցըռվանդակ լուսաւորութիւն ողջոյն ազգի հայոց 'ի հաւատս քրիստոնէութե. որպէս և հայր Մկրտիչ աւգերեան 'ի վարս սրբոց հատոր Ժըրդ, համար 144. ,,Նաև յայս ամենայն փոփոխութիւնս ոչ պակասեաց քրիստոնէութիւն Եդեսիոյ, այլ հանդերձ հալածանօք մնաց անդ միշտ հօտն քրիստոնէական, և հովիւ նոցա՝ աթոռակալ սուրբ առաքելոյն Թադէի և յաջորդ Ադդէի սուրբ հայրապետին մինչև ցայսօր,,։ յորոց՝ այսինքն 'ի հովուաց անտի, մին

173, Կոն, կոնաս կամ կոգնատիոս եպիսկոպոս եդեսացւոց քաղաքի 'ի ժամանակի անդ տէրութեանն Դիոկղետիանոսի, և 'ի դատաւորու-

թեանն Մուսխանոսի 'ի նոյն Եդեսիա քաղաքի։

Սոյն այս Կոն եպիսկոպոս յիշատակի 'ի հին ճառընտրի գրանոցի մեծի Աթոռոյս՝ 'ի ճառի անդ Շմոնա կամ Սամոնայ, և Գուրիա կամ Գուրիասայ, որպէս 'ի սկզբան ճառին, նոյնպէս և 'ի վախճանին։ Եւ սկսուած ճառին էր ըստ այսմ. ,,Յամի վեց հարիւրորդի, հնգետասաներորդի Աղէքսանդրի մակեդոնացւոյ՝ որ է ամ ութերորդ թագաւորութեանն Դիոկղետիանոսի որ թագաւորեաց զինն և տասն ամ, . . . . յամս Կոնա եպիսկոպոսի Ուռհայի, արար Դիոկղետիանոս հալածումն քրիստոնէից յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ ևն,,։

Այսու թուականօք ստուգի թէ՝ Կոն եպիսկոպոս Եդեսիոյ էր յամին իբր 291=295. յիշատակի սոյն եպիսկոպոս և 'ի վարս Աբիբասայ սարկաւագի. վարք սրբոց հատոր Ըրդ համար 444։

174, Մխիթար վանահայր (Եդեսիոյ եպիսկոպոս). Սա եկաց 'ի սիւնիս յամին իբր 150, կամ 170. 'ի տեղւոջն, որ զկնի Թանահատի վանք կոչեցաւ. զայսմանէ տողէ 'ի պատմութեան սիւնեաց Ստեփաննոս օրպէլ՝ զոր և առնու 'ի ստորագրութեան նոյն Թանահատի վանաց մատեանն հին հայատառ ըստ այսմ. ,,Բայց գտաք յիւրոց արձանագրութեանցն (նոյն վանաց) եթէ Ն (400) ամաւ յառաջ (այն է, յամի փրկութեան 150) շինեցաւ եկեղեցին քան զհայ Թուականն յիշխանացն սիւնեաց յանուն սրբոյն նախավկային Ստեփաննոսի։ Եւ էր եղեալ հայր վանիցն՝ որոյ անուն Մխիթար, որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինութեանց,,։ որոյ և մարմինն թաղեցաւ փայտակերտ արկեղօք 'ի գետնափոր վիրապի մերձ յեկեղեցին 'ի փոքր բլրակի միում, որ կայր մինչև յաւուրս Ստեփաննոսի օրպէլեան,,։

175, Զոթիկոս. սա էր եպիսկոպոս հաւա-

տաճելոցն՝ որ ՚ի կողմանս քաղաքի փոքուն Հայոց. և պայծառանայր ՚ի ժամանակի անդ Մարկոս օրեղէոս կայսեր, և ընդդիմանայր բանիւք և Թղթովք հերձուածողին Մոնտանայ՝ ըստ Եւսեբեայ յեկեղեցական պատմութեան, դպրութիւն Ե, գլուխ ԺԴ. ։ Նա զկնի Մարկոսի օրեղէոսի, և որդւոյ նորա, ՚ի հալածանս Սեւերոսի կայսեր կատարեցաւ ՚ի տէր. յամին Քրի 160=190։

176, Աղեքսանդրոս եպիսկոպոս Գամրաց ՚ի փոքրն Հայաստան. զկնի ոչ սակաւ ժամանակ հովուելոյ անդ զժողովուրդն՝ ըստ յայտնութեանն եղելոյ ՚ի վերուստ, ելանէ յԵրուսաղէմ առ ժամանակօք Նարկեսոսի եպիսկոպոսի քաղաքին՝ որ հարիւրամենիւք աւելի իմն բռնադատեալ յեղբարց անտի Երուսաղէմացւոց՝ պաշտէ անդ զեպիսկոպոսութիւնն ընդ Նարկեսոսի, ըստ Եւսեբեայ յեկեղեցական պատմութեան, դպրութիւն Զ. գլ, ԺԱ ։ ,, Իբրև ոչ կարէր այնուհետև Նարկէսոս ... վասն բազում ծերութեանն .. կոչեաց զնա (զԱղեքսանդրոս) տեսչութիւնն Աստուծոյ ՚ի ձեռն տեսլեան՝ որ երևեցաւ նմա ՚ի գիշերի, պաշտել նմա ընդ Նարկէսոս և այլն. յամին Քրի 210=230 ,, ։

177, Մեհրուժան եպիսկոպոս Հայոց ՚ի Սեբաստիա կապադովկացւոց ՚ի ժամանակս Խոսրովու արքայի Հայոց հօր մեծին Տրդատայ. առ սա գրեաց սուրբն Դիոնէսիոս հայրապետ Աղեքսանդրիոյ՝ ըստ Եւսեբեայ յեկեղեց՛՛ պատմութեան. դպրութիւն Զ, գլ, ԽԶ. ,, Եւ առ այնոսիկ (գրեաց Դիոնէսիոս) որ էին յԱրմէնիա. զի էր նոցա եպիսկոպոս Մեհրուժան ,, ։ Նա ՚ի լինել հալածանաց քրիստոնէից ՚ի Դեկոսէ և զկնի նորա ՚ի Վաղերիանոսէ, ընդ այլոց բազմաց վկայից կատարեցաւ և սա ՚ի Խոսրովայ արքայէ Հայոց յամի 257։

178, Ակակիոս եպիսկոպոս ՚ի Տիգրանակերտ

քաղաքի Հայոց՝ ի ժամանակս Դեկոս կայսեր համարձակ քարոզէր զՔրիստոս. կալաւ յանհաւատից և կացուցաւ առաջի Մարկիանոս հիւպատոսի. և այն ինչ հարցին զվարդապետութենէ նորա, ձառեաց նա յատենի անդ կարգաւ զկամովին մարդեղութիւն Քրիստոսի Աստուծոյ ցհամբարձումըն և ցերկրորդ գալուստն ՚ի դատել և ՚ի հատուցանել ըստ գործոց. իսկ հիւպատոսին անլուր գտեալ բանից սորայն՝ եւ հարկանել զնա ուժգին և արկանել ՚ի բանտ. և ապա գրեաց առ Դեկոս և ընկալեալ զպատասխանի՝ արձակեաց ըզսուրբ եպիսկոպոսն Ակակիոս. և նա գնաց ՚ի տեղի իւր, քարոզէր և լուսաւորէր զբազումս. և կացեալ ըստ հաճոյից Աստուծոյ՝ հանգեաւ խաղաղութեամբ: Նա եղև սա իբր յամին 250=280. յայսմաւուրքն ՚ի 11, ապրիլէ. իսկ ըստ տէր Իսրայէլի ՚ի 22, մարտի:

179, Աքքեղայոս եպիսկոպոս ՚ի միջագետս Հայոց յամին իբր 260=280. զոր յառաջ բերէ հայր Միքայէլ սալլանդեան յայլազգի հեղինակաց ՚ի կրօնագիտութեան անդ յերես 99:

180, Փիրմիլիանոս, պարմելիանոս կամ պերմեղեղիոս այր սքանչելի և հաւատարիմ պաշտօնեայ եկեղեցւոյ յաշակերտութենէ անտի Որոգինէսի՝ լի՛ շնորհօք վարդապետութեան. որոյ մը կացուցաւ եպիսկոպոս ՚ի Կեսարիա կապադովկացւոց յամի 251, որպէս տեսանի ՚ի վարս Յովհաննու կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի ՚ի համար 58, ՟Գ հատորոյ վարուց սրբոց. ,,Իսկ Փիրմիլիանոս աշակերտ Որոգինի եպիսկոպոս եղեալ կեսարացւոց յաւուրս հալածանաց Դեկոսի յամի տեառն 251, բերեալ էր զայն (ընչխարս Յովհաննու կարապետի) ՚ի Կեսարիա, և պահիւր պատուով ցաւուրս սորայն Վ Ենդեայ: Նա երբեմն երբեմն ելանէր սա ինքն ՚ի կողմանս երուսաղէմացւոց ՚ի

ժողովս նոցա ընդդէմ Պօղա շամշատացւոյն՝ ըստ
Եւսեբեայ յեկեղեցական պատմութեան դպր․
Է․ գլ: ԻԷ:,, Բայց 'ի սոսին իսկ յայսոսիկ (ժէ֊
զինչպատասխանս ժողովոյն) սքանչելի էին Պարմեղիոս ե֊
պիսկոպոս Կապադովկացւոց, և Գրիգորիոս և
Աթենադորոս՝ որ էին եղբարք և հովիւք եկեղե֊
ցւոյն Պոնտացւոց, և Հեղինոս եկեղեցւոյն Տար֊
սոնացւոց ևն,,: Եւ 'ի գլ, ԻԸ․,, Պերմելիա֊
նոս ևս երկիցս անգամ եկն և արհամարեալ դըր֊
բովէաց զայն ինչ՝ զոր միանգամ նորոգեաց անօ֊
րէնն,,: Եւ սա ժամանակակից Սիպրիանոսի եպիս֊
կոպոսին Կարգեդոնացւոց, և մտերիմ նորա ըն֊
տանի Թղթակցութեամբ: Նոյնպէս արթուն հըս֊
կողութեամբ 'ի վերայ հօտին՝ տարաւ և բազում
հալածանաց․ և ապա խաղաղութեամբ հանգեաւ
'ի Քրիստոս յամի 272:

181, Կղէնէոս կամ կղէոնիոս եպիսկոպոս
'ի նոյն Կապադովկիա 'ի ժամանակս Օրեղիանոսի
կայսեր, կրեաց զբազում հալածանս․ հաղորդեաց
'ի մարմին և յարիւն Տեառն զՊորփիւրոս գու֊
սանն․ և զկնի նահատակութեան նորա հանգոյց
զմարմինն 'ի տապանի․ և ինքն յետոյ 'ի հալածանս
Դիոկղետիանոսի 'ի Լիւսիա դքսէն կրեալ զբա֊
զում տանջանս՝ կատարեցաւ յամի տեառն 287:

182, Աղասիոս եպիսկոպոս Սեբաստիոյ ծնն֊
դեամբ յաշխարհէ փոքուն Հայոց 'ի սահմանացն
Սեբաստիոյ․ ըստ միաբան խնդրանաց և միջնոր֊
դութեան հաւատացելոց այնց կողմանց յանձն ա֊
ռեալ ձեռնադրի եպիսկոպոս․ և եղեալ հետևող
Ճշմարիտ հովուին յանձանձէր գթով զհօտ հաւա֊
տացելոցն և զօրացուցանէր զքաջ նահատակսն,
որպէս և զԵւստատիոսեանսն․ և զկնի հալածա֊
նաց և վշտաց մատնեցաւ 'ի ձեռս Ագրիկողայոսի
դատաւորին․ և 'ի միջոցի անդ չարչարանացն և
բանտարկութեան իւրոյ եղև պատճառ փրկութե

բազմաց. և ապա ըստ վճռոյ անօրէն դատաւորին գլխատեցաւ սուրբ հայրապետն Մակարիոս արտաքոյ քաղաքին Սեբաստիոյ 'ի վերայ վիմի հանդերձ երկու հաւատացեալ մանկամբք յամի տեառն իբր 315. յամսեանն փետրվարի Ժ, կմ Ժա։

183, Պետրոս եպիսկոպոս յեպիսկոպոսացն Սեբաստիոյ և ընտանի բարեկամ Աթանագինէ եպիսկոպոսի. և թերևս քորեպիսկոպոս այնր վիճակի որ վասն քրիստոսական հաւատոցն նահատակեցաւ 'ի նմին քաղաքի Սեբաստիոյ. յորում տեղւոջ զկնի նահատակեցաւ և երանելի եպիսկոպոսն Աթանագինէ, որպէս տեսանի 'ի վարս նորին Աթանագինեայ 'ի համար 347. դ. հատորոյ վարուց սրբոց. „Եւ նոյն ժամայն սպասաւորքն առեալ արագ և քան զբանն՝ զգործն կատարեալ, լուցին կրակ մեծ 'ի տեղւոջն, յորում կատարեալ էր սուրբ եպիսկոպոսն Սեբաստիոյ Պետրոս բարեկամ սրբոյն Աթանագինեայ. ուր և յետոյ շինեցաւ փոքր աղօթատուն և այլն„։

184, Աթանագինէ. սա էր զաւակ քրիստոնեայ ծնողաց, եղբայր Մարիամու սրբասէր ամուսնոյ պարթևին Գրիգորի լուսաւորչին Հայաստանեայց՝ 'ի սահմանացն Սեբաստիոյ. սնաւ 'ի մանկութենէ 'ի գովելի վարս և յուսմունս և էր զօրաւոր 'ի բանս և 'ի գործս. լուեալ և տեսեալ եպիսկոպոսին Սեբաստիոյ զբարի վարս Աթանագինեայ, էառ զնա առ ինքն և ձեռնադրեալ կացոյց տեսուչ իւրումն վիճակի՝ լինել ինքեան գործակից։ Իսկ այնպէս՝ Աթանագինէս ըստ աստուածային շնորհացն որ յինքեան, խնամարկէր զժողովուրդն արժանի իւրումն կոչման. և վասն ազատութեան գերելոցն 'ի ժողովրդենէ իւրմէ 'ի բարբարոսս, գնաց զկնի նոցա. և 'ի ճանապարհին արարեալ զքանչելիս յաղթութիւն մանկան միոյ 'ի վիշապէ՝ յայտնեցաւ եպիսկոպոսի գաւառին. և բըռ-

նադատեալ 'ի նմանէ ըստ աստուածային կոչմանըն ձեռնադրեցաւ եպիսկոպոս. և զկնի ազատելոյ զգերեալսն դարձաւ նորօք հանդերձ 'ի վիճակ իւր՝ ոչ հանելով 'ի լոյս զբան ձեռնադրութեանն իւրոյ յեպիսկոպոս. կացեալ 'ի նմին պաշտաման իբրև զամս քսան, հովուէր և մխիթարէր զհօտն տէրունի հոգեբուխ վարդապետութեամբն իւրով և պէսպէս հրաշից ներգործութեամբք. մխիթարէր և քաջալերէր զբանտեալսն 'ի հաւատացելոց վասն քրիստոսական յուսոյն և զկատարեալսն նահատակութեամբ հանգուցանէր 'ի նշանաւոր տեղւոջ:

Այսպիսի արիական հսկողութիւն Աթանագինեայ 'ի վերայ հաւատացելոցն հասեալ 'ի լսելիս թագաւորին՝ որ 'ի Նիկոմիդիա բիւթանացւոց, կալաւ զնա Ագրիկողայոս դատաւոր Սեբաստիոյ ըստ հրամանի թագաւորին. և զկնի բազմօրինակ հարցափորձի և հաստատուն գտանելոյ երանելւոյն 'ի ճշմարտութեանն՝ վճիռ եհատ դատաւորն՝ այրել զսուրբն:

Այսպիսի նահատակութեամբ վկայեաց սուրբ եպիսկոպոսն Աթանագինէ յամի տեառն իբր 285 = կամ 290, յամսեանն յուլիսի: Ապա զկնի ամաց ինչ պատուական նշխարք նորա բերաւ 'ի մեծն հայս 'ի ձեռն մեծին Գրիգորի լուսաւորչի՝ նուիրմամբ 'ի Ղեւոնդեայ պատրիարգէն Սեբաստիոյ կապադովկացւոց:

185, Ղեւոնդէս. սա ևս եպիսկոպոս 'ի Սեբաստիա կապադովկացւոց՝ որ զյոլով վիշտս կրեաց 'ի ժամանակս մեծի հալածանացն. ձեռնադրեաց զսուրբ Գրիգոր լուսաւորիչն յամի 302. և եհաս մինչև 'ի ժամանակս ժողովոյն Նիկիոյ և էր ընդգլխաւորսն. և ապա խաղաղութեամբ հանգեաւ 'ի տէր:

186, Բաց յայսոցիկ՝ որք 'ի վերայ յիշեցան,

գտանին և այլ աշակերտք և եպիսկոպոսունք 'ի Հայաստան նախ քան զսուրբն Գրիգոր. և ահա Միխայէլ պատրիարգ Ասորւոց 'ի շարակարգութեան անդ հովուաց Հայաստանի, յիշատակէ և զերկուս աշակերտս առաքելոց Հայաստանի՝ զԽաթ և զՊաթէ. և յանուն նոցա կառուցեալ են 'ի վաղուց մենաստանք 'ի Սիւնիս և յԱղուանս. և կոչին ցարդ յանուն նոցին՝ Խաթրայ վանք, և Պաթէի վանք. զարմանագիրսն այնց տե՛ս 'ի վախճանի յաւելուածոյ Է հատորոյ:

Յովսէփ քահանայ Ջուղայեցի յիշատակէ զԱքիտս ումն յաջորդ Ադդէի յեդեսիա՝ յաշակերտաց անտի Թադէոսի. և դնէ նահատակեալ յամի 46, 'ի Սանատրկոյ այն ինչ տիրեաց նա և Եդեսիոյ զկնի մահուանն Անանէի որդւոյ սրբոյն Աբգարու. Է հատոր գլուխ 16: և զայլ հովիւս ես տե՛ս 'ի կրօնագիտութեան Միքայէլ ծայրագոյն վարդապետի սալլանդեան. 120, 121, 122:

187, Վաստակք մշակութեան երանելի առաքելոց Տեառն մերոյ Յիսուսի հասելոցն 'ի Հայաստան աշխարհ ոչ մնացին առանց բաւականաչափ արդեանց. թէև ոչ զօրեցին զազգն ողջոյն ածել 'ի հաւատս, բայց և այնպէս պահպանեցին 'ի ծոցի Հայոց զեկեղեցի հաւատացելոց հանդերձ հովուօք նոցին՝ եպիսկոպոսօք 'ի տեղիս տեղիս Հայաստանի որպէս ցուցաւ 'ի վերոյ յաջորդաբար ցբովանդակ լուսաւորութիւն ազգին միջնորդութեամբ մեծի պարթևին Գրիգորի լուսաւորչի:

Այսմ յայտնի ստուգութեանս վկայեն յաջորդութիւնքն եպիսկոպոսաց յԵդեսիա, 'ի Կեսարիայն կապադովկացւոց, 'ի Սեբաստիա, յԱրտազ, 'ի Սիւնիս և յայլ մասնաւոր սահմանս Հայաստանի. յորս ոչ միայն հովիւքն այլ և հօտքն նոցին՝ յորոց բազումք ժամանակ առ ժամանակ 'ի մասնաւոր և յընդհանուր հալածանսն նահա-

տակեցան. է՛ր զի առանձին, և է՛ր զի ընդ հօվուք իւրեանց. և այնպէս վկայելով ճշմարտութեանն և աւանդելով յետագայից զքրիստոնէութիւնն հաստուցին ցվախճան երորդ դարու:

Առ այս նպատակ արժան է ընթեռնուլ զինչ ինչ հաստատուածս բանից ոմանց երևելի հեղինակաց ՚ի ծանօթութ նացին ազգասէր ընթերցանելեացն:

Եւսեբի յեկեղեցական պատմութեն ը̄րդ դպրութեան ՚ի գլուխ ա̄. „ Օ՛ի Թովմաս զԹադէոս իբրև ՚ի զօրութենէ Աստուծոյ առաքեաց յԱբգարհա (եդեսիա) լինել նմա քարոզ և աւետարանիչ վարդապետութեանն Քրիստոսի. զի ՚ի գըրոց անտի (եդեսիոյ) որ գտաւ անդ, ցուցաք յառաջ քան զփոքր մի: Իսկ իբրև եհաս նա յաշխարհըն այն, զԱբգար բժշկեաց բանիւ Քրիստոսի, և զամենայն մարդիկ աշխարհին զարմացոյց սքանչելի զօրութեամբքն՝ զոր գործեաց և կատարեաց: Իսկ ՚ի ձեռն առաքելոցն իւրոց (աշակերտաց) առաքեաց նա (Թադէոս) զգործս իւր. և մերձեցոյց զնոսա յերկրպագութիւն զօրութեանն Քրիստոսի. և արար զնոսա աշակերտս վարդապետութեան կենացն մինչև ցայսօր ժամանակի. իբրև ՚ի նմանէ ամենայն քաղաքն Եդեսացւոց անուանն Քրիստոսի մշտնջենաւորեալ է, և օրինակ մեծ օգնութե̄ փրկչին մերոյ յայտնի է ՚ի նոսա. և սոքա ասացեալ են իբրև ՚ի պատմութեանց առաջնոց „:

Եւս նոյնն՝ յԸ̄րդ դպրութեան ՚ի գլուխ 12. „ Օ՛ինչ պիտոյ է այսուհետև անուամբ յիշատակել զմնացորդացն, կամ թուել զբազմութիւն արանց, կամ նկատել ազգի ազգի տանջանս սքանչելի վկայիցն. զի ՚ի նոցանէ տապարօք կատարեցան որպէս զիարդ եղև յԱրաբիա. և կիսոց բարձք խորտակեցան. որպէս և անցք անցին ընդ այնոսիկ՝ որ ՚ի Կապադովկիայն էին. և այլք վերացին ՚ի բարձու զոտից իւրեանց կախեցան. և հուր

մխախառն եղեալ 'ի ներքոյ նոցա, և 'ի ծխոյն հեղձ-
նուլին . որպէս եղև 'ի Միջագետս . և զոմանց ուն-
չըս և զականջս դրոշմեցին և զմատունսն ծայրա-
քաղ արարին : .... Բայց որ ահագին է լսելեաց ան-
գամ՝ համբերէին . այլ 'ի կողմանէն Պօնտացւոց ,
զի եղեգունս սրեալս ի ծայրս մատանցն 'ի ներ-
քոյ եղնգաց նոցա ցըցեալ վարէին և այլն ,, :

Մովսէս խորենացի 'ի պատմութեան Հա-
յոց հատոր Գ. , 'ի գլուխն 72 . ,, Պերմելիանոս
եպիսկոպոս կապադովկացւոց էր այր սքանչելի
յուսումնասիրութիւն ... սա բազում խօսս արար-
կորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղե-
ցւոյ .... գրէ զբազումս վկայեալ և Խոսրովու (ար-
քային հայոց) 'ի մերում աշխարհիս . համայն և յետ
նորա օտարք յաւարաց , բայց զի ոչ ճշմարտութե-
ամբ պատմէ , և ոչ զանուանս նշանակէ կամ զը-
տեղիս կատարմանցն , ոչինչ կարեւորագոյնս համա-
րեցաք երկրորդել ,, :

Միքայէլ պատրիարգ Ասորւոց 'ի պատմութե-
իւրում առաջի առնէ ըստ այսմ . ,, Բայց զի փու-
թով վճարեաց նախընթացն 'ի թագաւորս Աբ-
գարոս զկեանսն . և անհոգացեալ Սանատրուկ իշ-
խանն թագաւորեաց միահեծան . և սպան զառա-
քեալն (Թադէոս) , և զդուստրն իւր սուրբ կոյս
(Սանդուխտ) զհաւատացեալն 'ի Քրիստոս : Եւ եղև
փոխանորդ առաքելոյն Զաքարիա եպիսկոպոս . և
զկնի այնորիկ եկն 'ի նոյն վիճակն Բարդուղիմէոս ,
և 'ի նոյն թագաւորէ կատարեցաւ . և բարձաւ
համարձակութիւնն հաւատացելոց . բայց հաւատն
հաստատեալ առաքելական հիմամբ ոչ պակասեաց
մինչև 'ի գալն առ նոսա սուրբ նահատակացն
Հռիփսիմեանց , և 'ի պատճառս նոցա հաւատալ
մեծին Տրդատայ 'ի նմին ցեղէ Աբգարու 'ի
ձեռն մեծահանդէս վաստակաւորին Գրիգորի՝
որ և նա ցեղակից անդրանիկ պսակաւորին 'ի Քր-

րիստոս Աբգարու երանելոյն ՚ի Տեառնէ,,:

Հայր Մկրտիչ աւգերեան ՚ի վախճան ճառի Բարդուղիմեայ առաքելոյ ՚ի վարս սրբոց հատոր Թրդ՝ համար 446, այսպէս խօսի. ,,Նաև ըստ այսմ իրաւամբ ճանաչի եկեղեցի Հայաստանեայց աշակերտ հարազատ երկոցունց սուրբ առաքելոցս Բարդուղիմէոսի՝ որ մին է յերկոտասանիցն. և Թադէոսի՝ որ էր յեօթանասնից. և հայրապետութի Հայոց կոչի և է աթոռակալութիւն ՚ի յաջորդութիւն Աթոռոյ սրբոյն Բարթուղիմէոսի և Թադէոսի. զի թէպէտ սուրբ լուսաւորիչն մեր ՚ի կեսարիա ձեռնադրեցաւ, այլ նստաւ յԱթոռ՟ն առաքելոցս. այսինքն ՚ի վիճակի նոցա, որ է հայաստան աշխարհ. ուր ոչ երբէք պակասեաց յաջորդութիւն քրիստոնէութեան (և եպիսկոպոսութեան) ոչ միայն յեդեսիա, որ յետ միանգամ լուսաւորութեան՝ միշտ ունէր զհօտ հաւատացելոց ՚ի ծոցի իւրում, այլ և ՚ի մեծն հայս. ուր կային քրիստոնեայք սփռեալք աստ և անդ հալածանօք հանդերձ. յորոց և զբազումս նահատակեաց խոսրով արքայ հայոց՝ հայրն տրդատայ, ըստ գրելոյ խորենացւոյն. իսկ առ տրդատաւ յարոյց Աստուած լուսաւորիչ համօրէն տանս հայոց զերկիցս երանելին զգրիգորիոս պարթև՝ որպէս պարգևական զաւակ կենդանի նշխարաց սրբոյն Թադէոսի և Բարթուղիմէոսի, և առաքելական հոգւով արժանաժառանգ Աթոռոյ սուրբ առաքելոցս,,:

ամք
տոն Կաթողիկոսունք.

188, Գրիգոր լուսաւորիչ պարթև որդի Ա
257 նակայ պահլաւունւոյ ծնանի ՚ի Վաղարշապատ արքայանիստ քաղաքի Հայոց. ընդ ձե
258 ռըն դայեկին փախստեամբ զերծանի ՚ի Կեսարիա կապադովկացւոց. և անդ սնանի և ա

ճի կրթութեամբ քրիստոնէական հաւատոց
և ամուսնացեալ ծնանի զերկուս որդիս՝ ըզ-
Վրթանէս և զԱրիստակէս: Ապա հաւանու-
թեամբ ամուսնոյն իւրոյ Մարիամայ հրա-
ժարեալ յամուսնական պարտաւորութենէ
280 գնայ, մտանէ 'ի ծառայութիւն Տրդատայ
որդւոյն Խոսրովու արքայի Հայոց՝ որ օր քան
զօր բարձրանայր 'ի պատիւ արիական քաջու-
286 թեամբ իւրով յաշխարհին Յունաց: Զարչա-
րի 'ի Տրդատայ նորապսակ արքայէ Հայոց
յԱկեղեաց գաւառի և անկանի 'ի Խորվի-
րապն Արտաշատ քաղաքի վասն 'ի քրիստոս
301 հաւատոցն: 'Ի վիրապէ անտի ելանէ և լու-
սաւորէ զազգ Հայաստանեայց թագաւորա-
ւըն հանդերձ. և տեսանէ զայն հրաշալի և
նորապարգև տեսիլ տեսչութեանն Աստու-
ծոյ առ ազգ Հայաստանեայց: ԵՒս ապա հար-
կեցուցիչ խնդրանօք արքային Տրդատայ և
302 տեսլեամբ հրեշտակի Աստուծոյ գնայ 'ի Կե-
սարիա կապադովկացւոց և ձեռնադրեալ
յեպիսկոպոս 'ի Ղեւոնդեայ պատրիարգէ
քաղաքին՝ վերադառնայ և շինէ զվանս ին-
նակնեան տեղւոյն 'ի Տարօն գաւառի:
303 Գայ 'ի Վաղարշապատ քաղաք և շինէ ը̄ ար-
քային Տրդատայ զհոյակապ մեծ եկեղեցին 'ի
նշանադրեալ տեղւոջն՝ զոր 'ի տեսլեան ե-
տես լուսաձև կամարայարկ 'ի քաղաքամէջ ան-
318 դըր մերձ յապարանս արքունի: Ձեռնադրէ
զորդի իւր զԱրիստակէս յեպիսկոպոս փո-
խանորդ ինքեան խնդրանօք արքային Տըր-
332 դատայ: Կարգէ զԱրիստակէս զորդի իւր կա-
թուղիկոս ազգին և ինքն առանձնանայ 'ի
գաւառն Դարանաղեաց յայրն Մանեայ որ-
բոյ կուսին միոյն յընկերացն Հռիփսիմեանց:
Կեայր անդէն 'ի մարդկանէ անտես իբրև սե-

րովքէ երկնաւոր. ուրանօր և աւանդէ զհո֊
գին 'ի դասս վերին զինուորութեանցն. և
մպքուր մարմինն մնայ անթաղ և անապական
'ի ժամանակս ինչ՝ մինչև հոլուաց ոմանց գը֊
տեալ՝ կարկառ քարանց տանեն 'ի վերայ: Ա֊
պա 'ի նոյն դարու՝ յորում հանգեաւ և
ամփոփեցաւ անգիւտելի յուշքէ, յայտնե֊
ցաւ 'ի ձեռն ուրումն ճգնաւորի Գառնիկ
անուանելոյ, զոր բարձեալ անտի ամփո֊
փեաց 'ի Սորդան գիւղ գաւառին այնորիկ.
և հուսկ յետոյ եբեր անտի 'ի Աղարշապատ
քաղաք Սմբատայ իշխանն հայաստանի Գրի֊
գոր մամիկոնեան ամբողջ ամենայն ոսկերօքն՝
որպէս վկայեն ակնյայտնի ստուգութեանն
պատմիչք ազգի Հայոց՝ որպէս զփոխադրու֊
թենէ նշխարացն, նմանապէս և զշինութենէ
եկեղեցւոյն 'ի պատճառս այնր փոխադրու֊
թեան՝ յառաջար անդր Աղարշապատու,
որք են՝ Սեբէոս եպիսկոպոս, Ստեփաննոս
տարօնեցի, Տ̄ րդ. Յովհաննէս կաթուղիկոս, Կի֊
րակոս, Վարդան և Մովսէս կաղանկատու֊
ացի Աղուանից պատմիչ:

Ասա մնաց այսոցիկ պատմագրաց քա֊
ջայայտ ստուգի՝ թէ բաց 'ի գլխոյն և 'ի
պատուական Աջոյն ոչինչ այլ մասունքն նշխա֊
րաց մեծին Գրիգորի լուսաւորչի կան ար֊
տաքոյ Հայաստանի, կամ սփռեալ և տարա֊
ծեալ ուրեք:

Շնորհաբաշխ աջն բազում վկայիւք
հաստատեալ կայ արդէն աստ յԱթոռ այսր
Կաթուղիկէ Էջմիածնի զկնի յոլով տեղա֊
փոխութեանց 'ի զանազան ժամանակս (60):
Իսկ պատուական գլուխն՝ որ պահէր 'ի նոյն
յիշատակել եկեղեցւոջ առաջարին Ա֊
ղարշապատու՝ զոր շինեալ է Տ̄ րդ. Ներսէսի

կաթուղիկոսի տայեցւոյ՝ որոյ և ծնօղն տուաւ Խորայէլ եպիսկոպոսին Մզուանից, ըղկնի կործանման եկեղեցւոյն և աւերանաց Հայաստանի տարաւ այն ըստ այցելութեան վերջնոյն Գագկայ արքայի 'ի վանս Խաթլոյ և Սարոսի իբրև յանքոյթ ինչ տեղի. և անտի մասն ինչ 'ի գլխոյն տարաւ Սմբատ էլիկումեան օրբէլեանց 'ի սուրբ ուխտն Նորավանից աշխարհին Սիւնեաց՝ ըստ վկայելոյ պատմութեան օրբելեանց՝ զոր հանաք 'ի նախագահ վանիցն սիւնեաց: ,, Գնաց (Սմբատ էլիկումեան օրբէլեանց վասն հայր փայտիցն 'ի Նաւենոյ 'ի պէտս չիռածայն Հուլաւու խանին) 'ի վանսն Խաթլոյ և բազում ծախիւք և մեծաւ ջանիւ էառ մասն ինչ 'ի գլխոյ սուրբ լուսաւորչին Գրիգորի, զի կայր անդ մի կողմ գլխոյն... զոր բերեալ և ժողովեալ էր անդ վերջին Գագիկ թագաւորն բագրատունի և եդեալ 'ի պահեստի 'ի կործանման ժամանակին, և բերեալ զանպատմելի գանձն աստուածային, զարդարեաց ոսկւով և արծաթով եդեալ յաղխսաձև պահարանի և բնակեցոյց 'ի գերահռչակ ուխտին Նորավանից,, :

189, Արիստակէս կրտսեր որդի սրբոյն Գրիգորի լուսաւորչի. այն ինչ էր սնդեալ մանուկ, կայր առ մօր իւրում յանապատի կուսանաց. և 'ի զարգանալ հասակին չոգաւ առ միայնակեաց ոմն Նիկոմաքոս անուն և վարժեալ առ նմա վարուք սրբութեան եղև հոգելից մենաւոր և առանձնացաւ յանապատ ուրեք հրամանաւ վարդապետին իւրոյ. և 'ի լուսաւորիլ բովանդակ ազգի Հայոց յածգիտութիւն, 'ի ստիպմանէ խնդրակաց առաքելոցն 'ի մեծէն Տրդատայ եկն 'ի հայաստան առ մեծն Տրդատ. ընդ որ ուրախ եղեւ

318 արքայի՝ տայ ձեռնադրել սրբոյն Գրիգորի
զնա ինքն զԱրիստակէս յեպիսկոպոս։
Յերկրորդ ամի ձեռնադրութեանն իւր գը-
նայ ընդ հօր իւրում և ընդ մեծին Տրդատայ
325 ՚ի Հռոմ։ Եւ զկնի դարձին գնայ ՚ի ժողովն
Նիկիոյ փոխանորդ հօր իւրում սրբոյն Գր-
332 իգորի։ Յաջորդէ յաթոռ հայրապետութե-
յիսպառ առանձնանալն սրբոյն Գրիգորի յա-
նապատս։ Հովուեալ զազգն ողջոյն ուղղու-
թեամբ հաւատոց՝ եղև օրինակ սրբութեան
բազմաց։ Շինեաց զեկեղեցիս և զմենաս-
տանս կրօնաւորաց և զմեծ եկեղեցին ՚ի գիւ-
ղաքաղաքին Խոգան որ յաշխարհին Ծոփաց։
Յամի 339, այն ինչ դէմ եդեալ գնայր
յաշխարհն Ծոփաց յայցելութի հօտին՝ յԱրքե-
ղայոս անուն իշխանէ կանխաւ ոխացելոյ ընդ
սրբոյն և ՚ի դարան մտելոյն զճանապար-
339 հայն, սրով կատարի երանելին. զորոյ զմար-
մին բարձեալ աշակերտացն՝ հանգուցանեն ՚ի
Թիլն աւանի գաւառին Եկեղեաց։

Աջ սրբոյ հայրապետիս գտանի աստ ՚ի Կաթուղիկէ Եկեղեցւոջ սրբոյ Էջմիածնի (65,78)։

190, Արթանէս երէց որդի սրբոյն Գրիգորի լուսաւորչի, որ ի հեռանալ ծնողացն՝ հօրն առ Տրդատ և մօրն յանապատս կուսանաց, մնաց առ դայեակն իւր. և ՚ի զարդանալ հասակին ամուսնացաւ անդ ՚ի Կեսարիա կապադովկացւոց. ուրանօր և ծնաւ զերկուս որդիս՝ զԳրիգորիս և զՅուսիկ. և ապա ընդ եղբօր իւրում Արիստակեայ եկն ընտանեօք ՚ի կոչ արքային յԱրարատ։

Եւ ՚ի կատարիլ նահատակութեամբ
եղբօրն յԱրքեղայոս իշխանէ՝ հարկեցուցիչ
339 խնդրանօք արքային յաջորդէ յԱթոռ հայ-

բարեպաշտութեանն զնի կանխաւ հրաժարելոյն յամուսնական պարտուց պարկեշտ ամուսնոյն իւրոյ. և գործակցութեամբ մեծի արքային ըստ իմաստութեան հոգւոյն շնորհաց հովուեր զազգն:

Գրութեամբ իւրով առ Մակարիոս
340 եպիսկոպոսապետ Երուսաղէմի ընկալաւ ըզկանոնս ծիսից և պաշտամանց խորհրդոց եկեղեցւոյ ՚ի պէտս հօտի Հայաստանեայց: Զնի այր խնդրեաց Թղթով զինչ ինչ բանս վերաբերեալս առ բանս հաւատոյ և առ վարդապետութիւնս ՚ի սրբոյն Յակոբայ հայրապետէն Մծբին քաղաքի. և ընկալաւ զայն ութեւտասն գլխովք՝ որ արդ անուանի Զգօն մատեան, յանուն սրբոյ հայրապետին:

Զնի փախչանի արքային Տրդատայ դրդեալ յոմանց իշխանաց արք արիւնահեղք՝ այն ինչ կամէին պատահել սրբոյ հայրապետին սրով անդ ՚ի Մաորավանս, կալեալ ձեռք նոցա յաներևոյթ զօրութենէ՝ մինչև երանելւոյն անցեալ անփոյթ ընդ մէջ նոցա, գընաց յԵկեղեաց գաւառ ՚ի Թիլն աւան:

Գրութեամբ իւրով ընդ նախարարսն
343 առ Կոստանդ կայսր տայ Թագաւորեցուցանել Հայոց զորդին Տրդատայ Զխոսրով Բ.
353 զնի փախչանի սրբին Խոսրովու անցանէ ՚ի Կոստանդինուպօլիս ընդ ոմանց նախարարաց առ կայսր՝ ուր Թագաւորեցուցեալ զՏիրան խոսրովեան՝ դառնայ ՚ի հայս: Նա ապա լցեալ
355 զաւուրս կենաց իւրոց փախչանի. որոյ զմարմին ամփոփեն ՚ի Թորդան գիւղ գաւառին Դարանաղեաց:

191, Յուսիկ որդի Աթանիսի որդւոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչի ծնեալ ՚ի Կեսարիա կապադովկացւոց, և զնի գալստեան

յԱրարատ ընդ ծնողացն՝ ամուսնացեալ ընդ դստեր Տիրանայ արքայի՝ ծնանի զերկուս որդիս զՊապ և զԱթանագինէ. և յետ այնր հրաժարեալ յաշխարհային զբաղմանց՝ ընդ հոգևորսն կրթէր։

Ապա զկնի վախճանի հօր իւրում
356 ընտրեցաւ և կարգեցաւ ՚ի կաթուղիկոսութեան Աթոռ և հովուէր զժողովուրդն արթնութեամբ և անվեհեր խրատուք առ ամենայն հասակ։

Խորտակէր ընդ ոտիւք զպատկեր Յուլիանոսի կայսեր՝ զոր ընկալեալ էր արքայն Հայոց Տիրան և կամէր կանգնել յիւր արքայական եկեղեցւոջ գաւառին Ծոփաց. Ապա ՚ի հրամանէ նորին Տիրանայ վասն երկիւղին Յուլիանոսի՝ երանելին Յուսիկ գա-
362 նեալ ջայլախիւք վախճանի յանօրէն ձեռաց. և զմարմինն բարձեալ սարկաւագաց հանգուցանեն ՚ի Թորդան առ հօր իւրում։

192, Փառներսեհ կամ Փառէն անուն՝ որ յԱշտիշատ աւանէ ՚ի վանաց սրբոյն Յովհաննու կարապետի, սակս չլինելոյն յայնժամ ոք անդ ՚ի ցեղէ սրբոյն Գրիգորի, հաւանութեամբ արքային Տիրանայ և նախա-
362 րարացն կացուցանի յԱթոռ հայրապետութեանն. որոյ կացեալ ՚ի նմին գամս իբր ե-
364 րիս՝ վախճանի։

193, Ներսէս մեծն՝ ոստ շնորհալից զաւակ բարեզգեաց շառաւիղեալ յարմատոց բարեաց՝ Թոռն Թոռին սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ որ զկնի ծննդեան և աճման հասակին առաքեցաւ ՚ի Կեսարիա Կապադովկացւոց ՚ի վարժս հելլէն դպրութեան. և առաւել ևս ուսման վասն՝ չոգաւ ՚ի Կոստանդինուպօլիս. ուր և ամուսնացաւ ընդ

դստեր ուրումն մեծի իշխանի Ասպիոնէս ա֊
նուն ։ Սա զկնի վախճանի Փառներսէհ կա֊
թուղիկոսի ընտրեցաւ 'ի նախարարաց և յար֊
քայէ Հայոց Արշակայ և ըստ խորհրդոյ նո֊
ցին եկեալ 'ի Կեսարիա կապադովկացւոց
364 ձեռնադրեցաւ եպիսկոպոսապետ Հայոց՝ յո֊
րոյ վերայ 'ի ձեռնադրութեանն երևեցաւ և
շնորհք Հոգւոյն սրբոյ ։
Եկն անտի 'ի Հայաստան իբրև արփի
գունագեղ իմաստութեամբ և սրբութբ .
ընդ որ խնդաց ազգն ողջոյն, զի ետես անդ֊
րէն յաթոռ հայրապետութեան զշառաւիղն
սրբոյն Գրիգորի ։
'Ի յաջորդ ամի հայրապետութեան իւ֊
365 րոյ հաւանութեամբ Արշակայ արքայի գու֊
մարեաց ժողով մեծ յԱշտիշատ քաղաքի
յեպիսկոպոսաց և 'ի նախարարաց . և հաւա֊
նութեամբ ամենեցուն եբարձ զմերձաւոր
խնամութիւն, արգել զկոծ դնելն 'ի վե֊
րայ մեռելոց հեթանոսաբար, ետ շինել հրա֊
մանաւ արքայի ուրկանոցս և անկելանոցս
ժողովելով յայնս զուրուկս, զկոյրս և զան֊
պիտանացեալ անձինս յապրուստ կենաց՝ որք
յառաջն անյարկ աստանդական տառապէին .
ըստ այսմ ևս ետ կառուցանել զորբանոցս
և զայրիանոցս՝ յորս ետ ժողովել զայնպի֊
սիսն խնամօք . ետ կառուցանել և զօտարա֊
նոցս, հիւրանոցս ըստ այլոցն յամենայն նա֊
հանգս աշխարհիս . ևս և զմենաստանս և ըզ֊
կուսաստանս, և ժողովեաց յայնս զթափա֊
ռիկ շրջող կրօնաւորսն և զանխնամ կուսան֊
սըն . և վասն ամենեցուն սոցա կառավարու֊
թեան և ապրուստի կենաց ետ կարգել յար֊
քունուստ հասոյթս և դարմանս և հաստա֊
տեաց արքունի հրովարտակաւ ։ 'Ի վերայ

ուրկանոցաց, հիւանդանոցաց և անկելանո-
ցաց կացոյց տեսուչ և հոգատար զպարկաւա-
գըն իւր զԽադ, իսկ 'ի վերայ կրօնաստանաց
զայրն սուրբ զՇաղիտայ, զԷպիփան, զԷփ-
րեմ, և զԳինդ սղկունի: Նա այսու օրինա-
կաւ վայելչացոյց զհայաստան աշխարհ իբրև
զբարեկարգեալ դերդաստան մի:

366 Գնայ ընդ առաջ Թէոդոսի սպարապե-
տի և հանդարտեցուցանէ զնա յելանելոյ 'ի
հայս պատերազմաւ. և անտի անցեալ առ կայ-
սըր՝ որում և հաճոյ գտեալ իմաստութբ
և առաքինութեամբն՝ մեծարի 'ի կայսերէ և
ընկալեալ զամենայն զպատանդսն՝ զընտանի-
սըն Տրդատայ եղբօր Արշակայ, և զայնս՝ զո-
րըս տարեալ էր Յուլիանոսի, վերադառնայ
'ի լիակատար խնդութիւն աշխարհին:

368 Անէծ զնա ինքն զԱրշակ արքայ վասն ըս-
պանանելոյ նորա զանմեղն զԳնէլ ըստ խըր-
րատու չարայոյզ արանց և վասն անդարձ մնա-
լոյն 'ի չարաչար վարս, և տեսեալ ևս եթէ
369 անդարձ է նա 'ի գործս իւր, առանձնացաւ
'ի Վաղարշապատ քաղաքէ յանապատ տեղիս:
'Ի փախուստ լինելն Արշակայ 'ի կողմա-
նըս Մարաց, և 'ի յառնելն նախարարաց 'ի
քակել զԱրշակաւան կոտորմամբ բնակչացն
և աւերութեամբ շինուածոցն, փութացեալ
374 առ նախարարսն Թափէ 'ի սրոյ զստնդեայ
զմանկունսն՝ որոց կարգեալ զսնուցիչս,
կարգէ և դարման պիտոյից կենաց նոցա:
Հաշտեցուցանէ զնախարարսն ընդ Ար-
շակ, և ապա գնայ միւսանգամ ընդ առաջ
Թէոդոսի սպարապետին Յունաց և զիջու-
378 ցանէ զնա. և ընդ նմա գնայ 'ի Կոստանդի-
նուպօլիս առ Վաղէս կայսր. այլ կայսրն ոչ
հաճեցաւ ընդ գործ սպարապետին և ոչ ըն-

կալաւ զյաջորդութիւն մեծին Ներսեսի՝ և
ցասուցեալ ևս ետ աքսորել զսուրբ հայրա-
պետն 'ի կղզի ինչ Պատմոս կոչեցեալ ըստ
Ասողկայ:

379 Դառնայ յաքսորանացն 'ի մեծէն Թէ-
381 ոդոսէ և գտանի 'ի ժողովն հարիւր յիսուն
հարց գումարելոց 'ի Կոստանդնուպօլիս. և
թագաւորեցուցեալ Հայոց զորդին Արշա-
կայ զՊապ՝ վերադառնայ պատանդօքն և նո-
րապսակ թագաւորաւն՝ 'ի փրկութիւն աշ-
խարհին փութալով 'ի ձեռաց պարսից. որև
նոքին իսկ պարսիկք խորտակեցան առաջի
զօրացն Հայոց և Յունաց 'ի Ձիրաւ դաշտի
ըստ սադրելոյ աղօթից սրբոյն Ներսեսի:

Զկնի այսոցիկ ամենայնի ազգօգուտ
վաստակոց և ճգանց 'ի բարեկարգութիւն և
383 'ի շինութիւն ազգին՝ փոխի յանցաւորացս
'ի յաւիտենականն քաղաք վերին գաւառի՝
դեղովք մահու 'ի Պապայ արքայէ 'ի 5, տրէ
ամսոյն՝ որ է ա̄ օր յուլիսի. որոյ զմաքուր
մարմինն մեծաւ ուղարկաւորութեամբ համ-
դուցանեն 'ի Թիլն աւանի 'ի մեծ եկեղե-
ցւոջն:

Զկնի անցանելոյ ժամանակաց քակե-
ցաւ այս եկեղեցի 'ի թշնամեաց և անյայտա-
ցաւ տեղի գերեզմանի մեծին Ներսեսի. և
մնաց այնպէս անգիտելի յումեքէ մինչև ցամ
տեառն 1272. յորում յամի տեսլեամբ յայտ-
նեցաւ յառաջին աւուր փետրվարի. և զԱջ
նորա պատուեաց Սարգիս եպիսկոպոս գա-
ւառին Երզնկայի յեկեղեցւոջ յիւրում կա-
ռուցելոյ. իսկ զմիւս բազուկն ետ 'ի Տիրա-
շէն՝ զոր ևս իւր էր շինեալ յայնկոյս գե-
տոյն Եփրատայ:

194, Սահակ յազգէ Աղբիանոսի արք-

եպիսկոպոսին Հարքայ 'ի Մանազկերտ քա֊
ղաքէ գաւառին Ապահունեաց՝ ընտրութեամբ
Պապայ արքային և հաւան խորհրդով մեծա֊
384 մեծաց ազգին Նասր կաթուղիկոս, և կացեալ
386 յայնմ զամս իբրև երկու՝ փոխի յաստի կենաց։

195, Զաւէն յազգականութենէ ան֊
386· տի Աղբիանոսի յաջորդէ յաթոռ հայրապե֊
տութեանն և կացեալ իշխանութեանն զամ
387 մի վախճանի։

196, Ասպուրակէս. սա ևս 'ի նոյն ազ֊
387· գէ նստի յաթոռն հայրապետական. և յետ
պաշտելոյն զայն իշխանութիւն զամս երիս՝
390 վախճանի։

197, Սահակ Ա, պարթև մեծ հայրա֊
պետ որդի մեծին Ներսեսի որդւոյ Աթանա֊
գինեայ, որդւոյ յուսկանն, որդւոյ վրթանի֊
սի, որդւոյ սրբոյն գրիգորի լուսաւորչի՝ որ
'ի վախճանիլ հօր իւրոյ կայր 'ի կոստանդի֊
նուպօլիս, և պարապէր 'ի հրահանգս իմաս֊
տութեան եկեղեցական և արտաքին դրոց.
սա լեալ արժանաւոր ժառանգ հայրենի ա֊
ռաքինութեանցն վերակոչեցաւ յաթոռ հայ֊
390 րապետութեան ազգին. և հետևեալ բարե֊
բախտութեան հայրենեաց լուսաւորէ ըզ֊
392 հայաստան։ Գնայ 'ի պարս առ Արտաշիր 'ի
սակս ինչ ինչ բարեդիպութեանցն ազգին.
395 Նորոգէ զտաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ
զկործանեալն 'ի զօրացն Շապհոյ. ձեռնտու֊
ութեամբ իւրով 'ի կազմել սրբոյն Մեսրով֊
պայ մեծի վարդապետի զհայերէն տառս ըստ
411 վերնատուր շնորհացն, լրացուցանէր զթարգ֊
413 մանութիւն սուրբ գրոց։ Երթայ դարձեալ
'ի պարս առ Յազկերտ, և դարձուցանէ
418 զԽոսրով 'ի տէրութիւնս Հայոց. զիջուցանէ
զՅազկերտ արքայ պարսից 'ի հալածելոյ ըզ֊

420 քրիստոնէայս․ գնայ 'ի մասն Հայաստանի՝ որ ընդ իշխանութեամբ Յունաց, և գրեալ թուղթ առ կայսրն ընդ ձեռն մեծի վարդապետին Մեսրովպայ՝ բանայ և յայնմ բաժնի դպրոցս Հայերէն գրոց․ դառնայ 'ի մասն պարսից 'ի Վաղարշապատ քաղաք խորհրդով նախարարացն, և թագաւորեցուցանէ զԱրտաշէս որդի Վռամշապհոյ հաճութեամբ Վռամայ արքային պարսից՝ որ փոխեալ զանունն եւ կոչէ Արտաշիր յանուն նախնւոյն
425 իւրոյ։ Առաքէ զաշակերտսն յայլևայլ քաղաքս Յունաստանի և Ասորեստանի 'ի թարգ-
426 մանութիւնս գրոց մատենից․ բարեկարգէ զպաշտամունս եկեղեցական ընթերցուածոց և առնէ ժողով 'ի Վաղարշապատ քաղաքի վասն բարեկարգութեան եկեղեցականաց։
427 Զմիաբանի ը̅ նախարարսն 'ի խորհուրդ անկման Արտաշրի արքայի Հայոց․ որոյ վասն գնայ 'ի պարս 'ի խնդրել զնա Վռամայ և արգե-
432 լեալ լինի անդ իբր 'ի բանտի Ե․ դարձ առնէ
435 անտի 'ի Հայս յաջողութեամբ։ Գրէ թուղթ ուղիղ դաւանութեան հաւատոյ հանդերձ

Ի յայն միջոցի 'ի կենդանութեան որոյ հայրապետին մեծին Սահակայ կալան զաթոռն հայրապետութեան անարժան անձինք երեք․ առաջինն՝ Սուրմակ անուն 'ի Բզնունեաց 'ի գեղջէ Արծկէոյ զամ Ա․ երկրորդն՝ Բրքիշոյ անուն ասորի ազգաւ իբր զամս երիս․ երրորդն՝ Շմուէլ անուն 'ի նոյն ասորի ազգէ զամս հինգ․ զորոց զանօրէնութիւնս ընկալեալ և զկաշառաւոր գործսն ապատանելով նախարարացն Հայոց մերժին [illegible] յաթոռոյն և անդրէն խնդրեալ անարգեցին․ և 'ի փոխանակ արքայութեան բարս իւրեանց գնացին անկեալ յառաջ երանելւոյն Սահակայ և խնդրեցին զներումն։

եպիսկոպոսօք իւրովք առ Պրոկղ ընդդէմ գրոցն Թէոդորոսի մոպսուեստացւոյ։ Հարկի 'ի Թախանձանաց նախարարացն վերստին ունել զբովանդակ զառաջնորդութիւն ազգին. Թէպէտ ոչ առնու յանձն զայն ինչ, բայց և այնպէս ոչ դադարէր յա̄մ կեանս իւր Թողուլ 'ի ձեռաց զօգուտ ինչ հայրենեաց և եկեղեցւոյ. և այսպիսի երկնաշնորհ առաքինութեամբ փարթամացուցեալ զվաստակս
440 իւր՝ փոխի յաստե̄ցս յանդրանկացն եկեղեցի 'ի Բագրեւանդ գաւառի 'ի գիւղն Բըլուր 'ի հասակի իննսուն ամաց յամի տեառն 440, 'ի վախճան նաւասարդի ամսոյն որ է իններորդ օր սեպտեմբերի, յորում աւուր և ծնեալ իսկ էր. ապա զուրբանեալ մարմին գերերջանիկ պարթևի հօրս հայաստանեայց բարձեալ աշակերտացն և նորուն Երեմիա սարկաւագի փառացի ուղարկաւորութե̄մբ և բազմամբոխուր սգովք տարին 'ի Տարօն 'ի գիւղն Աշտիշատ և անդ ամփոփեցին. որոյ զծախսն հանդերձ ուղարկաւորութե̄ն ջերմեռանդութ̄բ արար Դստրիկ անուն տիկինն Մամիկոնէից՝ կինն Վարդանայ Թոռին սրբոյ հայրապետին. և սահմանեցին տօն կատարել ամ ըստ ամէ 'ի Ը. րդ օր նաւասարդի 1։

198, Սուրբ Յովսէփ. 'ի հողացիմ գեղջէ Վայոց ձորոյ աշխարհին Սիւնեաց.

1, Զօնի փոխման Սբի հայրապետին Սահակայ պարթևի Սբ վարդապետն Մեսրովբ ինքն կոչէ աւ կաթուղիկոսական Աթոռոյն և հոգևոր պահպանութե աշխին՝ կատարէաց շաբաթօն տէրպաշտութեանն շաբաթ վէջ. և ինքն զարդարանաւ էր նշանն իւր 'ի 13, ամսոյն Փետրվարի, այն է 'ի 19, փետրվարի 441, ամ։

յերևելի աշակերտաց անտի սրբոցն Սահա-
կայ և Մեսրովպայ. որոյ և յանձնարարու-
441 թեամբն իսկ կարգեցաւ ՚ի նախարարացն կա-
թուղիկոս ազգին. վասն ինչ ինչ անկարգու-
թեանց նորոգ մտելոց յեկեղեցի ՚ի թուլա-
447 մորթ անձանց արար ժողով ՚ի Շահապիվան
450 Ծաղկոտն գաւառի. դարձեալ ժողով արար
յեպիսկոպոսաց և ՚ի նախարարաց յԱրտա-
շատ քաղաքի, յորում և պատասխանի արար
թղթոյն Յազկերտի արքային պարսից ունայ-
նացուցանելով զառասպելայօդ բանսն նո-
րին. յայսմ ժողովի խորհրդակցութեամբ
ամենեցուն գրէ թուղթ և առ կայսրն յու-
նաց Թէոդոս փոքր՝ օգնել ազգին ՚ի վաղա-
451 հաս վտանգէն ՚ի պարսից անտի: Ըմբռնի ե-
րանելին Յովսէփ չարահնար խաբէութեամբ
անօրինին Վասակայ տն Սիւնեաց և դնի
՚ի կապանս. և նոյն կապանօքն տանի ՚ի պարս
454 երիւք ընկերօք: Կատարի վկայական մահո-
ւամբ հանդերձ ընկերակցովքն անդ ՚ի պա-
րսկաստան յԱպար աշխարհի. յամի 454, ՚ի
քսան և հինգերորդ աւուր հրոտից ամսոյն՝
այն է ՚ի 31, յուլիսի:

199, Մելիտէ յարքեպիսկոպոսութեն
Մանազկերտոյ ընտրութեամբ նախարարացն
453 և հաւանութեամբ սբյն Յովսեփայ կացու-
ցաւ յԱթոռ կաթուղիկոսութե. կացեալ
սորա յայնմ պաշտաման իբրև զամս հինգ՝
457 վախճանի:

200, Մովսէս տր, ՚ի նոյն ազգէ Մանազ-
457 կերտեայց յաջորդէ յԱթոռ հայրապետու-
թեանն. և հովուեալ զազգն իբրև զամս
465 ութն՝ վախճանի:

201, Տէր Գիւտ՝ մի յերևելի աշա-
կերտաց սրբոց Թարգմանչացն Սահակայ և

Մեսրովպայ, 'ի գեղջէ Տարահեզայ գաւա_
ռին Հայոց՝ այր ընտիր և ձոխ քաջավարժ 'ի
465 գիտութիւնս յունական դպրութե՝ կարգի
յԱթոռ հայրապետութեան։ Սա 'ի պաշտ_
պանել ինքեան յանձն եղեալն զհօտ 'ի կրա_
472 կապաշտութենէ՝ առաքի 'ի պարսս ամբաս_
տանութեամբ Գադիշեայ խորխոռունեայ
մաղխազեանց։ Իսկ հրամանի արքային պար_
473 սից Պերոզայ անկանի յիշխանութե. և անտի
474 վերադարձեալ երանելւոյն 'ի Հայաստան՝
475 առնու զվախճան յաստի կենաց. որոյ և ըզ_
մարմինն ամփոփեն 'ի գիւղն Օշական գա_
ւառին Աշանդայ 'ի դիրս հանգստեան
հարց նորա։

202, Քրիստափոր ա̅, յԱրծրունեաց
ազգէ զկնի անկման Գիւտայ ըստ հրամանի
475 արքային Պերոզայ կարգի յԱստիճան հայրա_
պետութեանն։ Պահպանէ զազգն անարատ 'ի
հերձուածոցն նեստորականին Բարծումայի.
և այնպէս կացեալ յիշխանութեանն զամս
480 հինգ՝ վախճանի։

203, Յովհան Մանդակունի յաշակեր_
տաց անտի սրբոցն Սահակայ և Մեսրովպայ
480 ընտրութեամբ Վահանայ Մամիկոնէի նստի
կաթուղիկոս։ Ազդու խրատուք յորդորա_
482 նաց խրախուսէ զմիաբանեալսն ընդ Վահա_
նայ ընդդէմ պարսից։ Ի պատերազմին որ
ընդ զօրս պարսից մերձ 'ի Դուին քաղաք
483 խոցի 'ի զօրաց անտի և զերծանի այցելու_
թեամբ տեառն։
484 Գնայ ընդ առաջ Վահանայ 'ի խնդակցու_
թիւն՝ որ գայր 'ի պարսից արքայէ ը̅ ումանց
նախարարաց բարեդէպ յաջողուածովք։
485 Ի գալ հասանել հրովարտակի արքային վասն
իշխանութեան Վահանայ 'ի Դուին, խօսի

երանելի Հայրապետս ՚ի խնդութեանց սրտին
զայն յորդորական ճառ առ ուխտապահ նա-
խարարսն ։

Յետ վաստակելոյ բազում յեկեղեցի
487 Աստուծոյ՝ վախճանի և դնի մարմինն ՚ի տա-
պանի ՚ի գիւղն Աեռնոս՝ որ ՚ի Ճ Երակ գա-
ւառի ։

204, Տէր Բաբգէն յաշակերտութենէ
Յովհաննու Մանդակունւոյ ՚ի գաւառէն
487 Վանանդայ յՈթմսոյ գեղջէ կարգի կաթու-
ղիկոս ։ Ժողով արարեալ յեպիսկոպոսաց
Հայոց, Վրաց և Աղուանից ՚ի Վաղարշա-
պատ քաղաքի ՚ի սուրբ Կաթուղիկէ եկեղե-
491 ցւոջ Էջմիածնի՝ ՚ի բաց հերքէ զժողովն
Քաղկեդոնի . և կացեալ զկնի ժողովոյն
492 զամ մի՝ վախճանի ։

205, Սամուէլ ՚ի գեղջէ Արծկէոյ գա-
492 ւառին Բզնունեաց յաջորդեաց յաթոռ
Հայրապետութեանն . և կացեալ ՚ի նմին զա-
502 մս տասն՝ վախճանի ։

206, Մուշէ ՚ի գեղջէ Այլաբերից գա-
502 ւառին Արտայից կարգի կաթուղիկոս . և կա-
510 ցեալ յայնմ զամս ութն՝ վախճանի ։

207, Սահակ Բ, ՚ի Հարք գաւառէ ՚ի գեղ-
510 ջէ Ուղկայ նստի յաթոռ Հայրապետութե .
515 և զկնի հինգ ամաց՝ վախճանի ։

208, Քրիստափոր Բ, ՚ի գաւառէն Բագ-
515 րևանդայ ՚ի Տիրառինձ գեղջէ՝ կոչեցաւ յա-
թոռ կաթուղիկոսական . և եկաց յայնմ իշ-
521 խանութեան զամս վեց և վախճանեցաւ ։

209, Ղևոնդ ՚ի գաւառէն Առբերանւոյ
521 յԱռեստ գեղջէ յաջորդեաց ՚ի Հայրապե-
524 տութեան . և եկաց զամս երիս և վախճա-
նեցաւ ։

210, Ներսէս Բ, ՚ի գաւառէն Բագրե-

524 անդայ 'ի գեղջէ Աշտարակաց յաջորդէ յա
527 թոռ հայրապետութեան . արար ժողով 'ի
Դուին քաղաքի 'ի բարեկարգութիւն եկե֊
533 ղեցւոյ . և կացեալ զամս իբր եօթն՝ վախ֊
ճանի :

211 , Յովհաննէս Բ , 'ի վանականութենէ վա֊
նացն Սիւաթլոյ , 'ի գաւառէ Գաբեղենից 'ի
533 գեղջէ Սիւնձեղնոյ նստի կաթուղիկոս . ընդ
542 մէջ Յունաց և Պարսից պատգամաւորու֊
թիւն նորա յաղագս հաշտութեան . և կա֊
ցեալ յայնմ պաշտաման մեծի զամս տասն և
551 եօթն և ամիսս ինչ՝ վախճանի :

212 , Մովսէս Բ , յԱրագածոտն գա֊
ւառէ 'ի գեղջէ Եղիվարդայ սնեալ և վար֊
ժեալ 'ի տան կաթուղիկոսարանին՝ այր մե֊
551 ծիմաստ և հանճարաւոր , կարգեցաւ կաթու֊
ղիկոս . և 'ի սկզբան առաջին ամի հայրապե֊
տութեն իւրոյ ժողով արար յեպիսկոպոսաց
և յիմաստուն արանց և ետ ուղղել և նո֊
րոգել զտումար Հայոց՝ յորմէ սկսանի հայ
552 թուական և է այժմ՝ ումղա : Առաքէ հրեշտա֊
ա̃ կրս հանդերձ թղթով առ Խոսրով արքայ
պարսից . որով և մեղմէ զխստութիւն մո֊
գուցն 'ի բռնադատելոյ զքրիստոնեայս վասն
հաւատոյ :

578 Աղաչէ զերեսս Խոսրովու պարսից ար֊
քայի և զիջուցանէ զնա 'ի ցասմանէ մնա֊
սուցն առ հայազունսն՝ որ յայնմ ժամանա֊
կի եկեալ էր զօրօք 'ի Հայաստան ընդ դէմ
Յունաց : Հասեալ 'ի ծերութիւն և անկա֊
581 րացեալ 'ի կառավարել զազգն՝ կարգէ փո֊
խանորդ ինքեան և գործակատար զՎրթա֊
նէս վարդապետն քերթող անուանեալ : Նու֊
593 ապա խոնարհեալ 'ի խորին ծերութիւն վախ֊
ճանի՝ վարեալ զիշխանութիւն թէ առանձին

և թէ ընդ Սըթանիսի զամս քառասուն և
երեք ։

213, Աբրահամ ա͞, եպիսկոպոս Ռշտունեաց
՚ի գեղջէ Աղբաթանից․ զկնի վախճանին Մով-
594 սեսի Բ͞, անցեալ ամիս ինչ կարգի կաթու-
ղիկոս ընտրութեամբ Սմբատայ հայազն մարզ-
595 պանի ։ Գրէ թուղթ առ Կիւրիոն կաթու-
ղիկոս Վրաց վասն անիրաւ զրպարտանացն
զՄովսէս եպիսկոպոսէ Ցրտաւայ․ որպէս առ
Ուխտանեսի։ Ընկալեալ զպատասխանի ՚ի Կիւ-
596 րիոնէ՝ առնէ ժողով ՚ի Դուին քաղաքի յե-
րևելի եպիսկոպոսաց և յայլոց նշանաւոր ան-
ձանց՝ ուր ներկայ գտաւ և Սմբատ մարզպան
համերձ այլ ևս նախարարօք ոմամբք․ և քըն-
նեալ յայնմ զանմիաբան պառակտումն Վ-
րաց ընդ ձեռն Կիւրիոնի յեկեղեցւոյ Հա-
յոց՝ զգուշացոյց զազգն չխառնիլ ամենևին
ընդ Վիրս՝ ոչ խնամութեամբ և ոչ առևտ-
րութեամբ վաճառաց․ և յետ այնր կացեալ
616 այլ ևս ամս ընդ ամենայն ի͞գ՝ վախճանի ։

214, Կոմիտաս յԱրագածոտն գաւառէ ՚ի
գեղջէ Աղձից, յեպիսկոպոսութենէ Տարօ-
617 նոյ մամիկոնեանց յաջորդէ յաթոռ հայրա-
618 պետութեանն․ ձեռնարկեալ տայ նորոգել
՚ի հիմանց զեկեղեցի սրբուհւոյն Հռիփսի-
մեայ և երգէ զվայելուչ շարականն՝ Անձինք
նուիրեալք են․ տայ շինել և զմեծ կաթուղի-
կէն Տաճարի սրբոյ Էջմիածնի ՚ի կոփածոյ
քարանց՝ որ յառաջն փայտեայ էր (II)․ կացեալ
625 ՚ի հայրապետութեան զամս ութն՝ վախճանի,
որոյ և մարմին ամփոփի ՚ի մէջ նոյն եկեղե-
ցւոյ սրբոյ կուսին զառաջեաւ բեմին սեղա-
նոյ ուղղակի՝ ուր կայ ցարդ տեղին որոշակի
յատկացեալ մեծ վիմաւ հաւասար ընդ սա-
լայատակին, բայց առանց գրոյ ։

215, Քրիստափոր Գ, ՚ի գաւառէ Ապա-
հունեաց յազատ տանէ՝ յազգականութենէ
Աբրահամու կաթուղիկոսի՝ ընտրութեամբ
625 Վարազտիրոցայ և այլոց նախարարաց կարգի
կաթուղիկոս: Ի պատճառս շփոթութե ինչ
ծագելոյ ընդ մէջ նախարարաց՝ որպէս թէ
628 նա իցէ պատճառ այնմ, հրաժարի ինքնին յիշ-
խանութենէ հայրապետութեան և գնացեալ
յոտն Մասեաց լերին յԱւղեաց գիւղ՝ շի-
նէ անդէն վանս կրօնաւորաց և մնացեալ
անդ խստակրօն վարուք՝ վախճանի:

216, Եզր ՚ի Նիգ գաւառէ ՚ի Փառաժ-
նակերտ գեղջէ ՚ի փակակալութենէ սրբոյն
628 Գրիգորի՝ որ ՚ի Դուին, նստի յաթոռ կա-
թուղիկոսութեան: Հրաւիրեալ ՚ի Հերակլ
629 կայսերէ գնայ ՚ի Կոստանդնուպօլիս ( նորին )
առնա և հարկեալ ընդունի զժողովն Քաղ-
630 կեդոնի: Տայ շինել զեկեղեցի սրբուհւոյն
Գայիանեայ. և կացեալ ՚ի հայրապետութեն
639 զամս աւելի քան զտասն՝ վախճանի:

217, Ներսէս Գ, ՚ի գաւառէ Տայոց
640 յԻշխան գեղջէ՝ կարգի կաթուղիկոս ընտրու-
641 թեամբ նախարարացն. ետ շինել ՚ի վերայ
Խորվիրապին արտաշատու եկեղեցի. նորոգ
հիմնադրութեամբ ևս տայ շինել եկեղեցի
մեծ և հոյակապ մերձ յԷջմիածին յարևելս
նորա կէս ժամ հեռաւորութեամբ՝ յորում
տեղւոջ ասեն՝ Տրդատայ արքայի ելանել ընդ
առաջ սրբոյն Գրիգորի յելմն ՚ի վիրապէն.
642 հաշտեցուցանէ զսիրտ կայսեր կոստանդեայ
առ Վարազտիրոց ասպետ, և տայ ևս կա-
645 ցուցանել զնա կիւրապաղատ Հայոց. գու-
մարէ ՚ի Դուին քաղաքի ժողով յեպիս-
կոպոսաց և ՚ի նախարարաց վասն բարեկար-
գութեն եկեղեցւոյ, Գնայ բազմութեամբ

ընդ առաջ Կոստանդինի կայսեր յունաց և
զիջուցանէ զցասումն սրտի նորա՝ որ առ ադ-
647 գրն. և ընկալնու զնա զկայսրն ՚ի կաթուղի-
648 կոսարանի իւրում ՚ի Դունին: Դրէ համա-
ձայնութեամբ եպիսկոպոսաց և իշխանաց պա-
տասխանի թղթոյ կայսերն յունաց և ինքն խոյս
տայ յաթոռոյ իւրմէ և գնայ ՚ի Տայս յեր-
կիւղէ նախարարացն, մանաւանդ Թէոդորո-
սի Ռշտունւոյ: Զկնի վեց ամաց՝ ՚ի վախճա-
654 նիլ նոյն Թէոդորոսի Ռշտունւոյ դառնայ վե-
655 րստին յաթոռ իւր: Ի բաց վարէ հալածա-
կան յաշխարհէ Հայոց զաղանդաւորս ձեռն-
տուութեամբ իշխանաց ազգին: Եւ կացեալ
661 ՚ի հայրապետութեան զամս քսան՝ վախճանի
և դնի մարմին նորա ՚ի հիւսիսոյ կողմանէ
եկեղեցւոյ վիրապին Արտաշատու՝ զոր իւր
էր շինեալ:

218. Անաստաս ՚ի գեղջէ Ակոռւոյ՝ որ յո-
648 տին Մասեաց մեծի լերին, կարգեցաւ վերա-
կացու շինուածոց մեծի եկեղեցւոյն հիմնար-
կելոյ յԳ. Ներսէս կաթուղիկոսէ մերձ յԷջ-
661 միածին՝ ՚ի փախչել նորա ՚ի Տայս: Յաջորդեց
յաթոռ հայրապետութեան. մկրտեաց ըզ-
Սուրհան պարսիկ՝ որ անուանեցաւ Դաւիթ:
Շինեաց վանս կրօնաւորաց ՚ի հայրենի գեղջ
իւրում յԱկոռի. և ՚ի նմա եկեղեցի փառա-
ւոր, և աղքատանոցս և հիւրանոցս. և ետ
առնել Անանիա վարդապետի շիրակացւոյն նո-
րոգութիւնս Հայոց տումարի և այն ինչ կա-
մէր հաստատել զայն ժողովով՝ հասեալ ՚ի
667 կէտ կենաց վախճանի. կացեալ ՚ի հայրապե-
տութեան զամս վեց:

219. Իսրայէլ ՚ի Վանանդայ՝ յՈթմսոյ
645 գեղջէ. գտանի ՚ի ժողովն Դունայ առ Գ.
667 Ներսէս կաթուղիկոսիւ. յաջորդէ յաթոռ

կաթուղիկոսական և կացեալ յայնմ զամս
677 տասն վախճանի :
220, Սահակ Գ, 'ի Ձորափորոյ յԱր-
քունաշէն գեղջէ յեպիսկոպոսութենէ Մո-
677 կաց կարգի կաթուղիկոս : Կապեալ յԱբդլլա
693 ոստիկանէ շղթայիւք առաքի 'ի Դամասկոս.
լուեալ անդ զյարձակումն Մոհմատ ոգբայ
զօրավարի հագարացւոց յաշխարհ Հայաստա-
նեայց 'ի սուր և 'ի գերութիւն, գնայ ընդ-
առաջ նորա զիջուցանել 'ի ցասմանէն. և այն
ինչ մտանէ 'ի Խառան` անկանի 'ի մահիճս մա-
հու. այլ նախ քան զաւանդումն հոգւոյն ըղ-
գաստացեալ` ազդու բանիւք գրէ թուղթ
703 առ նոյն զօրավար, և վախճանի` որով և մեծա-
րէ զմիջնորդութիւնն` զոր յուսայր անձամբ:
221, Եղիա յԱղիովտոյ 'ի գեղջէ Արճի-
703 շոյ յԵպիսկոպոսութենէ Ռշտունեաց կարգի
յաթոռ հայրապետութեանն. ըստ բողոքա-
կան գրութեանց և խնդրոց ժողովոյ Աղ-
708 ւանից գնայ անդր 'ի Պարտաւ քաղաք և
գումարէ ժողով եպիսկոպոսաց, ուր ընկե-
նու յաթոռոյ զՆերսէս կաթուղիկոս նոցա
համաձայնութեամբ նոցին. և այն ինչ կամէր
առնել զնա արտասահման` զկնի ութն ա-
ւուր վախճանի 'ի կենաց. կացուցանէ կա-
թուղիկոս նոցա ձեռնադրութեամբ և օծ-
մամբ զՍիմէոն սարկաւագապետն. և սահ-
մանադրեալ յայն ժողով զինչ ինչ կանոնս
բարեկարգութեան` դառնայ յաթոռ իւր.
և կացեալ ընդ ամենայն զամս տասն և չորս
717 և ամիսս իբր վեց` վախճանի:
222, Յովհաննէս Գ, իմաստասէր անուա-
նեալ` 'ի գաւառէ Տաշրաց յՕձուն գեղջէ
718 յաջորդէ յաթոռ կաթուղիկոսութեան. և
տեսեալ զպղտորումն հօտին յաղանդաւորա-

ցըն պօղիկեանց և յայլոց չարագրգիռ արանց՝
719 գումարեաց ժողով մեծ 'ի Հայրապետական
աթոռի անդ Դունին. քաղաքի և հաստատել
կանոնս բարեկարգութեան եկեղեցւոյ՝ հա-
լածական արար զնոսա յաշխարհէ Հայոց։
Հաճեալ ընդ Թղթագրութիւն Աթանաս
726 պատրիարգի Ասորւոց՝ արար փոքրիկ ժողով
յեպիսկոպոսաց Հայոց և Ասորւոց. և յայ-
նում հերքեաց նզովիւք զՅուլիանոս աղի-
կառնացի գրուածովք նորին։ Իսկ հրամա-
727 յելով Օմարայ ամիրապետի հագարացւոյ գը-
նայ առ նա փառացի շքով և պատուեալ 'ի
նմանէ դառնայ յաթոռ իւր. և կացեալ 'ի
728 հայրապետութեան զամս տասն և մի՝ փոխե-
ցաւ 'ի կենաց աստի։

223, Դաւիթ Ա, 'ի գաւառէ Կոտայից 'ի
729 գեղջէ Արամոնից կացուցաւ յաթոռ հայ-
րապետութեն. վշտացեալ 'ի գործոց Մահ-
730 մետայ ոստիկանի և նորայոցն՝ գնաց 'ի Դու-
նայ և բնակեցաւ յԱրամոնս գիւղ. ուր շի-
732 նեաց եկեղեցի և տուն բնակութեան։ Յղեաց
դեսպան առ Ամիրապետն և ետ փոխել ըզ-
Մահմէտ և կարգել 'ի տեղի ոստիկան զԱպ-
դըլազիզ՝ որ էր այր խաղաղասէր և ունէր
խնամ 'ի վերայ Հայոց։ Նա ապա ինքն յետ
740 կալոյ յԱրամոնս իբր ամս ութն՝ դարձա-
նդրէն 'ի Դուին յաթոռն կաթուղիկոսա-
741 կան. և կացեալ ընդ ամենայն ամս ժբ՝ վախ-
ճանի. որոյ զմարմին տարեալ հանգուցանեն
յԱրամոնս առ եկեղեցեաւն՝ զոր իւր էր
շինեալ։

224, Տրդատ Ա, 'ի տոհմէ Նախարարացն
Վանանդ գաւառի՝ յՈթմսոյ գեղջէ, այր
741 բարեկրօն. վերակոչի յաթոռ հայրապետու-
764 թեան. կացեալ յայնմ զամս իգ՝ վախճանի։

225, Տրդատ Բ, յաշխարհէ Տուրուբերա֊
764 նոյ 'ի գաւառէ Դասնաւորից՝ կարգի յաս֊
տիճան կաթուղիկոսութե. և կացեալ յայ֊
767 նըմ զամս երիս՝ վախճանի։

226, Սիօն յԱրագածոտանէ 'ի գեղջէ
765 Բաւոնեաց և եպիսկոպոս Աղձնեաց՝ առնէ
զսքանչելիս բղխեցուցանելով զցամաքեալ
աղբիւր յաղօթս Սիմ լերին՝ ըստ առաջար֊
կութեան կողմնակալի տեղւոյն Սիւլէյմա֊
767 նայ Հագարացւոյ. կարգի յաթոռ Հայրապե֊
տութեան ըստ կոչման և հարկելոյ նոյն Սիւ֊
լէյմանայ՝ որ յայնոսիկ աւուրս կարգեալ էր
ոստիկան Հայոց. բազմութեամբ եպիսկո֊
768 պոսաց և իշխանաց գնայ 'ի Պարտաւ քաղաք
Աղուանից և առնէ ժողով վասն բարեկար֊
գութեան եկեղեցւոյ. կացեալ 'ի Հայրա֊
775 պետութեան ամս ութն՝ վախճանի։

227, Եսայի 'ի Նիգ գաւառէ յԵ֊
ղիպատրուշ գեղջէ սնանի 'ի Հայրապետա֊
նոցի և յեպիսկոպոսութենէ Գողթան գա֊
775 ւառի վերակոչեալ՝ յաջորդէ յաթոռ Հայ֊
րապետութեան. և կացեալ յայնմ պաշտօ֊
788 ման զամս տասներեք՝ վախճանի։

228, Ստեփաննոս Ա, Դունեցի գրանե֊
րէց տան կաթուղիկոսարանի՝ մատուցեալ
ինչս ոստիկանին և հարկահան Խալիդ օկլայ՝
788 կալաւ զաթոռ կաթուղիկոսութեան. և կա֊
790 ցեալ յայնմ զամս երկու՝ մեռանի։

229, Յովաբ յՈստանէն յԱրշարունից
790 Կիւրապաղատին, կարգի կաթուղիկոս, և կա֊
ցեալ յայնմ ամիսս վեց՝ վախճանի։

230, Սողոմոն այր լի աւուրբք և սըր֊
բութեամբ 'ի գաւառէ Գեղարքունւոյ 'ի
գիւղաքաղաքէն Գառնւոյ այն ինչ ընտրեալ
791 'ի Հայրապետութի՝ գնայր 'ի Դուին յաթոռ

իւր՝ ը̄ Յովհաննու կաթուղիկոսի՝,, Հարցա-
նայր յոմանց աղաղաց թէ՝ վասն զի ծեր ես և յանհնարին ճգնական վարուց յոյժ անաւագեալ՝ ընդէ՞ր յօժարեալ երթաս ՚ի հայրապետութիւն․ առ որս պատասխանեալ նորա՝ ասէր․ երթամ զի գերապանծոյն նկարողաց սևել զիս ընդ այլ հայրապետսն տամ յորմն եկեղեցւոյ․ և ըստ սմին այսմիկ գործըն կատարէր․ զի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի, և դնի ընդ հարս իւր, և կենդանագրի ՚ի քաւարանի սրբում,,։

231, Գէորգ ա̄, յԱրագածոտն գաւա-
792 ռէ ՚ի գեղջէ Աշտարակաց յաջորդէ յաթոռ
հայրապետութեան․ և զերիս ամս կացեալ
795 յայնմ վախճանի։

232, Յովսէփ բ̄, կարիճն կոչեցեալ
յԱրագածոտն գաւառէ ՚ի բնակչաց սրբոյն
795 Գրիգորի՝ յաջորդէ յաթոռ հայրապետու-
798 թեան․ նեղի ՚ի Յուզիմայ ոստիկանէ․ կալեալ
799 շղթայիւք դնի ՚ի բանդի ՚ի պատճառս կա-
լուածոց տան կաթուղիկոսարանի՝ զոր յափշտակել ջանայր ոստիկանն ապօրէն կամօք․ կացեալ զամս մետասան ՚ի հայրապետութե̄
806 և տարեալ վշտաց և նեղութեանց՝ վախճանի։

233, Դաւիթ բ̄, ՚ի Մազազ գաւառէ
806 ՚ի գեղջէ Կակաղոյ կարգի յաթոռ կաթու-
825 ղիկոսական․ մտեալ ընդ մէջ հաշտեցուցանէ
զՀոռ ոստիկան և զՍմբատ սպարապետ և զայլ իշխանս ընդ իրեարս․ կացեալ յայնմ պաշ-
833 տաման զամս քսան և եօթն՝ վախճանի։

234, Յովհաննէս դ̄, ՚ի Կոտայից գաւառէ
833 ՚ի գեղջէ Ովայից նստի յաթոռ հայրապետու-
թեան․ զրպարտի յոմանց եղելոց ՚ի տան կաթուղիկոսարանի յապիրատ իրս բամբասա-

նաց · և տեսեալ թէ մեծամեծքն ևս դիւրա-
840 լուր են այնմ, խոյս ետ յԱյրի վանս Գառ-
նւոյ և եկաց անդ զամիսս ինչ · ըստ վերահաս
քննութեան իշխանաց և եպիսկոպոսաց ար-
841 դար և անմեղ գտեալ յայնմ՝ վերադառնայ
յաթոռ իւր հրաւիրմամբ նոցին ժողովելոցն:
Նա և պաշտեալ զհօտն իբրև զամս քսան և եր-
854 կու՝ վախճանի ՚ի Գեղարքունի ՚ի վանսն Մա-
քենոցաց՝ և ամփոփի մարմին նորա անդէն:

235, Զաքարիա Ա, ՚ի գաւառէ Կոտայից
՚ի գեղջէ Ձագայ ժողովով եպիսկոպոսաց
854 ընտրի ՚ի կաթուղիկոսութիւն · և ՚ի միում
աւուր ընկալնու զամենայն աստիճանս ՚ի
սարկաւագութենէ մինչև ցկաթուղիկոսու-
թիւն՝ ըստ հրամանի սպարապետին Սմբա-
տայ ՚ի գաւառին Շիրակայ յԵրազգաւորն
862 քաղաքագեօղ: Առնէ ժողով յեպիսկոպո-
սաց և յիշխանաց ՚ի Շիրակաւան ՚ի պատճա-
ռըս թղթոյ Փօտ պատրիարգի Յունաց ՚ի մա-
սին ժողովոյն Քաղկեդոնի · և կառավարել
զպաշտօն հայրապետութեան զամս քսան և
876 մի և ամիսս իբր ութն՝ վախճանի ՚ի Դուին
քաղաքի:

236, Գէորգ Բ, ՚ի Գառնւոյ այր զգաստ
և զուարթ առաքինի՝ սնեալ ՚ի տան կաթու-
876 ղիկոսարանի, յաջորդէ զաթոռ հայրապե-
տութեան ՚ի 13 յունվարի · յիններորդ ամի
հայրապետութեան իւրոյ՝ այն է, յամի 885
885 օծանէ Թագաւոր Հայոց զմեծն Աշոտ: Աշ-
890 խատ եղև բազմօք զիջուցանել զխռովու-
թիւնն ընդ մէջ արքայորդւոյն Սմբատայ և
892 Աբասայ նորին հօրեղբօր: Պսակէ զՍմբատ
զորդի Աշոտոյ մեծի ՚ի Թագաւոր Հայոց:
895 Ըմբռնի յոստիկանէն Աֆշինէ և դնի ՚ի շղ-
թայս · բազում դրամովք և միջնորդու-

896 Թեամբ Համամ իշխանին արևելից աղուանի
և վերադառնայ յաթոռ իւր։ Տեսանելով
897 զբազմադիմի զաղէտս աշխարհին ել, գնաց 'ի
կողմանս Վասպուրականի, ուր հիւանդա-
ցեալ զկնի սակաւ միջոցի՝ վախճանեցաւ 'ի
նոյն ամի. և զմարմինն տարեալ թաղեցին 'ի
գերեզմանի Ձորոյ վանացն Տոսպ գաւառի
մերձ յեկեղեցին, ուր եդեալ ասեն սրբոյն
Գրիգորի զգաւազան իւր և զսեղանն տէ-
րունական խորհրդոյն՝ զոր նախ քան զկա-
ռուցմունս եկեղեցեաց 'ի Հայաստան շրջե-
ցուցանէր ընդ իւր։

237, Աշոտոյ Է, յԱրագածոտնէ 'ի
գեղջէ Նոշվարդայ երթեալ բնակի 'ի Սև-
ան կղզի և բազմացուցել զմիանձունս կրօ-
891 նաւորական կարգաց սրբոյն Բարսղի՝ փայլե-
ցաւ սրբութեամբ. գրեաց թուղթ մեղադ-
րանաց առ Աբաս եղբայրն Աշոտոյ յետս
կալ 'ի գրգռութենէ՝ որ առ Գէորգ Է,
894 կաթուղիկոս. գրեաց և առ բնակիչս Դու-
նայ՝ առ մնացորդս 'ի կոտորածէն երկրաշար-
897 ժութեան թուղթ մխիթարական. ընտրի և
կարգի յԱրքայէ և յիշխանաց յաթոռ հայ-
րապետութեան. և կացեալ յայնմ ամիս
եօթն՝ փոխի յաստեացս, և զմարմինն ամփո-
փեն 'ի Գառնի յարևմտից կից հովանոցին
Տրդատայ. յորոյ վերայ շինեցաւ մատուռն
փոքրիկ՝ որ այժմ խոնարհեալ դնի ընդ շի-
նուածս հովանոցին։

238, Յովհաննէս Զ, 'ի Դրասխանակերտ-
ացանէ աշակերտ և ազգական Աշոտոյ Է,
897 յաջորդէ յաթոռ հայրապետութեան։ Առա-
901 քեալ յարքայէ Սմբատայ միջնորդէ առ Ա-
շոտ արծրունի վասն Հասանայ գնթունւոյ։
902 'Ի դիմաց իշխանաց գնաց առ արքայ Սմբատ

և սփոփեաց զնա 'ի դառն տխրութեանց՝ որ
վասն մահուն եղբօր նորա Գաւթայ իշխա֊
908 նաց իշխանի ։ Գնաց առ Յուսուփ ոստիկան
ընծայիւք բազմօք 'ի դիմաց արքային և իշ֊
խանացն յաշխարհ Ատրպատական , հաշտու֊
թիւն խօսել 'ի մէջ ․ այլ կապեալ 'ի նմա֊
910 նէ եդաւ 'ի բանտի ․ ելանէ 'ի բանտէ և
ժամ դիպուկ գտեալ՝ զերծանի փախստեամբ
յԱղուանս ։ Ձանձրացեալ ընդ կատաղի շփո֊
թութիւն յուզմանց 'ի խռովութիւնս աշ֊
916 գէն գնաց 'ի վերս և եկաց ընդ խնամովք
Ատրներսեհի արքայի ․ ընկալեալ զթուղթ
920 պատրիարգի Յունաց Նիկողայոսի՝ եկեալ
անցանէ 'ի Տարօն և գրէ թուղթ առ Կոս֊
տանդին պերփեռուժէն կայսր Յունաց վա֊
սըն ձեռնտու լինելոյ ազգին ընդդէմ թըշ֊
921 նամեաց ։ Առեալ ընդ մէջ հաշտեցուցանէ
զերկոսին համանուն Աշոտ թագաւորսն ։
923 Տառապի աստանդական փախստեամբ 'ի ձե֊
ռաց ոստիկանին Նսրայ ․ և տեսեալ զպա֊
ռակտումն ազգին և զանհնարին աւերս աշ֊
խարհին յոստիկանաց անտի և յիշխանացն և
'ի թագաւորաց յարուցելոց 'ի վերայ մի֊
924 մեանց՝ գնայ 'ի Վասպուրական առ Գագիկ
արքայ Արծրունի ․ ուրանօր յորդորեալ 'ի
նմանէ աւարտէ զպատմութիւն ազգին և
ընդարձակ ևս զիւրոյ ժամանակին վայելչա֊
հիւս կազմուածովք բանից և շարադրու֊
թեանց ․ և կացեալ 'ի պաշտամանն զամս քը֊
925 սան և եօթն և ամիսս ութն՝ վախճանի անդ
'ի Վասպուրական աշխարհի ։

239 , Ստեփաննոս Է , հաւանութեամբ
925 Աշոտոյ արքայի և Գագկայ արծրունւոյ կար֊
գի կաթուղիկոս և նստի անդ յԱղթամար
926 կղզի ․ և կացեալ իբրև ամ մի վախճանի ։

926 240, Թէոդորոս Ա. յաջորդէ զաթոռ
հայրապետութեան անդ ՚ի կղզին Աղթամար.
և կացեալ անդէն զամս տասն և ամիս իբր
936 չորս՝ վախճանի. և ամփոփի մարմինն ՚ի ժամա-
տան եկեղեցւոյ սուրբ Խաչատուածածնի անդ
յԱղթամար:

241, Եղիշէ Ա, եղբայր նորին Թէոդո-
936 րոսի Ա, եկաց յաթոռ կաթուղիկոսական. և
հինգ ամ տևեալ յայնմ իշխանութեան՝
բանսարկութեամբ ոմանց խռովայոյզ անձանց
անկանի. և երկու ամ ևս կացեալ այնպէս
առանց տեղակալ յաջորդի վարելով զիշխա-
943 նութիւնն՝ վախճանի:

242, Անանիա ՚ի Մոկաց յառաջնոր-
943 դութենէ ուխտին Վարագայ յաջորդէ յա-
թոռ հայրապետութեան. բուեալ զաղանդ
Յակոբ եպիսկոպոսի Սիւնեաց՝ էարկ ընդ
բանիւ, ևս և զտիկինն Սիւնեաց՝ որ ընդ
նմա զթոնդրակեցւոցն ախտանայր, և յայնժամ
հասեալ մահ կենաց Յակոբայ եպիսկոպոսին մե-
ռանի. և գնացեալ Անանիայի անդր ՚ի Սիւ-
նիս շինէ զվիճս իշխանացն և ձեռնադրէ նո-
ցա արքեպիսկոպոս զՎահան որդի Ջուան-
շերի իշխանին Բաղաց: Գրգռեցաւ ընդ կըր-
կին մրցութիւն Յունաց: Կացեալ ՚ի կա-
թուղիկոսութեան զամս քսան և երկու՝ հինգ
ամ յԱղթամար, և տասն և եօթն ամ ՚ի Ա-
965 րագ և յԱնի՝ վախճանի. որոյ մարմինն դնի
՚ի տապանի ՚ի գիւղաքաղաքն Արգինա՝ մերձ
յԱնի:

243, Վահան որդի Ջուանշերի իշխա-
նին Բաղաց՝ որ ՚ի Սիւնիս, յարքեպիսկոպո-
սութենէ այնր նահանգի Սիւնեաց՝ ըստ յանձ-
965 նարարութեան Անանիայի Մոկացւոյ վերակոչի
յաթոռ հայրապետութեան. ՚ի հաճիլ սոր-

թղթակցութեամբ առ այլ եկեղեցիս ընդ֊
դէմ սովորութեան ազգին, և ՚ի կամելն մու֊
ծանել զնորաձևութիւն յեկեղեցի, և զգա֊
ցեալ ևս թէ՝ ունի յազգէն անկանել յայնմ
970 պատուոյ, փախստեայ գնաց ՚ի Վասպուրական
աշխարհ առ Ապուսահլ թագաւոր արծրունի։
973 Գրէ թուղթ առ Զմշկիկ կայսր հայկազն ՚ի
Կոստանդինուպօլիս խնայել ՚ի քրիստոնեայս․
ծանոյց և զորպիսութիւն անձին իւրոյ․ կա֊
ցեալ անդ ՚ի կողմանս Վասպուրականի ամս
տասն և ամիսս ինչ յետ փախստեանն՝ ընդ
ամենայն աւելի քան զհնգետասան ամ՝ մե֊
980 ռանի և թաղի ՚ի Ձորոյ վանս։

244, Ստեփաննոս Գ, յազգականու֊
թենէ Աշոտոցայ և Յովհաննու պատմաբանի
՚ի վանահայրութենէ Սևանայ ընտրի ժողո֊
970 վով անդ յԱնի և նստի յաթոռ հայրապետու֊
թեան։ Ոչ կնի նզովելոյ զերեարս ընդ Վա֊
հանայ, գնայ ՚ի Վասպուրական առ Վահան
հանդերձ ոմամբք երևելի վարդապետօք
՚ի յանդիմանութիւն նմին․ այլ յԱպուսահր֊
լայ արքայէ Վասպուրականի կալեալ ՚ի ճա֊
նապարհին՝ եդաւ յարգելանս ՚ի բերդն Սո֊
972 տորոց և անդ մնացեալ ամիսս ինչ մեռանի։

245, Խաչիկ Ա, քեռորդի Անանիա կա֊
թուղիկոսի յեպիսկոպոսութենէ Արշարու֊
նեաց ընտրութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց
972 յԱնի՝ յաջորդէ զաթոռ հայրապետութեան․
կառոյց զբազում շինուածս ընդ որս և ըզ֊
գրատուն փառաւոր՝ ուր ժողովեաց զբա֊
զում մատեանս։ Կացեալ յայնմ պաշտաման
992 զամս ԺԹ և ամիսս իբր վեց՝ վախճանի․ և
մարմին նորա ամփոփեցաւ ՚ի հիւսիսոյ կող֊
մանէ եկեղեցւոյն Արգինայի՝ զոր իւր էր
շինեալ։

246, Սարգիս ա՛, ՚ի միաբանութենէ վանաց
Սևան կղզւոյ. սա ունէր ՚ի Գագկայ արքա-
յէ ընդ տեսչութեամբ իւրով յառաջագոյն
զվանսն Շողագայ. և զկնի կարգեալ ՚ի նը-
մանէ հայր վանաց Սևանայ վասն մարդասէր
և առաքինի վարուցն. և ապա զկնի վախճա-
նին Խաչկայ դարձեալ ՚ի նմանէ ՚ի ժողովի
992 անդ եպիսկոպոսաց յԱնի՝ վերակոչեցաւ ՚ի
հայրապետական աթոռն յամի 992, յերկու-
շաբաթի աւուր մեռելոց սրբոյ Զատկին:
Ստանէ ընդ մէջ Գագկայ արքայի և եղբօ-
րորդւոյ նորա Կաւթի և հաշտեցուցանէ
զնոսա: Զինեցաւ ընդդէմ աղանդոյն
Թոնդրակեցւոց, և զՅակոբ եպիսկոպո-
սերմանիչ չարութեանն աղուէսադրոշմ խա-
րանօք խայտառակեալ, յամսն իբր 1002,
1003: Իսկ քսան և եօթներորդ ամի հայրապե-
1019 տութեան իւրոյ ձեռնադրեաց զտէր Պետ-
րոս եղբայր Խաչկայ կաթուղիկոսի և նստոյց
փոխանակ իւր յաթոռ հայրապետութե. և
ինքն կացեալ այլևս ամս ինչ վախճանի. որոյ
և մարմին ամփոփի ՚ի վանսն Հոռոմոսի:

247, Պետրոս ա, գետադարձ անուա-
նեալ եղբայր Խաչիկ կաթուղիկոսի ձեռնա-
1019 դրեալ ՚ի Սարգսէ ա, նստի յաթոռ հայրա-
պետութեան: Հանդերձ այլովք երևելի ա-
զատօք մտեալ ընդ մէջ երկուց եղբարցն
Յովհաննու և Աշոտոյ որդւոց Գագկայ ար-
1020 քայի հաշտեցուցանէ զնոսա առնլով յերկո-
ցունցն եւս յետկար երդման. ընկալնու յետ-
կար երդման ՚ի Յովհաննէս արքայէ Անւոյ
վասն տալոյն զԱնի ՚ի Յոյնս, և պատուէր
տարեալ զայն մատուցէ կայսեր Վասլի.
1022 գնաց առ կայսր ՚ի Խաղտիս և մատոյց զայն
խոստագիր սկզբնապատճառ անկման թագա-

ւորութեան բագրատունեաց․ Յանցեալ անդ
առ կայսր պատուով՝ առնէ զհանդէս աւուր
ջրօրհնեաց ըստ ծիսի Հայոց 'ի ներկայու-
թեան կայսեր 'ի գետն Ղորոխ․ ուր սքան-
չելեօք գետն զկայ առնու և ճառագայթք
լուսոյ հատանէին 'ի ջուրց յընդունել նշան
զխաչն օծութեան․ Մեծարանօք պատուոյ
1023 բաժանեալ 'ի կայսերէ վերադառնայ 'ի Սե-
բաստիա առ Սենեքերիմ արքայ․ և անտի ըզ-
1025 կնի երկուց ամաց վերադարձաւ յԱնի քա-
ղաք Թագաւորական: Լուեալ զհիւանդու-
1026 թիւն արքային Սենեքերիմայ գնաց դարձեալ
'ի Սեբաստիա առ նոյն արքայ․ անդէն լսե-
1029 լով զմահ Սմբատայ եւ և եկն 'ի Կարս քա-
ղաք և անտի յԱնի․ յԱնդ ակամբ հայելն 'ի
նա արքայի և այլոց 'ի պատճառս յամելոյ նո-
րա յայնչափ ժամանակս 'ի կողմանսն Սեբաս-
1030 տիոյ՝ գնաց զանխուլ 'ի Սասունական և
1034 առանձնացաւ անդ 'ի ձորոյ վանսն: Պատ-
նայ անդրէն յԱնի ընկալեալ զգիր միաբանու-
թեան յարքայէ՝ առնել նմա չար և ոչինչ,
բայց եդաւ յարգելանս յամրոցն Բջնւոյ․ և
փոխանակ նորա կացուցաւ կաթուղիկոս Դե-
ոսկորոս հայր վանացն Սանահնի՝ յարքայէ․
որոյ վասն ժողով մեծ եղեալ յԱնի հան-
դերձ Յովսէփ կաթուղիկոսիւն Աղուանից՝
1036 անդրէն յաջորդեաց զաթոռն։
1042 Ծանէ զԳագիկ զորդին Աշոտոյ եղբօր
արքային Յովհաննու փախճանելոյ՝ 'ի թա-
1044 գաւոր Հայոց: Պատերազմեցան ընդ միմեանս առ
և արքայն Գագիկ քաջութեամբ բանսարկո-
ւին սարգսի երկրորդ աւերչին աշխարհի Հա-
1045 յոց զկնի Ս սաակայ սիւնւոյ: Լինի վկայ
ընդ Գագիկ՝ և ընդ նախարարսն 'ի գնալ
նորին Գագկայ առ կայսր պահելով առ ին-

քըն և գըիր երգմանց նոցին և խուրն ։ Զկնի
1047 անկման թագաւորութեան վարեցաւ ՚ի գա-
ւառն Կարնոյ յԱրծն քաղաք չարութեամբ
Կամենասայ յոյն քաղաքապետին Անւոյ, որ-
պէս զի բարձցէ և կաթուղիկոսութիւն յազ-
գէ Հայոց · և անտի կալեալ յարանց առա-
քելոց ՚ի յոյն քաղաքապետէն Արծնոյ ըստ
1048 հրամանի կայսեր եդաւ ՚ի բերդն Խաղտոյ
առիճ ։ Հրաւիրեալ ՚ի Մոնոմախոս կայսերէ
1051 գնաց ՚ի Կոստանդինուպօլիս · դառնայ անտի
՚ի Սեբաստիա՝ երաշխաւոր լինելով Ատով-
մայ արծրունւոյ որդւոյ Սենեքերիմայ առ
կայսր · և կացեալ ընդ ամենայն ամս իբր քա-
1058 ռասուն՝ վախճանի անդ ՚ի Սեբաստիա, ՚ի
սուրբ նշանի վանսն · ուրանօր ամփոփի և
մարմինն ։

248, Խաչիկ Բ, որ և Խաչատուր քե-
ռորդի վերոյիշեալ Պետրոս կաթուղիկոսի
1047 կարգի տեղապահ յաթոռն յԱնի ՚ի քեռւոյ
1048 իւրմէ ՚ի գնալն նորա յԱրծն · եդաւ իբր
յարգելանս ՚ի բերդն Սեաւ քար կոչեցեալ
չարութեամբ Կամենասայ քաղաքապետին
Անւոյ ։ Զկնի վախճանի Պետրոս կաթուղի-
1058 կոսի նստի յաթոռ հայրապետութեան ։ Ա-
1060 ծաւ ՚ի Կոստանդինուպօլիս ՚ի Տուկիծ
կայսերէ սակս ընչից Պետրոս կաթուղիկո-
սի · քանզի յետ ունելոյ զյայտնի կայս նորին
գ՟ամ, պահանջէր զայլ ևս · և այսու թէպէտ
՚ի նեղ արկաւ ՚ի կայսերէ, վստահութեամբ
առնէր զպատասխանին ։ Միջնորդութեամբ
Գագկայ արքայի և Ատովմայ արծրունւոյ
1063 արձակեալ անտի գայ ՚ի սահմանս Տարանդայ
՚ի Թաւ բլուր կոչեցեալ աւանն · ուրանօր
հիւանդացեալ ՚ի ցաւոց սրտին վասն պէս-
1064 պէս տառապանաց անձին և ազգին՝ վախ-

ձանի, յետ կալոյ անդէն Է Միաւ բլուր ամի-
սըս իբր եօթն:

249, Գրիգոր Է, որ յառաջն Վահրամ
անուանէր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ա-
մուսնացեալ 'ի կարգ աշխարհի պայազատէր
զիշխանութիւն հօր իւրոյ՝ ընկալեալ զայն
'ի կայսերէ դուքս անուամբ. և զկնի այնր
թողեալ զաշխարհ գնաց յանապատ և եմուտ
'ի կարգ կրօնաւորութեան՝ կալով 'ի նմին
բարենախանձ քաղաքավարութեամբ: Զկնի
անցանելոյ իբր ամի միոյ յետ վախճանի Խա-
չիկ երկրորդ, կաթուղիկոսի ստիպեալ 'ի բա-
1065 զում թախանձանաց ազգային ժողովոյ գնայ 'ի
Ծամնդաւ և օծանի կաթուղիկոս 'ի Թուա-
1071 կանին հայոց ՇԺԴ, յամսեանն ապրիլի: Ձեռ-
նադրէ զԳէորգ առենադպիր իւր լոռեցի
համաձայնութեամբ իշխանացն 'ի կաթուղի-
կոս. և ինքն առանձնացեալ մնանէ յանապատս
'ի Սեաւ լերին 'ի Խարամանիա: Տեսեալ
զչարութիւն Գէորգ կաթուղիկոսի և ստի-
1072 պեալ յիշխանացն ընկենու զնա յայն պա-
1073 տուոյ: 1 Գնայ յականմա կամս առ Միքայէլ փե-

1, Յայս միջոց [illegible] Թէոդորէ Պետրոս կա-
թողիկոսի [illegible] անուանելոյ ապօրինաւորութեամբ
ձեռնադրի կաթողիկոս համաձայնութեամբ փիլարտեայ հայ-
հասան իշխանի՝ ընդ և Գրիգոր Վկայասէր [illegible]
[illegible] փիլարտոսի [illegible] կաթողի-
կոսական. կացեալ նորին Սարգսի յայնմ պատուի անդ 'ի
Հոնի [illegible] կատարի [illegible]
[illegible] յամին 1077: որում յաջորդեաց [illegible]
[illegible] Հոռոմոց [illegible] Թէոդորոս [illegible]
[illegible] յամին 1085. [illegible] 'ի
[illegible] փիլարտեայ, եւ ձեռնադրել փիլարտոսի զՊօղոս
հայր վանացն Վարագայ: [illegible] Թէոդորոս [illegible]

սայ իւր որդին Մուշեղայ յԱշմուշատ աւան՝
ածել զնա առ Փիլարտոս. կասկածեալ 'ի
1074 նենգութեանց Փիլարտեայ անցանէ յԱնին
շիրակայ. ուր կարգեալ տեղապահ Աթոռոյն
զտէր Բարսեղ քեռորդի իւր՝ դառնայ վե֊
րստին 'ի կողմանս Սեաւ լերին. և անտի
1075 անցեալ գնայ 'ի Հռովմ. ուր խօսելով ընդ
Էրդ Գրիգոր պապին զյառաջագոյն գրե֊
ցելոցն 'ի նմանէ 'ի պատասխանին առ ինքն 'ի
վերայ ծիսից Հայոց՝ շինեաց զմիտս նորա:
1076 Վերադարձեալ 'ի Հռովմայ եկն յԵրուսա֊
ղէմ, և անտի չոգաւ 'ի կողմանս Եգիպտոսի
և շրջեալ ընդ կրօնաստանսն, եմուտ 'ի Մեմ֊
փիս. և ձեռնադրեալ զԳրիգորիոս զիւր
քեռորդի առաջնորդ Հայոց եղելոց անդր՝
1077 դարձաւ ինքն 'ի Հայս և բնակեցաւ յԱրե֊
գի վանսն 'ի Սեաւ լեառն: 'Ի պատճառս շփ֊
փոթութեան իրիք և վտանգաւոր ատելու֊
1082 թեան Յունաց ընդ Հայս գնաց 'ի Կոստան֊
դինուպօլիս առ Աղէքսիոս կայսր և անցոյց
զայն: Վերստին գնաց յԵրուսաղէմ յուխտ
անօրինական տեղեացն՝ ուրանօր գտաւ յառ֊
1099 ման քաղաքին անդրէն 'ի լատինաց. և վերա֊
դարձեալ անտի 'ի սովորական դադար իւր
'ի Սեաւ լեառն՝ պարապի գրոց սրբոց ընկե֊
րակցութեամբ ուսումնական անձանց:
1105 Գնաց 'ի Ռապան՝ որ մերձ 'ի Քեսուն քա֊
ղաք, առ իշխանն գող Վասիլ ըստ բազում

նի յիշխանութենէ և 'ի պատուոյն 'ի Բարսեղ հա֊
րազատէն յամին 1091. Վասնզի անդ 'ի Հոնի ժողովէ
յամին 1093: Իսկ Պօղոս շինէ ... ժամանակաց հրա֊
ժարեցաւ ... 'ի պատուոյն և գնաց անդրէն 'ի վանս
իւր. և ապա վախճանեցաւ յԱնտիոք ... և թա֊
ղեցաւ մարմին նորա 'ի դրան եկեղեցւոյն:

Թախանձելովն նորա և տէրկնոջն. տարաւ ընդ֊
իւր և զերկուսին քեռորդիսն իւր, զԳրի֊
գոր և զՎսերուէս. և կացեալ անդ ՚ի Կար֊
միր վանս ամիսս ինչ, կոչեաց առ ինքն զՆար֊
սէս կաթուղիկոս և զիշխանն գող Վասիլ,
և յանձնեաց նոցա զյիշեալ զերկուսին քե֊
ռորդիսն իւր և պատուիրեաց, զի զկնի վախ֊
ճանին Բարսեղ զԳրիգոր կացուսցեն յա֊
թոռ կաթուղիկոսութեան Հայոց. և ապա
՚ի ծերութեան անդ առեալ զյետին թո֊
շակն փրկութե՛ վախճանեցաւ լի աւուրբք
և արդիւնաւոր վաստակօք յամի 1105, յամ֊
սեան նոյեմբերի ՚ի շաբաթ աւուր. կացեալ
՚ի կաթուղիկոսութեան ընդ ամենայն ամս
ի, և ամիս իբր ութ. և զմարմին նորա ամ֊
փոփեցին ՚ի նոյն Կարմիր վանսն:
250. Բարսեղ Ա, որդի Ապասակայ որ֊
դւոյ Ապիրատ իշխանի և քեռորդի Գրիգո֊
1074 րի վկայասէրի կարգի տեղապահ աթոռոյն
Անւոյ ՚ի նոյն վկայասիրէ: Գրաւոր հրամա֊
1082 նաւ վկայասիրի ձեռնադրի ՚ի վանս Հաղբա֊
տայ ՚ի կաթուղիկոսէն Աղուանից Ստեփա֊
նոսէ և յեպիսկոպոսաց Հայոց յաթոռ հայ֊
1090 րապետութեան: Գնաց ՚ի պարսս առ Մելիք
շահ արքայն բազում ընծայիւք՝ հանդերձ
երևելի արամբք՝ եպիսկոպոսօք և ազատօք.
և պատուով ընկալեալ ՚ի նմանէ՝ ետ թե֊
թևացուցանել զհարկն արքունի և ազատ կա֊
ցոյց զեկեղեցիսն. և ինքն ևս հրովարտակաւ
կարգեցաւ հրամանատար այլոց կաթուղիկո֊
սաց՝ ազատ կամօք իւրովք տնօրինել զօգու֊
տըն. ևս և ընկալաւ իշխանութի կրելոյ զա֊
ռաջեաւ զխաչ ձողաբարձ և այնպէս վերա֊
1091 դարձաւ յԱնի. և ՚ի յաջորդ ամին գնաց ի
Հոնի քաղաք Քահան գաւառի և էառ

զգուշացան, զքօղ և զսուրբ նշանն գետար֊
գել ՚ի Մետրոպոլիս կաթուղիկոսէ և ընկեց
զնա յիշխանութենէն՝ յետ կալոյ նորա յայ֊
նըմ աստիճանի զամս ժդ. և անտի գնաց
յԵդեսիա քաղաք և ետ բերել անդր զխա֊
չըն Վարագայ և զհրաշալի պատկերն Աստու֊
1093 ածածնի՝ որ կայր անդ ՚ի Վարագ: Եւ յԵ֊
դեսիոյ գնալ ՚ի տեսութիւն գող Վասլ
իշխանին. և յերթալ խուռամ իջևանեցաւ
՚ի Կարմիր վանսն՝ որ մերձ էր ՚ի Քեսուն
քաղաք. տեսեալ անդ զՍտեփաննոս քահա֊
նայ զուստերն Ներսեսի շնորհալւոյ և ըն֊
կերացն՝ ընտիր ՚ի վարս և զօրեղ ՚ի բանս վար֊
դապետութեան, ձեռնադրեաց զնա եպիս֊
կոպոս նահանգացն այնց եղելոց ընդ իշխա֊
նութեամբ գող Վասլի, և գնաց յԱնի. ոչ
կարացեալ գտանել հանգիստ անդ յԱնի
1104 յերեսաց պարսից՝ եւ հանդերձ ուխտիւք ե֊
կեղեցւոյն և գնաց յԵդեսիա՝ ուր տիրէր
լատին իշխան և ընկալաւ յարգանօք ՚ի նմա֊
նէ: Ընկալեալ զհրեշտակս յԱղուանից և ոչ
անտես արարեալ զխնդիր նոցա՝ գնայ անդ և
ձեռնադրէ նոցա կաթուղիկոս զեղբայրն նո֊
րոգ փախչանելոյն Ստեփաննոսի. կոչեցեալ
1105 ՚ի Գրիգոր Վկայասէրէ գնայ առ նա, և գը֊
տանի առ նմա ՚ի փախչանի նորա: զԳրիգոր
և զՆերսէս զքեռորդիսն Վկայասիրի ետ յու֊
սումն առ յիշեալ Ստեփաննոս եպիսկոպոսն
1106 Կարմիր վանաց. Ձեռնադրէ զԳրիգոր զեղ֊
բայր Ներսեսի ՚ի քահանայ: Յետ որոյ միում
այն ինչ կատարէր միաբան ուխտիւք զերեկո֊
յեան աղօթսն ՚ի վերայ տանեաց յԱւանին
Վարդահերի մերձ ՚ի Գեհենանի, անկաւ տա֊
նիք տանն՝ անկաւ և ինքն Բարսեղ հայրա֊
պետ, և դիպեալ ոչն նորա զքարի՝ բեկաւ:

ուստի փութացոյց տանել զինքն ՚ի Սեւա-
լեառն ՚ի Ծ ուղղ անապատ. ուր անդ ՚ի տր-
կարութեանն ժողովեաց զեպիսկոպոսունս
և զվարդապետս և հաւանութեամբ նոցին
ետ զքող և զգաւազանն կաթուղիկոսական
՚ի տր Գրիգոր քահանայ՝ պատուէր տուեալ
ձեռնադրել զնա կաթուղիկոս. և ինքն յետ
1113 աւուրց ինչ վախճանեցաւ ՚ի 13 աւուր ամ-
սեանն նոյեմբերի, կացեալ ՚ի հայրապետու-
թեան ընդ ամենայն զամս երեսուն և մի:

251, Գրիգոր Գ, պահլաւունի որդի իշ-
խանին Ապիրատայ թոռինն Գրիգորի մագիս-
տրոսի և քեռորդի վկայասիրի. յետ կրթու-
թեանն առ վկայասէր և առ Ստեփաննոս ե-
պիսկոպոս առաջնորդ Կարմիր վանաց ձեռ-
1106 նադրի քահանայ ՚ի հնգետասանամեայ հասա-
կի ՚ի Բարսղէ Ա, որում էր մօրաքեռ թոռն:
Իսկ յանձնարարութեան նորին Բարսղի կա-
1113 թուղիկոսի՝ օծանի կաթուղիկոս յեպիսկո-
պոսաց անդ ՚ի Կարմիր վանսն՝ ընկալեալ յա-
ռաջագոյն զքող և զգաւազանն ՚ի ձեռանէ
1114 նորին Բարսղի նախ քան զվախճանն: Առնէ
ժողով մեծ ՚ի Սեւ լեառն յեպիսկոպոսաց,
՚ի վարդապետաց և ՚ի վանահարց իբրև յեր-
կու հազար հինգ հարիւր անձանց և քննեալ
զգործս նորոգ օծեալ Դաւիթ կաթուղիկո-
սի անձնընծայութեամբ ՚ի Աղթամար, դնէ
համաձայնութեամբ ժողովոյն բանադրանս ՚ի
վերայ և որոց ընդ ունին զնա: Ջգտեալ ըստ
ձախող դիպուածոց ժամանակին զհանգիստ
1125 տեղի բնակութեան դնոյ ՚ի Ծովք դղեակ
՚ի հայրենի կալուած իւր. զոր ամրացուցեալ
հաստատէ ՚ի նմա զաթոռ հայրապետութեն:
1141 Հրաւիրեալ ՚ի լատինաց գնայ յԱնտիոք ՚ի
ժողով նոցա և ը արժանաւորութեանն պա-

տուեալ 'ի նոցանէ՝ էանց յԱւէմ յաւխտ.
և անդ ևս գտաւ 'ի ժողովն նոցին. և ապա
դարձաւ յաթոռ իւր: Տեսեալ զաղէտ տա_
ռապանաց ազգին յասպատակութեց սկիւթա_
1147 ցւոց և այլոց ազգաց՝ փոխէ զաթոռն 'ի Հռոմ_
կլայն՝ որում տիրէր տիկինն Ջոսլէին կոմսի
Ը իշխանութեամբ լատինացւոց. զոր և զկնի
ամաց ինչ յորդւոց նորին տիկնոջն գնէ գնոց
1165 դրամոց. ծանէ զեղբայր իւր զՆերսէս 'ի
կաթուղիկոս բազմութեամբ ժողովոյ եպիս_
կոպոսաց և վարդապետաց. կացեալ յետ այ_
նըր ամիս ինչ փոխի յաստեացս՝ մնալով ընդ_
ամենայն 'ի հայրապետութեան զամս յիսուն
և երեք. որոյ զմարմինն ամփոփեն անդէն 'ի
Հռոմկլա 'ի տապանին յիւրմէ պատրաստե_
լոյ յառաջագոյն:

252, Ներսէս Դ, անուանեալ կլայեցի
և յատուկ վերտառութեամբ շնորհալի՝ էր
1095 եղբայր Գ Գրիգոր կաթուղիկոսի. սնանէր
1105 առ վկայասէր քեռի իւր յուսումն. յանձ_
նեցաւ ընդ եղբօր իւրում ցԲարսեղ կա_
թուղիկոս և 'ի նմանէ յանձնեցան Ստեփան_
նոսի վարդապետի՝ որ էր վանահայր Կարմիր
վանաց, յուսումն աստուածային և արտաքին
1125 գրոց. ձեռնադրի յեղբօրէ իւրմէ յԳ Գրի_
գորէ 'ի քահանայութիւն: Նա և ապա 'ի նմա_
1135 նէ ևս ձեռնադրեցաւ յեպիսկոպոսութիւն.
1141 ընդ եղբօր իւրում գնաց 'ի ժողովն Ան_
տիոքայ: Ժողովով եպիսկոպոսաց և վանակա_
1165 նաց ձեռնադրեցաւ յեղբօրէն կաթուղիկոս՝
արժանաւոր ժառանգ աթոռոյ հայրապետու_
թեանն. և եղեալ արթուն հովիւ պայծա_
ռացոյց զեկեղեցին պէսպէս կարգօք բարե_
վայելչութեանց. և թողեալ յետ իւր զար_
ժանաւոր վաստակս՝ կալով 'ի հայրապետու_

1173 թեան զամս եօթն՝ փոխի յաստեացն յանդ-
րանկացն խորան 'ի 13 օգոստոսի յաւուր
հինգ շաբաթի. և մարմինն ամփոփեցաւ 'ի
տապանի առ եղբօր իւրում 'ի Հռոմկլա:

253, Գրիգոր Դ, տղայ անուանեալ որ-
դի Վասլի եղբօր Շնորհալւոյն Ներսեսի՝
սնեալ առ հօրեղբօր իւրում 'ի տան կա-
1173 թողիկոսարանի. օծանի կաթողիկոս հար-
կադիր խնդրանօք եպիսկոպոսաց և ժողո-
1176 վրդոց. Ձեռնամուխ լինի յանկատար միա-
բանութիւնն ընդ յոյնս 'ի Շնորհալւոյն. այլ
1179 վասն առնէ ժողով մեծ յեկեղեցականաց 'ի
Հռոմկլայն, այլ 'ի վախճանիլ կիռ Մանո-
ւէլ կայսեր Յունաց անկատար խորհուրդ մի-
1180 աբանութեանն: Գրէ թուղթ առ տուտէ-
որդին Գրիգոր 'ի Հաղբատ՝ պատասխանի
1184 թղթոյն գրեցելոյ 'ի նմանէ: Գրէ առ Լու-
սիոս Երդ, հայրապետ Հռովմայ վասն ատե-
լութեան և ամբաստանութեանն Յունաց
1190 զՀայոց՝ թէ սուտ է և առ նախանձու. Թղ-
թակցի հանդերձ Լեւոն իշխանաւն ընդ Փր-
րիտերիկոս կայսր Ալամանաց՝ որ ասի և Հը-
ռովմայ, որ և եկեալ իսկ էր յայնոսիկ կող-
մանս ընդ խաչակիր զօրացն: Կացեալ 'ի հայ-
րապետութեն բարեյիշատակ գործովք զամս
1193 քսան՝ վախճանի յամսեանն յուլիսի. և մար-
մինն ամփոփի անդէն 'ի Հռոմկլա առ շիրմի
հօրեղբարցն:

254, Գրիգոր Ե, եղբօրորդի վախճանե-
լոյն Գրիգորի Դ, գահավէժ կամ քարավէժ
1193 անուանեալ՝ նստի կաթողիկոս հաւանու-
թեամբ մեծի իշխանին Լեւոնի. ըմբռնեալ
'ի Լեւոն իշխանէ ամբաստանութեամբ վար-
դապետաց և իշխանաց դնի յարգելանս. և
ոչ կարացեալ տանել վշտացն՝ այն ինչ փախ-

չէր կամէր անոր հնարիւք և պըրակաւ կոտ֊
ւոյ իջանել ընդ պատուար պարսպին, քակե֊
ցաւ պըրակն, անկաւ ինքն 'ի վայր և հարաւ
1194 զքարի և անդէն վախճանեցաւ. և թաղեցաւ
'ի Դրազարկն. կացել յայնմ աստիճանի ամ
մի և ամիսս հինգ:

255, Գրիգոր Զ, այնէ Ապիրատ որդի
Շահանայ զօրավարի եղբօր Շնորհալւոյն Ներ
սեսի՝ հաւանութեամբ մեծի իշխանին Լե֊
1195 ւոնի և համաձայնութե՟մբ ամենեցուն օծաւ
կաթողիկոս Հայոց. Վասն ատելութեանն
Յունաց ընդ Հայս 'ի վերայ ծիսից և այլոց
1197 իրաց գրեաց թուղթ հանդերձ Լեւոն իշխա֊
նաւն հրեշտակութեամբ Ներսեսի Լամբրո֊
նացւոյ առ Ալէքս անկեղոս կայսր. և շա֊
հեցան անտի և ոչինչ. մեծաշուք հանդիսիւ
1198 բազմութե՟ ժողովոյ եօծ զմեծ իշխանն ըզ֊
Լեւոն թագաւոր Հայոց 'ի Տարսոն քաղա֊
քի յեկեղեցւոջ սրբոյն Սոփիայ 'ի վեց յուն֊
1202 վարի յաւուր յայտնութեան Տեառն: Միջ֊
նորդէ առ արքայ Լեւոն և տայ արձակել 'ի
պանաց զՀեթում իշխան Լամբրոն դղեկի
զեղբայրն Ներսեսի Լամբրոնացւոյ և զորդիս
նորա. և ապա դադարեալ յայնոսիկ կողմանս՝
զտեղի էառ 'ի վանս Արքայ կաղին կոչեցեալ.
և 'ի նմին ամի հիւանդացեալ՝ յետ փոքր մի֊
ջոցի վախճանեցաւ 'ի Սիս, կացեալ 'ի հայ֊
րապետութեան ամս եօթն:

256, Յովհաննէս Է, մեծաբարոյ անո֊
ւանեալ յաղագս վեհանձնութեան բարու֊
ցըն յԱրք եպիսկոպոսութենէն Սսոյ հաճու֊
1202 թեամբ Լեւոն արքայի ընտրեցաւ և օծաւ
յաթոռ հայրապետութե՟ 1: Յարհամարհելն

1, Անանիա եպիսկոպոս Սեբաստիոյ նա յետնոս֊

զհրամանս Լեւոն արքայի և յայլազգ վարիլն ը՟
1203 նմա անարգեցաւ. ուստի փոխանակ իւր կա-
ցոյց Լեւոն զտէր Դաւիթ երորդ ի վանա-
1204 ցըն Սկեւռայ կաղնոյ կաթուղիկոս ի Սիս 1։ Առա-
քեաց առ Զաքարիա սպասալար ըստ խնդրոյ
նորա զսպաս եկեղեցական և զժամերգուս
և հրաման ետ պատարագել քահանայից ի
բանակի նորա ընդ վրանօք։ Պատճառաւ իւ-
1206 իք հաշտեցաւ ը՟ արքային Լեւոնի և անդ-
րէն հաստատեցաւ յաթոռն հայրապետական.
1220 եկաց ի հայրապետութե՟ն ամս ժ՟ը և վախճա-
նեցաւ. և թաղեցաւ մարմին նորա ի Հռոմկլայ։

257, Կոստանդին Ա, որդի Վահրամայ
ուրումն յաշխարհէն երր՟դ Հայոց ի քաղա-
1220. քէն Բարձրբերդոյ նստի կաթուղիկոս. և ի
նոյն ամի հաւանութեամբ իշխանացն և հա-
ճութեամբ Զապէլայ թագուհւոյն պսակեց
զՓիլիպպոս, կամ զՓիլիպ զորդի նորոյ կոմ-
սին Անտիոքայ ընդ նա ինքն Զապէլ թա-
1224 գուհի։ Օծանէ զՀեթում զորդի Կոստան-
դնի մեծի իշխանին՝ որ ամուսնացաւ ընդ
Զապէլ թագուհի մեծահանդէս փառօք։
1243 Արար ժողով յե՟պսաց և ի վարդապետաց
ի Սիս քաղաքի վասն բարեկարգութեան ե-
կեղեցւոյ՝ ուր կարգեցան կանոնք քսան և
1258 հինգ. գնաց ընդ Հեթմոյ արքայի բազում
պատարագօք առ Հուլաւ էլղան՝ նախահօ-

ութեամբ կաթողիկոսին իւրոյ ընդդէմ Յովհաննու է, օծաւ և ինքն անչնընծայութեամբ և հալածոս անդ ի Սեբաստիա. և կացեալ ամս է, մեռաւ 1206։

1, Տէ՟ր Դաւիթ ի վանաց Սկեւռայ կաղնոյ ի Կիլիկէ Լե-ւոն արքայի ընդ Յովհաննու է, հալածեցաւ ի նմանէ կա-թողիկոս ի Սիս. արար ժողով ընդ Լեւոնի ի պատարա-նի կրօնէ Զաքարիա սպասալարի. մեռաւ յամին 1206։

գակ եղեալ Փոսսուց կողմանցն Կիլիկիոյ·
1267 կացել 'ի հայրապետութեան զամս խէ՝ վախճանի
յելս քառասնորդական պահոց յաւուր յա-
րութեանն Ղազարու:

258, Յակոբ Ա, 'ի Տարսոնայ կամ 'ի սը-
սոյ անուանեալ կլայեցի վարդապետ կաթու-
1253 ղիկոսարանին՝ առաքեցաւ առ Յովհաննէս
Դուկաս կայսր Յունաց 'ի Նիկիա բիւթա-
նացւոց յարքայէ Հեթմոյ և 'ի Կոստանդին
կաթուղիկոսէ և երբարձ զկարծիս համարման
մոաց նորա և ժողովոյ նոցին 'ի բանս հաւա-
տոյ՝ զհայոց: Յետ քանի ինչ ամաց զկնի վախ-
1268 ճանին Կոստանդեայ ընտրեցաւ 'ի ժողովոյ ե-
պիսկոպոսաց և 'ի Թագաւորէն և օծաւ կա-
1270 թուղիկոս· էօծ զԼեւոն Գ, որդի Հեթմոյ
Թագաւոր Հայոց 'ի Տարսօն քաղաքի· կացել
1287 'ի հայրապետութեան զամս ժԹ, վախճանի
յաւուրս քառասնորդական պահոց,

259, Կոստանդին Բ, 'ի Կատուկ կոչե-
ցեալ աւանէ անեալ յեկեղեցւոջ Սսոյ մա-
1287 կանուամբ պրոնագործ՝ օծաւ կաթուղիկոս
մեծաւ հանդիսիւ յաւուր մեծի աւագ շա-
բաթու: Ընկեալ գժտութիւն ընդ մէջ սո-
րա և արքային, որոյ վասն և ընկեցեալ յիշ-
1290 խանութենէն՝ աքսորեցաւ: 1 Ներսէս հա-

1 Տէր Ստեփաննոս Սիւնեցւոյ գաւառէ 'ի գեղ-
ջէ Խոտխոյ կամ Խաչատրոց անեալ 'ի կաթողիկոսարանին
'ի Հռոմկլա՝ առեալ գծութեան Լեւոնի ընդ Կոստան-
1290 դեան Բ, կաթողիկոսակցեցաւ 'ի նմանէ փոխանակ կոս-
1293 տանդնի յաթոռ հայրապետութեան· վարեցաւ ընդ գե-
րելոյն յԵգիպտոս· և 'ի յաջորդ ամին մեռաւ 'ի յա-
ւոյ աւուրն անդ յԵգիպտոս:

Ընդ որոյն Ստեփաննոսի առ կենդանութեամբ
Կոստանդնի Բ, կացուցաւ յաթոռն Գրիգոր անաւար-

1307 ւանութեամբ ազգային ժողովոյ հաստատե_
1322 ցաւ յաթոռն հայրապետութեան · գրեաց
թուղթ առ պապն Հռովմայ հանդերձ եպիս_
կոպոսօք և թագաւորաւն և խնդրեաց օգ_
նել հօտին իւրոյ յարշարաւանան անդ ՚ի Թա_
թարաց և յայլոց ազգաց · ՚ի բազում ցա_
ւոց սրտին պատճառելոյ ՚ի տառապանաց և
1323 յաղէտից հօտին իւրոյ հիւանդացեալ՝ վախ_
ճանեցաւ · կացեալ ընդ ամենայն ՚ի կոչմանն
զամս լե̄ :

1323 260, Կոստանդին Գ̄, լամբրոնացի նստի
կաթուղիկոս և գնացեալ առ Նասր սուլ_
թան ըստ հրաւիրանաց նորա՝ իմաստալից բա_
նիւք հաճեցոյց զսուլթանն և ետ դնել ՚ի
միջի նց̄՝ սուլթանին և Լեւոն արքայի դա_
շին խաղաղութեան ցհնգետասանամեայ ժա_
մանակս · կացեալ ՚ի հայրապետութեանն զա_
1327 մս Դ̄՝ վախճանեցաւ :

261, Յակոբ Բ̄, Սսեցի քեռորդի Գրի_
1327 գորի անաւարզեցւոյ յաջորդէց յաթոռ հայ_
րապետութեան ՚ի Սիս · յընդդիմանալ իւր
արքային Լեւոնի սակս չառնելոյ զթըղթակ_
ցութիւն ընդ լատինս՝ որ բերէր վնաս մեծ
ազգին հասարակօրէն ՚ի շրջակայ այլազգեաց,
1341 ընկեցաւ յաթոռոյ հայրապետութեան յար_
1354 քայէն Լեւոնէ Ե : Ո կնի անկմանն գնաց առ
պապն ՚ի Կաղղիա և հաւանեցոյց զնա ՚ի բա_

1294 շէջի՝ տարս երեցանց հոչէջեալ · առ հաղտեցոյց ղարմաց
ընդ իշխանան · հաւանեցոյց եղև թագաւորութեն Սմբատայ
և Լօծ զնա ևն · հանեցաւ Նարաշխոտն առնել ջեհեղէ_
ջի ՚ի համին տէրութեց · ստապ և գրեաց առ Եգիպ
տոսեցւոց · և այն իւչ պատրաստ էր ՚ի գլուխ առնել
զայն ժողովն, հաւէալ յօր համհուն՝ Բաւաւ յամի 1306 :
Ե, ՍՒեքեաւը ջԼաքըջաւ կատարէ ՚ի Կեղջէ Վեր_

նըս հաւատոյ առ Հայս։ Նա յետ վերադար-
ձին ՚ի վախճանել մխիթար կաթուղիկոսի
վերստին համահաճութեամբ եպիսկոպոսաց
1355 և Կոստանդեայ արքայի կարգեցաւ յաթոռ
հայրապետութեանն. և վարեալ զայն գե-
1359 րագոյն պաշտօն այլևս ամս Դ, վախճանեցաւ։

262, Մեսրոպ յարտազ գաւառէ յա-
ռաջնորդութենէ վանաց Թադէոսի առա-
1355 քելոյ յաջորդեաց յաթոռն կաթուղիկոսա-
կան. վասն ազգային խռովութեանցն ծագե-
լոց ՚ի պատճառս անապակ և ջրախառն պա-
1361 տարագելոյ՝ ժողով արար յեպիսկոպոսաց և ՚ի
վարդապետաց ՚ի Սիս քաղաքի և արգել զջ-
ջրախառնութիւնն. և հրատարակեաց զա-
նախնի սովորութեանն անապակ պատարա-
1372 գել. վարեալ զայն պաշտօն զամս ԺԳ, վախ-
ճանեցաւ։

1372 263, Կոստանդին Դ, նստաւ յաթոռն և
1373 յերկրորդ ամին վախճանեցաւ։

1374 264, Պօղոս Բ, յաջորդեաց զաթոռ հայ-
1378 րապետութեան. կացեալ զամս Դ, վախճա-
նեցաւ. յերկրորդ ամի սորա ըմբռնեցաւ ար-
քայ Լևոն Զրդ. որով և վախճան թագա-
ւորութեանն Կիլիկիոյ և ընդհանուր ազգին
Հայոց։

1378 265, Թէոդորոս Բ, նստի կաթուղիկոս.
և գրգռութեամբ քրիստոնէից ոմանց ըմբռ-
նեցաւ յումեմնէ Մելիք օմար կոչեցեալ իշ-
1395 խանէ այլազգեաց և սպանաւ. յետ կալոյ յա-

նայ, որ և առաջ քան զմինչ՝ յանկանել յաթոռոյ հայրապե-
տութեան Յակոբայ Բ, յաջորդեաց յաթոռն յարքայէն
Լևոնէ, որոյ և հրամանաւն արար ժողով և պատարա-
գեաց բաշխահաղորդութեան քանիցս պաղջին Հռովմէից, և ի գ-
ստու ամին 1355։

թոռն հայրապետութեան զամս ժը։
1396 266, Կարապետ ա, բոկիկ անուանեալ՝
յաջորդէ յաթոռն. և եկաց ամս ե։
1398 267, Դաւիթ դ, նստի կաթուղիկոս.
և եկաց ամս դ։
1402 268, Կարապետ բ, նստի կաթուղիկոս.
1409 կացեալ յայնմ ամս է՝ վախճանեցաւ։
269, Յակոբ գ, էառ հրաման յայլազգի
1409 ամիրայէն Կիլիկիոյ և նստաւ կաթուղիկոս.
1410 և կացեալ զամս բ, վախճանեցաւ դեղով
մահու ընկալեալ զայն յոմանց եղելոցն ՚ի
հայրապետանոցի անդ։
270, Գրիգոր ը, խանձողատ կոչեցեալ
1411 նստի կաթուղիկոս ինքնակամ. յետ կալոյ յա-
1418 թոռն ամս եօթն, աքսորեցաւ ՚ի սսեցւոց ՚ի
բերդ մի ամուր՝ ուր և մեռաւ իսկ։
271, Պօղոս բ, առաջնորդ Երուսաղէմի
ազդարարութեամբ վարդապետաց արևելեայց
եկն ՚ի Սիս խրատել զմիաբանս հայրապետա-
նոցին առ ՚ի կալ ընդ միմեանս սիրով և մի-
աբան ընտրել զայր իմաստուն յաթոռ հայ-
րապետութեանն. յայնժամ հարկեալ ՚ի նո-
1418 ցունց ամենեցուն նստի ինքն կաթուղիկոս
և բարեկարգէ փոքր ինչ զաթոռն. կացեալ
1430 յիշխանութեանն զամս ժբ՝ վախճանեցաւ։
272, Կոստանդին ե, ՚ի բերդաքաղաքէն
1430 Վահկայ նստի կաթուղիկոս։ Առաքէ դես-
1438 պանս ՚ի ժողովն Փլորէնցիոյ. այլ նախ քան
1439 զդարձ նոցին ՚ի ժողովոյն անտի, վախճանե-
ցաւ՝ կացեալ յայնմ զամս թ։
1439 273, Յովսէփ գ, կարգի ՚ի սսեցւոց կա-
թուղիկոս. և կացեալ ամիսս ինչ վախճանի։
1440 274, Գրիգոր թ, մուսաբէկեանց նստի
կաթուղիկոս առանց հաւանութեան արևե-
լեան եպիսկոպոսաց։ Սակս ինչ ինչ բանաւոր

1441 պատճառաց հրաւիրեցաւ յարեւելեան առաջնորդաց գալ և նստիլ յԷջմիածին, և այնպէս ունիլ զայն իշխանութիւն. բայց ոչ էառ յանձն:

275, Կիրակոս ՚ի գաւառէ Վիրաջբերու-
1397 նւոյ ՚ի գեղջէ Խառաբաստայ ձեռնադրեցաւ քահանայ ՚ի Պետրոս եպիսկոպոսէ առաջնորդէ վանաց առաքելոյն Թադէոսի և գնացել կրօնաւորեցաւ ՚ի վանս Խորվիրապի՝ յամս ԼԵ: Նոյա ՚ի ժողովի անդ յԷջմիածին ընտ-
1441 րեցաւ և օծաւ համահաճ հաւանութեամբ բովանդակ ազգին եպիսկոպոս և կաթուղիկոս և նստաւ յԷջմիածին. և կացեալ ՚ի հայրապետութեան ամս Բ, և եղեալ շփոթ տարաձայնութեան՝ որոյ նախկին պատճառ
1443 էր Մարկոս ոմն, անկաւ ՚ի կաթուղիկոսութենէն:

276, Գրիգոր Ժ, մակուեցի ջալալբէ-
1443 կեան նստի կաթուղիկոս յԷջմիածին զկնի անկմանն Կիրակոսի ՚ի կենդանութեան նր: Սակս զբաղմանց գործոց կառավարութեան
1454 կարգէ գործակից և օգնական զԱրիստակէս վարդապետ ոմն աթոռակալ անուամբ և յաջորդ զկնի մահուանն 1: Ստացաւ կալուածս գնոց դրամոյ ՚ի սեպհականութիւն կաթուղիկոսարանին(134).(138). և կացեալ ՚ի
1462 հայրապետութե զամս ԺԹ, վախճանեցաւ:

1455 277, Արիստակէս Բ, կարգի գործակից և աթոռակալ Գրիգորի մակուեցւոյ. զկնի

1, Զաքարիա կաթողիկոս Աղթամարայ ակրեցեալ յայլս
1461 Ջահանշահայ և որդւոյն նորա Հասանալւոյ, առնու ՚ի նմանէ զիշխանութիւն կաթողիկոսութեան Էջմիածնի հրովարտակաւ յամի 1461, այլ զի ամ մի և եթ կացեալ առ յԷջմիածին՝ ետես թէ չէ՛ կարող այլ հանդուրժել, առ՚ պատ-

1462 վախճանի նորա վարէ զիշխանութիւն կաթու_
ղիկոսութեանն ունելով ինքեան գործակից
և աթոռակալ զՍարգիս վարդապետն. կա_
1466 ցեալ յայնմ զամս դ, վախճանի։

278. Սարգիս բ, աթոռակալ Արիստա_
1466 կէսյ Նստի կաթուղիկոս։ Յորդորել զԱրը_
թանէս եպիսկոպոս ոմն ՚ի վանաց Մծածնի
գեղջ Օծոպու և ՚ի ձեռն նորա հնարիւք եա_
1477 փախուցանել զաջ լուսաւորչին յԱղթամա_
րայ յԷջմիածին. և զնոյն զԱրթանէս եպիս_
կոպոս կարգեաց փակակալ սրբոյ Էջմիած_
նի. կացեալ յայնմ մեծի պաշտաման զամս իդ,
1490 վախճանեցաւ։

1490 279. Արիստակէս գ, Նստի կաթուղիկոս
1498 զկնի Սարգսի բ, և կացեալ զամս ը, վախճա_
նեցաւ։

280. Թադէոս ա, փոխանորդ Արիստա_
1498 կէսյ Նստի կաթուղիկոս. կացեալ ամս ե,
1503 վախճանեցաւ։

1503 281. Եղիշէ բ, Նստաւ կաթուղիկոս զկնի
Թադէոսի ա. և կացեալ յայնմ զամս ժբ,
1515 վախճանեցաւ։

1515 282. Զաքարիա գ, Նստի կաթուղիկոս
1520 զկնի Եղիշէի բ. կացեալ յայնմ զամս ե, վախ_
ճանեցաւ։

1520 283. Սարգիս գ, յաջորդէ զաթոռ կա_
թուղիկոսական. և կացեալ յայնմ ամս ժզ,
1536 վախճանեցաւ։

1536 284. Գրիգոր ժա, կարգի կաթուղիկոս
1541 զկնի Սարգսի գ. կացեալ զամս ե, վախ_

[illegible]

ճանեցաւ ։

285 ։ Ստեփաննոս Ե, սալմաստեցի այր
1541 իմաստուն և գրասէր նստի կաթուղիկոս ։
վշտացեալ 'ի դառնութենէ ժամանակա_
1547 ւաց՝ ձեռնադրեաց զՄիքայէլ սեբաստացի
և կարգեաց յաթոռ հայրապետութեան ։ և
1548 ինքն գնաց 'ի Կոստանդինուպօլիս, և անտի
'ի Հռովմ ։ և շրջեալ յայնոսիկ կողմանս է_
1550 անց 'ի Լէհաստան և 'ի Մոսկովաստան ։ և ե_
1551 կըն յԱրարատ և եմուտ յԷջմիածին, և ըն_
կալաւ բազում պատուով 'ի Միքայէլ կա_
թուղիկոսէ ։ և զկնի սակաւ ժամանակաց
վախճանեցաւ ։

1547 286 ։ Միքայէլ սեբաստացի ձեռնադրի
'ի Ստեփաննոս կաթուղիկոսէ յաթոռ հայրա_
1556 պետութեանն ։ կարգէ գործակից ինքեան և
1562 աթոռակալ զԲարսեղ վարդապետ ոմն ։ գնաց
'ի Սեբաստիա 'ի վրդովիլ աշխարհին Արա_
րատոյ յասպատակաց և յղեաց անտի 'ի Հռ_
ռովմ առ պապն զպատգամաւոր ոմն Աբգար
1563 անուն ։ դարձ առնէ անտի յԷջմիածին ։ կա_
1569 ցեալ 'ի հայրապետութեան ամս ԺԲ ։ վախ_
ճանեցաւ ։

1569 287 ։ Գրիգոր ԺԲ ։ յաջորդէ յաթոռն
1573 հայրապետութեան ։ կացեալ զամս Դ ։ վախ_
ճանեցաւ ։

1573 288 ։ Ստեփաննոս Զ ։ նստի յաթոռ կա_
1575 թուղիկոսական ։ կացեալ ամս Բ ։ վախճանեցաւ ։
1575 289 ։ Թադէոս Բ ։ յաջորդէ զաթոռ հայ_
րապետութեան ։ կարգեաց գործակից ին_
քեան զԱռաքել վարդապետ ։ հասեալ 'ի
վախճան կենաց՝ կացոյց յաթոռն փոխանակ
իւր զնոյն Առաքել վարդապետ ։ և ինքն
1584 վախճանեցաւ ։

290 ։ Առաքել 'ի սահմանացն Աղջա_

ոծնի կարգի գործակից և աթոռակալ Մխա-
1583 գիտոսի Է. եմուտ առ Փահրատ փաշայ օսման-
ցւոց և միջնորդեալ ոչ ետ փակել զեկե-
ղեցին երկերեա կոչեցեալ Անդրեան։ Մերձ
1584 'ի վախճան Մխադիտոսի կացուցաւ 'ի նմանէ
յաթոռն հայրապետական. զկնի երկու ա-
1586 մաց ձեռնադրէ փոխանակ ինքեան յայն
պաշտօն զտէր Դաւիթ և ինքն հրաժարեալ
առանձնանայ 'ի վանս ինչ մինչև ցմահ։
1586 291, Դաւիթ Է, նստի կաթուղիկոս 'ի
կենդանութեան Առաքելի ձեռնադրեալ 'ի
1593 նմանէ։ Մշտացեալ 'ի հարկապահանջից ձեռ-
նադրեաց աթոռակից ինքեան և օգնական
1 զՄելքիսեթ եպիսկոպոս գառնեցի։ Ա-
1605 րեցաւ ընդ գերելոցն բազմութեան ազգին

1, Սա էնչն Մելքիսեթ եղև գաւառեցի 'ի գեղջէ
1593 Առջոց վանից ձեռնադրեցաւ կաթողիկոս 'ի Դաւթայ
վասն գործակցութեան նմա. նեղի 'ի պարտատերց, և
1598 գնայ 'ի Կոստանդնուպօլիս գանձել օգնութիւն ինչ
յաշխէն. ուր 'ի պատճառս բարձման երկուութեան կա-
թուղիկոսաց եղաւ յաշխէն յանուն պարիարգութեան.
և չև ևս հասեալ յայնմ չամ մ, անկաւ յիշխանութենէ
անտի և էջն դարձեալ յէջմիածին. և դարձեալ մատնե-
ցաւ 'ի ձեռս պարտատերց. և խորհրդակցութեամբ
1603 Դաւթայ գնայ յապահան առ 'ի գանձել նպաստ ինչ
1605 պարսկացն՝ յաշխէն և 'ի Շահապասայ. ընթանի 'ի
պարսից և վարի ընդ գերելոցն, այլ 'ի ձեռս ճանապարհէն
փախուցեալ դառնայ յէջմիածին։ Ի սա հրամանին Շա-
հաբասայ բռնութեամբ Մխահմաշըլի խանին Երևա-
1612 նայ եհան ընդ մարմնոյ իւրոյ շհատեալ աղջանոս 'ի ծա-
ռայից այնր եղխանի և ապա հալածօք առաքի 'ի Սպ-
րահան առ Շահաբաս։ Յաղագս աղաւելոյ շանչի
1618 'ի դառնադառն հալածանս եւր շաթռանն 'ի նեղեաց ա-
գանձոց հարկաց թշնամեաց՝ ոչ որ ընդ ում ունէր հաս-

1611 յՍպահան քաղաք պարսից · վերադարձաւ
յԷջմիածին և անպատուեալ 'ի Մելքիսե_
1612 թէ՝ գնաց առ Շահաբաս՝ որ էր յայնժամ
1614 'ի Վրաստան : Վերադարձաւ հրամանաւ
1616 Շահաբասայ յԷջմիածին : Վերստին գնաց

ցանել լուսաւորչեան պարսից : Նորէ տագնապեալ 'ի ծան_
րութենէ պարտուց և 'ի նեղելոց հարկապահանջեցն
1624 ձեռնադրեալ [illegible] էր զՍահակ եպիսկոպոս յա_
թոռ կաթողիկոսութեան · և ինքն հնարէր իմն երթալ ետ
'ի Կոստանդնուպօլիս և անտի 'ի Լեհաստան · առըն_
նոյր հակառակ կամաց ժողովրդեան ձեռնադրեաց զՍե_
ջօլ եպիսկոպոս և ետ պատճառ [illegible]
'ի ժողովրդեանն · և հալածեալ անտի 'ի Կամենից քաղա_
1628 քի մեռաւ յաւուր տօնի յարութեան Ղազարու :

Սրապիոն վարդապետ առաջնորդ Ամդայ քաղաքի ·
այր երեւելի անուամբ և հարստութեամբ ընծայեցաւ ըն_
թացիկ 'ի Պօլիս և 'ի Մելքիսեթէ կաթողիկոսէ
1602 յաղագս պարտուց աթոռոյն և այլն, գայ յԱրարատ ·
[illegible] 'ի Գըջ [illegible] և կաթողիկո_
սոյն, մնաց առ ինքն առ Ջուղայեցիսն · յորոց [illegible]
1603 նախօք հանդերձ գայ յԷջմիածին և ձեռնադրէ կաթո_
ղիկոս 'ի ժողովոյ եպիսկոպոսաց, վարդապետաց և քահա_
նայց 'ի 14, Օգոստոսի և անուանէ Գրիգոր : 'Ի գալ_
ստեան Շահաբասայ յԱրարատ նեղէ զօսմանեանց յա_
1604 ղագս պարտուց աթոռոյն : [illegible] Շահաբասայ
յԵրեւան քաղաքի · այլ [illegible] 'ի
հանձինս, և [illegible] գնաց 'ի Դ [illegible] : [illegible]
կըս պահանջելոց Շահաբասայ 'ի կաթողիկոսացն ըն_
դարձ աթոռոյն՝ [illegible] և Սրապիոն · և [illegible]
գանից և [illegible] հալածեալ [illegible]
'ի [illegible] և անդ գնաց 'ի [illegible] և անտի յԱմիդ յա_
[illegible] էր · [illegible] 'ի հարստա_
1606 ծոց անտի [illegible] և [illegible] վախճանեցաւ 'ի 23,
[illegible] :

առ Տ. Ահարոն՝ որ բնակեալ էր ՚ի լերինս
Գառնւոյ գաւառին Վայոց ձորոյ, և պատ-
մեաց զանհնարին տառապանաց իւրոց. ընկալ-
եալ պարգեւ ՚ի նմանէ զգիւղն Կռդիկան ՚ի
Ջղախու գաւառին Սպահանայ ՚ի դարման
պիտոյից. ուստի ըստ խնդրանացն ել, գնաց
յՍպահան։

Հարկադրութեամբ հայ ջուղայեցւոց բնա-
1626 կելոց յՍպահան գնաց ՚ի Բաղտատ առ Տ. Ա-
հարոն հաստատել անդրէն յիշխանութեան
հայրապետական. իսկ հասեալ անդր և տե-
սեալ եթէ ոչ յաջողի այն, էառ վերստին զա-
զատութիւն հարկաց աւանին՝ զոր յառաջն
ունէր ՚ի նմանէ, և դարձաւ անդրէն. և կա-
ցեալ անդէն յՍպահան յաղգի անդ զայլ
ևս ամս՝ կնքեաց զկեանս իւր յառաջնում
ամի անդ կաթուղիկոսութեան Փիլիպպոսի
հաղբակեցւոյ՝ այն է, յամի 1633, յամսեանն
օգոստոսի, ըստ Առաքելի դաւրիժեցւոյ յե-
րես 423։

192. Սահակ Գ. եղբօրորդի Մելքի-
1619 սէթ կաթուղիկոսի ձեռնադրի ՚ի նմանէ ե-
պիսկոպոս։ ՚Ի լինել բանի կաթուղիկոսութե
Մովսէսի սիւնեցւոյ և ՚ի հրաժեշտ տալն նր
յայնմ պատուոյ, առ ինքն անձնընծայ եղել
1624 ձեռնադրի ՚ի հօրեղբօրէ իւրմէ Մելքիսէ-
թէ կաթուղիկոս և հաստատի այն ՚ի Տ. Ահա-
րոնայ՝ դեգերմամբ նորին Սահակայ մինչ ՚ի
Բաղտատ։ Դարձեալ անտի յՍպահան առ
ազգն առ ՚ի ժողովել զդրամս, ոչ ընդունի
1626 ՚ի նոցանէ. և դարձեալ գնայ առ Տ. Ահարոն՝
որ էր անդ ՚ի Բաղտատ, և վերստին հաստա-
1627 տեաց զիշխանութիւն իւր։ Վերադառնայ
և գոյ յուսով յՍորբեան, այլ մնայ անյոյս.
և խորհի խոյս տալ ՚ի ձեռաց պարտատեարց.

պատճառաւ գնալոյ յԷջմիածին՝ խոյս տայ
1628 ընտիր երիվարաւն և անցանէ ընդ Երասխ և
զերծանի 'ի Վան քաղաք: Հոգայ զհրովար_
տակ յարքունի դրանէ. այլ զի առցէ և ըզ_
հրովարտակ յեպարքոսէ՝ որ էր յայնժամ յԱ_
միդ-քաղաքի (Տիգրանակերտ) առ 'ի վարել զիւր
իշխանութիւն 'ի սահմանի անդ օսմանեանց,
1629 արկաւ 'ի ներքոյ գանից. և զերծեալ 'ի մա_
հուանէ միջնորդութեամբ ոմանց համազ_
գեաց՝ վերադառնայ և գնայ 'ի վրացտուն և
անտի յԷջմիածին. ուրանօր կացեալ բա_
զում ջերմեռանդութեամբ և ապաշխարու_
1639 թեամբ վախճանեցաւ:

293, Մովսէս Գ, յաշխարհէն Սիւնեաց
'ի գաւառէ Բաղաց, 'ի Խոտանան գեղջէ շըր_
ջեալ 'ի բազում տեղիս մինչև ցԵրուսա_
1611 ղէմ՝ դառնայ անտի յԵրևան: 'Ի պատճառս
Անդրէաս քահանայի նահատակելոյն յԱգուլիս
1617 ըմբռնեցաւ ը̄ պօղոս վարդապետի գործակցի
նորա շղթայիւք 'ի Շահաբասայ. և երեք հա_
1619 րիւր թումանս տուգանօք զերծաւ: Ձեռնա_
դրեցաւ 'ի Մելքիսէթ կաթուղիկոսէ յե_
պիսկոպոս 'ի քաղաքին Երևանայ 'ի մենաս_
1626 տանին Անանիա առաքելոյ: Ընծայեաց Շա_
հաբասայ մոմ սպիտակացուցեալ և սիրով
1627 ընկալաւ 'ի նմանէ: Աստարեաց զհանդէս ջը_
րօրհնեաց 'ի Ֆահրապատ 'ի ներկայութեան
Շահաբասայ. ընդ որ հաճեալ եւ սմա հրո_
վարտակաւ զփակակալութիւնն Էջմիածնի
ըստ խնդրոյ սորա: Եղեալ 'ի պարտատեար_
ցըն Սահակայ կաթուղիկոսի, և 'ի խոյս տալն
նորա յայլ հեռաւոր տեղի, տեսեալ թէ օր
քան զօր առաւելու պարտն յանուն Էջմիած_
1628 նի՝ գնաց առ Շահաբաս գտանել զհնար ազա_
տութեան աթոռոյն 'ի պարտուց. այլ անյա_

ջողութեամբ վերադարձաւ անդրէն և զհետ
եղև նորոգութեան աթոռոյն ։ Իսկ Թախան֊
1629 ձանաց ազգին օծաւ կաթուղիկոս յեպիս֊
կոպոսաց 'ի 13, յունուարի · գնաց ընդ երևելի
իշխանաց հայոց յասպահան առ նորոգ թա֊
գաւորեալն Սամայէլ շահսէֆի կոչեցեալ
ծանր ընծայիւք և աղաչեաց զաթոռն 'ի ծա֊
նըր պարտուց և 'ի հարիւր թումանն հարկացն
արքունի ։ Նա զկնի այնր բոլորովին զհետ լի֊
նի նորոգութեանց և շինութեանց Տաճարին
և մենաստանին և բարեկարգութեան 'ի նը֊
մա կրօնաւորելոցն 1 · և հասեալ 'ի կէտ կե֊
նաց իւրոց իբրև 'ի յիսուն և հինգ ամ հասա
կի՝ յԵրևան քաղաքի 'ի մենաստանին Անանիա
առաքելոյ, յորում ժամու և յատկացու֊
ցեալ յաջորդ ինքեան զՓիլիպպոս եպիսկո֊
1632 պոս հաղբակեցի՝ հանգեաւ 'ի քրիստոս 'ի 14,
մայիսի՝ կալեալ 'ի կաթուղիկոսութեան զա֊
մըս Գ, և ամիսս 4 · և ամփոփեցաւ մարմին

1, 'Ի վերայ պէսպէս բարեկարգութեանց բազմաջան
հայրապետին, գրէ և այն 'ի նօտարայ 'ի վախճանի ժա֊
ղովածոց շարական երգոց 'ի ձեռագրէր ասէնի ժամագի֊
րքըն թէ՝ սահմանեաց տասն շարական առել օրհնութեան ·
վասն բաշխման խորհրդոց պատանեաց լուսոյն · այլ և վկայ
ածելով շնորհ փիլիսոփային և շհաստատքէ՝ քահանայա֊
պետն շարքը Ստեփաննոս՝ որ շարադ օրհնութիւներն
տասն տասն շարական տրայ... ըստ տասն դասուց բանակա֊
նաց ։ ....Եթէ հաւանեսցին կամ եղբայրութեան ձեռոց,
տեառն գոհութիւն · և եթէ ո՛չ ախորժեսցէ, կամ ձեռ
եղիցին · իսկ չեն 'ի Աշտարակոց և 'ի բամբասանաց ա֊
շտոթ լռութեամբ աղաչեմ,, ։ Այս բան յայն ասէր ծանու֊
ցաւ, չէ բացայայտեալ ժամանակ սահմանելոյն շայն
կարգ և յաւել · ... երգիչ վասն օրհնութեան
շեկեալ շարական առացեալեն ։

նորին 'ի Կողեռն կոչեցեալ գերեզմանոցի
անդ Ժողովրդեան :

294, Փիլիպպոս, 'ի փոքր Աղբակայ 'ի
գեղջէ Արծկան աշակերտ Մովսէսի Գ., սե-
1633 նեցւոյ համաձայնութեամբ ազգին օծաւ կա-
թուղիկոս 'ի 13րդ աւուր յունվարի և ձե-
ռըն էարկ լրացուցանել զթերի մնացեալ շի-
նուածսն 'ի Մովսէսէ Գ. գնաց յԵրուսաղեմ և
1638 աշխատեցեալ էառ զաջ լուսաւորչին և եբեր
1651 յԷջմիածին 'ի 20, սեպտեմբերի : Գնաց յԵ-
րուսաղէմ. ուր հանդիպեցաւ և կաթուղի-
կոսն Սսոյ Ներսէս. խորհեցան 'ի միասին և
արարին ժողով յեպիսկոպոսաց և 'ի վարդա-
պետաց վասն բարեկարգութեան եկեղեցա-
կանաց և վասն սիրով կալոյ երկուց աթո-
ռոցն : Անդ յԵրուսաղէմ ետ շինել զսալա-
յատակ եկեղեցւոյ սրբոյն Յակոբայ գու-
1652 նագոյն քարամբք կարի վայելուչ : Դարձաւ
անդի 'ի Կոստանդնուպօլիս և եբարձ զշփոթ-
պառակտելոցն և սերմանեաց զսէր և զխա-
ղաղութիւն. և զերծուցեալ զեկեղեցին 'ի
պարտուց հաստատեաց և զՅովհաննէս մու-
1653 նեցի 'ի պատրիարգութ. վերադարձաւ յԷջմի-
1654 ածին և ձեռնամուխ եղեալ հիմն արկանէ
մեծի զանգակատանն սրբոյ Էջմիածնի. այլ
չև ևս հասեալ շինուածոյն 'ի միջնայարկն
1655 հիւանդացեալ փոխի յաստեացս 'ի 25, մար-
տի 'ի հասակի եօթանասուն և երեք ամաց
յետ կալոյ 'ի հայրապետութեանն զամս ԻԲ,
և ամիս իբր երեք. որոյ զմարմին տարեալ
ամփոփեցին յեկեղեցւոջ սրբուհւոյն Հռի-
փսիմեայ 'ի հիւսիսակողմն :

295, Յակոբ Դ., 'ի Նոր Ջուղայէ պարսից.
աշակերտեցաւ Խաչատուր վարդապետին կե-
սարացւոյ առաջնորդ կացելոյն անդ 'ի Ջու-

ղայ և ձեռնադրեցաւ 'ի նմանէ կուսակրօն
քահանայ. ապա զկնի յիշեալ խաչատուր վար-
դապետի վախճանելոյ յամի 1646 եղեալ 'ի
վանաց անտի Սպահանայ՝ եկն յԷջմիածին։
Յետ կալոյ 'ի սուրբ Էջմիածին երևելի ծա-
ռայութեամբք ձեռնադրեցաւ 'ի Փիլիպպոս
կաթուղիկոսէ եպիսկոպոս և առաքեցաւ ա-
առաջնորդ վանացն Սղարթայ լերին. 'ի ժա-
մանակի անդ առաջնորդութեան իւրոյ քա-
կեաց բոլորովին զմենաստանն փոքրիկ ե-
կեղեցեաւն հանդերձ և հիմնարկեալ յամի
1643, աւարտ ետ գործոյն յամին 1655.
Զկնի վախճանին Փիլիպպոս կաթուղիկոսի
1655 ընտրեցաւ և օծաւ յաթոռ հայրապետու-
թեան յ8. ապրելի 'ի տօնի ծաղկազարդին.
փոյթ կալաւ յառաջացուցանելոյ զտպագ-
րութիւնն 'ի հայ լեզու. ուստի և առաքէ
յՈւրոպիա զծառեցի Մատթէոս սարկաւագ
զնօտարն Փիլիպպոս կաթուղիկոսի և զկնի
գլխաւորելոյն եւս զԹերրի շինուած զանդա-
1658 կատանն գնաց յԱպահան և էառ զհրովար-
տակ հաստատութեան կաթուղիկոսութեն
'ի Շահ աբբասէ պարսից։ Լուեալ զինքնա-
կամ կաթուղիկոսանալն Եղիազարու վար-
դապետի անթապցւոյ 'ի Բերիա, և զպէս-
պէս տարաձայնութիւնս շփոթից ծագելոց
1665 պատճառաւ կաթուղիկոսութեաննորին՝ ել
յաթոռոյ Էջմիածնի և եհաս 'ի Զմիւռնիա.
և անտի ըստ յորդորելոյ ոմանց գնաց յե-
1666 րուսաղէմ. վերադարձեալ անտի գնաց 'ի
Կոստանդինուպօլիս. ուր խոհական իմաս-
տութեամբ իւրով և առաքինի քաղաքա-
վարութեմբ յանկոյց յինքն զսիրտս բազմաց
եւս և զկացելոցն 'ի կողմն Եղիազարու, և
ընկալեալ զինչ ինչ խնդիրս յարքունուստ

1667 վերադարձաւ յԷջմիածին. ուր վշտացեալ
յագահութենէ նորոգ կարգելոյ Սաֆիխանին
Երեւանայ՝ հազիւ ուրեմն փախստեամբ գը-
նաց յԱսպահան եւ խնդիր մատուցեալ առ
նորոգ շահն՝ ընկալաւ զհրովարտակ կաթու-
ղիկոսութեան իւրոյ եւ ետ փոխել եւ զխա-
նըն Երեւանայ: Զկնի վերադարձին յաթո-
ռըն՝ այս թէ 'ի պատճառս պարտուց, եւ թէ
'ի պատճառս զանազան տարաձայնութեանց եւ
վրդովմանց ազգի հայոց եղելոց 'ի Կոստան-
դինուպօլիս յաղագս ոմանց վարդապետաց
եւ քահանայից իսկ՝ որք զմիմեանս վարելով
'ի բաց կաշառօք ընկալնուին զպատրիարգու-
1679 թիւն քաղաքին, եւ յԷջմիածնէ Յակոբ կա-
թուղիկոս ոչինչ հայեցեալ 'ի ծերութիւն
իւր՝ գնաց նախ 'ի Տփխիս եւ անտի ը̃ ճանա-
պարհ ծովու 'ի Կոստանդինուպօլիս դարման
մատուցանել տառապանաց ազգին. հասեալ
անդր հրաւիրեաց եւ զԵղիազար յԵրուսա-
ղէմէ՝ զի ըստ իմիք էր եւ նա պատճառ այ-
նոցիկ տարաձայնութեանց, գալ անդր եւ 'ի
միասին խորհրդակցեալ գտցեն զելս հնարից
օգտի ազգին. այլ 'ի յամենալ Եղիազարու
1680 տկարացեալ հիւանդանայ եւ փոխի յաստեա-
ցըս անդ 'ի Կոստանդինուպօլիս յերկրորդ ա-
ւուր ամսեանն օգոստոսի 'ի հասակի ութ-
սուն եւ երկու ամաց՝ կացեալ 'ի հայրապե-
տութեան ամս իե̃, եւ ամիսս չորս. զորոյ ըզ-
մարմինն տարե̃լ ամփոփեն 'ի հասարակաց գե-
րեզմանատան Հայոց 'ի Պէյօղլու՝ արկանե-
լով 'ի վերայ զվէմ շիրմի՝ որ ունի արձա-
նագիր ըստ այսմ:

,,Հանգստարանս այս հրաշափառ եւ պ̃ուելի,
վայելչագիր յօրինուածովք 'ի հանդիսի.
ունի աւանդ զմաքուր մարմին բազմերջանկի,

տեառն Յակոբայ Հայոց ընտրել հայրապետի·
որ փոխանորդ հօր մեր սրբոյ Լուսաւորչի,
կաթուղիկոս օծեալ նորին օրհնել գահի:
Իսկ արդ տամս բուժիչ ախտից մարմնականի,
յուսով ՚ի սա դիմեցելոց հրաշք իւր յայտնի·
զկազմօղ սորին յիշել ՚ի տէր զարմիւք հայցի,
զՕաքարիայն՝ որ խալիֆայ հիւմնականի·
հազար, հարիւր քսան և ինն հայոց թուի,
երկրորդ աւուր ամսոյն հռոմայ օգոստոսի:

296, Ղազար անթապցի այր խորոտ և
1651 փարթամ· կալաւ զիշխանութիւն պատրիար-
1652 գութեանն Կոստանդնուպօլսի: Ընկանի ՚ի
պատուոյ անտի ՚ի ժամանակի լինելոյ անդ
Փիլիպպոս կաթուղիկոսի: Զկնի բազում
նեղութեանց, տառապանաց և բանտից եւս
1659 հաստատել արքունի հրովարտակաւ լինել
անդրէն վանաց սրբոյն Յակոբայ ՚ի ձեռս
Հայոց՝ որպէս էր և յառաջն. ՚ի վաղուց եր-
կնէր ՚ի սրտի նստել առանձին կաթուղիկոս
անդ յԵրուսաղէմ ՚ի վերայ ազգին եղելոյ
1663 ընդ տէրութեամբ օսմանեանց, ուստի եհան
հրովարտակ վասն այնր յեպարքոսէ՝ ընդ նմին
և զհրովարտակ վասն պատրիարգութեանն
Երուսաղէմի. ՚ի փոխարկիլ պատրիարգու-
թեանն անդրէն յանուն Աստուածատրոյ՝
ջանադրութեամբ Մարտիրոս վարդապետի
կաֆայեցւոյ, վերստին դիմեաց առ եպարքո-
սըն և խորհրդակցեալ ընդ Մերոյ չէլէպի-
1665 ին և ձեռնտուութեամբ նորա ընկալաւ յե-
պարքոսէ զհրովարտակ հաստատութեան կա-
թուղիկոսութեանն, և զնամակ խնամակա-
լութեան Երուսաղէմի. ՚ի յաջորդ ամի ՚ի
1666 ձեռս եբեր և զպատրիարգութիւնն. և անդ
՚ի Կոստանդնուպօլիս արարեալ զհանդէս
կաթուղիկոսութեան և ձեռնադրեալ զե-

1667 պիսկոպոսս եօթն՝ եմուտ ի Նաւ և գնաց
յԵրուսաղէմ. և օրհնեաց անդ զմեռոն:
Անկաւ դարձեալ 'ի պատրիարգութէ Ե-
րուսաղէմի և եղև աստանդական, ուստի
1670 անդրէն դիմեաց առ եպարքոսն և էառ զիշ-
խանութիւն Երուսաղէմի: 'Ի փախչանիլ
Յակոբայ կաթուղիկոսի անդ 'ի Կոստանդի-
նուպօլիս և 'ի հրաւիրել միաբանից Էջմի-
ածնի զնա ինքն զԵղիազար դեսպանութե
1682 Պետրոս եպիսկոպոսի Կողթան գաւառի, ել
յԵրուսաղէմէ անտի և ընդ Կոստանդինու-
պօլիս Ճանապարհորդեալ եկն եմուտ յԷջ-
միածին 'ի 14 երրորդ աւուր օգոստոսի և նս-
տաւ ընդ հանուր կաթուղիկոս ազգի Հայոց.
և արար ինչ ինչ շինուածս յԷջմիածին. (18.
1690 19) և հասեալ 'ի կէտ կենաց մահու՝ փախ-
Ճանեցաւ յ8 րդ աւուր օգոստոսի. կացեալ
'ի հայրապետութեան յԷջմիածին զամս ինն.
զորոյ զմարմին հանգուցանեն 'ի գաւիթ ե-
կեղեցւոյ սրբուհւոյն Գայիանեայ կառու-
ցելոյն 'ի նմանէ՝ 'ի տապանի անդ 'ի հիւսի-
սակողմն՝ զոր նորա էր պատրաստեալ յառա-
ջագոյն:

297, Նահապետ եդեսացի ձեռնասուն
1690 աշակերտ Եղիազարու կաթուղիկոսի օծել
հաստատեցաւ յաթոռ հայրապետութեանն
'ի 10րդ աւուր օգոստոսի. յաղագս խստու-
թեամբ գնալոյ ընդ եկեղեցականսն Էջմիածնի
1695 և այլ տեղեաց՝ անկաւ յայնմ պատուոյ 1 և
եդաւ 'ի կղզին Սևանայ. ուր յետ կալոյ իբ-

1, Ընդ խստութեամբ վարէլ Նահապետ կաթո-
ղիկոսի 'ի կառավարութեանն վանացն Էջմիածնի տան
երէց Մաթէոսին առաջնորդ Նոր Ջուղայու յԷջմիա-
ծին և օծեալ նստուցանեն յաթոռ հայրապետութեանն,

րեւ զամ մի՝ միջնորդութեամբ կուսակցաց իւրոց դարձեալ հաստատեցաւ յաթոռ հայրապետութեանն. և կացեալ ՚ի նմին ընդ ամ̃
1705 ամս Ժ̃դ, և ամիսս իբր 10, վախճանեցաւ ՚ի 13, յունիսի և թաղեցաւ ՚ի գաւթի եկեղեցւոյն Շողակաթ անուանելոյ ՚ի հիւսիսակողման:

298, Աղեքսանդր Ա̃, ՚ի Նոր Ջուղայէ ՚ի միաբանութենէ վանաց այնր քաղաքի, ուր
1695 զկնի զարգացմանն կարգեցաւ առաջնորդ նոյն վանաց Նոր Ջուղայու և վիճակի նորին. և ապա զկնի իբր վեց ամաց վախճանին Նահապետ կաթուղիկոսի, ազգային հաւանութեամբ եկեալ յԷջմիածին օծեալ յեօթն
1706 դեկտեմբերի նստաւ յաթոռ հայրապետութեանն. և կացեալ յայնմ գերագոյն աստի-
1714 ճանի ամս ութն՝ վախճանեցաւ ՚ի 22, նոյեմբերի, և ամփոփեցաւ մարմին նորա ՚ի հիւսիսակողման արևմտեան մեծի դրան Էջմիածնի՝ որ անկանի ՚ի ներքոյ մեծի զանգակատանն և ունի տապանավէմ մարմարոնեայ՝

Բայց աշխատեալ Քարէճաւոյ և չողնակալաց Նահապետի, նմանապէս ամիրին Աղեքսանդր անուն հայց եղեանէ և հաւատաւորն եղելոյն՝ որով և սիրելի յայտ արքայէն պարսից, սա բերել ՚ի Սպահան զՆահապետ յաթոռն իւր և զՍտեփաննոս ըստ հրամանի Շահին արքանէ ՚ի բանտ խանն Երևանայ՝ և պահեալ նորա յանձնութեան
1696 անխնամ վախճանի յայնմ տառապելի տրտմութեան ՚ի 16, երրորդ աւուր փետրվարի. և ըստ յանձնարարութեան նորին ճնշեան հանգուցելոյն տարեալ զմարմին հանգուցանեն ՚ի Բնտառանէին Խորվիրապոյ:

Իսկ ըստ Չամչեան պատմագրի վախճանեցաւ ՚ի 1698, ՚ի 4, յունվարի. և ամփոփի մարմինն ՚ի գաւթի եկեղեցւոյն Խորվիրապոյ: Է̃ հտր, գլուխ ԽԷ:

յորոյ վերայ և արձանագիր՝ է այսմ․ ,, Հա-
զար հարիւր ԿԳ, թուին վախճանեցաւ տէր
Աղէքսանդր կաթուղիկոս ամ Հայոց և ե-
դաւ յայսմ դամբարանի․ միով տէր ողորմե-
այիւ յիշել՝ զձեզ աղաչէ ով հանդիպօղք
բարի,, ։

299, Աստուածատուր ահմատանցի զկնի
վեցամսոց վախճանին Աղէքսանդրի աօծել
1715 յութն մայիսի նստաւ յաթոռ կաթուղիկո-
սական ։

Սա աղերսալիր խնդրոյ Յովհաննու պատ-
րիարգին և իշխանաց Հայոց Կոստանդինու-
1717 պօլսոյ՝ հարկեցուցիչ բանիւք հրամայէ Գրի-
գոր վարդապետի առաջնորդի վանաց սրբոյ
Կարապետի յանձն առնուլ զպատրիարգու-
թիւն Երուսաղէմի յօգուտ ազգին ։ Կոչէր
՚ի Շահթահմազայ ՚ի Նախիջևան և հարկէր
1722 զինչս՝ դարձաւ անդրէն անձնաս․ այլ յաղա-
գրս պէսպէս վրդովմանց աշխարհին ոչ հա-
մարձակէր միշտ մնալ յԷջմիածին, ուստի ե-
լեալ շրջէր աստ և անդ․ դէպ եղև նմա գլ-
նալ ՚ի գիւղն Օշական և մնաց անդ զաւու-
րս ինչ․ և ՚ի միում գիշերի պատճառաւ
խաւարման լուսնոյ ել ընդ այլոց և ինքն ՚ի
տանիս տեսանել զայն, և գնալով հասեալ
՚ի սպառուած տանեացն՝ անկաւ ՚ի վայր
1725 գլխիվայր և վտանգեալ մեծապէս՝ վախճանե-
ցաւ զկնի չորից ժամուց ՚ի 10րդ աւուր
հոկտեմբերի, կացեալ ՚ի հայրապետութեան
ամս Ժ, և ամիսս 5․ որոյ զմարմին բարձեալ
անտի և տարեալ թաղեցին ՚ի յաջակողմն
դաւթի տաճարին սրբուհւոյն Հռիփսիմեայ ։

300, Կարապետ Գ, ուլնեցի այն է զէյ-
թունցի յառաջնորդութենէ վիճակին Գա-
ղատիոյ ընտրեցաւ ՚ի կոստանդինուպօլսե-

1726 ցուոց և կոչեալ անդր օծաւ մեծ հանդիսիւ
կաթուղիկոս. 'ի 27, փետրվարի 'ի պատրիար-
գական եկեղեցւոջ սուրբ Աստուածածնի.
ուր զկնի օծութեան յետ երից աւուրց ձեռ-
նադրեաց զպատրիարգ քաղաքին զՅովհան-
նէս կոլոտ կոչեցեալն յեպիսկոպոս. 'ի պատ-
ճառս պատերազմաց պարսից և օսմանցւոց
յաշխարհին Արարատայ մնաց այլ ևս անդ 'ի
Կոստանդինուպօլիս. բայց տեսեալ թէ եր-
կարի ժամանակն` ելեալ անտի եկն յԵւդո-
1728 կիա և անտի յաթոռն Էջմիածնի. կացեալ ը̃
ամենայն յայնմ պաշտաման ամս գ̃, և ամի-
1729 սրս եօթն` վախճանեցաւ յերկրորդ աւուր
հոկտեմբերի և թաղեցաւ մարմին նորա 'ի
տապանի 'ի գաւթի տաճարին սրբուհւոյն
Հռիփսիմեայ 'ի հարաւակողման նորա:

301, Աբրահամ բ̃, 'ի Վանայ 'ի Խօշաբ
գեղջէ` յառաջնորդութենէ վանաց սրբոյ
1730 Կարապետին` որ 'ի տարօն, ընտրեցաւ յաթոռ
հայրապետութեանն. կացեալ 'ի հայրապե-
տական աթոռ զամս դ̃, և ամիսս իբր ինն,
1734 վախճանեցաւ 'ի 11, նոյեմբերի. զորոյ զմար-
մին ամփոփեցին 'ի գաւթի եկեղեցւոջ սր-
բուհւոյն Գայիանեայ 'ի հարաւակողմանն նր̃:

302, Աբրահամ գ̃, կրետացի 'ի քաղա-
քէն Կանտիոյ արձակեալ յառաջնորդութէ̃
1734 վէճակին Թեքիրտաղու, եկն եմուտ յաթոռ
Էջմիածնի, յգ̃ րդ աւուր օգոստոսի և տե-
սեալ զԱբրահամ կաթուղիկոս սիրեցաւ 'ի
նմանէ և 'ի միաբանից աթոռոյն. զկնի վախ-
ճանի նորա ընտրեցաւ 'ի միաբանից և օծաւ
կաթուղիկոս 'ի նոյն ամի 'ի 24, նոյեմբերի:
Սա 'ի ժամանակս կաթուղիկոսութե̃ 'ի գալ
Թահմազ խանին և 'ի տիրել նորա Երևան
քաղաքի` սիրելի եղև յաչս նորա. հրաւիրե-

ցաւ 'ի նմանէ 'ի Տփխիս , և օգնական եղև
անդ հայրենի ազգին. հրաւիրեցաւ և 'ի մու-
ղանայ դաշտ 'ի բանակ նորա յամսեանն դեկ-
1735 տեմբերի , և 'ի յունվարի երեք եմուտ 'ի
բանակն . Մնացեալ անդ 'ի բանակին , ետես
զհանդէս Թագաւորելոյն Նատրի 'ի 10 րդին
մարտի . յորում միջոցի ընկալաւ զհրովար-
տակս ապահովութե աթոռոյն և հայրապե-
տութեանն և ազատեաց զբազում հայազ-
գի գերիս . և ճանապարհորդեալ անդրէն ը̄
աշխարհ Սիւնեաց և ընդ Նախիջևան՝ այց
առնելով ժողովրդոց և մենաստանացն ե-
մուտ յաթոռ Էջմիածնի 'ի 12 , ամսեան յու-
նիսի . դարձեալ հրաւիրեցաւ և ընդ երե-
ւելի անձանց հայոց և տաճկաց երևանցւոց ,
գնաց 'ի Դավրէժ յամսեանն սեպտեմբերի ,
և բազում պատուով ընկալեալ և վերա-
դարձեալ եհաս յաթոռ իւր կաթուղիկոսա-
կան յամսեանն դեկտեմբերի 'ի իէ̄ . կացեալ
'ի հայրապետութեանն ամս ը̄ , և ամիս է̄ ,
1737 վախճանեցաւ 'ի 18 , ապրիլի . որոյ զմարմին
ամփոփեցին 'ի գաւթի տաճարին Շողակաթ-
անուանելոյ 'ի ձախակողման նորա :

303 , Ղազար 'ի Ջահուկ գաւառէ ,
յառաջնորդութենէ քաղաքին Զմիւռնիոյ
1738 ընտրեցաւ և եկեալ յԷջմիածին օծաւ կա-
թուղիկոս . զկնի որոյ գնացեալ 'ի պարս
ընկալաւ 'ի շահ Թահմազայ զհաստատութի
կաթուղիկոսութե իւրոյ և վերադարձաւ .
վասն յանցման իւրոյ առ հրաման շահ Թահ-
1745 մազայ՝ զանխուք և տուգանօք ընկեցաւ յա-
թոռոյն , և եդաւ փոխանորդ նմին յաթոռն
ըստ հրամանին՝ Յովհաննէս վարդապետ ա-
ռաջնորդն Գողթան . զկնի ամսոց վեցից
Շահրուղ թոռն շահ Թահմազայ եկեալ յԷ-

րեան և յաթոռն Էջմիածնի, աղերսեն առ
նա նոյն յիշեալ Յովհաննէս վարդապետ և
միաբանք աթոռոյն. որոյ միջնորդութեամբ
առ հաւն նորա՝ անդրէն հաստատի Ղազար
յաթոռն, և զՅովհաննէսն առաքէ 'ի նախ_
1746 կին վիճակ իւր 'ի Թողթն. տուգանեցաւ 'ի
շահԹահմաղայ. այլ անկարացեալ 'ի վճա_
րել զբովանդակն՝ զմասն ինչ հատուցանէ
դրամ առ հարկահանն, և վասն մնացելոյն
պատրաստէ յեկեղեցական զարդուց վեցբե_
ւրն և յանձնէ 'ի ձեռս հարկահանին, և ին_
քըն 'ի գիշերի միով սպասաւորաւ խոյս ետ
'ի Կարին. հարկահանն յետ նեղելոյ զոմանս
'ի միաբանից սակս պահանջելոյ զմնացեալ գու_
մարն՝ առնու զբեռինսն և գնայ առ շահն՝ ո_
րում գրեն և միաբանք աղերս խնայել վա_
նացն և միաբանից. տեսեալ շահին զեկեղե_
ցական անօթսն և ընկալեալ զաղերս միաբա_
նիցն բարկացաւ 'ի վերայ հարկահանին և ետ
բրել զաչսն՝ ասելով. ես զդրամս Ղազա_
րու պահանջեմ և ոչ զանօթս վանացն. և ա_
պա նոյնութեամբ զայն ամենայն դարձոյց յա_
թոռն և հրամայեաց միաբանից ևս թողուլ
զՂազար և նստուցանել զայլ ոք արժանա_
ւոր. յայսմիկ միջոցի անկաւ և գժտութիւն
'ի մէջ Ղազարու և միաբանիցն. ուստի գը_
րեցին յաթոռոյ աստի 'ի Կոստանդինուպօ_
լիս և միաբանեալ ընդ նոսա ընկեցին ըզ_
Ղազար առաքելով զնա 'ի կղզին Սևանայ,
1748 և եդին փոխանակ նորա զՊետրոս վարդա_
պետ քիւթիւր կոչեցեալ առաջնորդն Կար_
նոյ. զկնի սակաւ ամսոց տէր Յովսէփ քահանայ
եղբայր Ղազարու գնաց 'ի Թաւրէժ առ_
Իբրահիմ շահն. և գիր և մարդ հանեալ 'ի
նմանէ՝ եկն վերադարձոյց զՂազար յաթոռն,

և զՊետրոս քիւթիւր կոչեցեալն անարգա-
նօք առաքեցին ՚ի Ջահուկ և եդին յարգե-
լանս 1. և կացեալ Ղազար ընդ ամենայն ե-
թէ յաթոռն և եթէ յարգելանս ամս ժգ՝
1751 վախճանեցաւ. և զմարմինն ամփոփեցին ՚ի գա-
ւթին եկեղեցւոյ սրբուհւոյն Գայեանեայ ՚ի
յաջակողմանն:

304, Մինաս ակնեցի յաջորդութենէ
1749 վանաց սրբոյ Կարապետին Տարօնոյ կարգի
պատրիարգ ՚ի Կոստանդնուպօլիս. զկնի վախ-
ճանին Ղազարու համաձայնութբ̃ միաբանից
Էջմիածնի և կոստանդնուպօլսեցւոց ընտ-
1751 րեալ եկն յԷջմիածին և օծաւ յաթոռ հայ-
րապետութեանն. և կացեալ յայնմ ամ մի
1753 և ամիսս ութն՝ վախճանեցաւ ՚ի 12րդ ա-
ւուր մայիսի. զորոյ զմարմին ամփոփեն ՚ի
գաւթի տաճարին սրբուհւոյն Գայիանեայ
՚ի ձախակողման նորա:

305, Աղէքսանդր բ̃, կոստանդնուպօլ-
սեցի ընտրեալ ՚ի նոցունց կոստանդնուպօլ-
սեցւոց և ընկալեալ ՚ի միաբանից Էջմիած-
նի եկն յաթոռ հայրապետութեան, և օծեալ
1754 նստաւ կաթուղիկոս զկնի տասն ամսոց վախ-
ճանին Մինասայ ՚ի 6րդ աւուր մարտի. կա-
ցեալ ՚ի հայրապետութեան ամ մի և ամիս
1755 մին՝ 2 վախճանեցաւ յամսեանն նոյեմբերի ՚ի

1, Գիրք Յովսէփ քահանային Ջուղայեցւոյ՝ թէ հանեալ
զՊետրոս քիւթիւր կոչեցեալն առաքեցին ՚ի վանս ու-
րեք. ուր ելուզակք հասեալ ան ՚ի կողոպտել զայն վանս,
խոցեալ եղև ՚ի նոցանէ և ՚ի նոյն վիրացն վախճանեցաւ:
1755 2 Սահակ Ե̃, ՚ի նահանգէն Կիւրինոյ՝ (Գեղի) ընտրե-
ցաւ ՚ի միաբանից Էջմիածնի և ՚ի կոստանդնուպօլսե-
ցւոց անդ ՚ի Կոստանդնուպօլիս յամսեանն փետրվարի.
մնացեալ անդ ՚ի ժամանակս ինչ, ապա հարկեալ ՚ի բա-

շաբաթ աւուր տօնի Հրեշտակապետաց և
ամփոփեցաւ մարմինն ը̄ մեծ զանգակատամ‿
բըն ՚ի հարաւակողման մեծի դրան տաճարին
Էջմիածնի. յորոյ վերայ և արկաւ վէմ մար‿
մարոնեայ՝ որ ունի մակագրութիւն՝ ը̄ այսմ:

,, Քրիստոս որդի Հօր Միածին,
դատող ընութեանս մարդկային.
յորժամ փառօք գայցես կրկին,
յիշեա՛ ողորմութեամբ քոյին.
զհայրապետն մեր զհոգելին,
զտէր Աղէքսանդր բիւզանդացին.
արժանացո՛ արքոց գընդին,
յարքայութիւնդ մ՛յծ երկնային.
որ արդ հանգեաւ ը̄ քում բանին,
աստէն եդաւ մարմին նորին.
հազար և երկերիւր յամին,
չորրորդ և ս ընդ սըմա բարդին.
նոյեմբերի մետասանին,, :

306 Յակոբ Ե, շամախեցի ՚ի միաբանու‿
թենէ աթոռոյ Էջմիածնի՝ ուր վարէր զտե‿
ղապահութիւն աթոռոյն, ընտրեցաւ ՚ի կոս‿
տանդնուպօլիս յամենեանն օգոստոսի հաւա‿
1759 նութեամբ յերկուց կողմանց և օծաւ յԷջ‿
միածին ՚ի 24, նոյեմբերի: Կացեալ ՚ի հայ‿
1763 րապետութեան ամս Գ, և ամիսս եօթն, վախ‿
ճանեցաւ ՚ի 21 րդ աւուր մարտի յիններորդ

ըստ անչափ ելանէ ՚ի կոստանդնուպօլսոյ և գայ դա‿
տարկ ՚ի Սարբն ՚ի Սարդիս քաղաք. և թէ ունեալ մաքանից
աթոռոյն և աշխին՝ թէ ո՛չ գայ նա յաթոռն յօծումն
հայրապետութեան, ընկեցին զնա ի յիշխանութենէն և
1759 կացուցին զՅակոբ վարդապետ շամախեցի. մնացեալ անդ
՚ի քաղաքն բռնաւորէ Սարդիս կոչեցեալ շինի ընտրութեան
ամս երիս հինգ վախճանեցաւ աշխարհութեամբ էջմիածնոյ և
թաղեցաւ անդէն ՚ի նոյն քաղաքն :

ժամու գիշերին ուրբաթու մեծի պասկին,
և 'ի յաջորդ աւուրն թաղեցին զնորուն մար-
մին 'ի գաւթի եկեղեցւոյ սրբուհւոյն Գա-
յիանեայ 'ի յաջակողմանն:
307, Սիմէոն երևանցի 'ի միաբանութե-
աթոռոյ Էջմիածնի ժողովոլ նոյն միաբանից
1763 ընտրի և օծանի կաթուղիկոս 'ի 20րդ աւուր
ապրիլի. ձեռնարկեալ ետ կառուցանել ըզ-
բազում օգտակար շինուածս, մանաւանդ
զտպարան և զգործարան թղթաշինութեան՝
յորս 'ի կենդանութեան իւրում ետ 'ի լոյս
ընծայել զնորակազմ թուղթ և տպագրել
այնու զմատեանս: Կացեալ արդիւնաւոր վաս-
տակօք 'ի հայրապետութեանն ամս ԺԷ, և ա-
1780 միսս իբր երկու՝ վախճանեցաւ 'ի 26, յու-
լիսի 'ի չորրորդ ժամու աւուրն. որոյ և զմար-
մին ամփոփեցին 'ի գաւթի եկեղեցւոյ սըր-
բուհւոյն Գայիանեայ 'ի հարաւակողմն:
308, Ղուկաս կարնեցի 'ի միաբանութե-
աթոռոյ Էջմիածնի զկնի վախճանին Սիմէոնի՝
ընտրեալ 'ի միաբանից աթոռոյն և 'ի պա-
տուաւոր անձանց Հայոց եղելոց յԼորեան՝
1780 օծանի կաթուղիկոս յերկրորդ աւուր օգոս-
տոսի. լուեալ զայսմանէ Օսպարիս պատ-
րիարգի կոստանդնուպօլսոյ և ոմանց կամակ-
ցաց նորա, վրդովլին և գժտին ընդ այն. ու-
տի Ղուկաս կաթուղիկոս այր խոհական էջ
յաթոռոյն և աւելի քան զամ մի ոչ նստաւ
յաթոռն հայրապետական, այլ 'ի կարգս մի-
աբանից յառաջին տեղւոջ կալով 'ի մէջ ե-
կեղեցւոյն աղօթէր զմիջոց ժամերգութեն:
Այսու շինեալ զմիտս կոստանդնուպօլսե-
1781 ցւոց՝ ընկալնու զհրովարտակ կաթուղիկո-
սութեան իւրոյ յարքունի դրանէ օսմանեանց:
Կացեալ 'ի հայրապետութեան զամս ԺԹ, և

1799 ամիսս Է, վախճանեցաւ 'ի 28, դեկտեմբերի յութներորդ ժամու գիշերին. զորոյ զմարմին յառաջակայ աւուր տօնի որդւոցն որոտման հանգուցանեն 'ի գաւթի եկեղեցւոյ սրբուհւոյն Կայիանեայ կուսի 'ի հարաւակողման:

309, Դաւիթ յԻնէգէթ աւանէ Սօմխէթ գաւառին Սրաց. զկնի վախճանին Ղու-
1800 կաս կաթուղիկոսի առաքի 'ի միաբանից աստի վասն ընտրութեանն Դանիէլի 'ի Կոստանդինուպօլիս. ուրանօր 'ի ժողովոյն՝ որ 'ի 28, ապրելի վասն ընտրութե Դանիէլի 'ի կաթուղիկոսութիւն, ընտրեցաւ 'ի պատրիարգութիւն Կոստանդինուպօլսի. այլ եղեւ շփոթ տարաձայնութեան անկանին՝ ինքն յընտրութենէ պատրիարգութե, և Դանիէլ յընտրութենէ կաթուղիկոսութեան, և 'ի յաջողել ընտրութեանն Յովսեփայ 1, ելանէ 'ի Կոստանդինուպօլսոյ յ2, օգոստոսի և դառնայ անդրէն յԷջմիածին: Զկնի վախճանին Յովսեփայ 'ի ճանապարհորդութեանն՝ բռնացեալ 'ի վերայ միաբանից ձեռնտուութե

1, Յովսէփ սանահնեցի 'ի տոհմէ արղութեանց որդի Շ-օշ բէկի՝ որ ծնանէր 'ի [illegible] Սանահնեցւոյ, [illegible] արքեպիսկոպոս ժողովրդեանն հայոց, յետ-[illegible] [illegible] դեսպանին Ռուսաց որ 'ի Կոստանդինուպօլիս և [illegible] Յովհաննու պատրի-
1800 արգի՝ ընտրի 'ի կաթուղիկոսութե 'ի 31, մայիսի, և ընկալնու 'ի դրանէ օսմանեանց [illegible] կաթուղիկոսութեան յանուն իւր, և այնպէս ճանապարհորդեալ գայ
1801 մտանէ 'ի Տփխիս. ուր հիւանդացեալ վախճանի 19, մարտի և ըստ յանձնարարութեան նորին հանգուցելոյն բերեն զմարմին յԷջմիածին և թաղեն 'ի գաւթի մայր եկեղեցւոյ սրբուհւոյն Կայիանեայ 'ի հարաւակողման:

1801 խանին Երևանայ օծաւ կաթուղիկոս ՚ի 28,
ապրիլի։ Նա բերել կապանօք զԴանիէլ յԵ-
րեւք խորան վանայ Նագրևանդայ (Խուչքէլէվէ)
1802 յԷջմիածին ՚ի 28, նոյեմբերի և եդ իբր ՚ի
բանտի ՚ի փոքր կոչեցեալ ղազարապատի։ Ի
գալ Շահ արքային պարսից յԵրևան ընդ-
դէմ զինուորութեանցն Ռուսաց, և ՚ի վե-
րադարձին նոյն զօրացն պարսից յամսեանն
1804 սեպտեմբերի՝ առաքէ ընդ նոսա զատառապեալն
Դանիէլ յաքսորս ՚ի կողմանս անդ Մարա-
1807 ղայի։ Ընկանի յիշխանութենէն ՚ի 14, մայիսի
յԵրևանն, և բերեալ յԷջմիածին՝ դնի ՚ի մի-
ում սենեկի ՚ի կարգս միաբանիցն. կացեալ
զկնի անկմանն ՚ի նոյն սենեկի յաթոռ Էջմի-
ածնի բազում ջերմեռանդութեամբ ամս ժ,
1817 և ամիսս է, վախճանեցաւ ՚ի 31, հոկտեմբերի
և եդաւ մարմինն ՚ի տապանի ՚ի գաւիթ տա-
ճարի սրբուհւոյն Գայիանեայ ՚ի հիւսիսա-
կողման։

310, Դանիէլ ՚ի սուրմարի աւանէ ՚ի
գաւառէ Մշարունեաց՝ եպիսկոպոս աթո-
ռոյ Էջմիածնի առաքեալ ՚ի Ղուկաս կա-
թուղիկոսէ Յեղլադա գործովն նուիրակու-
1799 թեան. ուրանօր աւարտեալ զպաշտօնն՝ դառ-
նայ ՚ի կոստանդնուպօլիս և անդ ընտրեալ
յազգէն կացուցաւ յաթոռ պատրիարքութե
1800 ՚ի 17, մարտի. ընտրեցաւ ՚ի միաբանից աթո-
ռոյն և ՚ի կոստանդնուպօլսեցւոց ՚ի կա-
թուղիկոսութիւն ՚ի 28, ապրիլի։ Եղեալ շը-
փոթ տարաձայնութեան աքսորեցաւ ՚ի տե-
նեդոս կղզի (պօղճայ ատայ) ՚ի 13, մայիսի. զեր-
ծանի յաքսորանացն անարատ միջնորդութե
Զէլէպի Էֆէնտիին՝ քեօսէ քէհեայ կոչե-
ցելոյն ՚ի 17, սեպտեմբերի. և այնպէս ճանա-
1801 պարհորդեալ եկն եհաս յԵւդոկիա ՚ի 22,

յունվարի: Զկնի վախճանին Յովսեփայ վե-
րստին ժողովեալ միաբանից 'ի 16, մարտի
ընտրեն զԴանիէլ 'ի կաթուղիկոսութիւն և
գրութեամբ հրաւիրեն փութալ գալ յԷջ-
միածին. և այնինչ ժամանէ Դանիէլ 'ի Բագ-
րևանդ գաւառ և լսէ թէ' Դաւիթ օծաւ
կաթուղիկոս բռնութեամբ այլազգեաց և
չգտեալ հնար ազատութեան 'ի Դաւթէ' օ-
ծանի և ինքն յԵրեք խորան վանսն (Իւչքիլիսէ-
ւէ [illegible]) 'ի 25, մայիսի բռնադատել յիւրոց
կուսակցաց: Յետ յոլով վշտաց, աքսորա-
1807 նաց, և տառապանաց' յաջորդէ զաթոռն հայ-
րապետական 'ի 14, մայիսի. 'ի գալ զօրացն
Ռուսաց յերկիր Երևանայ, հարկադրու-
թեամբ պարսից գնացեալ հիւանդ անձամբ
եմուտ 'ի բերդն Երևանայ. ուր հասեալ յօր
1808 մահուն' վախճանեցաւ յ9, հոկտեմբերի. և
մարմին նորա զկնի պատերազմին բերեալ յԵ-
րևանայ յԷջմիածին' ամփոփեցաւ առ հիման
սեանն մեծի զանգակատան սրբոյ Տաճարին
'ի հարաւ կուսէ:

311, Եփրեմ. հայրենեօք 'ի Ռանխա-
գիւղաքաղաքէ վիճակին Զմիւռնոյ' ծնեալ
յԵրևան որդի տէր Յովհաննու քահանայի,
'ի միաբանութենէ աթոռոյ Էջմիածնի' որ
պարապէր 'ի գործ նուիրակութե 'ի կողմանս
1800 Ռուսաստանեայց, ընտրեցաւ կանխաւ ընդ
Դանիէլ պատրիարգի 'ի կաթուղիկոսութի
յամսեանն յունվարի 'ի միաբանից աթոռոյն.
զկնի վախճանին Դանիէլի վերստին ընտրե-
ցաւ 'ի կաթուղիկոսութիւն, և եկեալ յարք-
եպիսկոպոսութէ Աստրախանայ յաթոռ Էջ-
1810 միածնի յամսեանն հոկտեմբերի, օծաւ յա-
թոռ հայրապետութեան յիններորդ աւուր
նոյեմբերի: Յաղագս զանազան պատճառաց

դատարկութեան յայնժամ աթոռոյն 'ի Նախ-
նի հարստութեանցն՝ խորամանկ հնարիւք ա-
գահութեանց պարսկային իշխանութեանն,
ես և առատաձեռնութե՛ն իւրոյ՝ էարկ զա-
թոռն 'ի Ներքոյ ծանր պարտուց. և տեսեալ
թէ որքան զօր բազմանայ գումար պարտուց
պարականոն տոկոսեօք և անկար է այնուհե-
1821 տև վճարել զայն, խոյս ետ 'ի կողմանս Վր-
ցախայ 'ի սահման Տէրութեանն Ռուսաց
յսկզբանն Նոյեմբերի. և գնացեալ յամրոց
Շուշւոյ կոչեաց առ ինքն զմեծանուն Ներ-
սէս արքեպն Հայոց վրաստանի և խորհր-
դակցեալ ընդ նմա յոչ սակաւ աւուրս՝ ար-
ձակեաց ապա յիւրմէ զմիշեալ արքեպն.
1822 և ինքն գնացեալ 'ի վանս սբ̃ Նշանի 'ի Հաղ-
բատ յամսեանն հոկտեմբերի՝ զտեղի էառ
անդէն մինչև ցամն 1826, ցամիսն յուլիս. յո-
րում ժամանակի 'ի պատճառս երկիւղէ ա-
պատակութե՛ցն պարսից ազդարարութեամբ
արքեպիսկոպոսին Ներսեսի ելեալ անտի 'ի
1826 վանացն գնաց 'ի Տփխիս և դդրեցաւ անդ:
Այն ինչ խաղակիր զօրք Կայսերութեանն
Ռուսաց քաջարութեամբ նուաճեցին զպար-
սիկս և զԱթոռն հայրապետական հանդերձ
սահմանօքն Երևանայ արկին ընդ քաղցր հո-
վանաւորութեամբ ԿԱՅՍԵՐ, ել ապա 'ի
1828 Տփխիսայ և եկն եմուտ յաթոռ հայրապե-
տութեան իւրոյ 'ի Կաթուղիկէ Եկեղեցիս
Հայաստանեայց՝ յետ իբր եօթնամեայ տարա-
գրութե՛ն իւրոյ, 'ի 15րդ աւուր յուլիսի:
Կացեալ յիւրումն հայրապետական ա-
թոռի այլ ես ժամանակս, և որքան զօր տը-
կարացեալ զգայութեամբք՝ առաւել տեսա-
նելեօք 'ի պատճառս բազմամեայ հասակին,
1830 տայ զգրաւոր հրաժեշտ 'ի կաթուղիկոսական

կոչմանէն յ8, էն հոկտեմբերի յատեան սիւն_
հոդոսի աթոռոյն. եւ տեսեալ ևս զօծումն
յաջորդի իւրոյ յաթոռ հայրապետութեան
և զաթոռն իսկ թեթևացեալ 'ի ծանր պար_
տուց անտի. և այնպէս կացեալ ևս զկնի հրա_
ժեշտ տալոյն 'ի բարձրագոյն աստիճանէն զա_
մս 4, ամիսս ինն և զաւուրս ութն ամբողջ
1835 դատողութեամբ՝ կնքեաց զկեանս իւր 'ի 16,
երրորդ աւուր յուլիսի 'ի տասներորդ ժա_
մուն զկնի կէսօրէի. և ապա 'ի 18րդ աւուր
նոյն ամսոյն հանդիսաւոր ուղարկաւորութ.
ամփոփեցին զմարմինն 'ի միջին տեղւոջ գե_
րեզմաննոցի միաբանութեան՝ ըստ յանձնա_
րարութե. իւրոյ. յորոյ վերայ և կառուցաւ
փոքրիկ շինուած վիմակերտ և արկաւ 'ի վե.
շիրմին մարմարոնեայ վէմ պատրաստեալ յա_
ռաջագոյն՝ որ ունի գրուած յինքեան՝ ըստ
այսմ.

,, Նիրեմ առաքինութեամբ սրբասնեալ
հայրապետ՝ ծնեալ յամի տեառն 1750. կա_
թուղիկոսացաւ 'ի 1810, և ընկալեալ 'ի թա_
գաւոր ԿԱՅՍԵՐԷ ամենայն Ռուսաց զաս_
պետութիւն սրբոյն Աննայի ա՟, Աղէքսանդրի
Նեւացւոյ և անդրէի առաքելոյ. վերափոխե_
ցաւ յաստեացս երջանիկ մահուամբ յանանց
կեանսն յաւիտենից. և եդաւ յայս շիրիմ 'ի
1835, 'ի 16, յուլիսի,,:

312, Յովհաննէս Ը՟րդ՝ կարգեցի 'ի միա_
բանութենէ աթոռոյ Էջմիածնի՝ որ ընտրե_
րեցաւ ընդ տեղապահ Մարտիրոս Արք ե_
պիսկոպոսին 'ի կոչումն կաթուղիկոսական 'ի
Սիւնհոդոսէն աթոռոյ Էջմիածնի և յԱրք_
եպիսկոպոսաց, յԵպիսկոպոսաց, Վարդա_
պետաց, 'ի Վանահարց և յաւագ քահանայից
ժողովելոյն յայնժամ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

ԿԱՄՕՔ 'ի մերձակայ վիճակաց յայս Ա-
թոռ արարատեան՝ ըստ ներելոյ միջոցացն 'ի
1831 16րդ աւուր մարտի. որոշեցաւ ապա 'ի սին-
հոդոսէն 'ի յիշեալ հոգևորականացն և 'ի
պատուաւոր անձանց ազգին յաթոռ պատրի-
արգութեան. և ըստ հրովարտակի բարձրա-
գոյն բարեհաճութե ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱ-
ԿԱՆ ՄԵԾԱԶՕՐՈՒԹԵԱՆ՝ որ 'ի 1, էն յու-
լիսի 1831, ամի՝ եղեալ 'ի վիճակէ հայոց վը-
րաստանի և ճանապարհորդեալ ընդ երկուց
արքեպիսկոպոսացն առաքեալ յաթոռոյ Էջ-
միածնի հրաւիրակացն Գրիգորի և Բարսղի,
և ընդ այլ բազմութեան ընդառաջ ելելոցն
գայ, մտանէ աստ 'ի սուրբ Էջմիածին: Եւ-
ապա՝ 18րդ աւուր ամսեանն նոյեմբերի այ-
նըր ամի մեծահանդէս տօնակատարութեամբ
բազմութեան ժողովելոցն՝ եկեղեցականաց
և ժողովրդականաց ազգի Հայոց, և մեծա-
րու Աստիճանաւորաց բարեխնամ Տէրու-
թեանն հանդերձ բաւականաչափ զինուորօք
ըստ յանձնարարութեանն եղելոյ 'ի փառա-
ւորութի հանդիսին՝ ընկալաւ զօծումն կա-
թուղիկոսական 'ի տաճարի աստ Կաթուղի-
կէ Եկեղեցւոյ 'ի բեմի աւագ սեղանոյ սուրբ
Աստուածածնի ձեռնադրութեմբ երկոտա-
սան եպիսկոպոսաց:

Եւ այն ինչ հեղաւ իւղն սրբութեան
'ի գագաթն Նորին վեհափառութեան, և ար-
կաւ ոսկեթել քօղն 'ի վերայ՝ այն ինչ օծեալն
Հայրապետ կայր 'ի ծունկս զառաջեաւ սըր-
բոյ սեղանոյն՝ երես առ ժողովուրդն, և 12,
եպիսկոպոսունք՝ 6, աստի և 6, անտի բազ-
մեալ յաթոռ զգեստուք իւրեանց, ասացաւ
անդէն ճառ ըստ պատշաճի խորհրդոյ հան-
դիսի աւուրն 'ի Յովհաննէս վարդապետէ

Շահխաթունեանց հեղինակէ գրոյս։

Նա և այնուհետեւ անցեալ յԱթոռ հայրապետութեան Հայաստանեայց՝ ՚ի յաջորդութիւն մեծին Գրիգորի պարթեւի, զհետ եղև օգտի հայրենի եկեղեցւոյ և ժողովրդեան.
1835 որոյ վասն յամսեանն հոկտեմբերի ել յԱթոռոյ աստի և գնաց ՚ի Տփխիս քաղաք. և անդ յինն ամսեայ միջոցի՝ բաց յինչ ինչ շնորհաց օրհնաբանեալ Տէրութեան, ընկալաւ ՚ի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵՆԷ զկանոնն կարգադրութեան յաղագս կառավարութեան հոգևորական գործոց լուսաւորչական եկեղեցւոյ Հայաստանեայց՝ զոր ունէին ՚ի 11, էն մարտի 1836, ամի. և զլխուլի սեպհականութիւն հինգ գիւղօրէից (134։ 135։ 136։ 137։ և 138) հանդերձ հարկօք բնակչաց յանուն Աթոռոյ Էջմիածնի. և այնպէս վերադարձեալ անտի եմուտ յԱթոռ այսր հայրապետական ՚ի 1, հոկտեմբերի։

313, ՚Ի յաջորդ 1837, ամի՛ ՚ի 22, փետրվար ամսոյն եբաց զԱտեանն լուսաւորչական հայոց սինհոդոսի սրբոյ Էջմիածնի՝ զսկզբնապատճառն բարօրութեան հայրենի որդւոց Հայաստանի և այսր հին աւուրց նախագահ Աթոռոյ սբյ Էջմիածնի. քանզի Հայաստան աշխարհ՝ որոյ գլխաւոր և առաջին մասն ՚ի վաղ ժամանակաց անտի ճանաչի այս նահանգ Արարատ, և այս նախագահ Աթոռ կաթուղիկոսական, անկանելով ընդ բազմակերպ անախորժ փոփոխութեանց ՚ի միջոցի իբրև չորեքտասան դարու, փոքր միւս ևս խոնարհէր յանկումն անկանգնելի. թէ ոչ ըստ նախախնամող տեսչութեանն վերին ՚ի 1827, ամի պահպանեալ էր զգոյութիւն իւր ՚ի վերայ հաստատուն սկզբանց ընդ հովանեաւ բարերար

Տէրութեան մեծին Ռուսիոյ։

Կարգաւորութիւն մեծահանդէս բացման լուսա-ւորչական Հայոց Սիւնհոդոսի սր̃յ Էջմիածնի։

՚Ի նշանակեալ 22րդ աւուրն փետրվարի, յ9րդ ժամուն առաւօտու կաթուղիկոսն ամենայն Հա-յոց Յովհաննէս յուղարկաւորեալ յԱնդամոց սինհոդոսի, ՚ի Պրօկուրօրէն և Ատենադպրէն, ՚ի գլխաւոր կառավարչէ այսր նահանգի հայոց՝ ՚ի Գեներալ մայիօր կնեազ Բարսղէ Յովսեփեան Բէհպուտեանց, ընդ ամենայն զինուորական և քաղաքակ̄ն Աստիճանաւորաց՝ և պատուաւոր ընակ չաց հասարակութե̄ Հայոց և Տաճկաց՝ և ընդ Անդամոց դատարանին (շըրէաթ) Երևանու տաճկաց, ըստ նախընթաց հրաւիրանացն եկելոց յԷջմիա-ծին՝ ՚ի միասին ընդ Նահանգապետին եբաց զհան-դիսաւոր ճանապարհ ՚ի խորհրդարանէ Սինհո-դոսին ՚ի Տաճարն Էջմիածնի. ուրանօր առաջի ա-ւագ սեղանոյն առ բեմբիւ ՚ի վերայ յատուկ գը-րասեղանի եդ̄եալ կային երկու հատորք կարգա-դրութեանն յաղագս կառավարութեան գործոց հայաստանեայց եկեղեցւոյ ՚ի Ռուսս և ՚ի Հայս ըն-դու՝ շուրջ զորովք յերկուց կողմանց գրասեղան-ին կանգնեալ կային երկու եպիսկոպոսունք և եր-կու վարդապետք յԱնդամոց Սինհոդոսին ընդ երկուց օգնականացն Ատենադպրի ցաւարտ սըր-բազնագործութեանն։

Զկնի վճարման սրբոյ Պատարագին ՚ի նախա-մեծար անդամոյն Սինհոդոսի յարքեպիսկոպո-սէն Բարսղէ, ինքնին Պատրիարգն ամենայն Հայոց Յովհաննէս հանդերձ ամենայն միաբանութեամբ կատարեալ զգոհացողական մաղթանս վասն առող-ջութեան և ընդարձակութե̄ կենաց ԻՄՊԵՐԱՏՈՐ ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ա̄, և օգոստափառ Տան նորա։ Յաւարտ մաղթանացն՝ Պատրիարգն և ամենայն Անդամոցն, Ատենադպրի և Աստիճանաւո-

րացն Սիւնհոդոսի մերձեալ ՚ի սեղանն իջման Որ-դւոյն Միածնի՝ ըստ սահմանել կարգին ընկալան զերդումն յաղագս հաւատարիմ ծառայութե առ ՚ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ, և վասն խնկութեամբ կատարելոյ զպաշտամունս իւրեանց.

՚Ի վախճան երդմանն՝ Անդամք Սիւնհոդոսի ըն-կալան զբարձրագոյն կարգադրութիւնն՝ ունելով զերկոսին զայն առանձին առանձին ՚ի վերայ թա-շեայ բարձից՝ յատկապս վն այնց պատրաստելոց, և առաջինթաց լինելով Պատրիարգին՝ որ գնայր ընդ մեծաշուք հովանոցաւ, վերադարձան առաջին կարգաւն ՚ի խորհրդարանն Սիւնհոդոսի. ուրա-նոր Պատրիարգն ընկալաւ զտեղի Ատենապետի. իսկ Պրոկուրորն Սիւնհոդոսի նատվօրնիյ սովետ-նիկ Պ. Օրղանեանն ցուցեալ իւրաքանչիւր ումեք յԱնդամոցն ըստ աւագութեանն իւրեանց զտեղի՝ ասաց զպատշաճաւոր այսմ հանդիսի զբան՝ (որ չնէ աստ): Յետ այսորիկ Պատրիարգն ընթերցեալ ըղ-ձայելուչ մաղթանս և գոհութիւն, ստորագրեց ՚ի միասին ընդ Անդամոցն զառաջին օրագրութի յաղագս բացման Սիւնհոդոսին:

՚Ի վախճան ամենայնի Պատրիարգն ելեալ ՚ի տեղւոջէ իւրմէ, և բացեալ զգլուխն՝ վերա-ռաքեաց զջերմաջերմ աղերս յաղագս բարօրու-թեան ՆՈՐԻՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ: Յերկրորդում ժամու զկնի կէսօրէին Անդամք Սիւնհոդոսի, Նահանգապետն ՚ի միասին ընդ զի-նուորական և քաղաքական Աստիճանաւորաց, ընդ Պատուաւոր բնակչաց հասարակութեանն Հայոց և Տաճկաց պատուասիրեցան ՚ի դահլիճն կաթու-ղիկոսական պալատան համադամ և մեծածախ հաց կերութիւ. յորում պահպանեցան ճշդիւ ամենայն վայելչի սովորութիք և ծէսք Աթոռոյ Էջմիածնի:

՚Ի ժամ ճաշուն Կաթուղիկոսն առաջար-

կեաց զբաժակ վասն առողջութեան և երկարու-թեան կենաց ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍԵՐ և օգոս-տափառ Տեառն Նր̄, ընկալան և ամենեքեան զայն մե-ծաւ ջերմեռանդութեամբ կից ընդ վայելուչ տա-ղերգութեանց · զկնի այնորիկ ՚Ն.Նահանգապետն առաջարկեաց զբաժակ վասն առողջութեան Կա-թուղիկոսի և բարեյաջողութե նորաբաց Սին-հոդոսին ։ Ընդամբ Սինհոդոսի առաջարկեցին վասն առողջութեան մեծանուն կառավարչին կով-կասեան կողմանցս՝ զեներալ. ատիւտանտ բարոն Գրիգոր վլադիմիրիչի ռօզենի Ա. որպէս նախա-պատճառի այսր ազգաշէն կարգադրութեան. իսկ Պրօկուրօրն վասն առողջութե ՚Ն.Նահանգապետին ։

314. Ասացուած ՚ի հանդիսի բացման լուսա-ւորչեան Հայոց Սինհոդոսին Էջմիածնի ՚ի Պր-օկուրօրէ սորին ՚ի նատօվորնիյ Սովետնիկ Դ. Ջր-ղանեանէ ։

„Ներկայ հանդիսակատարութի ԲԱՐՁ-ՐԱԳՈՅՆ ԿԱՄՕՔ ԿԱՅՍԵՐԻՆ Ն. բացումն լու-սաւորչական Հայոց Սինհոդոսի, է նախակերպն մերձաւորութեան Հայոց ընդ ոգւոյն և բարե-կարգութեան լուսաւորեալն եւրոպիոյ · սոյն այս մերձաւորութիւն՝ որում վաղ ուրեմն փա-փագէաք, որում ՚ի վաղուց անտի ակն ունէաք, որքան խրախ առնէ զմեզ առաւել երևելի ակն-կալութեամբք և տենչալի յուսովք առ յապայն այնքան առաւել զուարճացուցանէ և մխիթարէ և զայնոսիկ ՚ի հայկականց, որոց վիճակեցաւ բա-ժինս տարածանիլ ընդ երեսս աշխարհաց՝ օտա-րացեալք ՚ի մերոց և որպիսուէ մնաց և որպիսու-թեամբ կառավարուէ · նոքա երանելով զփառաւո-րութիւն մեր, զհանգստութիւն, զպահպանութի մեր և զպաշտպանութիւն և զաղբիւր այսոցիկ ամ̄ բարեաց՝ զհոգածութիւն զմէնջ իմաստուն կա-ռավարութեանն, որ հանգոյն արեգական ան-

ընդ հատ ջեռուցանէ զմեզ. երանեն և զժամանակն զայն, յորում նախախնամութիւնն վերին հաճեսցի և զնոսա՝ որպէս երբեմն զիսրայէլացիս ՚ի ծոյն փարաւոնի, վերածել ընդ անապատս, լերինս և ընդ ծովս՝ յայս նոր երկիր խոստման՝ ՚ի Ռուսիա:

Այպաքէն եթէ նոքա՝ թերևս անծանօթք քաղցրութե, փնդորր և ամենայնիւ անխռով կենաց, այնքան զուարճանան, հրճուին ընդ բարօրութի մեր, ո՞րչափ ուրեմն առաւել մեզ արժան է այսօր խրախանալ և տօնախմբել. մե՛զ ասեմ՝ մերձաւորագոյն վկայից ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՅՍԵՐ շնորհեալ արտօնութեանցն անցելոց, և ականատեսից սոյն ներկայից՝ որովք այսպէս ասել. որ դեգերեցաք առ կաւխտեան բազմախնամ մօր մերում Ռուսիոյ. ՚ի սոյն յայս միտս Ռուսիայն համդիսանայ մեզ արդէն իբրև ապահով ծննդարան՝ որ ընկալաւ ՚ի ծոց իւր ոչ միայն զմեզ միայնակ, այլև զհայրենիս մեր զաշխարհն Արարատ՝ զընդունարանն այսր մենաստանի էջման որդւոյն Ածանի: Այնօրինակ հաստատուն և ընդ ամենայնի անքակտելի ազգակցութիւն մեր ընդ Ռուսիոյ՝ է հաւաստարիմ երաշխաւորութիւն առ ներկայ և ապագայ բարեբախտ վիճակ մեր՝ որպէս ՚ի մասին եկեղեցական, նոյնպէս և քաղաքական կենաց մերոց: Բայց աստանօր առաջի կայ մեզ՝ բարեպաշտօն հանդիսակիցք, յայս հասարակական խրախութի մեր համեմատելով զդառնաղէտ անցեալ ժամանակս ընդ քաղցր ներկայիս, զանցեալ նեղութիւնս և զհալածանս՝ ընդ այժմեան շնորհեալն մեզ ազատութեան և անդորրութեան, զառաջին ատելութիւն կրօնի՝ ընդ այժմեան համարձակ կատարման ածային պաշտամանց. համեմատելով՝ երկրորդեմ զայս ամենայն. առաջի կայ մեզ պարտաւորութիւն սրբազան՝ պարտաւորութի կարգեալ մեզ յԱստուծոյ և ՚ի մարդկանէ. զայս վիճակ կացութե

մերոյ Նախամեծար և՛ս դասել. քան զվեհական բազմամեայ կենաց մերոց յարքայական կառավարութեան և յանիշխանութե միջի, այլ սակայն անմոռացն 'ի ժամանակագրութե աշխարհի՝ այս հանդէս տօնախմբութեան որքան զուարճացուցանէ զմեզ՝ զհաւատարիմ որդիս եկեղեցւոյ և հայրենեաց, և ս քան զևս ուրա՛խ առնէ զքեզ՝ ո՜վ վեհաստիճանեալ հովուապետ, զջերմեռանդ կատարողդ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՄԱՑ ԿԱՅՍԵՐ· քանզի եթէ կենագործեցաք մեք այսօր 'ի նոր կեանս, կենագործեցաք Նորին միջնորդութե· եթէ ջեռնումք ջերմութեամբ մերս արեգական, այս ջերմութիւն նախ 'ի Նմա բորբոքեցաւ, և ապա ելեալ 'ի Նմէն՝ տարածանի և 'ի մեզ. եթէ փառաւորեմք զայժմեան վիճակ մեր բարեբախտութեան, և մխիթարիմք ընդ ապագայ լաւագոյն կեանս այս ամենայն պատրաստի մեզ Նորով արթուն հոգացողութեամբ զմէնջ:

'Ի վախճանի՝ եթէ խնդաս դու ընդ այս յոգնախումբ բազմութի սրբազնագործ հոգևորականաց և ականաւոր աշխարհականաց՝ ծարաւելոց 'ի կատար ածելոյն Ձեր զսրբազնագոյն կամս ԹԱԳԱՒՈՐԻՆ ԲԱՐԵՐԱՐԻ· արդ և սոյն այս կամք Նորա վաստակեցաւ մեզ և արժանաժառանգ գործակցաւ քով՝ յայս ազգաշէն գործ՝ մեծահռչակ կառավարչաւն կովկասեան կողմանց: Գծագրեսցի ապաքէն յիշատակ այսօրիկ գործառնութե անեղծանելի տառիւք 'ի վերայ վաղեմի քարանց պարսպիս՝ պաշտպանողի զբնակարանս այս սուրբ· և զշնորհակալութի յաղագս առատաբուխ շնորհաց իւրև զոր սփռեցելոյն 'ի մէնջ ԹԱԳԱՒՈՐԻ՝ որ յաւէտ զգացեալ լինի սրտիւ՝ քան պատմի լեզուաւ· զայս շնորհակալութի դուք երկրպագեան քրդ ուրեմն յայտնեսջիք և հեղջիք առ աթոռով ՕԳՈՍՏԱՓԱՌ խաղաղարարի մերոյ ԻՆՔՆԱ֊

ԿԱԼԻՆ, ամենայն Ռուսաց:

Թոյլ տուք ինձ աստանօր՝ իբրև երջանկացելոյ բարեհաճութեամբ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐԻՆ, իմոյ, կրել զկոչումն Պրօկուրօրի բացելոյն այսօր լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի՝ առաջի առնել Ձեզ՝ ողորմած տեարք, հոգեռանդն խրախանօք և զայս՝ թէ իրաւունք և արտօնութիքն շնորհեալք ՚ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՄՕՔ հաստատել կարգադրութեանն ՚ի մետասաներորդն մարտի 1836, ամի յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ: են յայտնի նշանակք առանձին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բարեհաճութեան ԿԱՅՍԵՐ առ գլուխս եկեղեցւոյ մերոյ, առ այս նորոգ բացեալ Սինհոդոսս, և առ հաւատարիմ հպատակս իւր՝ առ ազգս Հայոց:

Ահաւասիկ՝ ողորմած տեարք, ճանապարհք բացեալք մեզ ՚ի հասանել ապագայ փառացն· բայց որքան առաւել տեսանեմք մեք զհանապազօրեայ աճումն հոգացողութեան զմէնջ Տէրութեանն, այնու առաւել պարտաւորիմք և մեք ջերմեռանդն ընթացիւք յասպարիսի ծառայութեան ջանալ զգործողութիւնս մեր յարմարել բարի խորհրդոցն նորին· և որչափ խստիւ առաջի կայ կոչմամբս պարտաւորիմ ես ճշդիւ զհետ գնալ ինձ աւանդել կանոնացն, այնչափ և ոչինչ իւիք նուազ քան զայն հրաւիրիք և դուք սրբազան կաթգաւորքդ անընդհատ գործակից լինել ինձ ՚ի գործառնութիւնս և ՚ի խորհուրդս՝ յընդհանուրս և ՚ի մասնաւորս: Քանզի իւ առաւել յառաջանայ ամենայն բազմաճիւղն յանձնարարութիւն, եթէ ոչ համախոհ գործակցութեամբ անձանցն՝ որոց յանձնեալ է այն. եւ յիրաւի, եթէ համակամ գործառնութիւնք հանապազ ուղեկից լիցին մեզ, եթէ համակամ խորհրդակցութիւնք միշտ առաջ-

նորոգեսցեն մեզ, յայնժամ կատարեսցի, լցցի, պըսակեսցի և նոյն ինքն յառաջադիմութիւնն 'ի գործս՝ որ մի միայն կարէ լինել 'ի կողմանէ մերմէ հատուցումն ակնկալութեց Տէրութեանն,,։

Իսկ ապա ըստ այնց կանոնադրութեանց տալով յառաջատութիւն գործառնութեանց ատենի սինհոդոսին և խրախոյս քաջալերութեան անդամոց նորին՝ տարածեաց զլուսաւոր շառաւիղս յեկեղեցիս հայոց ռուսաստանեայց բանալով զիւրաքանչիւր յատկացեալ արքեպիսկոպոսական վիճակս զհոգևոր ատեանս, և նոքօք զհոգևոր կառավարութիւնս այլովքն հանդերձ. և այնպէս օր ըստ օրէ, և ամրատամէ սերմանելով յանձինս հոգիս և 'ի միտս հայազարմ որդւոց հայրենի եկեղեցւոյ զսերմանս հետևաւոր կանոնադրութեցըն այնց՝ ըստ ուղղաշաւիղ հետոց նախնի սրբոց հարցն Հայաստանի, եբաց զդուռն անսպառ գանձուց բարեբախտութեան, կամ լաւ ևս ասել՝ զաղբիւրս զովարար ջուրց յորդութեան՝ որով գամ քան զգամ յառաջասցի ազգն բարեխոհ կառավարութեամբ արժանաւոր գլխոյ, և անդուլ ջանադրութեամբ թէմակալաց. և դիւրասցի զովասցի յանցել տապախառն տոչորմանց։

315, Սրբազէն յայսպիսի բարեդէպ սկզբանց միջի, ընկալաւ այս մեծափառ հայրապետս զներկայութիւն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, առ 'ի գերագահ աթոռ կաթողիկոսական՝ ըստ յետագայ ստորագրութեանս։

'Ի տասներորդում ժամու հինգերորդ աւուր հոկտեմբերի անցեալ 1837 ամի. օ՛ր՝ կարի նշանաւոր վասն բախտաւոր այսր Հայաստանի. 'ի մերձենալ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ 'ի վանս Էջմիածնի, Կաթուղիկոսն ամենայն Հայոց ձիաւորեալ ել ընդ առաջ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ, մի վերստ (հղն) հե-

ռաւորութբ՟ ՚ի պարսպէ աթոռոյս յարևմուտս ը՟
գետն Բասաղ՝ յուղարկաւորեալ ՚ի նախապա֊
տիւ եպիսկոպոսաց և ՚ի պատուաւոր վարդապե֊
տաց՝ նոյնպէս ձիաւորելոց, յերկուց շարթրաց այ֊
սինքն սենեկապանաց և ՚ի պատուաւոր պաշտօնոր֊
դաց կազմելոց ՚ի յխուռն զինուորեալ հայազգի
անձանց պատկանելոց Էջմիածնի, և յերկուց հո֊
գևորականաց՝ յորոց մին կրէր զգաւազան կա֊
թուղիկոսական, և միւսն զխաչվառ ը՟ռ նախնի սո֊
վորութեան աթոռոյս. իսկ ախոռապետք վարէ֊
ին առաջի բոլոր հանդիսին զերկուս նժոյգ երի֊
վարս զարդարունս վայելչապէս: ՚Ի մերձենալ կա֊
թուղիկոսի առ ԿԱՅՍՐՆ՝ նորին վեհաստիճա֊
նութիւն և հոգևորականքն որ ընդ նմա, իջեալ
յերիվարաց մատուցին ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ՄԵԾԱԶՕՐՈՒԹԵԱՆ, զողջոյն ջերմեռանդութեան.
և ըստ հրամանին ՆՈՐԱ վերստին ձիաւորեալ՝
շարունակեցին զընթացս իւրեանց առաջին կար֊
գաւն յուղարկաւորելով զԿԱՅՍՐՆ, ՚ի վանս
Էջմիածնի՝ որ գոգցե՛ս բազկատարած սպասէր ՚ի
պատրաստի ընդունել ՚ի գիրկս զփրկիչն իւր բար֊
ձրագոյն: Ըստ սկսան հարկանել զզանգակսն Էջ֊
միածնի և շրջակայ վանօրէիցն. ուստի թողեալ
զԿԱՅՍՐՆ, նորին վեհափառութիւն աճապարեց
՚ի Տաճարն առ ՚ի զգեստաւորիլ:

Բոլոր միաբանութիւնն ուխտի Տաճարին
առաջնորդեալք ՚ի բարձր սրբազան արք եպիսկո֊
պոսէն բարսղէ աւագ լուսարարէ աթոռոյս և աս֊
պետէ սրբոյն Ինայի տ՟ աստիճանի՝ զգեստաւո֊
րեալք ամենայն հոգևոր հանդիսաւորութեամբ
սպասէին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Այցելուին արտաքոյ
պարսպի վանացս հեռաւորութեամբ քառորդ մա֊
սին միոյ վերստի. և ՚ի մերձենալ ԿԱՅՍԵՐՆ,
առ նոսա՝ ժամասացք իսկոյն սկսան զհոգևոր եր֊
գս վայելուչս այսմ մեծաշուք և քաջաբախտ հան

դիսխ։ Իսկ երկրորդին արք եպիսկոպոսունք յե-
պիսկոպոսական զգեստս՝ մատուցին ԿԱՅՍԵՐՆ, մին զհրաշալի պատկեր սրբոյ Աստուածածնի, իսկ միւսն զաղուհաց. և այսու կարգաւ ընթացան ՚ի Տաճարն Էջմիածնի։ Չգիտեմ արժան իցէ արդեօք պատկերացուցանել աստանօր զպայծառութիւն դիմաց ամենեցուն՝ հոգևորականաց և ժողովրդականաց ընդ տեսանելն նոցա ՚ի միջի իւրեանց զՎԵՀՆ, որում պարտական են նոքա և բարօրութեամբ կենաց և ազատութեամբն հաւատոց, այլ այս ամենայն թողեալ լինի իմաստասիրել ում զգալի հոգւոյ ՚ի հայազգեաց մերոց։

՚Ի մերձենալ ԿԱՅՍԵՐՆ, յեկեղեցին ընթանալով ՚ի վերայ ծաղկանց սփռելոց ընդ ճանապարհն ողջոյն՝ սկսեալ ՚ի տեղւոջէ դասաւորութեանն հոգևորականաց մինչև ցդուռն Տրդատայ, և անտի մինչև ցՏաճարն ընդ զանազան ոսկեթել, կերպասեայ սփռոցս (ֆիանդաղ)՝ կաթուղիկոսն զգեստաւորեալ հանդերձ երկու նոյնպէս զգեստաւորեալ եպիսկոպոսօք մատոյց ՙՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՆ, ՚ի համբոյր զսուրբ խաչն, և ցուցեց զջուրն օրհնութեան. իսկ ՚ի մտանելն յեկեղեցին ՚ի հրապարակի անդ հանդիսին առ սեղանաւ իջման տեղւոյն ասաց նորին վեհափառութիւնն զբան ինչ առ շնորհաբեր գալուստն՝ բարեմաղթութեամբ հանդերձ՝ ըստ այսմ։

316. «Վերջապէ՛ս կատարեցաւ ակնկալութիւն ԲՆԻ փրկեալ Հայաստանի. Օ՜ ցանկալի սրտի մերոյ եւ մեզ Տէր 1։ Ահա կաս արդէն առ սեղանաւ Տաճարիս՝ յորում ՚ի դարուց անտի հանդերձեալ է ԲՆԻ Օ՜ օրհնութիւնն երկնից։ Ահա տեսանեմք զամենասիրելի զԹԱԳԱՒՈՐՆ, մեր եկեալ կատարելագործել զհաստատութիւն՝ զոր պարգևեալ է նա աստուածային Տաճարիս։

1 Սաղմ. 20—3։

Ապաքէն զի՞նչ արժան է մեզ առնել՝ որդիք արա-
մեան նորս ռուսաստանի և զի՞նչ բարբառել. մա-
տուցանել նախ քան զամենայն զփառս և զգոհու-
թիւն բարձրելոյն՝ այնքան բարերարողին մեզ,
և ապա առաջի սրբազնագոյն երեսաց ԱՒԳՈՒՍՏԵՆ
մերոյ աղաղակել և ասել. Կեցցէ տէր աստուած
մեր օրհնեալ՝ որ հաճեցաւ ընդ Կ.Ն.Օ. տալ ըզ-
Կ.Ն.Օ. յաղթող թագաւորութեան իւրոյ, զի յա-
ղագս սիրելոյ տեառն մյ քո զնորս խնայել՝ զհա-
յաստան և կացուցանելոյ զնա յաւիտեան, եդ ըզ-
Կ.Ն.Օ. ՚ի վերայ մեր թագաւոր և կացոյց ՚ի վե̃
մեր առնել զիրաւունս և զարդարութիւն ։

Եւ արդ՝ որ և Աստուած, նոյն ինքն տէր ա̃ծ
ընտրեաց և կացոյց զԿ.Ն.Օ. թագաւոր ՚ի վերայ
մեր, և այսօր, ո՜վ օրհնեալ եղիցի օրս այս ցյա-
ւիտեան. այսօր յայսմ Հաճարիս սրբութէ, յայսմ
տեղւոջ փառաբանութեան իւրոյ առ սեղանա
իջման Սրբոյն Միածնի մեծաշուք իմն հանդի-
սիւ հաստատեաց և սուրբ արար զհրճուանս մեր՝
հաւատարիմ որդւոց Կ.ՍՅ ։ Նա ամենաբարձ-
րեալն Աստուած յայսմ ներգործութէ նախախ-
նամութեան իւրոյ եցոյց Կ.Ն.Օ. մեծի արքայիդ
զառանձին օրհնութիւնս իւր. զի նա ունելով զա-
մենայն թագաւորութիւնս երկրի ՚ի ձեռին իւ-
րում, պարգևեաց Կ.Ն.Օ. յարքայութեանց ան-
տի զթագաւորութիւն զմեծին Ռուսիոյ՝ որոյ
սահմանք տարածութէ ծաւալին յարևելից յա-
րևմուտս, և իշխելով ամենայն ազգաց իբրև թա-
գաւոր թագաւորաց, գլուխ կացոյց զԿ.Ն.Օ. և
՚ի վերայ ազգիս արամեան՝ նշանաւորին համայն
աշխարհի հաւատարմութեամբ և բոլորապտուղ
անձնանուիրութե̃ առ աթոռ քո սուրբ. ահա նշան
ա̃ծային շնորհացն՝ որ առ Կ.Ն.Օ. բայց սոյն սա է
միանգամայն և առանձին իմն նշան սիրոյ նորա առ

Ա, Է Թագաւորք. 9—8։

աշխարհս Հայաստանի և հայրենի խնամոց նորա զբարօրութէ այնորիկ և զորդւոց նորին՝ սփիւռ տարածելոց ընդ ամ երեսս երկրի։ Եթէ ՌՈՒՍ ազատեալն Հայաստան զհաւատան՝ որ ՚ի տէր մեր Յիսուս Քրիստոս փրկիչն աշխարհի, զոր դաւանէ սուրբ եկեղեցի մեր և խոստովանի, վարկանի գլխաւոր սկիզբն և աղբիւր ամենայն անդորրութեան, խաղաղութեան, զօրութե և փառաց իւրոց. ո՛րքան ուրեմն մեծագոյն է վասն նորա ողորմութիւնս այս աստուծոյ. զի տէր շնորհեաց նմա յՕԳՈՍՏԱՓԱՌԱՆ, ԶԻՆ, ԿԱՅՍԵՐԱԿԱՆ, ՄԻՆՕՒԹԱԿԱՆ, ԶԱՐԻՒ զհաւատարիմ պաշտպան այսմ մեծագոյն գանձու նորա՝ գանձու հաւատոյ. արքայ պաշտպան սրբութեան հաւատոյ, արքայ ուղղափառ և բարեպաշտօն. այս անուն իբրև իւղ անոյշ հեղեալ Ա, վասն ուղղափառն Հայաստանի, և ՚ի նոսա միայն ամենայն յոյս նորա և ապաւէն. քանզի գիտէ նա՝ թէ բարեպաշտօն թագաւորք միացեալ ընդ իւրեանց ժողովրդոց միով հաւատով և միով յուսով ՚ի Քրիստոս, կառավարեն զնոսա իբրև հարք հարազատք ոգևորեալք միայն աստուածային հաւատովքս. թէ նք չուսաւորեալք այսու ճշմարտութե՝ թէ արդարութիւնն գործ է ածային, արդարապէս և անաչառ դատին զփարթամն և զաղքատն, զհզօրն և զտկարն. ուստի և թագաւորեն նոքա վասն ճշմարիտ երջանկութեան հաւատարիմ հպատակացն իւրեանց և փառացն Աստուծոյ։

Հայք ՚ի պատճառս զանազան բերմանց ժամանակին տարամերժ օտարացեալք ընդ զանազան ծագս աշխարհի ՚ի հայրենի աշխարհէ իւրեանց ՌՈՒՍ ազատելոյն, այժմ ակն յանդիման տեսանելով թէ՝ ԳՈՒ արքայ բարեպաշտօն, արդարացուցանես զայսոսիկ մեծագոյն ակնկալութիւնս

Ա, Երգ Երգոց. Ա—Բ։

Նոցա. և խորագոյնս զգալով թէ՝ արդարև սիրեց Աստուած զՀայաստան և կացոյց զնա յաւիտեան՝ Թագաւոր կացուցանելով զԻ.Կ.Օ. ՚ի վերայ նորա ոչ անագանեսցէն գալ մտանել ՚ի ծոց նորա՝ որ այժմ համբուրէ զբարօրութիւն ընդ հովանեաւ բարերար տէրութեան Ի.ՍՅ.

Օ այս ուրախութիւն խնդութեան մերոյ ՚ի Ի.Կ.Օ.՝ կրկնապատկեաց ՚ի մեզ աստուած և այնու, զի արկ ՚ի սիրտ Ի.ՍՅ արքայական զմիտս արժանաւորելոյ զեկեղեցին մեր սուրբ բարձրագոյն այցելութեան Ի.ՍԻՄ". քանզի արդարև հաւաստի եմք մեք, զի պատիւս այս և փառք զորս զգեցուցեր նմա, եղիցի վասն նորա նոր պարտաւորութի և նոր խրախոյս աղաչելոյ զԹագաւորն Թագաւորաց և զտէրն տերանց քաղցր և անդորր առնել զԹանկագին կեանս Ի.ՍՅ՝ ծանրաբեռնելս ՚ի մեծամեծ և յանընդհատ վաստակս աշխատանաց հեզութեամբ և խոնարհութեամբ ՚ի կատարեալ առողջութեան և յաջողութեան միջի:

Յայսմ միաբանական տօնախմբութեան մերում վասն մարդասիրաբար այցելութեան Ի.ՍՅ հին աւուրց Տաճարիս այսմիկ սրբոյ, եկեղեցիս մեր սուրբ մատչի առաջի Ի.ՍՅ սխրալից յարգութբ. ՚ի Տաճարիս յայսմիկ ընդ առաջ ելանէ Ի.Կ.Օ.՝ իբրև անդրանիկն քրիստոսեան որդւոց, ընդ առաջ ելանէ գրկախառն, և ինքնին իսկ անկանի առ Ի.Կ.Օ. անձնընծայութեամբ և աղերսանօք, որպէս զի ընկալցիս զնա յարքայական գիրկ Ի.ՍՅ. քանզի ՚ի Ի.Կ.Օ. միայնում խոստովանի նա զնեցուկ և հովանի և զպաշտպան ինքեան և ուղղափառ հաւատոյն. վասն Ի.ՍՅ կոչէ նա զօրհնութիւնս և զշնորհս հոգւոյն սրբոյ. և միանգամայն ՚ի Ի.Կ.Վ., ակն ունի անկասկած պտղոց նոցին առ բարօրութիւն իւր և ամենայն Հայոց՝ Ի.ՍՅ հաւատարիմ հպատակաց:

Ապաքէն սերկեանս այս հանդէս տօնախմբութե` է տօնախմբութի բոլոր հայրենեաց մերոց, ը նմին և ողջոյն եկեղեցւոյն Քրիստոսի. տօնախմբութիւն յիրաւի մեծապայծառ և արդարև զուարճալի. մատուցուք ուրեմն բարերարողին մեզ տեառն աստուծոյ զողջակէզ փառաբանութեան և գոհութեան. և հանդերձ միաբանութբ մերով և ուխտիւք եկեղեցւոյ միաբերան աղաղակեսցուք ը սաղմոսերգու արքային. ,, Ուրախ եղիցի Թագաւորն 'ի տէր. որդիք սիովնի ցնծասցեն յանուն տեառն,,1.,, Եւ ամենեքեան փառաւորեսցեն զԱստուած. օրհնեալ, եկեալ Արքայդ յանուն տն,,2 : իսկ ես իբրև հովուապետ ՔՈ ՅՈՎ, բարձրագոյն բարեհաճութեամբ եդեալ 'ի վերայ ազգին հայոց` ՔՈ.Օ. հաւատարիմ, մեծաւ ջերմեռանդութեամբ առաջի երեսաց ԹԱԳԱՒՈՐԻՆ, իմոյ` առաջի առնեմ զյանձնեալ իմում հովուութե զքրիստոսեան հօտն բանաւոր ՔՈՒՄԴ` ով արքայ մեծ, հայրական գթոյ և հովանաւորութեան. և միանգամայն 'ի մուտս արևու կենաց իմոց բազկատարած անկեալ աղաղակեցից,, Օրհնեսցէ (ուէէ պահեսցէ) տէր զմուտ և զել ՔՈՅ յայսմհետէ մինչև յաւիտեան,,3 :

Յաւարտիլ որոյ ՆՈՐԻՆ ՄԵԾՕՐՈՒԹԻԵԱՆ, բարեհաճեցաւ զննել զամենայն զգեստս, զսուրբ մասունս և զայլ ամենայն եկեղեցական անօթսն` որք 'ի պատրաստի կային յայնժամ կարգաւ դասաւորեալք 'ի վերայ գրասեղանաց. զորս ցուցակաւ 'ի Ռուս լեզու միառմի ցուցանէր Ն. ՄՐ. հայազնեայ մեծապատիւ Պրօկուրօր սինհոդոսին Ս. Էջմիածնի և ասպետ զանազան նշանաց Խռովմա յովսէփեան զօրզանեանց` բաւարարեալ

1. սաղմ. 149. 2.
2. սաղմ. 117. 26.
3, սաղմ. 120. 8.

զամենայն զհետաքրքիր հարցմունս՝ ՆՈՐԻՆ ՄԵ-
ԾՈՒԹԵԱՆ, 'ի մասին եկեղեցւոյ մերոյ, շնորհէ
այնորիկ և դաւանութե մերոյ ևն։ յետ ունել ՆՈՐԻՆ
ՄԵԾՈՒԹԵԱՆ, յեկեղեցւոյն արժանացոյց իւ-
րում ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ
զսեղանատունն հասարակաց միաբանութե, զնո-
րոգ տպարան աթոռոյս և զուսումնարանն նոյնպէս
նորոգեալ և կարգաւորեալ 'ի ձև եւրոպացի.
ապա և զսինհոդոսն Էջմիածնի, նոյնպէս կարի
փայլելուն զարդարեալ ըստ արժանաւորութեան
այսր սրբազան ատենի՝ որով յիրաւի ԿԱՅՍՐՆ
կարի բաւական գտաւ յոյժ և բարեհաճեցաւ յայտ-
նել զխորին ամենողորմ հաւանութի առ կարգադ-
րութիս նախագահ աթոռոյն մերոյ. յատեն սինհո-
դոսին ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒ-
ԹԻՒՆ, զգոհունակութի իւր յայտնել կաթուղի-
կոսին ամ հայոց Յովհաննու վս բարեկրգութեն՝ յո-
րում եդիտ զնախագահ աթոռն Էջմիածին անընդ-
միջական տեսչութեան նորա յանձն եղեալն, բա-
րեհաճեցաւ ցուցանել ամենեցուն՝ որք 'ի հան-
դիսի անդ, զխորին կայսերական ցանկութիւն, զի
ամենեքեան 'ի մերազանց հետևեսցին շաւղաց վե-
հափառ գլխոյն եկեղեցւոյ մերոյ. և ապա դարձել
առ Անդամսն սինհոդոսին՝ յայտնեաց նշ նոյնպէս
զկամս իւր բարձրագոյն. զի իւրաքանչիւր ոք 'ի նո-
ցանէ աշխատեսցի ըստ մասանցն նոցա յանձն եղե-
լոց 'ի գործառնութեան սինհոդոսին՝ շարունա-
կել զպաշտօն իւրեանց առ բարին հասարակաց. յա-
րեալ յայն և զառաջին բանս իւր թէ՝ եթէ նոքա
ջանասցեն միշտ հետևել գլխոյն իւրեանց, անշուշտ
յառաջասցին և մեծամեծ յառաջադիմութիւնք
առ բարին հասարակաց և յօգուտ եկեղեցւոյ։
Օկնի որոյ առանձնացաւ 'ի պատրաստեալն վասն
նորա սենեակն՝ կոչեցեալ (ծաղկեալ օթվան) 'ի կա-
թուղիկոսարանի անդ՝ որ նոյնպէս արժանացաւ բարձ

բարգոյն հաւանուն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, ուրանօր կաթուղիկոսն ամ̄ Հայոց մատոյց ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐՆ, զհարկաւորագոյն վասն ազգի և եկեղեցւոյ զհայցուածս՝ բերանով հարազատին Լթուոյս կիշեալ Խոդմասու յովսեփեան ղօրղանեանց ՚ի ներկայութեան կուսակալին կողմանց ղեներալ օտինֆանտերի ղեներալ ատիւտանտի բարօն Իոզենի ա̄, զորս ընկալեալ ԿԱՅՍԵՐՆ, բարեմիտ յօժարութեամբ՝ խոստացեալ ըստ կարելութեան տալ ամենայնի զկատարումն։ Նաև յառաջի առնել կաթուղիկոսին ամենայն Հայոց խնամոց ՆՈՐԻՆ, կայսերական մեծութեան զբոլոր ազգ մեր Հայոց՝ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ բարեհաճեցաւ խոստանալ զխոստումն մեծ ըստ շաւղաց բարեյիշատակ նախորդացն իւրոց ունել զազգ մեր համայն ՚ի շնորհս ողորմութեան իւրոյ անզանազան յազգէ իւրմէ Ռուսսաց։ Բանք արդարև ցանկալի և խոստումն գերերջանիկ վս̄ ազգիս տրամեան։ Նաև ՚ի վախճան ճառիս եթող յԷջմիածին Օ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ շնորհս իւր՝ պարգևատրելով զկաթուղիկոսն ամենայն Հայոց ասպետական նշանաւ սրբոյն Ալատխմերի ա̄, աստիճանի, և շնորհելով զ1000 ոսկիս Հոլանտիոյ իբրև խաչահամբոյր սրբոց մասանց ատանօր հանգուցելոց։ Բախտաւորել միանգամայն զկաթուղիկոսն ամենայն Հայոց՝ ընդունելով ՚ի նմանէ ամենահպատակ ջերմեռանդութն նորա առ աթոռն նր̄ մեծ, և յապացոյց երախտագէտ զգացողութեց իւրոց առ անհուն բարերարութիս ԿԱՅՍԵՐՆ, առ աթոռս Էջմիածին և առ բոլոր ազգն մեր, զփոքրիկ խաչ՝ յորում ներփակեալ էր մասն սրբոյ կենարար խաչափայտին Քրիստոսի աստուծոյ մերոյ․ այսու մաղթանօք,, նշան յաղթութե խաչն փրկարար առաջնորդեսցէ ՔՆՕ. և բարձրագոյն Տոհմի ՔՈՒՄ ընդդէմ երևելի և աներևոյթ

Թշնամեաց յայսմ հետէ մինչև ցյաւիտեան,,։

Յառաջին ժամանակս 'ի գալստեան յայս նախագահ աթոռ Էջմիածին Արքայազնից պարսից՝ որք թէպէտ և զարդարեալք իբրև հարուստք պճնեալք 'ի զգեստս մարգարտայեռ և ոսկեճաճանչ, այլ միաբանութիւնն բոլոր չգիտէր զո՞ր խորշս գտանել 'ի լսել իւրում առ 'ի թագչել յահէ երեսաց նոցա, բայց ԿԱՅՍՐՆ բարեբաշտ թէպէտ և 'ի ռուսական հանդերձս զինուորի, այլ ամենեքեան առ հասարակ ոգևորեալք գողտրական իմն ըղձացութեամբ առ նա, ոչ միայն իբրև առ աշխարհակալ ոմն տիրող կիսագնտին բոլոր տիեզերաց, այլ իբրև առ հայր գթառատ, իբրև առ սեպհական ազատիչ իւրեանց, ջանային յառաջել քան զմիմեանս 'ի համբոյր սրբազան աջոյ օծելոյն Աստուծոյ՝ որ նոյնպէս քաղցր գթութեամբ ընկալեալ զնոսա յիւրմէ կողմանէ՝ մեկնեցաւ 'ի նախագահ Աթոռոյս, թողեալ 'ի սիրտս ամենեցուն զանեղծ տպաւորութիւն մեծանձնութեան իւրոյ, քրիստոնէական բարեպաշտութեան և գերբնական իմն առաքինազարդ խոնարհութեան։

Յիշեսցէ՛, ընդ երկա՛ր յիշեսցէ Հայաստան զայս օր ցանկալի. ընդ երկար տօնեսցեն և որդիք նորա հարազատք զայս օր սխրալի՝ յորում արժանացան տեսանել զՓՐԿԻՉՆ իւրեանց մեծ, որում և պարտական են ազատութեամբ հաւատոյ իւրեանց և բարօրութեամբ կենաց՝ զորս միշտ համբուրեն ընդ հովանեաւ խնամոց ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ։

Այսօրինակ յաջողուածք եղեն 'ի հայրապետութեան սորին վեհափառ օծութեանն յօգտաբեր նպատակս հայրենի ազգի և եկեղեցւոյ. և ինքն ևս զգալով՝ թէ այն ամենայն են 'ի խնամոց աներևոյթ շնորհաց վերին այցելութեանն՝ որ զամենայն կառավարէ ըստ նախախնամութեանն

և ըստ առանձին շնորհաբաշխութեանն, յորդոր
եղև և խոհական տնօրէնութեամբ կառավարու֊
թեանն ազատեաց զԱթոռն 'ի պարտուց, և յիւր֊
մէ սեպհականութենէ ևս եդ զգումար ինչ յա֊
ճումն 'ի ռուսաց կայսերական ատեանն լոմբա֊
շահութեան յանուն Աթոռոյն. եւ այնուհետև
ապա տեսեալ թէ՝ օրըստօրէ նուազի 'ի բնական
կարողութեանց անձինն, պատրաստեաց զանձն առ
հրաւէր վերին կոչմանն, և ապա արժանապէս կտ
տակագրութի̅ բովանդակ կայից իւրոց՝ յորում
յատկացոյց ըստ ազատական յօժարութեան իւ֊
րոյ ում զինչ և կամեցաւ. յատկացոյց առան֊
ձին և գումար ինչ 'ի լրութիւն շինութեան Թե֊
րի մնացեալ եկեղեցւոյ արքեպիսկոպոսարանին
յԵրևան. և այնպէս ազատ կացուցել զանձն յա֊
մենայն երկրաւոր զբաղմանց և տկարացեալ՝ ան֊
կաւ 'ի մահիճս յամի 1841, յամսեանն Նոյեմբերի
և եկաց այնպէս տկարութեամբ մինչև ցմարտ. և
ապա խոստովանութեամբ և հաղորդութեամբ մար֊
մնոյ և արեան տեառն վճարեաց զերկրաւոր կեանս
'ի 26, այնր մարտի յեօթներորդ ժամու զկնի կէս֊
օրէի, և յետ երից աւուրց 'ի կիւրակէի ամփո֊
փեցաւ փառաւոր ուղարկաւորութեամբ 'ի դիրս
հանգստեան 'ի հիւսիսակողման անդ մեծի զան֊
գակատանն սրբոյ Աթոռոյս:

Հատուած

Է.

# Մ՛իւս չորք եկեղեցիք Վաղարշապատու՝ այն է յորբուհեացն Գայիանեայ, Հռիփսիմէի, Շողակաթի և սուրբ Գրիգորի։

Նահատակութիւն որոց Հռիփսիմեանց կուսանացն։

317, Յետ մեկնելոյ սրբոց Հռիփսիմեանց կուսանացն 'ի քաղաքէն Հռովմայ և հասանելոյն հարուստ ճանապարհորդութեամբ յԱրարատ նահանգ Հայոց 'ի հնձանս այգեստանեայց Վաղարշապատ քաղաքի՝ ուր ունէին օթևանս կալեալ տարաշխարհիկ անծանօթ յումեքէ, եհաս առ Տրդատ արքայ հրովարտակ Դիոկղետիանոս կայսեր վասն չքնաղագեղ կուսին Հռիփսիմեայ. յորում զնենի պէսպէս բարուրանս յօդելոյն 'ի վերայ հաւատոց քրիստոնէութեան և յանցանս դնելոյն 'ի վերայ քրիստոնէից՝ ասէ. ,, Նորին դայեկաւն (Գայիանէաւ) 'ի կողմանս ձերոյ տէրութեդ փախուցեալ ուղարկեցին։ Արդ՝ փոյթ լիցի քեզ եղբայր մեր. զի ուր և իցեն զկողմամբքդ զայդոքիւք՝ զհետս նոցա գտանել մարթասցիս. և որ ընդ նմայն իցեն դայեկաւն հանդերձ վրիժուց մահուարժանի արասցես. և զհրապուրեալն զչքնաղագեղն՝ ինձ 'ի սոյն արձակեսցես. Ապա թէ հաճոյ թուեսցի քեզ տեսիլ գեղոյ նորա՝ առ քեզ պահեսցես. զի ո՛չ երբէք գտաւ նման նմա 'ի մէջ յունաց աշխարհիս. ողջ լեր,, ։ յԱգաթանգեղոս։

'Ի խնդիր լինէր յայնժամ Տրդատէս. և

տեղեկացեալ եթէ ահա մերձ 'ի թագաւորանիստ քաղաք իւր են, և ստուգել ևս վն չքնաղապանծ կուսին Հռիփսիմեայ՝ հանդէս հարսանեաց հրամայէր յարդարել՝ դրաւել զնա 'ի կնութ ինքեան. այլ նա ինքն անարատ հարսն փեսային Յիսուսի հաստատուն մնայր յերկնակրօն ողջախոհութեանն սրբութիւն. մինչև ոչինչ այլ հնարս գտեալ արքային՝ բռնի ածել յարքունիսն սպառնացաւ. ուրանօր 'ի միում սենեկի առեալ քան զվեց ժամ մենամարտեալ ընդ սրբուհւոյ կուսին՝ թերևս զօրել բռնաբարել զնա կարասցէ, բայց օրիորդն տկար քաջացեալ 'ի վերին զօրութեանցն՝ զարքայն հսկայ առնէր յուսաբեկ. և անդէն զգետնեալ թողուր այնպէս 'ի պալատանն վաստակեալ մինչ 'ի սպառ. և ինքն ելեալ անտի և անցեալ ընդ բազմութիւն ամբոխին կուտելոյ, ելանէր ը Արեգ դուռն քաղաքին և խոտորեալ փոքր ինչ ընդ հիւսիս՝ ուր էր հնձանն տեղի բնակութեան նոցա, և. հասեալ անդր աւետիս մատուցանէր իւրոց տարակուսել ընկերացն զմեծամեծացն Այ. և անտի ևս յառաջացեալ ուղղակի յարևելակողմն իբրև քարընկէցս երկուս,, ելանէր 'ի սարաւանդակի 'ի բարձրաւանդակ աւազին տեղի մի, մօտ 'ի բուն պողոտային՝ որ երթայր յԱրտաշատ քաղաք. իբրև եհաս յայնմ տեղի՝ ծունր եդեալ կայր յաղօթս,, (Ագաթանգեղոս, 66 երես:

Հասին անդէն 'ի վերայ իշխանք արքայի դահճապետօք հանդերձ լցեալ ցասմամբ. որոց խնդրեալ զլեզուն 'ի հատանել, ինքնին մատուցանէր. և ապա 'ի նմին տեղւոջ հարեալ յերկիր չորս ցիցս քառակուսի, և պրկեալ յայնս զերանելի կոյսն չքնաղ՝ անշարժ յերկուց ոտիցն և յերկուց ձեռացն, լուցանէին 'ի ներքոյ զբազմաբորբոք ջահս. և ողորկ քարինս հասեալ 'ի գոգ նորա 'ի վայր թափէին զաղիսն. և դահճացն յարձա-

կեալ 'ի վերայ Մնացելոցն՝ որք էին մերձ անդր իբրև գառինք անարատք՝ ոմն յաղօթս բազկատարած, ոմն յարտասուս հոգեզուարճ հառաչմամբ՝ կային պատրաստ մտանել 'ի փարախ երկնաւոր հօտապետին, յառագաստն լուսոյ մշտնջենաւոր պարերգութեանց, և սուր 'ի վերայ եդեալ նուիրեցին տեառն յանդէտս պատարագ ընդունելի, լինել փրկանք աշխարհի իւրեանց. յորոց մին որ կար գոլով և հիւանդոտ (ըստ աւանդութեան Մորէանէ անուն) հազիւ քայլափոխս ինչ արարեալ 'ի հնձանէ անտի 'ի զննին իւրոց ընկերաց, գնա ևս յերամն նոցին խառնէին նոյնօրինակ մահուամբ։

Այս ամենայն լինէր, բայց տակաւին անծանօթ մնայր 'ի բանտի սրբուհին Գայիանէ մայրպետ և սնուցիչ նոցին՝ երկու ընկերօք հանդերձ. զոր տարեալ էին անդր յարքունիս յառաջագոյն 'ի հաճել զմիտս Հռիփսիմեայ առ 'ի լինել թագուհի Հայոց մեծաց, բայց նորա զընդդէմ զօրինաւոր բան խրատու աւանդեալ սրբուհի սանին իւրում, եդեալն էր 'ի բանտի։

Ապա այնինչ տարակուսական ափշութեամբ զգիշերն 'ի գլուխ հանէր արքայն մեծ Տրդատ և լսէր եթէ դեռևս կենդանի է կորուսիչն այնպիսի չքնաղագեղ կուսի, հրամանն տայր վասն սրբուհւոյն Գայիանեայ սպանման՝ նախ զլեզուն ընդ ծոծրակն հանել, և ապա սպանանել. վասն զի իշխեաց սաէ, վնասակար խրատուն իւրով կորուսանել զայնպիսին՝ որ զդիցն գեղեցկութիւն ունէր 'ի մէջ մարդկան։

Արդ՝ ելեալ դահճապետին եւ հանել զնոսա զերեսին շղթայիւք երկաթի 'ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ ընդ կողմն պողոտայինն՝ որ հանէր 'ի Մեծամօրի կամուրջ՝ 'ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս՝ 'ի ճախճախուտ տեղի մի մօտ 'ի պարկէնփոսն, որ շուրջ

գայր զքաղաքաւն. և վարեցին անդէն ը̃ երկիր չորս չորս ցիցս միում միում ՚ի նոցանէ. և յետ այնորիկ պատառեցին զհանդերձս նոցա, և պրկեցին զնոսա ՚ի ցիցսն, և ծակեցին զմորթս ՚ի պրճ̃ղունս նոցա և եդին փողս, և փչելով այնպ̃ կենդանւոյն մորթեցին զերեսին ևս ՚ի ներքուստ ՚ի վեր մինչ ցստինսն. և ծակեալ զծոծրակն, և ըզլեզուն ընդ այն հանէին Գայիանեայ, և վարեցին զքարինս ընդ գոգս նոցա. և քանզի դեռ կային կենդանի, բարձին և զգլուխս նոցա։ ․վ

Ապա յետ ճ̃ալոյ զինն տիւ և զինն գիշեր պատուական նշխարաց սրբոց կուսանացն ՚ի բացեայ անարատ ամենևին և անմերձ ՚ի թռչնոց և ՚ի գազանաց խնամօք տեառն, յելանել սրբոյն Գրիգորի ՚ի վիրապէն, և ՚ի գալն ՚ի Վաղարշապատ քաղաք, յառաջնում աւուր՝ առաջին հարցումն զնահատակացն առնէր, աներևոյթ հոգւոյն զօրութեամբն տեղեկացեալ. ,, Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս՝ թէ ո՞ւր եդիք զմարմինս վկայիցն Աստուծոյ,,՝ ՚ի Ագաթան՛՛ 76. զորս ժողովեալ սրբոյն Գրիգորի յիւրաքանչիւր տեղեաց, և տարեալ ՚ի հնձանն՝ ուր էին վանք նոցա, ամփոփէր ՚ի պատուատուն հանդերձիկս նոցա. և ինքն ՚ի նմին տեղւոջ կալոյր օթևանս, և վարդապետէր բազմութեանն զարարչութենէն Աստուծոյ, և զմարդանալոյն ծոցածին բանին հօր զաւուրս վաթսուն՝ մինչև տեսանէր զտեսիլ զարմանագործութեցն Աստուծոյ, և զցոյց մարդասիրական խնամոցն առ մարդիկ. յորում միջօցի զկնի տեսանելոյ զխարիսխն ոսկի, ՚ի վերայ նորա սիւնն հրեղէն, ՚ի վերայ նր̃ թակաղաղն ամպեայ, և խաչ լուսոյ ՚ի վերայ նորա. տեսանէր զայլ խարիսխս երիս. ՚ի Ագաթանգեղոս 272.,, Նա և նայեցայ և տեսանեմ այլ խարիսխս երիս՝ մի ՚ի տեղւոջ ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկու ընկերօքն,

և մի ՚ի տեղւոջն ուր վկայեաց Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և մի ՚ի տեղւոջ հնձանին,,:

Սկսի այսորիկ ամենայնի յորդոր մատուցեալ մեծ Գրիգոր առ նորէկ հաւատընծայ արքայն և բազմութիւն մարդկանն՝ ՚ի պատրաստութիւն նիւթոց շինութեանց վկայարանացն սրբուհի օրիորդաց, ՚ի ջերմեռանդ սէր շարժէին ամենեքեան՝ արքայն և արքայուհին, իշխանք և իշխանուհիք և հասարակութիւնն բովանդակ. և փութացեալ ոմն ՚ի քար, ոմն ՚ի փայտ, և այլք ոմանք յայլ հարկաւոր նիւթս՝ պատրաստէին, բերէին, և կուտէին ՚ի նշանադրեալ տեղիսն՝ ուր վկայեցինն և շող լուսոյն յերկնից ճառագայթեալ ցուցաւ. իսկ զճարտարապետութեան պաշտօն ունէր ինքնին սուրբն Գրիգոր. ուստի յԱգաթանգեղոս 279.,, Կանգնեալ երիս վկայարանս՝ մի ՚ի հիւսիսոյ յարևելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանսականն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և զմիւսն շինեցին ՚ի հարաւակողմն կուսէ անտի՝ ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորին սնուցիչ երկու ընկերօք. և միւսն մօտ ՚ի հնձանն ՚ի մէջ այգւոյն՝ ուր էին վանք նոցա,,:

Կազմեցան և բևեռակապ արկեղք ՚ի մայր փայտից ըստ հրամայելոյ սրբոյն վասն իւրաքանչիւր սրբոց վկայիցն, յորս ամփոփեալ սրբոյն Գրիգորի ուրոյն ուրոյն նոցին իսկ պատառատուն հանդերձիւքն՝ կնքէր քրիստոսական կնքովն, և հանգուցանէր ինքնին միայնակ ՚ի դիրս հանգստեան:

### Եկեղեցի և տեղի արկեղաց սրբուհւոյն Հռիփսիմեայ և ընկերաց նորա ։

318 • Ս կայարան կամ տաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ և վկայողացն ընդ նմա՝ ՚ի նոյն տեղւոջ արտաքոյ քաղաքին Ս աղարշապատ յարևելից հիւսիսոյ նորա՝ ըստ վկայելոյ Ագաթանգեղոսի ՚ի վեր անդր, հեռի գտանի ՚ի Կաթուղիկէ եկեղեցւոյն աւելի քան զքառորդ ժամ մի. յայնմ իսկ տեղւոջ սուրբն Գրիգոր ը̄ խնդրոյ արքային Տրդատայ՝ տայ նմա իսկ արքայի զչափ արկեղացն՝ փորել, պեղել ինքնին արքայի հանդերձ Աշխէն տիկնաւն, և Խոսրովիդուխտ քերբն, Ս. Գաբեան" ։
281 • ,, Եւ նա (սուրբն Գրիգոր) տայր նմա (արքայի) չափ զարկեղաց սրբոցն, զի հատեալ զտեղիսն իւրաքանչիւր բնակութեան՝ յօրինեսցէ ՚ի ներքս մարտիրոսական յարկի հանգստեան տեառն,, ։

Այս տեղի՝ զոր փորեաց արքայն ինքնին, ուրանօր և սուրբն գրիգոր եդ զարկեղսն նշխարաց սրբուհւոյն Հռիփսիմեայ և ընկերացն նորուն, անկանի ուղղակի ՚ի ներքոյ բեմին սեղանոյ սրբազան խորհրդոյն ։ Նոյնպէս պատմիչ, յերես 178. ,,Եւ մատուռն գերեզմանին Հռիփսիմէի խոր ՚ի մէջ գետնոյն շինեալ ՚ի ներքոյ աւագ բեմին և զբեմն ՚ի վերուստ կողմանէ ՚ի վերայ մատրանն կառուցեալ կազմեալք էին ՚ի տեղւոջ իւրում ՚ի մէջ աւագ խորանին,, ։

Այնօրինակ տեսանի և այժմ փոքրիկ մատուռն տեղւոյ արկեղաց սրբոցն կամարակապ օրորոցաձև ՚ի կոփածոյ քարանց՝ որոյ և բարձրութիւնն աւելի քան զչափ հասակի առն, ուղղակի ՚ի ներքոյ բեմին, և մուտ դրանն ՚ի հիւսիսային աւանդատանէն ՚ի ներքս անդր ՚ի մատուռն ՚ի խոնարհ երեք հարուստ աստիճանօք. այլ իսկ տեղի արկեղացն խորագոյն ես քան այժմեան յատակ

մատրանն գտանի ։

319 , Զայս տաճար՝ զոր եւ կանգնել սուրբըն Գրիգոր յամի տեառն 301 , կործանեցին զօրք Շապհոյ արքային պարսից յամի 380 , այլ վերստին նորոգեաց զայն սուրբըն Սահակ հայրապետ որդի մեծին Ներսեսի՝ յամի 395 · զորմէ գրէ Ստեփաննոս ասողիկ հատոր Բրդ , գլուխ Ա · ,,Սա (Սահակ պարթև) նորոգեաց զտաճար սրբոց կուսանացն ըզկործանեալն ՚ի Շապհոյ թագաւորէ · և անգէտ տեղւոյն ոսկերաց սրբոյն Հռիփսիմեայ , խնդրովք յՄաշտոցոյ՝ գիտակ եղև ,, ։

320 , Ապա անցեալ ՚ի վերայ այնր երկրորդ շինութեանն ամք 223 , այն է՝ յամի տեառն 618 , Կոմիտաս կաթողիկոս՝ որ յառաջագոյն իսկ եռայր հոգւով ունել ժամանակ դիպող վերստին նորոգ հիմնարկութեամբ շքեղազարդել զտաճար սրբուհւոյս՝ որում և փափաքեալ իսկ էր , ՚ի նստիլ իւր յաթոռ հայրապետութեանն իսկ և իսկ ձեռն ՚ի գործ էարկ և քակեալ զայն մթին շինուած հիմամբք հանդերձ , և գտել եւս զտապան չքնաղ կուսին կնքեալ կրկին կնքով սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ նորուն շառաւիղի՝ զոր ոչ համարձակեալ բանալ , յաւելու և զիւր կնիք և դնէ պատուով ՚ի բացեայ · առ որ դիմէին գունդագունդ բազմութիւնք հաւատացելոց և գտանէին զառողջութիւն ամենայն ցաւոց · և ինքն երանելի հայրապետն յաւարտ հասուցեալ զշինուած փառացի տաճարին սրբութեան , ամփոփէ ապա անդրէն զայն գանձ տիրապարգեւ ՚ի պատրաստեալն տեղի · զորմէ կանխաւ քան զամենայն պատմաբանս Սեբէոս եպիսկոպոս՝ որ և ժամանակակից իսկ նմին Կոմիտասայ գրեալ է , յայս ձև օրինակի ։

,,Իսկ եղև յամի Իր , թագաւորութեանն ապրուէզ Խոսրովու (պարսից) քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ՚ի

Ի Վաղարշապատ քաղաքի, զի կայր ցած և մթին
էր շինուածն՝ զոր շինեալ էր սրբոյն Սահակայ
հայրապետի Հայոց կաթուղիկոսի, որդւոյն սրբոյն
Ներսեսի,, ։

,,Արդ՝ մինչ քակէին զորմն մատրանն, յան-
կարծակի լուսաւոր և չքնաղագեղ արքունական
մարգարիտն, այսինքն կուսական մարմինք սրբոյ
տիկնոջն Հռիփսիմէի. և քանզի անդամ անդամ
յօշեցին զնա յօշեալ ՚ի միմեանց, և երանելին սր-
բոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով, և մա-
տանեաւ երանելոյն Սահակայ հայոց կաթուղիկոսի
զոր նա ոչ համարձակեցաւ բանալ. և կնքեալ իւ-
րով ևս մատանեաւ՝ որ արժանի իսկ էր կնքել
զայնպիսի մարգարիտ՝ որ ոչ ծովային, այլ մարգա-
րիտ որ ծնեալ ՚ի թագաւորական ազգէ, և սնեալ
՚ի գիրկս սրբութեան և նուիրեալ Աստուծոյ՝
որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք,
և խանդակաթ էր ՚ի սէր երանելին Կոմիտաս.
չափ հասակի երանելոյն (Հռիփսիմեայ) իննթիզ և
չորս մատունս։ Նա դրդեալ ամենայն կողմն գայր
յերկրպագութիւն, և բազում ախտաժետաց
լինէր բժշկութի̄ ամենայն ցաւոց։ Շինեաց զեկե-
ղեցին և զերանելին եթող ՚ի բացեայ վն̄ գիջու-
թեան որմոցն մինչև ցամաքիլ կրոյն. ապա ամփո-
փեցաւ ՚ի կայեանս իւր,, ։

՚Ի նմանէ առեալ պատմագրին տ̄ր Յով-
հաննու կաթուղիկոսի՝ գեղեցիկ տողէ զշինութե-
նէ ասէ։

,,Յայսու ժամանակաւ (յելանել Դծին Հե-
րակլէ զօրաց ՚ի Պարսկաստան, և ՚ի գերելն Խոսրովայ զօրա-
ցն պարսից զԵրուսաղէմ) մեծ պատրիարգն Կոմիտաս
զվկայարանն սուրբ Հռիփսիմեանց՝ որ նախ խըր-
թին և փոքրատեսակ իմն էր շինեալ, ևս հրաշա-
պէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուա-
ծով յարդարէր. ուր և պատահեալ սուրբ տիկ-

Նոյն Հռիփսիմեայ՝ ո՛չ սակաւ լինէր հոգևոր մխի֊
թարութիւն ընաւ իսկ հայաստանեայցս։ Լու֊
էր նա կնքել մատանեաւ սրբոյն Գրիգորի և սըր֊
բոյն Սահակայ. ապա և մեծի հայրապետին և
Կոմիտասայ ո՛չ համարձակեալ բանալ զնա՝ եդ
և զիւր ևս կնիք ՚ի վերայ նորա։ Իսկ չափ հասա֊
կի սուրբ տիկնոջն՝ ինն թիզ և առ չորս մատու֊
նս. ապա շինեալ զեկեղեցին սուրբ և անդ ամ֊
փոփեալ ժողովէ զնշխար սուրբ տիկնոջն ՚ի պատ֊
րաստեալ իւր կայանն,,։

Ունի այս տաճար սրբութե զարձանագր֊
ութիւն այսր շինութե յանուն Կոմիտասայ կա֊
թուղիկոսի ՚ի վերայ սեաւ վիմի մեծի եդելոյ ՚ի
գագաթ կամարին արևմտեան դրան անդր քան
զռանիք ներքնայարկի զանգակատանն, բայց ա֊
ռանց թուականի՝ յայս օրինակ։

,,Ես Կոմիտաս եկեղեցապաշ սրբոյ Հռիփ֊
սիմէի, կարգեցայ յաթոռ սրբոյն Գրիգորի, և
շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի,,։

321, Ընգեալ ևս ՚ի վերայ շինութեանցն
Կոմիտասայ ամք 1035, այն է՝ յամի տեառն 1653.
նորոգութիւնս առնէ ՚ի բազում քայքայել տե֊
ղիս այսր եկեղեցւոյ՝ յորմունս և ՚ի տանիսն
Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի. և տայ կա֊
ռուցանել գաւիթ փոքրիկ ՚ի վերայ արևմտեան
դրանն չորս սեամբք՝ որոց երկուքն կից յորմ՝
աստի և անտի դրանն, և երկուքն հանդէպ նո֊
ցին։ Յիշատակագրութիւն այսց շինութեց դնի
՚ի վեր քան զարձանն Կոմիտասայ ՚ի պատուանդա֊
նի քառաթև խաչին եդելոյ անդէն՝ յայս օրինակ։

,,՚Ի թուին ռճբ. (յամի 1653) Քրիստոսի
ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն Հայոց վե֊
րստին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսանացն Հռ֊
իփսիմեայ և Գայիանեայ,,։

322, Իսկ ՚ի յետին ժամանակս յամի 1790,

Պ ուխտս կաթուղիկոս կարնեցի տայ կառուցա-
նել զանգակատուն վայելուչ 'ի վերայ այնր յի-
շատակեալ փոքրիկ գաւթին (321) եղելոյ 'ի վե-
րայ արևմտեան դրան տաճարիս՝ արդեամբք Խա-
չիկ աղայի ջնթլումեան, որոյ արձան յիշատակա-
գրութեանն կայ 'ի ներքնայարկի զանգակատանս
ձորմն հիւսիսակողման դրանն՝ ըստ այսմ։
„Զանգակատունս այս յիշատակ իւր կանգնելոյ
ազնիւ աղայ Խաչիկ իշխանն պերճացեալ.
որ էր տոհմիւ քաջ ջնթլումեան գովեցեալ,
որդի պարոն Մուքելի յատկացեալ.
Նոր Ջուղայու 'ի Հնդիկս գնացեալ,
'ի Կալկաթա մեծ քաղաքի բնակեալ.
ուր և գործով պարծանք ազգի երևեալ,
'ի բազում ազգս բարի անուամբ հռչակեալ.
յԻնգլիզացւոց թագաւորէն օծանեցեալ,
տնկեայ մանեակ և պատկերաւ պսակեալ.
Իսկ զկնի վախճան բարի ընկալեալ,
Ռայ ընդ Մայի, Լ ամն 'ի վերայ յաւելեալ.
այսինքն է թիւ փրկչին ուղղ,, (1790)։

323, Նուակուսի պարիսպ մենաստանիս հանդերձ բրգամբքն և քարաշէն կամարաւն մե-
ծի դրանն հիւսիսային շինեցաւ 'ի հիմանց յամի
1776, արդեամբք Մկրտիչ եպիսկոպոսի միաբանի
սրբոյ Էջմիածնի. որոյ արձան յիշատակարանի ե-
դեալ կայ 'ի թև արևելեան հարաւոյ կամարի
դրան պարսպիս 'ի ներքին կողմանէ՝ յայս օրինակ։

„Շնորհիւ տեառն Աստուծոյ արտաքին պա-
րիսպ սրբոյ վանիցս հանդերձ բրգամբքս և կամա-
րակապ դրամբս՝ արդեամբք տեառն Սիմէոնի սրբա-
զան կաթուղիկոսի սպասաւոր Մկրտիչ եպիսկո-
պոսին 'ի յիշատակ իւր և կրկնակի ծնողաց իւրոց
հոգևորաց և մարմնաւորաց. 'ի ՌՄԻԵ, 'ի յունիսի
ԺԸ,,։

324, Պատմի և գիւտ նշխարաց սրբուհւոյն

կուսին Հռիփսիմեայ և ընկերաց նորուն՝ բաց 'ի վերագրելոցն, 'ի պատմութեան Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ՝ զոր համառօտակի առաջի առնել ընթերցանելեաց ոչ դանդաղեսցուք:

'Ի ժամանակի անդ Մելքիսէթ կաթուղիկոսի Հայոց արք ոմանք միսիոնարք անուանեալք՝ որոց միոյն անուն Պօլէլում (ըստ շահնշէանին Պօօլէէլիո), և միւսոյն Արքանձէլի, հանդերձ միով սպասաւորաւ գնացեալ շրջագայութեամբ, և հասեալ յԱրարատ հայաստանի յամի 1611, 'ի խնդիր լինէին նշխարաց սրբոց եղելոց 'ի Հայաստան, և ըստ գրաւոր տեղեկութեանց իւրեանց իջանէին յԷջմիածին, և ըստ խաբուսիկ բարուց իւրեանց ընտելանան ընդ հոգևորականսն Էջմիածնի և մնան զաւուրս ինչ անդ:

Յայնոսիկ միջոցս երթևեկեն 'ի վանս կուսանացն՝ որք կային յայնմ ժամանակի յամայութե· ապա հետախոյզ քննութեամբ հասու եղեալ, թէ նշխարք սրբուհւոյն Հռիփսիմեայ գտանի 'ի ներքոյ բեմին և մօտ նորա 'ի մէջ հիւսիսային աւանդատանն՝ կարի մեծ վիմաւ ամրացեալ անհնարին 'ի բանալ զայն· յերթևեկելն իւրեանց անդր, յաւուր միում քակեն զհիւսիսակողման ծայր աւտիճանաց բեմին և մեծ աշխատութեամբ բացեալ զայն՝ մտանեն 'ի փոքրիկ մատուռն և պեղեալ խորագոյն զյատակ նորա՝ գտանեն զարկղն նշխարաց կուսին սրբոյ, և հանեալ զայն 'ի մէջ եկեղեցւոյն՝ այնինչ սկսանէին ժողովել զնշխարսն 'ի քսակ ինչ, հասանեն 'ի վերայ եպք երկու՝ Գրիգոր և Սարգան անուն՝ որք 'ի պատճառս զբօսանաց ելեալ էին անդր· զգաստացեալ նոցա տեսութեամբն նորոգ դիպելոյ, և տեղեկացեալ իրացն եղելոց՝ զայրանան առ նոսա և յարուցանեն կագ և կռիւ՝ մինչև հարկանել զմիմեանս և վիրաւորել ևս զգլխոյ եպիսկոպոսին Սարգանայ· և այնպէս երկոքին

եպիսկոպոսքն զնշխարսն արկեղը հանդերձ կորզեալ 'ի նոցանէ՝ բարձեալ ածեն յԷջմիածին. գնան զնի և պատրիկքն։ Ընդ այս նորալուր համբաւ ժողովքն 'ի հրապարակ անդր գիւղականք և միաբանք և Մելքիսէթ կաթուղիկոսն իսկ։ Թէ-պէտ յարուցանէին անդ միաբանք վէճ ը՟ պատրեացն, այլ դարձեալ մեղմէին զբանս՝ մնալով վրէժխնդրութե՟ կաթուղիկոսին. իսկ պատրիկքն տեսին թէ՝ ոչի՛նչ փոյթ է նմա, և զի յառաջագոյն հաճեալ էին զերեսս նորա, համարձակեցան. և այնինչ առնուին 'ի նշխարաց անտի 'ի մոմչոր քսակ իւրեանց աւելորդութեամբ, յարեան եպիսկոպոսքն հանդերձ այլովք և 'ի բաց վարեցին զպատրիսն, և առեալ ես զգլուխ սրբուհւոյն 'ի նոցունց՝ եդին յարկեղ անդ. և բարձել զայն քրթմնջանօք զկաթուղիկոսէն՝ տարին անդրէն և ամփոփեցին 'ի նոյն իսկ 'ի տեղւոջն 'ի մէջ մատրն տաճարին խորագոյն ևս. և խճով և կրով ամրացուցեալ՝ եդին 'ի վերայ զվէմն տապանին. խցին զայն մուտ յաստիճանաց բեմին 'ի մատուռն՝ ոչ այնքան կարգաւորեալ ամրութեամբ՝ զոր և մեք տեսաք. քանզի 'ի ներքուստ կողմանէ յարկ կամարի մատրանն յայն տեղի տակաւին կայ անշէն, իսկ 'ի վերուստ կողմանէ բեմին ամրացել 'ի յետնոց. այլ զբնական մուտ նորա՝ որ 'ի հիւսիսային աւանդատանէն, թողին բաց. և կայ այնպէս մինչև ցայսօր։

Ապա՝ պատրիկքն զվերառեալ նշխարսն 'ի քըսակն մոմչորեայ առել գնան յԱրնջակ 'ի գիւղն Ապարաներ. ուրանօր արարեալ զայն յերիս բաժինս՝ զմին ամփոփեն 'ի լեառն մերձ յայն գիւղ, զմին առաքեն ընդ հաւատարմաց յԱպահան քաղաք պարսից 'ի վանքն լատինաց Յուսէնիա անուանեալ, և անդ արկեղը դնեն 'ի տան ուրեք. և զմնացեալ զերրորդ բաժինն պահեն անդ առ ինքեանս,

Դաւիթ կաթուղիկոս Հայոց՝ որ անդ յԱսպահան քաղաքի գտանէր յայնժամ, տեղեկացեալ զայսմանէ միջնորդութեամբ Գրիգոր անուն ըսպասաւորի իւրոյ՝ խորհրդակցեցաւ ընդ պատուաւոր հայազգիս ոմանս, և նոքօք հանդերձ ծանոյց մերզայ Սահամաք քաղաքապետին Սպահանայ, յորմէ առեալ զհրաման՝ գնան և բառնան 'ի տանէ անտի զարկղն նշխարօք հանդերձ՝ զոր կնքեալ մինչէ քաղաքապետին՝ աւանդ տայ ցխօջայ Սաֆար հայ իշխանն՝ պահպանել ցդալուստ Շահին 'ի Դաւրիժոյ:

Նա ինքն Դաւիթ կաթուղիկոս և խօջայ Սաֆարն գրեն զայսմանէ և զհնացեալ նշխարացն յԵրնջակ՝ 'ի Դաւրէժ առ Ջուղայեցի հայ իշխանն Նազար՝ եղբայր վերոյիշելոյն Սաֆարայ՝ որ էր միրեցեալ յաւէս Շահին և էր առ նմա. և նա յայտնէ Շահին. և առեալ զոմն արքունի պաշտօնատար հայ ազգաւ Աւետիք անուն՝ առաքէ արքունի հրամանաւ յԵրնջակ 'ի գիւղն Ապարաներ. հասեալ անդր Աւետիքայ՝ կալնու զպատրիարքն, և կարելէ միջօցօք պարսկային պատժոց 'ի յայտ բերել զնշխարսն՝ թէ զեղեալն անդ 'ի տան, և թէ զթագուցեալն արտաքոյ. զոր առեալ հանդերձ պատրեօքն՝ հասանի յԱստապատ. և անդ հանդիպի Պօղոս վարդապետի Հայոց. ընդ որում բարեկամացեալ՝ տայ նմա 'ի նշխարաց անտի ըղձեռնաչափ ոսկր մի. և անտի անցեալ՝ ժամանէ 'ի Դաւրէժ առ վերոյիշեալ հայ իշխանն Նազար. և 'ի տեղեկանալն զայսմանէ Շահին, հրամայէ փոխարկել զնշխարսն յԱսպահան առ խօջայ Սաֆարն յաւանդ մնալ ցանդրէն դարձիւր անդր, և զպատրիսն թողուլ յազատ:

Ապա 'ի վերադառնալ Շահին յԱսպահան, և յայց ելանելն յաւուր միում 'ի տուն խօջայ Սաֆարին՝ դիպեալ են անդ և ոմանք պատրիկք

յընկերացն վերոյիշելոց. և 'ի մէջ այլոց առաք-կութեանց, յիշատակել են և զնշխարացն Հռիփ-սիմեայ եղելոցն անդ 'ի տան իշխանին. ուստի 'ի հրամայել Շահին, բերեալ են զամենայն նշխար-ան 'ի ներկայութիւն հանդիսականացն. դիպուկ ժամ գտեալ պատրեացն խնդրեալ են 'ի Շա-հէն՝ պարգևել նոցա զմասն ինչ անտի. յայնժամ առնու զմի ոսկր իւրով ձեռամբ, և բեկել զայն դանակաւ, տայ զմասն ցպատրիսն. և նոցա առել զայն տարան 'ի Հնդիկս 'ի սահմանս Պումբայու և Սուրաթու 'ի Կուա՝ որ ընդ տէրութեամբ լուսիտանացւոց և եդին անդ 'ի վանս կուսա-նաց. ուր և ասի լինել ցայժմ: Իսկ զմիւս մա-սանց սրբուհւոյն՝ որ անդ 'ի տան խօջայ Սաֆա-րին ջուղայեցւոյ՝ տե՛ս 'ի պատմութեան հայոց հատոր Գ, յերես 573 ։ և յԱռաքել պատմիչ 'ի ԺԲ գլուխ, յերեսն 176, ց196 ։

Դարձեալ յամի 1653, 'ի նորոգութեան անդ տաճարի սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ 'ի Փիլիպպոս կաթուղիկոսէ հաղբակեցւոյ յայտնե-ցան դարձեալ արկեղք նշխարաց սրբուհեացն. զորմէ գրէ Առաքել դավրիժեցի՝ բառս այսմ:

,,Աստ եւս յայտ եկեալ գտաւ նշխարք սր-բուհի կուսին Հռիփսիմեայ՝ ոչ միայն 'ի միում տեղւոջ, այլ յերիս տեղիս՝ զոր բաժին բաժին է-ին արարեալ և ամփոփեալ 'ի զգուշաւոր տեղիս. զերկու տեղաց նշխարքն 'ի մէջ վիմաց եդեալ է-ին. և զմին՝ որ և բազում էր նշխարն, եդեալ է-ին 'ի մէջ փայտեայ արկեղ՝ որ է տնտուկ, լի նշխա-րօք,,, 'ի ԽԵ գլուխ, յերես 322:

'Ի յայտնութեան այսոցիկ 'ի խորութե անդ յորմէ մատրան 'ի վերայ վիմի տեսեալ Առաքել վարդապետի զգրուածս ինչ՝ առնու 'ի գիր և դնէ յիւրումն պատմութեան 'ի գլուխն Ծ. և է այս՝ բառ հարազատ ձեռագրին:

„+ Ով հրաշափառ և երջանիկ վկայ անբաժա-
նելի ծոցանին Հօր, և համագոյգ Հոգւոյն կամո-
ղին ընդ ստորինս ասեմ, անոխակալ երկնաւոր փե-
սային Հարսն, զբարեգործակ արքայն ունող· գո-
լով գլուխ միշտ և անընդհատ յաղագս ծանօթ
քեզ սպասաւոր սուրբ Հոգւոյն: Ով սրբուհի
աղաչեմ՝ յիշատակողացս անուան քո բարեխօսու-
թեամբ և աննուազ աղօթիւք լե՛ր պահապան և
անդ էս՝ որով հանդիսացիս ստորնոցս լինել·
սո՛ւրբ կոյս ա՛րդ օգնական, որ և պատսպարան ե-
ղեցիս յամենայնի յաղթող բարեբան:
„+ Յիշեա՛ և զիս զոր նուիրեցայց իսկապէս ծ̅ռ̅
անուանս վերստին ա̅ծ̅ագործողին կամահաճոյ.
յարկիս· զոհն մաննատիպս որոյ շնորհօքն բաւա-
կանացայց աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռ-
իփսիմէ:
„+ Յակոբ քահանայ սուրբ կաթուղիկէ արհի
եպիսկոպոսարանին:
„+ Ես Խոսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմէի:
„+ Սուրբ ոլոգին:
„+ Ստեփաննոս:

„Արդ՝ այսքան բանքս՝ յորոց սկիզբն նկա-
րեալ եմ նշան խաչի, ուրոյն գրեալ էին յորմն մա-
տուռին՝ յորում եդեալ էին զսնդուկն և ն:...
Իսկ սկիզբն և կատարումն երկուց վկայարանացս՝
սրբուհւոյն Գայիանեայ և սրբուհւոյն Հռիփսի-
մեայ եղև յամս երիս, զի ՌՃ թվին, սկիզբն արա-
րին նորոգութեան, և 'ի ՌՃԲ թվին զերծան 'ի
գործելոյ, բազում ծախիւք և յոլով աշխատու-
թեամբ շինեալ կատարեցին 'ի փառս Քրիստոսի
և սրբոց վկայից նորա„:

325, 'Ի մէջ այսր տաճարի զառաջեաւ բեմին
սրբոյ սեղանոյ՝ ուր դնի գրակալ ընթերցուա-
ծոյ, է տապան երանելոյն Կոմիտասայ կաթուղի-
կոսի վայելչակերտ յարդարողի սրբոյ եկեղեցւոյս

ըստ աւանդութեանն հասելոյ առ մեզ, և վէմն՝ որ կայ 'ի վերայ հարթ հաւասար սալայատակին, է մեծ դրութեամբ և ձևով տապանաքարի՝ որոյ նման ոչ գտանի 'ի բովանդակ սալայատակին անդ. և թէ լեալ իցէ յառաջագոյն 'ի նմա մակագրութիւն անուան, գուցէ ընդ այլ քայքայեալ սալայատակացն՝ 'ի քանի նուագս նորոգութեանցն փոփոխեալ և անհետացեալ:

'Ի մէջ անդ եկեղեցւոյս 'ի հիւսիսային դասու՝ է տապան Փիլիպպոս կաթուղիկոսի հաղբակեցւոյ վերջին նորոգողի տաճարիս՝ որոյ մահարձանն 'ի ժամանակս պատերազմաց մանրեալ և անհետացեալ գոլով, նոր 'ի նորոյ ետ կազմել Սիմէոն կաթուղիկոս 'ի թափանցիկ մարմարոնեայ վիմէ՝ որ ունի օրինակ արձանագրութեանն՝ զայս:

„Հազար հարիւր չորս թուին, մարտի քսան և հնգին վախճանեցաւ հաղբակեցի Փիլիպպոս աքանչելագործ կաթուղիկոս ամենայն հայոց, և եդաւ սուրբ նշխարք նորա յայսմ շիրմի. որոյ յիշատակըն օրհնութեամբ եղիցի„:

Շիրիմք երկուց կաթուղիկոսացն Կարապետի ուլնեցւոյ և Աստուածատրոյ համատանցւոյ դըտանին ընդ զանգակատամբ արևմտեան դրան տաճարիս. 'ի հիւսիսակողմն է Աստուածատուր կաթուղիկոսի՝ որ վախճանեցաւ 'ի 1725, ամի 'ի 10, հոկտեմբերի. իսկ 'ի հարաւակողման Կարապետին՝ որ վախճանեցաւ 'ի 1729, ամի 12, հոկտեմբերի: Հասարակ վէմք տապանաց սոցա գտանին և արդէն. իսկ մարմարոնեայ ագուցեալքն յայնս անհետացեալ են 'ի ժամանակս պատերազմաց. որոյ վասն չեղև մեզ առնուլ զմակագրութիւն նոցին:

Յարևելակողմն տաճարիս 'ի թիկանց սեղանոյ 'ի մէջ պարսպին են շիրիմք առաջնորդաց վանացս և ոմանց վարդապետաց՝ յորոց միջի է և շիրիմն մեծանուն վարդապետին Սանփաննոսի հայ

լեհացւոյ՝ որ 'ի Միքայելէ չամչեանց կոչի Մէտ-պօլսեցի՝ յՃՐԴ. համար, իԴ. գլուխ. յերես 620 ։
և է մակագրութիւն տապանին այս գրուած.

„Հարկ . . . . . . . եղեալ պահի,
մարմին մաքուր՝ վարդապետի.
աստուածաբան Ստեփաննոսի,
որ տեղեաւն իսկ լեհացի.
անուն 'ի գուբս այս ընկրկի,
հազար, հարիւր ընդ երեսնի.
կրկին բառիւ կ՝ թիւ հայկազնի,
որք հանդիպիք տուք ողորմի,
Աստուած և ձեզ ողորմեսցի„։

'Ի տապանէն լեհացւոյ՝ ընդ հարաւ, յու-ղորդութեան տապանաքարին գրուած.

„Միջոյն քեզ շիրիմ,
Ճշմարիտ տուն իմ.
փախուցեալս ընկալ,
յաշխարհէս մոլեալ.
զՅոհան ըզտրկարս,
Քրիստոսի ծառայս.
զառաջնորդ ուխտիս
Հոփփսիմեայ կուսիս.
որ հազար թըւի,
երկ հարիւր եօթի.
ըստ հասաչին բանի,
հողս 'ի հող դարձցի„։
Օ՛կնի այսր յերկրորդութեան տապանի ։

Եւ Սա ինքն Ստեփաննոս վարդապետ լեհացի կարգե-ցաւ յէջմիածին աթոռակալ 'ի Տէր Յակոբ կաթողիկոսէ. և 'ի վախճանել նորա 'ի կոստանդնուպօլիս վերստին 'ի ժողովոյն որ վասն հրաւիրելոյ զԵղիազար յաթոռ հայրապետութեանն Էջմիածնի, կարգեցաւ տեղապահ՝ ըստ ցուցանելոյ [illegible] [illegible] [illegible] ժամագրքի [illegible] գրեցելոյ 'ի Օտարերս [illegible] [illegible] յօհաննավանից 'ի Բուլեն հայոց [illegible], [illegible] ։

,,Տապանս այս է յարկ շիրմիս Ղազարու վարդապետի, որ էր տեղեաւ աստապատցի, մեծի գահոյս յոյժ պիտանի. քաջ երաժիշտ և ժամասաց, յոյժ բանիբուն և դասասաց, եկեղեցւոյն կարգաւորող, ժիր քարոզիչ և ժամօրհնող. իսկ աստ առել զվախճան բարի, չուեաց առ տէրըն համայնի. արդ՝ որ աստ սմա ողորմի, 'ի Քրիստոսէ զնոյն ընկալցի,, : Սամուէլ վանաց էրէց մենաստանիս՝ որ գտաւ 'ի ժողովն Դունայ վասն ընտրութեան տ̃ Աբրահամ կաթուղիկոսի :

Վանք սրբուհւոյն Գայիանեայ և տեղի
պատուական նշխարաց նորա, և երկուց
նահատակակից ընկերացն :

326, 'Ի վեր անդր (318) ցուցաւ տեղի նահատակութեան սրբուհւոյ կուսին Գայիանեայ լինել 'ի հարաւոյս քաղաքին արտաքոյ հարաւային դրանն՝ ոչինչ այնքան հեռի որպէս միւս երկուքն. և զի մին յերից լուսեղէն խաչսխաց անտի էջ 'ի սոյն տեղի նահատակութե սրբուհւոյս. Ագաթանգ. յերես 272 : ,, Մի 'ի տեղւոջ՝ ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկու ընկերօքն ,, : Իսկ վասն շինութեան տաճարիս՝ անդ. 279 : ,, Իսկ զմիւսն շինեցին 'ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորին (Հռիփսիմեայ) սնուցիչ երկու ընկերօք ,, :

Յայսմ իսկ տեղւոջ սուրբն Գրիգոր հանդերձ բազմութեամբ հաւատացելոցն շինէ զվկայարանն և 'ի նմա ամփոփէ զնշխարս սրբուհւոյն Գայիանեայ և երկուց ընկերաց նորուն՝ յամի 301 :

327, Զկնի այսորիկ շինութեան 'ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէ անցեալ ամք 329՝ այն է, յամի 630, Եզր կաթուղիկոս զառաջին զայն նսեմ և մթին շինուած եկեղեցւոյս քակել՝ նոր 'ի նորոյ

ընդարձակ հիմնարկութեամբ տայ կառուցանել՝ վայելչապէս. զորմէ Տէր Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ: ,, Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ՝ զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ, քակեալ զայն՝ և ս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և յարտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ՚ի պաշտօն աստուածային խորանին,,:

328, Ապա յետ անցանելոյ հարուստ ժամանակաց ՚ի վերայ շինութեանցն Եզրի և քայքայելոյ մեծ մասամբ այսր եկեղեցւոյ, Փիլիպպոս կաթուղիկոս հաղբակեցի յամի 1652, նախ քան զշինութիւն նորոգութեան վանաց սրբուհւոյն Հռիփսիմեայ, նորոգէ զսա գրեա՛ թէ ըստ մեծի մասին, և զկաթուղիկէն գլխովին՝ որ ՚ի վերայ չորից սեանցն ՚ի միջավայր տանեաց տաճարին. յայս կաթուղիկէ ՚ի բաժնի արևմտեան հարաւոյ յարտաքին կուսէ գրի թուական շինութեանն՝ ըստ այսմ:

,,ռճա թուին նորոգեցաւ եկեղեցիս և
շինեցաւ կաթուղիկէս ,,:

Զնորոգութենէ աստի այսր տաճարի, և զյայտնութէ մաքուր նշխարաց երից սրբոց կուսանացս, այսօրինակ ստորագրէ Առաքել վարդապետ դաւրիժեցի՝ զոր արժան է ընթեռնուլ:

,,Բայց սրբոյն Գայիանեայ կուսին տաճարն առաւել աւերեալ էր. զի տանիքն բովանդակ իջեալ էր. միայն շուրջանակի որմունքն և չորեք սիւնքն կային կանգուն, գլուխն ՚ի բաց, և յատակ որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ, որոց արար նորոգումն սկիզբն կաթուղիկոսն տէր Փիլիպպոս մեծաւիղձ կարօտիւ և ջանիւ, և զբազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաշէն ՚ի հիմանց մինչև ցգագաթ գմբեթին՝ յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին,,:

329. ,,Նաև 'ի նորոգել զեկեղեցին սրբու֊
հւոյ կուսին Գայիանեայ, գտեալ եղև սուրբ նշ֊
խար նորին, և նորին ընկերացն . . . վասն զի ամե֊
նեքեան խոկային . . իցէ՞ արդեօք 'ի տեղին՝ թէ
ոչ. քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատու֊
ռըն՝ որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս, ա֊
ւերեալ էր ընաւին՝ ոչ միայն մատուռն, այլև 'ի
վերայ նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ
և քանդեալ էր մինչև ցյատակն . . . . :,,

,,Նաև յաւուրս նորոգման սորին աբեղայ
ոմն տէր Յովհաննէս անուամբ, այր արդիւնաւոր
և գործօնեայ և խորհրդական խորհրդով, զոր
և տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի կարգել էր
զսա վերակացու և գործավար 'ի վերայ գործոյս
այսորիկ. սա յաւուր միում պատճառանօք իմն
յայլուր առաքեալ զամենայն գործօղս, և առանձ֊
նացուցեալ զտեղին գիշեր և ցերեկ մի. և ինքն
իւրովի միայնակ պեղեաց զտեղին՝ ուր կարծիք
մնաց ազդեալ նշանակէր. և այնքան պեղեաց ըզ֊
հողն մինչև եհաս ցանշարժ հողն՝ յորոյ վերայ կա֊
ռուցեալ էր հիմն եկեղեցւոյն. և անդէն եգիտ
զերիս տապանս 'ի ներքոյ հիման եկեղեցւոյն՝ ո֊
րոց մին էր 'ի կողմն հարաւոյ, և մին 'ի կողմն հիւ֊
սիսոյ, և երրորդն 'ի կողմն արևելից. և ընդ բա֊
նալ կափարչաց վիմաց տապանացն, իսկոյն բուրե֊
ցաւ հոտ անուշութեան նորասքանչ և զարմանա֊
լի . . . . . և տեսանէ զնշխարս իւրաքանչիւրոցն 'ի
մէջ տապանացն սպիտակ փայլուն որպէս զձիւն,
և բովանդակ նշխարն անապական 'ի մէջ տապանա֊
ցըն . . . . :,,

,,Նաև ապա առեալ զնշխար մի յոսկերաց
սրբոցն առ 'ի նշան հաստատութեան. և ապա իր֊
փեալ զկափարիչ վէմսն 'ի վերայ տապանացն, և
խճով և կրով ամրացուցել փակեաց շուրջանակի
զտապանսն, և անհետ արարեալ զնշանսն, և յա֊

րանց գործաւորաց ո՛չ ոք իմացաւ զայն ։ Այլ յետ կատարմանս այսորիկ զաւեալ նշխարն, բերել եցոյց վարդապետայ և եղբարց ամենեցուն և պատմեաց զամենայն որպիսութիւնն . . . ։"

"Այլ եղև գիւտ նշխարաց սրբուհւոյ կուսին Գայիանեայ և ընկերաց նորա, և նորոգումն նորին եկեղեցւոյն, հազար և հարիւր և մէկ թուին, և հոկտեմբերի ամսոյ տասն և ինն, յաւուր երեք շաբաթի"։ (յամի 1652)։

330, Նոյն՝ Եղիազար կաթուղիկոս հռոմկլայեցի յամի 1683, շինէ նորոգ հիմնադրութեամբ գաւիթ վայելուչ կից յարևմտեան որմն եկեղեցւոյն՝ աւելի երկայնեալ զայն քան զլայնութիւն տաճարին՝ յերկուց կողմանց. և յերկոսին ծայրսն գաւթիս յարդարէ զերկուս փոքրիկ սեղանս կից յորմն յանուն երկուց առաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի և ՚ի վերայ այնց զերկուս փոքրիկ զանգակատունս. էած շուրջ զեկեղեցեաւս և զպարիսպ քառակուսի, և կանգնեաց զայլ ևս շինուածս ՚ի նմա ՚ի բնակութիւն հոգևորական դասուն. այսց շինութեանցս արձանագիր կայ եդեալ յաջակողմն արևմտեան դրան տաճարիս ը̅ յարկաւ գաւթին՝ յայս օրինակ ։

"Ես տէր Եղիազար կաթուղիկոս սուրբ Էջմիածնի հռոմկլայեցի գոլով՝ տեսի զամայութիւն սուրբ վանացս՝ որ յանուն սրբուհւոյն Գայիանեայ, շարժեցայ ՚ի գութ հոգևոր սիրով և պարսպեցի զսա սրահօք, յարկօք և խցերօք. նա և զգաւիթ եկեղեցւոյս կառուցեալ՝ յաջմէ խորան սուրբ առաքելոյն Պետրոսի, և ՚ի ձախմէ խորան սուրբ առաքելոյն Պօղոսի, յիշատակ հոգւոյ իմոյ. և ՚ի հայոց թուականիս ռճլէ, ամէն"։ (յամի 1688)։

Գրէ առ այս և Զաքարիա սարկաւագ Յօհանավանից ժամանակակից այնմ ՚ի հատորն Բ, գլուխ ԾԲ։ "Նոյնպէս և ՚ի սուրբ մայրն Գայիա-

նէ շրջապատեալ պարսպեաց. և յարևմտեան դը-
րանն (էկէղէցւոյ) արտաքոյ կողմանէ շինեաց խորա-
նըս, և 'ի նոյն տեղին հիւսիսոյ կողմն շինեաց զգե-
րեզմանն իւր. եւ զտնտեսատունն և զխուցսն. հաս-
տատեաց և միաբանս և այլն ,,:

331. 'Ի գաւթի աստ ամփոփեալ կան մար-
մինք ոմանց կաթուղիկոսաց աթոռոյ Էջմիածնի
պատուեալ թափանցիկ մարմարոնեայ վիմօք. 'ի
քարանց աստի եօթն հատ և եթ գտանին արդէն 'ի
վերայ այնց շիրմաց, իսկ այլքն 'ի ժամանակս պա-
տերազմաց անհետ եղեն՝ ընդ այնց և արձանա-
գրութիւնքն. ուստի զորս և գտաք ամբողջ, ե-
դաք աստէն առաջի:

'Ի հիւսիսակողման անդ.
Ղազարու ջահկէցւոյ.
,, Զքնաղ տապանս է հրաշալի,
առն մեծի գիտնականի.
տեառն Ղազարու հայրապետի.
հանուրց Հայոց պատրիարգի.
որ 'ի մարմնի քաղցրավարի.
բարուք մահուամբ վերափոխի.
դիմեալ առ տէր 'ի նա հանգչի,
որում բաղձան հոգիք բարի.
'ի մին հազար երկ հարիւրի,
մերս հայկազնեայ թուականի.
'ի ծաղկազարդ յօր վերջ մարտի,
աստ ամփոփեալ վերապատուի ,,:

Յովհաննէսայ շամախեցւոյ:
,, Քրիստոս որդի հօր միածին,
դատող ազգի մեր մարդկային.
յորժամ գայցես փառօք կրկին,
առ 'ի դատել զամենեսին.
ողորմութեամբ յայնժամ քոյին,

և զթութեամբք աստուածային.
մինչեւ զհոգի քո ծառային,
որ է սրբոյ արեանդ քո գին.
տեառն Յակոբայ հայրապետին,
շամախեցի՝ զոր կոչէին.
յարքայութիւնդ մեծ երկնային,
դասեա ընդ սուրբս ամենեսին:
եղև թուականս ռմժբ, և
յամսեանն մարտի 21,,:

'Ի միջոցի երկուց այսոցիկ կաթուղիկոսաց ամփոփեալ է մարմին Եղիազարու կաթուղիկոսի հռոմկլայեցւոյ 'ի ռճլթ թուականի հայոց՝ յամի տեառն 1690, յ8րդ օգոստոսի:

ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԷՆԷԳԷԹԷՑՒՈՅ.

,,Սա՛ դամբարան և յարկ բնակութեան,
Դաւիթ հօրն այն դիոյ հանդստեան.
կաթուղիկոսի շնորհիւ օծութեան,
և հայրապետի գահիս սրբութեան.
որոյ դադարեալ 'ի խռովութենէ,
զկնի հրաժարման 'ի վեհութենէ.
սիրով միշտ գգուեալ 'ի պետէն մերմէ,
սրբազան տեառն մեծէն Եփրեմէ.
հանգեաւ սա յամի տեառն փրկչական,
հազար ութն հարիւր տասն եօթ թուական:
'ի նոյեմբերի աւուր միական,
մեծաշուք փառօք եդաւ յայս տապան,,

'Ի հարաւակողման անդ.
ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՐԵՒԱՆՑՒՈՅ.

,,Քրիստոս աստուած իմ տէր բարի,
լո՛ւր աղէտից քոյս ծառայի.
դու կացուցեր զիս յայս կարգի,

՚ի մշակել ընդ քո այգի.
իսկ ես անուամբ այս պաշտօնի,
գտայ ծառայ ամենայնի.
և որպէս թէ զպարտաւոր մի,
փոխատուաց զիս մատնեցի.
ոյց ետու և ծառայեցի,
վարձն իմ զսուգ և զցաւ առի.
այսու կենօք ողորմելի,
ժամանակս իմ վճարեցի.
այժմ ամօթով կամ առաջի,
զի ծառայել քեզ չկարացի.
արդ դու նայեաց յիս քաղցրութեամբ,
թող զյանցանս ներողութեամբ.
ուրախացո առ քեզ կոչմամբ,
և սփոփեա քո սուրբ տեսլեամբ.
վասն խաչիդ՝ զոր պաշտեցի,
և սուրբ անուանդ՝ զոր կրեցի.
Սիմէօն կաթուղիկոս երևանցի.
՚ի ռմիթ թուի, և յուլիսի 26, ի,
՚ի վարդավառ կիւրակէի,,։

Սից յայս տապան ՚ի հիւսիսոյ է շիրիմն, Աբրահամ կաթուղիկոսի մշեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1734; ՚ի 11, նոյեմբերի՝ որոյ մարմարոնեայ վէմ մակագրութեամբն հանդերձ անհետացեալ է. և կից սմին ըստ այնմ Մինասայ կաթուղիկոսի ակնեցւոյ՝ որ վախճանեցաւ յամի 1753, ՚ի 12, մայիսի, այսր տապանի վէմ գոլով կիսաբեկ, և այն հատոր վիմին անյայտ, թողաք ՚ի բաց զթերին մակագրութիւն։

Ղուկաս կաթողիկոսի կարնեցւոյ.

,,Հայրկ դամբարանիս է վեհին մեծի,
տեառն Ղուկասու կաթուղիկոսի.
ընիկ գաւառաւ էր սա կարնեցի,

Հանդարտակենցաղ և ջանիւք բարի.
Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի,
պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի.
այլ յօրէ կոչմանն եդ իսկ 'ի մտի,
շքեղազարդել զգահն հրաշալի.
որ և ետ ծաղկել կարի սխրալի,
զմէջ տաճարին Միածնաիջի.
նա և նորոգել ետ շուրջանակի,
շինեալ և զայլ շէնս՝ որք են իսկ յայտնի.
ապա ընկալեալ զվախճան բարի,
դիմեաց առ Քրիստոս յոյսն ամենայնի.
յորմէ ընկալցի զվարձս բարի,
և յարքայութեան նորին հրճուեսցի.
ամփոփեցաւ յամի տեառն 1799, 'ի դեկ-
տեմբերի 29, 'ի տօնի որդւոցն որոտման,,:

Յովսէփայ եպիսկոպոսի տփխիսեցւոյ

,,Արղութեան քաջ արհին,
տէր Յովսէփ պանծալին.
կայսրընտիր արժանին,
մեծ գահիս Միածնին.
այլ տապար ժանտ մահուն,
'ի սա իսկ հար իսկոյն.
որոյ կամք կալ յաթոռ,
եմուտ աստ 'ի տուն խոր.
1801, յ9, մարտի,,:

Մասն առաջին ։ Սրբութիւնք Սրբոյ Էջմիածնի Հաւատ-
ութեանց և տեղի նահատակութեան նորա ։

332, Տաճար կամ եկեղեցի Շողակաթ ա-
նուանեալ՝ գիտեմք ըստ յայտնութեան գրոց ար-
բաղէս զԿաթուղիկէ մայր եկեղեցին Հայաստա-
նեայց ՚ի Վաղարշապատ, և ոչ զայլ մին ևս ՚ի
Հայս. բայց աւանդութիւն է բնակչաց կողմանցս
պիտակաբար անուանել Շողակաթ և զայսր սըր-
բոյ կուսի զվկայարան սակս շող լուսոյն ծագելոյ
և ՚ի վերայ տեղւոյ նահատակութեան սրբոյ կու-
սին ՚ի տեսլեան անդ սրբոյն Գրիգորի լուսաւորչին

Նոյն տաճար յարևելեան հիւսիս սրբոյ Կա-
թուղիկէ եկեղեցւոյ Էջմիածնի՝ հեռի ՚ի նմանէ
իբր քառորդ ժամու և ուղղակի յարևմուտս
տաճարի սրբոյն Հռիփսիմեայ իբրև յերկուս քա-
րընկեցս՝ մերձ ՚ի հնձանատեղին, ուր օթևանս կա-
լեալ էին սրբուհի կուսանքն՝ շինեցաւ յառաջն
՚ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէ. զի ՚ի տեսլեան
սրբոյն Գրիգորի յիջանել լուսեղէն խարսխացն՝
մին յերից խարսխաց անտի, ասէ Ճառն՝ էջ ՚ի տե-
ղւոջ հնձանին. ,Ագաթան" 272. ,,Եւ մի ՚ի տե-
ղւոջ հնձանին,,. իսկ վասն շինութեան եկեղե-
ցւոյս՝ ասէ լինել մերձ ՚ի հնձանն. ,Ագաթան"
279. ,,Եւ միւսն մօտ ՚ի հնձանն ՚ի մէջ այգւոյն,
ուր էին վանք նոցա,, (317)։ Յորմէ յայտ է թէ
չեղև նահատակութիւն սրբոյ կուսին ՚ի հնձանի
անդ՝ թէ և գրէ Ագաթանգեղոս. ,,Եւ մնացորն

1, Սորանէ անուան լինել սրբոյ կուսին Շողակաթ կոչեցեալ ա-
ղեկութիւն ինչ ՚ի գրոց, զի առաջ՝ այն է, հիւանդ և էր գը-
րեն հեղինակ պատմութեանց. այլ աւանդութիւն բնակչաց
կողմանցս հաստատեալ առ մեզ՝ տարագէ լինել նոյն. որպէս և ա-
նուն մոյն ՚ի սրբուհեացն՝ որ ՚ի մէջ վերի այգի կոչեցելոյն
նահատակեալ, կոչի (Սուրբ Աննա) և այլն ։

որ 'ի հնձանին սալանաւ ,, · այլ փոքր ինչ արտաքոյ քան զհնձանն · զի գոլով ինքն հիւանդոտ և տկար, հազիւ ուրեմն գողդոջուն անձամբ ել 'ի հնձանէն, և այն ինչ փոքր մի հեռացեալ անտի՝ Թերևս 'ի տեսանել զկատարումն անմեղ գառանց ընկերաց իւրոց և կամ՝ խառնիլ յերամն նոցուն՝ զի և ինքըն հաղորդեսցի պսակացն պատրաստելոց, հասին անդէն դահիճք և յիւր վերայ՝ յորոց ընկալեալ զվկայական կատարումն յաստի կենաց, եհաս որում ցանկայրն: Քանզի յայտնի իսկ տեսանին և տեղիք երկոցունցն՝ Հնձանին, ուր է այժմ քակեալ փոքրիկ տաճար մի՝ որոյ որմունք մասնաւոր բարձր յերկրէ կան տակաւին կից հիւսիսակողման ճանապարհին՝ որ տանի յԵրևան. և աւանդութիւն իսկ բնակչացս ստուգէ լինել նոյն. իսկ Նահատակութեան կուսին, ուր է այժմ եկեղեցին կառուցեալ յանուն սրբուհւոյն, հեռի 'ի մատրանէ հնձանին յարևելս հիւսիսոյ դէպ յայգեստանսն իբրև յիսուն հասարակ քայլ. վասն զի և փախուստ կուսանացն 'ի հնձանէն ընդ յայգեստանսն եղև՝ որ են յարևելս հիւսիսոյ նորա:

333, Այս տեղի նահատակութեան սրբոյ կուսին 'ի սկզբան անդ ընդ երկուց եկեղեցեացն Հռիփսիմեայ և Գայիանէյ եա կառուցանել սբն Գրիգոր զվկայարան յանուն նորա՝ յամի 301. որպէս ասացաւ. այլ զկնի այնր մինչև ցամ տեառն 1694, Թէ ոյք ոմանք ձեռնարկեալ նորոգեալ իցեն զայս եկեղեցի՝ որպէս զմիւս երկուսն, չունիմք ինչ ծանօթութիւն. և զի չունի ինչ մնացուած յառաջին շինութեանց անտի, զի Թերևս յարձանագրութեանցն լինէր տեղեկութիւն ըստ միւսոցն. այլ գլխովին նորոգ կառուցեալ է տաճարն 'ի հիմանց 'ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսի ուրհայեցւոյ՝ արդեամբք Սղամալ իշխանին շօռօթեցւոյ յամի 1694, 'ի սրբատաշ քարանց

բարեյարմար ձեւակերպութեամբ, միջակ դրու-
թեամբ, և է փոքր քան զմիւս եկեղեցին և ան-
սիւն. ունի և կաթուղիկէ ՚ի միջավայր տանեացն
և գաւիթ վայելուչ՝ յորոյ վերայ է և զանգակա-
տուն փոքրիկ. ունէր և կրկին գաւիթ վիմակերտ
ըստ տաճարին, այլ այն անկեալ տապալեցաւ ինք-
նին յամի տեառն 1807:

Այս սուրբ տաճար ունի արձան յիշատակի
շինութեանն ՚ի վերայ արեւմտեան դրան ընդ յար-
կաւ գաւթին՝ այսօրինակ:

,,Շնորհօքն Աստուծոյ՝ որդւոյն միածնի,
Շողակաթ անուամբ՝ տաճարս կանգնի.
՚Ի թուականիս՝ մեր հայկականի,
հազար և հարիւր՝ քառասներեքի.
՚Ի հայրապետութեան՝ սուրբ Էջմիածնի,
տեառն Նահապետի՝ հօր սրբազանի.
արդեամբք Աղամալ՝ բարեպաշտօնի,
գոլով քաղաքէն՝ Նախիջեւանի.
շինեաց յիշատակ՝ փրկեալ զիւր հոգին,
հօրն Աղաջանին, մօրն Նանակուլին.
նա և կենակցին իւր Մարիամին,
և որդւոց իւրոց՝ Աբերդիոսին.
Ագաթանգեղոսին, Աղէքսանդրոսին,
և Խարիսիմոս փոքր եղբայր սոցին.
դստերաց իւրոց՝ Նուշեմզարային,
այլև Օսանէթ և Նանակուլին.
որք զմեզ յիշէն՝ առ տէր ՚ի բարին,
արժանի լիցին՝ տեսութեան նորին,,:

Այս մենաստան ունի ինչ ինչ սենեակս միա-
բանից՝ յորոց ոմանք են քարաշէն կառուցեալք
ընդ եկեղեցւոյն և ոմանք ՚ի հողոյ և ՚ի փայտէ
շինեալք ՚ի յետնոց. ունի և պարիսպ ածեալ
շուրջանակի ներքին և արտաքին հանդերձ բըր-
գամբք. և ՚ի բուրգն անկեան արեւմտեան հիւ-
սիսոյ արտաքին պարսպի եդեալ կայ արտաքուստ

խաչվէմ մի փոքրիկ բարձր յերկրէ երկկանգնա-
չափ, ուր 'ի պատուանդանի խաչին գրի այս ինչ.
„Շինեցաւ հնձանէս մատուռս 'ի թվին զՃԼԴ,,.
որ երեւի լինել արձանն փոքրիկ մատրան եղելոյ 'ի
տեղւոջ հնձանին՝ որ ցուցաւ 'ի վերոյ. թերեւս 'ի
կանգնել զայս բուրգ պարսպօքն հանդերձ ա-
ռեալ յաւերակաց հնձանատեղւոյն՝ եդեալ իցեն
աստէն. զի երթեւեկք յայգեստանսն՝ որ առ բըր-
գամբս անցանեն, տացեն զարժանաւորն երկըր-
պագութիւն տէրունական նշանիս. որպէս և ըս-
տուգէ այն պատմութիւն բնակչացս թէ՝ մինչ. 'ի
ժամանակս Ղուկաս կաթուղիկոսի կարնեցւոյ
դնէին առ սոյն բրգամբս գրակալ և աւետարան
'ի վերայ՝ յերկրպագութիւն և 'ի համբուրումն
բարեպաշտ անցորդացն ընդ այն. այլ այժմ այս
սովորութիւն խափանեալ կայ։
334, Տեղի տապանի սրբոյ կուսին Մարիա-
նէի 'ի մէջ եկեղեցւոյս աւանդութեամբ ստուգի
լինել 'ի մէջ աւանդատանն հարաւակողման՝ ուր
որոշակի գտանի և տապանավէմ. բայց ճշմարտօ-
րէն չգտանի՝ թէ արդեօք ոք խնկապէս աստ ամփո-
փեցաւ մարմին սրբոյ կուսին, եթէ հաւաքել ընդ
այլ կուսանացն զետեղեցաւ 'ի վկայարանի սրբոյն
Հռիփսիմեայ։ Այլ զի՝ ըստ հաշուի թուոց նոցին
երեւի լինել աստ. քանզի ամփոփեցաւ 'ի տապանի
սուրբն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօք, սբն
Գայիանէ երկու ընկերօք, լինին 36, մին ևս աստ,
այն է՝ Մարիանէ, որովք լնանայ թիւ սրբուհեացն
երեսուն և եօթն՝ ըստ վկայելոյ շարականոցին յԱն-
ձինք կուսանացն 'ի տառն Փ. „Փառաց 'ի փառս
բարձրացեալ պարծին երեսուն և եօթեանքն.
քանզի այս է թիւ երանեալ կուսանացն՝ որք ան-
թառամ պսակեցան յանվախճան յաւիտեան,,։
Այլ թերեւս ասասցէ ոք զթիւն 37, լրացուցանեն
սուրբ կուսանքն՝ Նունէ առաքելուհին և Մ.րաց,

և Մանի որ 'ի սեպուհ լեառն Դարանաղեաց. բայց գրուածք Ագաթանգեղոսի և շարակնոցին ճշտորէն հային առ նահատակելոյն աստէն 'ի Վաղարշապատ քաղաքի:

'Ի գաւթի աստ ժամացս և ամփոփեալ կան մարմինք կաթուղիկոսաց հայոց. նախ նորուն Նահապետ կաթուղիկոսի ուրհայեցւոյ 'ի հիւսիսակողման անդ՝ որ ունի մակագրութիւն տապանի՝ ըստ այսմ:

„Այս է տապան դամբարանի,
տեառն հայոց հայրապետի.
սա Նահապետ անուամբ կոչի,
որ է տեղեաւ ուրհայեցի.
'ի թուին ռճծդ „: (յամի 1705):

Աստ ամփոփեցաւ և մարմին Աբրահամ կաթուղիկոսի կրետացւոյ 'ի հարաւակողմանն 'ի թուին հայոց ռճձե. յամի 1736, այլ մարմարնեայ վէմ տապանին բարձեալ գոլով անտի, ընդ նմա անհետացեալ է և մակագրութիւն նորա:

Եկեղեցի՝ կոչեցեալ սուրբ Գրիգոր առաքելոյ:

335, Հռչակաւոր եկեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի լուսաւորչի յառապարին Վաղարշապատու մերձ յեկեղեցին նորա՝ այն է, որ այժմ 'ի բնակչացս առ հասարակ |հանգուցեալ| կոչի. զի անկեալ, 'ի վայր խոնարհեալ, փլուզեալ բովանդակ շինուածովքն հանդերձ. և էր յիրաւի մեծահռչակ եկեղեցի ու լայնադիր և գեղեցկայարմար շինուածոյն, որպէս և վկայեն պատմաբանք ազգիս՝ շինեալ յԳրդ Ներսէս կաթուղիկոսէ շինող անուանելոյ:

Զայսմանէ յայտնագոյնս գրէ պատմաբանն Սեբէոս եպիսկոպոս բագրատունեաց ժամանակակից նմին Գրդ Ներսէս կաթուղիկոսի՝ յորոյ աւուրս գտաւ և 'ի ժողովն անդ 'ի Դուին քա_

ղաքի. և կոչէ զեկեղեցին յանուն երկնաւոր զօ-
ւարթնոցն. իսկ 'ի պատճառս ամփոփելոյ անդէն
նշխարաց սրբոյն Գրիգորի լուսաւորչի, կոչեցաւ
սուրբ Գրիգոր:

,,Յայնժամ արկ 'ի միտս իւր կաթուղիկոսն
Հայոց (Գ Ներսէս) շինել իւր բնակութիւն մերձ
առ սուրբ եկեղեցեաւն՝ որ 'ի Վաղարշապատ քա-
ղաքին 'ի վերայ ճանապարհին, յորում ասեն՝ ընդ-
առաջ ելեալ Թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի
1, շինեաց անդ. և եկեղեցի մի յանուն երկնաւոր
զուարթնոցն՝ որոց երևեալ 'ի տեսլեան սրբոյն
Գրիգորի բազմութի երկնաւոր զօրացն. և շինեց
եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմա-
նալեօք արժանի աստուածային պատուոյն՝ որում
նուիրեացն. ած ջուր և եբեր զգետոյն (Քասաղ),
և արկ 'ի գործ զամենայն զվայրսն առապար, տըն-
կեաց այգիս և ծառաստանս, և շուրջանակի պա-
տուարեաց զբնակութեամբն գեղեցկագիր յօրի-
նուածով՝ բարձր պարսպաւ 'ի փառս Աստուծոյ,,:
Այս 'ի վախճան պատմութեան նա ինքն Սեբէոս
եպիսկոպոս գրէ ըստ այսմ. ,, Իսկ կաթուղիկոսն
Հայոց Ներսէս գնաց ը Թագաւորին (Կոստանդնի)
որպէս վերագոյն ասացի. և չուեաց ընդ նմա 'ի

1, Նշխարք սուրբն Գրիգորի եղեալ 'ի Վիրապէն Արտաշա-
տայր 'ի Վաղարշապատ ընդ Օտայ նախարարին, և այն ինչ
էհաս ճանապարհորդութեանն յայս տեղի, Տրդատ ըն արքայ
հարուածեալն յանէծիւքն զօրութեամբ խաչակիր տեսլեամբն
էհաս այսր. և անկեալ յոտս երանելւոյն՝ ծարէր ներքին զզջա-
ցման զգայնամբն. վասն այսր պատճառի յայն գիւղէր նմայ ան-
դէն սուրբն եղեւ ընդ ինքեան, և տեսանէ 'ի տեսլեան
զերկնաւոր զօրս հրեշտակաց. և այն տեսլեան աւանդութեան
էհաս շարունակեալ ցԳ, Ներսէս կաթուղիկոս. որոյ վասն և
'ի պատճառս հանգստեան նշխարաց սրբոյն 'ի Խորվիրապայ 'ի Վա-
ղարշապատ տեղւոյ, այդ կառուցանել զայս հոյակապ եկեղեցի:

Կոստանդինուպօլիս. . . Նոյն ապա յետ Է, ամի հա-լածանացն դարձաւ անդրէն 'ի տեղի իւր և հաս-տատեցաւ յաթոռ կաթուղիկոսութե, փութայր կատարել զշինուածոյն՝ զոր շինեաց 'ի վերայ պօ-ղոտային Վաղարշապատ քաղաքի ,, :

'Ի ժամանակս իշխանին Աղուանից Վարազ-տրդատայ և կաթուղիկոսի նոցա Եղիազարու ա-ռաքի դեսպանութեամբ 'ի նոցունց անտի 'ի Հայս Իսրայէլ եպիսկոպոս ոմն առ իշխանն Արա-բատայ Գրիգոր մամիկոնեան և առ Է, Սահակ կա-թուղիկոս Հայոց սակս խորհրդոյ իրիք՝ որոյ եկեալ և տեսեալ աստէն 'ի Վաղարշապատ քաղաքի զպա-տուական նշխարս սրբոյն Գրիգորի, հայցէ զմասն ինչ միջնորդութեամբ Հեղինէ դշխոյի տիկնոջ իշխանին Գրիգորի՝ որ էր դուստր իշխանին Աղ-ուանից և առնու զմասն յօրէնսուսյց ծնօտէն և տանի ընդ իւր յԱղուանս՝ զորմէ տողէ և զեկե-ղեցւոյ աստի Մովսէս կաղանկատուացի. հատոր Բ, գլուխ 38: ,, 'Ի ժամանակին յայնմիկ բերեալ էր իշխանն մեծ զաւրավարին Հայոց (Մամիկոնեան Գրիգոր) 'ի Թորդանա 'ի Դարանաղեաց գաւա-ռէն զնշխարս սրբոյն Գրիգորի բոլորովին ամե-նայն ոսկերաւքն հանդերձ յաշխարհն Հայոց յԱյ-րարատեան գաւառն 'ի Վաղարշապատ քաղաք, հանգուցեալ 'ի նորաշէն յարկս եկեղեցւոյն՝ զոր մեծին Ներսեսի (Գ Ներսէս) շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի. ապա մեծաւ աղաչանաւք եկեալ Իսրայել եպիսկոպոսն առաջի կաթուղիկոսի և զաւրավարին և այլն ,, :

Իսկ Է րդ Յովհաննէս կաթուղիկոս պատ-մէ զնմին յիշատակելոյ զշինութիւն երկուց եկե-ղեցեացն 'ի նոյն Է, Ներսէս կաթուղիկոսէ, առա-ւել ևս տեղեկութեամբ հանգամանաց յիշատա-կէ զմիւս զայս եկեղեցի երորդ՝ յասելն:

,, Դարձեալ յաւսացեալ 'ի տէր և ոչ զմը-

տուածեալ զկրթական արշաւանս հինիցն Թշնամեաց գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ ը̄ս անուանակոչութե̄ սրբոյն Գրիգորի յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Քրիստոսի · իսկ 'ի հիմնարկել զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի , 'ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ 'ի անշուշտ մնացականութեամբ պահել զանձոյն երկնաւորի 'ի գերշաց ապականչաց , և 'ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց ։ Իսկ զքրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ 'ի խորոջ , այլ արտաքոյ 'ի գզրոցի եդեալ՝ դնէ 'ի գանձարանըս Աստուածութեանն 'ի յոյս բարեաց փափագողացն նմա , և 'ի բժշկութիւն ախտակրելոցն ,, ։

Ստեփաննոս տարօնեցի պատմաբան՝ մականուն ասողիկ կոչեցեալ , զբացայայտ ծանօթութի̄ տեղւոյ եկեղեցւոյս այսորիկ գրէ · հատոր Է̄ , գլ , 2 · ,, Ա (Գ̄ . Ներսէս) շինեաց և զմիւս եւս հըրաշապայծառ եկեղեցին զսբ̄ Գրիգոր 'ի Վաղարշապատու առապարին զանազան յօրինուածով ,, ։

Շուրջ զեկեղեցեաւս ետ կառուցանել նա ինքն Գ̄ . Ներսէս կաթուղիկոս և զտունս բնակութեան ինքեան և հոգևորական դասուց պաշտօնէից , և զպարիսպս շուրջանակի զբնակութեամբն · և 'ի մերձակայ աւազուտ վայրան ետ տնկել այգիս և ծառաստանս , և այնպէս պայծառացուցանէր զվայրն գեղեցիկ արարուածովք զօրէն քաղաքաց ։

Յետ պատմելոյ նորուն Սեբէոս եպիսկոպոսի զայսոցիկ շինարարութե̄ց որպէս տեսաւ 'ի վեր անդր , պատմէ և Գ̄ . Յովհաննէս կաթուղիկոս գեղեցիկ իմն դասաւորութեամբ ։

,, Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն զոր

իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարըսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ 'ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք. այլև կարգեալ կացուցանէր 'ի նմա ամբոխութիւնս երգումարդաց ըստ պայմանի քաղաքականաց, և ածեալ ջուր 'ի Քասաղ գետոյ զա̃մ աւազախիր դաշտավայրն 'ի գործ արկանէր. տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց,,։

Իսկ որպէս երևի 'ի բանից Մովսեսի կաղանկատուացւոյ՝ բովանդակ ծախք շինութեան այսր եկեղեցւոյ շնորհեցան 'ի Կոստաս կայսերէ Յունաց ըստ պատմելոյ նորին կաղանկատուացւոյ. հատոր Գ, գլուխ 15։ ,,Իսկ Կոստաս սորին (Հերակլէ) որդի ամս ԻԹ. ։ . . . Նստի կաթուղիկոս հայոց տէր Ներսէս ամս Ի . . . սա էր հայրագիր նորին Կոստանդնի, և գանձիւք նորա շինեաց ըզբազմապայծառ փարախն բանաւոր հօտից 'ի քաղաքի դաշտի զսուրբն Գրիգոր. և 'ի նաւակատիս կոչեաց զԹագաւորն Հոռոմոց. ընդ որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձև յարմարեսցէ 'ի պաղատանն. և ոչ ժամանեալ գաղատոսն՝ 'ի Ճանապարհին վախճանիւր,,։

Յայսմ եկեղեցւոջ նստաւ երբեմն և Գէորգ կաթուղիկոս Հայոց ըստ առաջ բերելոյ Հին հայաստանի 'ի Թովմայէ արծրունւոյ. ,,Բայց երանելի հայրապետն տէր Գէորգ . . . թողեալ ըզբնակելն 'ի Դուին, ելեալ բնակեցաւ 'ի նոր քաղաքին ('է Վաղարշապատ) 'ի մեծ եկեղեցւոջն՝ որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելոյն տեառն Ներսիսի երկրորդի (Երրորդի) Հայոց կաթուղիկոսի,,։

Այս հռչակաւոր եկեղեցի եկաց կանգուն 'ի շինութեան ոչ կարի ընդերկար՝ ըստ ակնարկելոյ բանիցն Ստեփաննոսի ասողկայ և Կիրակոսի

գանձակեցւոյ՝ զոր յառաջ բերեն ըստ այսմ․ «Մա-
սողկայն՝,, Գագիկ արքայ Հայոց խորհուրդ բա-
րի 'ի յանձին կալեալ՝ զմեծաշէն եկեղեցին որ 'ի
Բագարադաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շի-
նեալ՝ որ էր փլեալ և կործանեալ, կամեցաւ նոյ-
նաձև չափով և յօրինուածով յարդարել 'ի քա-
ղաքն Անւոյ,, ․ գ, 47 ։ և Կիրակոսին՝,, Սա (Ներ-
սէս շինողն) շինեաց զվկայարան սրբոյն Սարգսի
'ի Դուին․․․ և զսուրբն Գրիգոր զարմացուցիչ
տեսողաց՝ որ յետոյ աւերեցաւ 'ի տաճկաց,,։

Արդարև տապալումն եկեղեցւոյս հանդերձ
այլովք շինուածովքն երևի լինել յօտարազգի
թշնամեաց․ զի բոլանդակն գրեա՛ թէ 'ի հիմանց
քակեալ կայ․ բեկորք որմոց և տանեացն՝ որ ան-
կեալ դնին առ տեղեաւն, դուշակեն զհաստա-
տլինս շինուածոյն․ և շրջանակ հիմունք նորա․ և
ընդարձակութի միջոցաց չորից մեծամեծ սեանցն
զմեծութենէ եւն․ յայսոցիկ ծանօթութեց բա-
ւականաչափ ստուգին միոյք գրուածոց պատմա-
գրացն ազգի Հայոց՝ որք խօսին զմեծութենէ և
զգեղեցկութենէ սորին, և անուանեն | զարմա-
ցուցիչ տեսողաց | ա̄ հանդամանաց այնր դարու ։

Աւերակն այսր եկեղեցւոյ և շուրջ զնո-
վաւ մենաստանին դատնի մերձ յաթոռ Էջմիած-
նի աւելի քան զկէս ժամ հեռաւորութե ուղ-
ղակի յարևելս նորա, 'ի տեղի արդարև բարձրա-
ւանդակ և աւազուտ, 'ի հարաւակողման Ճանա-
պարհին՝ որ տանի յԱրևան քաղաք․ կան այժմ և
երևին իսկ որպէս հիմունք եկեղեցւոյն, և աւե-
լի քան զմարդաչափ՝ բարձրութիք սեանցն զուրկ
յարտաքին կոփածոյ քարանց․ նմանապէս երևին
և հիմունք պարսպի նորա և բրդանցն և առ նո-
վաւ սենեկացն իսկ․ որ և ասի հանդած եկեղեցի
և այժմ, և անուն նորա սուրբ Գրիգոր ։

ԱՒԱՐՏ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ ։

# ՅԱՆԿ

Հատուածոց մատենիս.


## ՀԱՏՈՒԱԾ
Ա.

Շողակաթ աստուածածին Կաթողիկէ մայր եկեղեցի Հայաստանեայց` այն է, տաճար սրբոյ Էջմիածնի 'ի Վաղարշապատ. 11:

## ՀԱՏՈՒԱԾ
Բ.

Ինչ ինչ գործք և նշանք ճարտար արհեստաւորաց նուիրեալք յամանց յանուն սրբութեան Տաճարին` յորում և գանձին. 41:

## ՀԱՏՈՒԱԾ
Գ.

Յաղագս սուրբ մասանց և նշխարաց սրբոց եղելոց առաջն 'ի գանձարանի սրբոյ խորանի Մեծի Կաթուղիկէ եկեղեցւոյս. 47:

## ՀԱՏՈՒԱԾ
Դ.

Շինուածք շուրջ Կաթուղիկէ եկեղեցւոյս սրբոյ Էջմիածնի` այն է, վանատանն. 76:

Գրական լուսաւորութիւն ազգի Հայոց և ուսումնարան Կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. 106:

## ՀԱՏՈՒԱԾ
Ե.

Կալուածք տան կաթուղիկոսարանի` յորոց եղանէր և եղանի հարկաւոր պիտոյք ծախուց նորա և հոգևորական միաբանելոյն 'ի նմին. 122:

## ՀԱՏՈՒԱԾ
Զ.

Հիմնադիրք քրիստոնէական հաւատոյ Հայաստանի և պահպանողք նորա. յառաջն Գրիգոր պարթև և անոր

[illegible] 140:

## ՀԱՏՈՒԱԾ Է.

[illegible] 256:

[illegible] 261:

[illegible] 273:

[illegible] 281:

[illegible] 285:

| Երես | տող | Վրիպակ | Ուղղեալ |
|---|---|---|---|
| 46 | 25 | ա ռիս | առ իս |
| 60 | 6·7 | վենետկեցւոյ | վենետկեցւոց |
| 62 | 9 | միչև | մինչև |
| 64 | 4 | անդ | աստ |
| 65 | 15 | զթաձիրն | զթաձերն |
| .. | 28 | ՚ի միուսում | ՚ի միւսում |
| 115 | 3 | պատուեալ | պատմեալ |
| 124 | 15 | ընդ ինքեանս | ընդ կեանս |
| 139 | 12 | դուքան | տուքան |
| 140 | 24 | ասորոց | ասորւոց |
| 149 | 6 | 159 | 161 |
| 154 | 35 | Յորոց | Յորոյ |
| 187 | 8 | ասորուց | ասորւոց |
| 192 | 20 | Լ,որայ | Լ,սրայ |
| 205 | 21·22 | ՚ի պանաց | ՚ի կապանաց |
| 250 | 23 | ԲԱԱՅ | ԲԱՍՅ |
| 270 | 2 | ծոցանին | ծոցածին |
| 273 | 14 | (318) | (317) |
| 286 | 17 | շուջանակի | շուրջանակի |